Հայաստան-2016
Չսերտած դասեր

**Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների
հայկական կենտրոն**

ՀՀ, 0033 Երեւան, Երզնկյան 75
Հեռախոսներ՝ (+37410) 528780, 274818
Հետապատճեն՝ (+37410) 524846
Էլ. փոստ՝ root@acnis.am
Վեբկայք՝ www.acnis.am

Երեւան 2016

Հայաստան-2016. Չսերտած դասեր

Գիտական խմբագիր՝ Մանվել Սարգսյան

Խմբագիր եւ սրբագրիչ՝ Գեւորգ Լալայան

Խմբագրական խորհուրդ՝ Կարապետ Կալենչյան
Աշխեն Մուշեղյան

Համակարգչային ձեւավորող եւ էջադրող՝ Աշոտ Թուրաջյան

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ), 2016
© Armenian Center for National and International Studies (ACNIS), 2016
© Армянский центр стратегических и национальных исследований (АЦСНИ), 2016

Հոդվածագիրների տեսակետները կարող են չհամընկնել ՌԱՀՀԿ դիրքորոշումներին:
The views of the authors do not necessarily reflect those of the Center.
Мнения авторов публикаций не всегда совпадают с позицией АЦСНИ.

Վաճառքի ենթակա չէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հարցազրույց ՌԱՀՀԿ գիտական ծրագրերի տնօրեն
Մանվել Սարգսյանի հետ
Խնդիրները պետք է լուծել, այլ ոչ թե փորձել
«օձիքն ազատել» դրանցից 4

ԳԵՂԱՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ապրիլյան դասերը եւ վերարժեւորման գործընթացն Արցախում 16

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Հայաստանի տնտեսությունը փորձությունների եւ
զարգացման հնարավորությունների փուլում 36

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱՆԱՆՅԱՆ
Արցախյան երկրորդ՝ «միջանկյալ» պատերազմ. Չսերտած դասեր 55

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Հայաստանյայց առաքելական եկեղեցու հանրային դիսկուրսը 87

ՄԱՐԱՏ ԱՏՈՎՄՅԱՆ
Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի վրա
քաղաքացիական հասարակության ազդեցությունը 115

ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ինչ պիտի արվի, որ Հայաստանը չկործանվի 138

Ժամանակագրություն
Հայաստան-2016. փաստեր, իրադարձություններ 201

ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԼՈՒԾԵԼ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ՓՈՐՁԵԼ «ՕՁԻՔՆ ԱՁԱՏԵԼ» ԴՐԱՆՑԻՑ

Հարցազրույց ՌԱՀՀԿ գիտական ծրագրերի տնօրեն ***Մանվել Սարգսյանի*** *հետ*

- Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձը նշանակալից հանգրվան է մեր ժողովրդի անցած ուղին վերարժեւորելու համար: Հայոց երիտասարդ պետականության ազգային իրողությունների ու հաջողությունների նկատմամբ վերաբերմունքը տարբեր է: Ինչ եք կարծում՝ կարողացել է արդյոք հայերի ներկա սերունդը լուծել 90-ականների սկզբին իր առջեւ դրված խնդիրները: Ի՞նչ է իրենից ներկայացնում 2016-ի նմուշի Հայաստանի Հանրապետությունը:

- Պետությունն ու հասարակությունը կան, գոյություն ունեն՝ եւ սա է 25 տարվա գլխավոր ձեռքբերումը: Սակայն դրանով Հայաստանի քաղաքացիներն առանձնապես հիացած չեն: Չի հաջողվում ողջ ծավալով թոթափել կուտակված հիմախնդիրների բեռը: Թերեւս անհրաժեշտ էր անկախությունից հետո քառորդ դար անցներ, որպեսզի Հայաստանում մարդիկ ստիպված լինեին արձանագրել, որ հռչակված նպատակներն իրականություն չեն դարձել, քանզի մենք այդպես էլ չունեցանք մեր ակնկալած արդարությունն ապահովող լիարժեք անկախ, իրավական, սոցիալական պետությունը: Այդ անհաջողության շուրջ բանավեճերը ցայսօր էլ որեւէ ողջամիտ բացատրության չհանգեցրին: Իսկ պատճառը միանգամայն պարզ է. փորձ եւ պատշաճ գիտելիքներ չկային՝ հասկանալու համար պետականակերտման գերակայությունները: Մասնավորապես՝ այն, որ պետության բոլոր տեսակների մեջ միայն իրավական, սահմանադրական պետությունն է ժողովրդին վերապահում պետական իշխանություն ձեւավորելու իրավունքը: Նման պետությունում իշխանությունը կարող է ձեւավորվել բացառապես ազատ ընտրությունների միջոցով: Մյուս բոլոր ձեւերը դիտարկվում են որպես իշխանության յուրացում: Երկրի Սահմանադրության մեջ դա ամրագրել են, բայց այդ երեւույթի խորքային իմաստը չեն գիտակցել:

Հետագա զարգացումների ողջ ընթացքը դարձել է ընդամենը սեփական պետության հանդեպ նման վերաբերմունքի հետեւանք: Եթե Սահմանադրության պահանջներին քամահրանքով ես վերաբերվում, վերջինս «վրեժ է լուծում» հանրությունից, որն այն ընդունել է: Անիմաստ է ընդունել իրենց իրավունքների եւ երկրի պետական կարգի մասին քաղաքացիների համընդհանուր պայմանագիր (Սահմանադրություն), եթե չգիտես, թե ինչի հետ գործ ունես: Սակայն քանի որ Սահմանադրությունն արդեն ընդունվել է, ուրեմն նրա պահանջները պետք է կատարվեն անվերապահորեն: Հակառակ դեպքում երկրում ձեւավորվում է մի իրականություն, որի էությունը քրեական իշխանության «իրավունքների» եւ շահերի անընդհատ պաշտպանությունն է կազմակերպված կամ անկազմակերպ ընդդիմացող շարժումներից:

Երբ քաղաքացիներն իրենց ամբողջության մեջ ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, ի վիճակի չեն լինում իրացնել պետական իշխանություն ձեւավորելու իրենց իրավունքը, անհնար է դառնում խուսափել պետական կառավարման համակարգի յուրացումից: Ցանկացած յուրացնողի (ուզուրպատորի) քաղաքականության մեթոդներն ունիվերսալ են: Ապօրինաբար խոշոր սեփականության տեր դարձած քաղաքացիները՝ գիտակցելով այդ սեփականության անօրինականության փաստը, ուրեմն եւ՝ դրա անպաշտպան լինելը, ցանկացած միջոցներով ձգտում են տիրապետել պետական իշխանության լծակներին: Միայն այդ լծակները ձեռքի տակ ունենալն է երաշխավորում սեփականության պաշտպանությունը: Այսինքն՝ անօրինական սեփականությունը ծնում է պետական իշխանության յուրացման երեւույթ: Սեփականատերերը բացահայտ հանցագործության են գնում: Մենք ականատես ենք եղել, որ այդպիսի գործողություններ շարունակաբար տեղի են ունեցել նաեւ Հայաստանում ու երբեւէ չեն պատժվել օրենքով: Սա է պետության չկայացման հիմնական խոչընդոտը, քանզի այսօրինակ հանցագործությունն անխուսափելիորեն հանգեցնում է նոր հանցանքների շարքի:

Հետագա հանցագործությունների շղթան նույնպես լիովին ունիվերսալ է. արդարադատության չեզոքացում, ազատ ընտրությունների կաթվածահարություն, արտաքին հովանավորների փնտրտուքի արդյունքում երկրի ինքնիշխանության կորուստ: Իսկ հետո ձեւավորվում են այն իրողությունները, որոնցում մենք ապրում ենք արդեն ավելի քան երկու տասնամյակ. ազգային հարստության ու իրավունքների յուրացում, ստվերային մեխանիզմների ներդրման միջոցով պետական կյանքում իրավական անհավասարության արմատավորում, երկրի գաղութացում: Հազիվ թե որեւէ մեկը կարողանա ժխտել այս

իրողությունները: Տարբեր է միայն դրանց հանդեպ վերաբերմունքը. ոմանք պատրաստ են ցանկացած գնով պայքարել, որպեսզի եղածից ոչինչ չփոխվի, ոմանք փորձում են առավելագույնս օգտվել ստեղծված իրավիճակից, իսկ մյուսները մերժում են այդ իրողությունները՝ ջանալով արմատապես փոխել դրանք:

- Ինչպե՞ս դուք կգնահատեիք 25 տարվա ընթացքում Սփյուռքի հետ Հայաստանի Հանրապետության ձեւավորված հարաբերությունները, եւ ինչպիսի՞ տեղ ունի, ձեր կարծիքով, Արցախի խնդիրը ՀՀ քաղաքական իրողություններում ու ազգային քաղաքականության մեջ:

- Ձեր նշած հիմնահարցերի ոլորտում իրավիճակն ավելի բարվոք չէ, քան երկրի ներսում: Եվ դարձյալ իրենց զգալ են տալիս անփորձությունը, պատմական խնդիրների բեռը եւ 90-ականների սկզբի հայ հասարակության աշխարհայացքային մտակաղապարները: Այնպես է ստացվել, որ ՀՀ անկախ պետականության առաջին իսկ օրերից երկրի քաղաքական ղեկավարության կողմնորոշումն ուղղված է եղել համազգային խնդիրների գործոնն առավելագույնս անտեսելուն եւ այդ խնդիրների պաշտոնական ճանաչումը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող առանձին հայկական հավաքականությունների ու կառույցների տիրույթում թողնելուն: Համարվում էր, որ անկախ Հայաստանի կառուցման ուղեգիծը չի կարող շաղկապված լինել համազգային նշանակության խնդիրների հետ: Վերջիններիս ռազմավարական կշիռն այդպիսով նվազեցվել էր: Ժամանակը ցույց տվեց, որ նման մոտեցման իրական հետեւանքները եղան այն, որ նորանկախ Հայաստանի Հանրապետության ստեղծման պահից հայկական առանցքային խնդիրները (Արցախ, Ցեղասպանություն) դուրս եկան ՀՀ ղեկավարության կարողությունների ու հնարավորությունների շրջանակից՝ ոչ միայն այդ խնդիրները վերահսկելու, այլեւ դրանց վրա դույզն-ինչ ազդեցություն գործելու առումով: Ժամանակի ընթացքում ՀՀ ներքին վիճակը ենթարկվեց արտաքին այդ գործոնների էքսպանսիային: Պետության քաղաքական իշխանությունը, հասարակությունը, ինչպես նաեւ արտաքին քաղաքականությունը դարձան հայկական արտաքին խնդիրների պատանդները: Երկար ժամանակ այդ հանգամանքը դիտվում էր որպես պետականաշինության ճանապարհի ռազմավարական արգելապատնեշ:

Իսկապես, ցաքուցրիվ եղած հայ ժողովրդի ազգային-քաղաքական իրողություններն ի սկզբանե կտրուկ հակասության մեջ մտան

ՀՀ իշխանությունների ընդունած քաղաքական հայեցակարգի, ինչպես նաեւ ՀՀ ընդունած իրավական շրջանակների (նրա իրական քաղաքական-իրավական կարգավիճակի) հետ: Եվ դրանից հնարավոր չէր խուսափել, քանի որ հայկական խնդիրների ռազմավարական իմաստն անտեսելու փիլիսոփայությունը գործնականում խթանում էր համաշխարհային պրակտիկայում այդ խնդիրների ազդեցության աճը եւ, միաժամանակ, հանդես էր գալիս որպես Հայաստանի Հանրապետության վրա ազդեցության գործոն: 1998 թվականից այդ փիլիսոփայությունը հանգեցրեց Հայաստանի քաղաքական համակարգի փլուզմանն ու երկրի լիակատար հպատակեցմանը արտաքին գործոններին: Աստիճանաբար հաստատվեց արցախյան ռազմաքաղաքական կառույցի կողմից ՀՀ-ում իշխանության զավթման գործընթացը, հայ-թուրքական հարաբերություններում ընդլայնվեց Ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրի արծարծումը, տեղի ունեցան Հայաստանի Հանրապետության լիակատար ռազմական հպատակեցումը ռուսաստանյան գործոնին, ինչպես նաեւ անվտանգության համակարգի ու արտաքին քաղաքականության անցումը ԱՄՆ-Ռուսաստան-Ֆրանսիա եռապետության ենթակայությանը (Մինսկի գործընթացի շրջանակներում):

Չընմբռնելով ի հայտ եկած ապակառուցողական երեւույթների պատճառը, Հայաստանի քաղաքական ընտրախավը մեկուկես տասնամյակ պնդում էր. «Մինչեւ չլուծվեն արցախյան հարցը եւ հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը, Հայաստանում հնարավոր չի լինի կառուցել իրավական պետություն եւ ապահովել նրա տնտեսական զարգացումը»: Ընդ որում, այդ թյուրըմբռնումների ակունքները երբեք չէին դիտարկվում արտաքին քաղաքականության կիրառվող ռազմավարության ծիրում, այսինքն՝ ՀՀ-ի հետ անմիջականորեն կապված ոչ մի հանգամանք չէր դիտարկվում որպես պետականակերտման ուղու լուրջ խոչընդոտ:

- Ստացվում է, որ հայ ժողովուրդն այդպես էլ չկարողացավ 25 տարվա մեջ էական հաջողություններ ձեռք բերել:

- Ինչու չէ: Հայ ժողովուրդն ազատագրեց Արցախը, ստեղծեց մարտունակ բանակ եւ ինչ-որ չափով կայուն ֆինանսական համակարգ: Կարելի է պնդել, որ Հայաստանի Հանրապետությունը հետխորհրդային տիրույթի այն փոքրաթիվ երկրներից է, որը կարողացավ ոչ միայն պաշտպանել իր տարածքային ամբողջականությունը, այլեւ ընդարձակել սեփական երկրում հայ ժողովրդի անկախ գոյակցության սահ-

մանագոտին: Դարավոր անվերջանալի կորուստների խորապատկերին նշված խնդիրների լուծումը ռազմավարական իմաստ ունի մեր ժողովրդի համար: Եվ, որ կարեւոր է՝ ՀՀ-ն, ԼՂՀ-ի հետ համատեղ, կարողացավ ձեռք բերել մի շարք ազդեցիկ տերությունների համար արժեքավոր միջազգային դեր՝ իբրեւ տարածաշրջանային անվտանգության համակարգի սուբյեկտ: Միգուցե այդ դերն ամենաարդյունավետը չէ, բայց մեր երկրով հետաքրքրվում են, նրա հետ հաշվի են նստում հենց այդ դերի շնորհիվ:

- Անկախության գոյության քառորդդարյա ժամանակաընթացքում Հայաստանի հասարակությունը մեծ ակտիվություն էր հանդես բերում եւ է սեփական իրավունքների պաշտպանության գործում: Ինչո՞ւ այդ ակտիվությունն էականորեն չի ազդում Հայաստանում պետականաշինության ընթացքի վրա:

- Դրա պատճառներն այսօր նույնպես ակնհայտ են: Հասարակությանն ու քաղաքական ուժերին չհաջողվեց գիտակցել այն անկարգությունների պատճառները, որոնք ես վերը թվարկեցի, եւ ձեւակերպել ռազմավարական ներքին օրակարգ: Հետեւաբար՝ ամեն ինչ հանգեց «վատ իշխանության» հիմնադրույթին: Անկախության առաջին տարիներից սկսած՝ երկրի քաղաքական կյանքում կենսունակ է մնում ընդդիմության կողմից որդեգրված հիմնարար մի թեզ, որն անփոփոխ է արդեն 25 տարի: Քաղաքական ուժերի ողջ փիլիսոփայությունն ու գործելակերպը սեւեռվել են «իշխանափոխություն» կարգախոսին: Իշխանափոխություն՝ կեղծվող ընտրություններում մասնակցության միջոցով. սա է իր համար գերխնդիր դարձրել ընդդիմությունը՝ դրա հրատապությունն ընդգծելու համար բերելով երկու հարակից փաստարկ՝ «Հանցավոր ռեժիմը երկիրը հասցրել է ոչնչացման եզրին» եւ «Մենք այլ բաների մասին մտածելու ժամանակ չունենք»:

Խնդրի նմանօրինակ ձեւակերպումն ու փաստարկումները երկրի քաղաքական կյանքը տեղայնացրել են գործընթացների մի փակ ցիկլի սահմաններում եւ վերջ: Այդ գործընթացներն են՝ ընդդիմադիր կուսակցությունների բարեխիղճ մասնակցություն կեղծվող ընտրություններին; ընտրությունների արդյունքների հետընտրական բողոքարկում; դիմումներ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին եւ Սահմանադրական դատարանին; վերջնական հայտարարության ընդունում գործող վարչախմբի կողմից ընտրությունները կեղծելու մասին: Այսպիսի կառուցակարգը ընդդիմության համար ընտրությունները դարձրել է ոչ թե ժողովրդի վստահության քվեն ստանալով՝ իր

ծրագրերը կյանքի կոչելու գործընթաց, այլ «գլխավոր ընդդիմադրի» կարգավիճակ ստանալու մրցավազք: Նպատակին հասնելու համար որոշ դեպքերում ընդդիմադիր ուժերին անհրաժեշտ է լինում պայքարել միմյանց դեմ, իսկ ավելի հաճախ՝ ստվերային պայմանավորվածությունների գնալ վարչախմբի հետ:

Փաստորեն, ազատ ընտրություններ ապահովող ընտրական մեխանիզմների կաթվածահարության պայմաններում, ֆորմալ քաղաքական գործունեությունն ինքնին դարձել է անորոշ եւ ապարդյուն: Բնականաբար, նման զարգացումների պարագայում ավելի քան երկու տասնամյակ արտահայտվող ժողովրդական դժգոհությունները խնդիրների սխալ ձեւակերպման պատճառով է, որ չեն տվել ցանկալի արդյունք՝ սահմանադրական կարգի հաստատում եւ ազատ ընտրություններ: Այս ամենը հանգեցրել է հանրության շրջանում անզորության զգացումի առաջացման եւ սոցիումի քայքայման: Այսպիսով՝ հանրությունը գործնականում մեկուսացվել է պետական կառավարման գործընթացից եւ փոփոխության հույսերը շարունակաբար կապել այս կամ այն ոչ ժողովրդավարական ծրագրերի հետ:

Ավելին՝ Սահմանադրությունը քաղաքացիների համար որպես մահակ, իսկ վարչախմբի համար՝ իրավունքների աղբյուր օգտագործելու պատճառով ստեղծվել է պատային իրավիճակ, երբ հանրության ներսում վերանում են օրինականության եւ ապօրինության գնահատման սահմանները: Քաղաքացիները պատրաստ են ընդունել այն ամենը, ինչն, իրենց կարծիքով, երկրում կարող է հաստատել օրինականություն: Եվ այս ամենի վկայությունն են «Սասնա ծռերի» հուլիսյան ապստամբությունը եւ նրանց սատարող տասնյակ հազարավոր մարդկանց հավաքները:

- Հայաստանում ավելի են հաճախացել այն խոսակցությունները, որ երկիրը կորցրել է ինքնիշխանությունը, եւ որ գլխավոր խնդիրը Ռուսաստանի հետ մեր հարաբերությունների վերանայումն է: Որքանո՞վ են առկա իրավիճակին համապատասխանում այդպիսի պնդումները: Եվ որքանո՞վ են Հայաստանի անվտանգությունն ու զարգացումը պայմանավորված Ռուսաստանի քաղաքականությամբ:

- Ես արդեն ասացի, թե որտեղից են սկիզբ առնում գաղութացման ծիլերը եւ ինքնիշխանության կորուստները: Չլինեին արտաքին հովանավորներին ենթարկվելու ներքին դրդապատճառներ՝ չէր լինի նաեւ ինքնիշխանության կորուստ (մեր պարագայում խոսքը Ռուսաստանի հետ «ռազմավարական գործընկերության» մասին է): Բայց դա ձեւավոր-

ված փաստ է, եւ այժմ կարելի է խոսել կոնկրետ օրինակներով: 2015-ի վերջին Հայաստանը մոտեցել էր արմատապես փոխված միջազգային մի իրադրության: Սիրիայում ծավալված՝ ահաբեկչության դեմ պայքարի միջազգային քաղաքականության ասպարեզ ռազմավարական գործընկեր Ռուսաստանի մուտքը փոխեց Հայաստանի հարեւան երկրների եւ ամբողջ հետխորհրդային տարածքի քաղաքականության բոլոր գերակայությունները: Այդ իրավիճակում ռազմավարական առումով ուշագրավ հանգամանք էր Ռուսաստանի կողմից Ադրբեջանին հարձակողական զենքի վաճառման փաստը: Լինելով ՀԱՊԿ-ի եւ ԵԱՏՄ-ի անդամ՝ Հայաստանը հայտնվեց բարդ կացության մեջ, քանի որ նրա ազատության աստիճանը խստիվ սահմանափակվեց:

Հայաստանի եւ Ռուսաստանի հարաբերությունները շարունակում են ձեռք բերել նոր ձեւեր: Նոյեմբերի 11-ին Վ.Պուտինը հանձնարարեց ստորագրել համաձայնագիր Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ հավաքական անվտանգության կովկասյան տարածագոտում Հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին: Նշված բոլոր հանգամանքները կարեւոր իմաստ են ստանում Հայաստանի անվտանգության համար, քանի որ Հայաստանն ավելի ու ավելի է իրեն կապում Ռուսաստանի եւ նրա թյուրքալեզու հարեւանների հարաբերությունների ոլորտին, որտեղ բազում դժվարլուծելի խնդիրներ կան: Հայաստանը, փաստորեն, ստանձնել է թյուրքալեզու այդ պետությունների հակառուսական մտադրությունները զսպողի դեր: Այդպիսի դերը խիստ նեղացնում է անվտանգության երաշխիքների ապահովման գործում մեր երկրի ազատությունը:

Այդ իրավիճակի իմաստավորումը չափազանց կարեւոր է. չէ՞ որ Հայաստանի առջեւ ծառացած է բոլոր հասունացած հիմսահարցերի վերաբերյալ նոր դիրքորոշումներ մշակելու խնդիր: Ռուսաստանի եւ Թուրքիայի հարաբերությունները թե՛ դիմակայության եւ թե՛ բարյացակամության փուլերում միշտ հագեցած են եղել Հայաստանի համար տհաճ անակնկալներով: Նոր պայմաններում իր տեղի ու դերի ճիշտ ընտրությունը թույլ կտա ոչ միայն ապահովել Հայաստանի անվտանգությունը, այլեւ իրագործել պետական բազմաթիվ խնդիրներ:

- Արցախում ապրիլյան պատերազմը հասարակական գիտակցության մեջ շատ մտակաղապարներ ջարդեց: Հայաստանը եւ Արցախը կորուստներ ունեցան: Հակամարտության խաղաղ կարգավորման խնդիրը ձախողվեց: Ինչպիսի՞ հեռանկարներ եք տեսնում խնդրի լուծման եւ երկու հայկական պետությունների պաշտպանունակության ամրապնդման գործում:

- Ապրիլյան պատերազմը հնարավորություն տվեց վերահիմաստավորել իր ռազմավարական հիմնախնդիրների եւ ՌԴ-ի վարած արտաքին քաղաքականության հանդեպ վերաբերմունքը: 22 տարվա արդյունքում մենք ունեցանք այն, որ ապրիլին պատերազմ վերսկսեց: Մինչ այդ մենք կարող էինք պնդել, որ 20 տարուց ավելի բանակցային գործընթացն ապահովում է գոնե ստասուս քվո եւ խաղաղություն: Բայց պարզվեց, որ դա այդպես չէ: Նշանակում է, որ այն մոտեցումները, որ եղել են, խոցելի էին: Ինչո՞ւ, որովհետեւ մի փոքր թերագնահատվում էին խնդրի էությունը, կողմերի մոտեցումները: Անընդհատ խոսվում էր նրանից, որ Մինսկի խմբի հովանու ներքո կարելի է հասնել փոխզիջումային տարբերակի: Բայց մի բան ոչ ոք հաշվի չէր առնում, որ 22 տարվա մեջ Ադրբեջանը երբեք չի ասել, որ ինքը համաձայն է փոխզիջումային տարբերակով այս խնդիրը լուծել: Եվ պարզ չի, թե ինչու էր հայկական կողմն անընդհատ պնդում դա:

1991-ին, երբ Հայաստանն անկախություն հայտարարեց խորհրդային Հայաստանի սահմաններում, Լեռնային Ղարաբաղը ստիպված էր նույնպես անկախություն հայտարարել: Ստեղծվեց ԱՊՀ կազմակերպությունը, դեկտեմբերին պայմանագիր ստորագրվեց: Երբ մենք նայում ենք այդ փաստաթղթերը, տեսնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է Ադրբեջանի սուվերենությունը, գոյություն ունեցող սահմանները՝ որեւէ կերպ չնշելով, որ կա Ղարաբաղի խնդիր: Սա ցույց է տալիս, որ այն ժամանակ 1991թ. իշխող ուժը հույս էր կապում, որ սա եւս լուծում է: Բայց 1992-ին եղավ պատերազմ: Ադրբեջանը բոլորի կողմից ճանաչվեց եւ իրավունք ստացավ օրինական ուժ կիրառելու, փորձեց կիրառել ու պարտվեց: Փաստորեն՝ տարածքն անցավ հայկական վերահսկողության տակ, բայց իրավունքները մնացին Ադրբեջանին:

Գերտերությունները՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, արեւմտյան երկրները, Մինսկի խումբը ընդունում են, որ գոյություն ունի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի խնդիր, բայց այս ամենը՝ Ադրբեջանի տարածքում: Երբ 1992-ին ստեղծվեց Մինսկի խումբը, այնտեղ շարադրվեց, որ գոյություն ունի Լեռնային Ղարաբաղի խնդիր. առաջին հերթին՝ մի քանի հարյուր հազար ադրբեջանցի փախստականների խնդիր, ինչ-որ տարածքների եւ Լեռնային Ղարաբաղի հայերի կարգավիճակի խնդիր: Դրանից հետո որեւէ բան չի փոխվել:

Անընդհատ խնդիր էր ծագում, որ պետք է փոխել մոտեցումը՝ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Փաստարկը հետեւյալն էր. եթե մի երկիր՝ Հայաստանը, որ ՄԱԿ-ի անդամ է, ճանաչեր, դա արդեն կասկածի տակ կդներ Ադրբեջանի իրավունքը, իրավունքների

վեճ առաջ կբերեր: Բայց այդ քայլին որեւէ մեկը չգնաց տարբեր փաստարկներով՝ վտանգավոր է, մենք կմեկուսանանք միջազգային ասպարեզում, կռիվ կլինի եւ այլն: Մինչդեռ դա մոտեցում էր, որի հիմքում իրավունքների վերանայման հարցն էր. հնարավոր չէ իրավուքներն անընդհատ Ադրբեջանի ձեռքին թողնելով՝ բանակցել: Ինչի՞ շուրջ բանակցես:

Ապրիլյան պատերազմից հետո մի պահ խոսվում էր դրա մասին, բայց Հայաստանը նորից ետ քաշվեց: Վիեննայում, Սանկտ Պետերբուրգում ձեռք բերված պայմանավորվածություններն էլ, փաստորեն, Ադրբեջանը չկատարեց: Ադրբեջանի կողմից դա նորություն չէ, ամբողջ 22 տարի Ադրբեջանը նույն քաղաքականությունն է վարում՝ պաշտպանել այդ իրավունքները: Նրանց համար գերխնդիրը դա է՝ երբեք որեւէ բան չստորագրել, ոչ մի իրավունք չզիջել Լեռնային Ղարաբաղին եւ Հայաստանին:

Ադրբեջանում լավ են հասկանում, թե ինչ ասել է իրավունք, Հայաստանում մարդիկ չեն հասկանում դրա կարեւորությունը: Մտածում են՝ ի՞նչ տարբերություն՝ կճանաչենք, չենք ճանաչի… Մեր քաղաքականության մեջ երբեւէ իրավունքի ուժն ու նշանակությունը ոչ ոք չի հասկացել: Քաղաքական մեծ անգրագիտություն է՝ գումարած 1915թ. Ցեղասպանության համախտանիշ, մեծագույն վախեր… Եվ դա բերել է հստակ քաղաքական գծապատկերի՝ իրավունքներից հրաժարվելու քաղաքականության: Այսինքն՝ մարդիկ համոզված են, որ ինչքան շատ իրավունքներից հրաժարվեն, այնքան ավելի անվտանգ կապրեն: Չեն հասկանում, որ աշխարհը կառուցված է իրավունքների վրա, որ քաղաքականությունը՝ լինի թաղի քրեական աշխարհում, թե միջազգային հարթակներում, պայքար է իրավունքների համար:

Ընդհանրապես՝ ամբողջ այս պայքարը պետք է ուղղված լիներ իրավունքները վերադարձնելուն: Այն, ինչը մենք տվել ենք, պետք է հատհատ ետ վերցնենք՝ օգտվելով մեր դաշնակիցներից, միջազգային դիրքորոշումներից: Եթե դու քաղաքականություն ես վարում, ամեն ինչ ռեսուրս է, պետք է գործի դնես, եթե ոչ՝ աստիճանաբար ամեն ինչ կորցնում ես:

- Հայաստանում կառավարություն է փոխվել: Նոր վարչապետը հայտարարեց, որ երկրի տնտեսությունն աղետալի վիճակում է, եւ որ գլխավոր խնդիրը այն «ստվերից» դուրս բերելն է, համակարգային փոփոխությունների անցկացումը: Ի վիճակի՞ է արդյոք նոր կառավարությունը լուծել երկրի ռազմավարական կարեւոր խնդիրները:

- Հատկանշականն արդեն այն է, որ առաջին անգամ կառավարության ղեկավարը երկրում տիրող անմխիթար վիճակը պայմանավորում է ոչ թե հայ-թուրքական չլուծված հարաբերությունների եւ արցախի խնդրի մասին ավանդական դրույթներով, այլ տնտեսության մեջ առկա «ստվերով»: Բայց բանը միայն տնտեսությունը չէ, իշխանություններն ասում են, թե հնարավոր չէ բարեփոխել տնտեսական հարաբերություններն առանց քաղաքական բարեփոխումների: 2012 թվականին Հայաստանում ձեւավորվեց մի կառավարություն, որը նշանակում էր օլիգարխիայի հաղթարշավ: Ֆինանսատնտեսական իրավիճակը վերջնականապես հայտնվեց կապիտալի թելադրանքի ներքո: Կարելի էր երկրի դրության կտրուկ վատթարացում սպասել: Կոռուպցիան սպառնալիքի տակ էր դրել Հայաստանի եւ Արցախի անվտանգությունը:

Կարո՞ղ է արդյոք նոր կառավարությունը երկիրը դուրս բերել այդպիսի վիճակից: Տեսականորեն կարող է, եթե ըմբռնի, որ ազգային անկարգությունների հիմքերի հիմքը սեփականության անպաշտպանվածության խնդիրն է: Եթե տվյալ սեփականության օրինականությունը չի ճանաչվում հասարակության կողմից, այդպիսի սեփականությունը չի կարող պաշտպանված լինել: Սեփականության եւ ձեռնարկատիրության պաշտպանության միակ իրական երաշխիքը դառնում է պետական իշխանության լծակների բռնի յուրացումը խոշոր սեփականատերերի կողմից: Հենց դա՛ տեղի ունեցավ Հայաստանում՝ նրա անկախ գոյության ողջ ժամանակաընթացքում: Չկա պաշտպանված սեփականություն՝ նշանակում է չկան անկախ արդարադատություն եւ ազատ ընտրություններ: Չկա նաեւ ինքնիշխանություն. ինքնիշխանությունը փոխանակել են արտաքին հովանավորչության հետ՝ պետական իշխանությունը զավթողների իշխանության ու սեփականության պաշտպանման դիմաց: Սահմանադրական կարգի հաստատումը եւ երկրի ինքնիշխանության վերականգնումն էլ հենց Հայաստանի ռազմավարական խնդիրն են:

Դժվար է հավատալ, որ նոր կառավարությունը կարող է այդպիսի խնդիր լուծել՝ թեպետ խոշոր սեփականատերերը պաշտոնապես հանվել են նրա կազմից: Ամեն դեպքում՝ Հայաստանում սահմանադրական կարգի հաստատումը հնարավոր է իրականացնել հանրային 3 պայմանի հասնելու միջոցով, որոնք Սահմանադրության ընդունման եւ սահմանադրական կարգի կառուցման համար հող կնախապատրաստեն: Նման սոցիալական պայմանագրերը կարող են լինել օրենսդրական 3 նախաձեռնություններ, որոնք պետական ապարատը կազատեն կապիտալի թելադրանքից, կկանոնակարգեն սեփականութ-

յան պաշտպանությունը, քաղաքական սուբյեկտների ձեւավորումն ու գործունեությունը (կուսակցությունների մասին օրենքը), ինչպես նաեւ ընտրական գործընթացներն ու դրանց արդարությունն ապահովող երաշխիքները: Իհարկե, այդպիսի բարեփոխում կատարելու համար գլխավոր պայման է ՀՀԿ-ի արձակումը: Մինչդեռ ՀՀԿ-ն, ինչպես տեսանք, վերջերս նոր համալրում ստացավ, այդ թվում՝ ի դեմս վարչապետի, ով փորձում էր հավաստիացնել, թե իշխող կուսակցությունը որոշել է փոխվել:

Վերը նշված խնդիրների լուծումը կարող էր պայմաններ ստեղծել մեր երկրի իրավաքաղաքական մոդելի ճշգրտման համար: Ռազմավարական նշանակության համահայկական խնդիրները պետք է դուրս բերվեն հատուկ հիմնահարցերի կարգը, որոնց լուծման իրավունքը սոսկ Հայաստան պետությանը չի պատկանում. դրանք պետք է լուծվեն հայ ժողովրդի առանձին հատվածների իրավունքներին ու պարտականություններին լիովին համահունչ: Նախեւառաջ հարկավոր է գտնել ՀՀ-ի ռազմավարականորեն արդարացված ինքնորոշման իրավական շրջանակների նոր գծապատկերը: Եվ ապա՝ դրան համապատասխան գծել այն սահմանները, որոնք տարանջատում են Հայաստանի Հանրապետության հիմնահարցերը համահայկական ռազմավարական նշանակության խնդիրներից:

Интервью

Манвел Саркисян: Проблемы надо решать, а не пытаться «освобождаться» от них

В интевью дана оценка пройденного Арменией 25-летнего пути, который она прошла после обретения независимости. Освещаются вопросы достижений и упущений в период независимости, указываются общенациональные приоритеты, вызовы и те нерешенные проблемы, которые соотносятся к различным сферам – социально-экономического развития, политическим, демократическим процессам, суверенитета и укрепления обороноспособности.

Interview

Manvel Sargsian: We Should Solve Problems and not Avoid Them

The interview assesses Armenia's 25-year path since independence. In particular, the interview addresses achievements and shortcomings of the period following independence, indicates national priorities, challenges and various unresolved issues relating to political, social and economic development, democracy, sovereignty and strengthening of defense capacity.

ԱՊՐԻԼՅԱՆ ԴԱՍԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՐՑԱԽՈՒՄ

ԱՊՐԻԼՅԱՆ ԴԱՍԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՐՑԱԽՈՒՄ

ԳԵՂԱՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
«Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր, Ստեփանակերտ

Անվտանգության քաղաքական բաղադրիչը

Ապրիլյան դեպքերը ցույց տվեցին, որ հանրությունը թե ԼՂՀ-ում եւ թե ՀՀ-ում անվտանգության խնդիրը կապում է միմիայն ռազմական բաղադրիչի հետ: Փորձագիտական-վերլուծաբանական շրջանակներում էլ տարածված է այն կարծիքը, որ ղարաբաղյան երկրորդ պատերազմը սկսվել է ռազմական հավասարակշռության խախտման պատճառով:

Նման պնդման համար, ինչ խոսք, լուրջ հիմքեր կան՝ Ադրբեջանը վերջին տարիներին սրընթաց մեծացրել է իր ռազմական բյուջեն, ձեռք բերել ժամանակակից մահաբեր հարձակողական զենքեր եւ լրջորեն նախապատրաստվել լայնածավալ ռազմական գործողությունների: Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանը ոչ միայն արագընթաց տեմպերով զինել է Ադրբեջանին, այլեւ դանդաղեցրել է հայկական բանակի վերազինման պայմանավորվածությունները՝ դրանով իսկ նպաստելով ռազմական հավասարակշռության էական խախտմանը եւ բարենպաստ պայմաններ ստեղծելով պատերազմի վերսկսման համար, ավելին՝ ինչպես հետո պարզվեց, պայման դնելով, որպեսզի Հայաստանի ձեռք բերած ռուսական զենքը չհայտնվի Արցախում:

Այս ամենը, իհարկե, կար: Բայց արդյո՞ք միայն սա էր հրադադարի խախտման պատճառը: Արդյո՞ք ռազմական հավասարակշռության փոփոխումը որակական նոր մակարդակի էր: Թե՞ սա մեդալի միայն մի երեսն է:

Այս մասին կարծես թե ընդունված չէ խոսել: Սկսված կամավորական շարժման շնորհիվ հայ հանրության զգալի հատվածը զինվորական հագուստ է հագել, մեկնել առաջին գիծ՝ կռվելու կամ կռվողներին բարոյապես սատարելու նպատակով: Օրակարգն էլ, բնականաբար,

ռազմական էր: Քննարկման առարկան՝ ռազմական հարցեր: Եզրաբանությունը՝ նույնպես ռազմական:

Ինչ խոսք, զինվորական համազգեստով այսուայնտեղ հրապարակային երեւակվելու՝ հանրության ամենատարբեր շերտերի ներկայացուցիչների գայթակղությունն ինքնին կարեւոր է պատերազմի սպառնալիքի տակ ապրող հանրությանը գոտեպնդելու եւ ոգեշնչելու, զինվորի հերոսությունն ընդգծելու ու դրա մասը կազմելու, ինչպես նաեւ բանակի նկատմամբ հանրային վտահությունն ու աջակցությունը ցույց տալու առումով, բայց բավական խնդրահարույց է քաղաքական հարթությունից հարցերը հեռացնելու կամ դրանք չկարեւորելու, նույն այդ հարթությունում մեր կրավորականությունն ու տարիների անգործությունը պարզաջրելու առումով: Համատարած համազգեստայնացումն ի ցույց դրեց անվտանգության բաղադրիչը քաղաքականության հետ առնչելու՝ մեր հանրության անկարողությունը:

Ապրիլյան դեպքերի առաջին իսկ օրվանից պնդել եմ, որ շփման գծում դեպքերը զարգացել են զուտ այն պատճառով, որ դրանք պիտի զարգանային այլ տեղ, բայց չեն զարգացել: Խոսքը քաղաքական-դիվանագիտական ոլորտի մասին է՝ մեծ հաշվով, այլ ոչ միայն ղարաբաղյան կարգավորման: Իմ խորին համոզմամբ՝ ՀՀ-ի ու ԼՂՀ-ի քաղաքական ինքնիշխանության ռեսուրսների մսխումն ու քաղաքական սուբյեկտայնության կորուստն են դեպքերի զարգացումը տանում դեպի շփման գիծ՝ ըստ այդմ էլ բանակը դարձնելով մեր վերջին հույսն ու ապավենը եւ ֆետիշացնելով անվտանգության ռազմական բաղադրիչի դերը՝ ի հաշիվ քաղաքականի: Սակայն բանակը, իր գերկարեւորությամբ հանդերձ, չի կարող մեր անվտանգության միակ հույսն ու երաշխիքը լինել, ավելին՝ բանակի ամրության հույսն ու գրավականն էլ մեր համարժեք, միջազգային թրենդներին համահունչ քաղաքականությունը պիտի լինի:

Հանրությունում չկա նաեւ այն իրողության գիտակցումը, որ պատերազմը սկսվել է թերեւս այն պատճառով, որ խախտվել է ոչ միայն եւ ոչ այնքան ռազմական հավասարակշռությունը, որքան՝ քաղաքականը: Ըստ իս, հենց քաղաքական հավասարակշռության խախտումն է եղել ռազմական գործողությունների վերսկսման գլխավոր պատճառը: Ի վերջո, եթե Ադրբեջանը վստահ չլիներ, որ իր նախահարձակ գործողությունները մարսելու է՝ չէր գնա հերթական արկածախնդրության: Ավելի պարզորոշ՝ եթե Ադրբեջանը վստահ չլիներ, որ Ռուսաստանը չի օգնելու եւ չի պաշտպանելու Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին, նման ռիսկային քայլի չէր դիմի: Սա վկայում է, որ Ռուսաստանն առնվազը տեղյակ է եղել ամեն ինչին: Ու ոչ միայն իր շահերն է հե-

տապնդել, այլեւ իր պայմաններն է դրել Հայաստանի ու Ադրբեջանի առջեւ՝ Հայաստանից պահանջելով իրենից ստացած զինատեսակները չտեղաբաշխել Արցախում, իսկ Ադրբեջանի առջեւ էլ պայման դնելով լայնածավալ ռազմական գործողությունների չդիմել Հայաստանի հետ սահմանին (որպեսզի ՀԱՊԿ-ի ու ԵԱՏՄ-ի, ինչպես նաեւ Հայաստանի հետ Ռուսաստանի ռազմավարական դաշնակցության մասին ավելորդ հարցեր չծագեն):

Հայ հանրությունը համարժեք գնահատական չի տալիս նաեւ Ադրբեջանի գործողություններին: Դրանք միայն ռազմական գործողություններ չեն, այլեւ մի քանի տարի առաջ այդ պետության վերնախավի հռչակած ռազմական դիվանագիտության արդյունք: Ադրբեջանը պատերազմ չի հայտարարում, այլ գործում է ռազմական դիվանագիտության եւ հիբրիդային պատերազմի կանոններով: Իսկ սրանցում մեծ է նաեւ քաղաքական բաղադրիչը: Այնպես որ՝ քաղաքական բաղադրիչն ամենուր է: Եվ ուղղակի անհնար է չնկատել այն: Կամ էլ՝ չնկատելու տալ, ինչը հավասարազոր է գիտակցված ինքնասպանության:

Իսկ ի՞նչ քաղաքական հետեւանքներ կունենա այս քառօրյա պատերազմը:

Այս մասին շատ է խոսվել հայ հանրությունում, սակայն նպատակահարմար եմ գտնում անդրադառնալ ռուս հայտնի ռազմական անկախ փորձագետներից մեկի՝ Վյաչեսլավ Միխայլովի կարծիքին, ով, ըստ երեւույթին, ոչ միայն լավ տիրապետում է թեմային, այլեւ քաջածանոթ է հայկական իստեբլիշմենտի խոհանոցին:

Ըստ Միխայլովի, Ադրբեջանին չհաջողվեց կազմաքանդել 1994 թվականի զինադադարի ժամանակ ձեռք բերված հայկական կողմի ռազմաքաղաքական համակարգը, սակայն, որոշ առաջխաղացում, այնուամենայնիվ, պաշտոնական Բաքուն արձանագրեց եւ փորձելու է այն կապիտալացնել բանակցությունների ժամանակ: Հայկական կողմը նույնպես չկարողացավ արձանագրել որեւէ դրական արդյունք եւ, որ ամենակարեւորն է, ապրիլի հինգին Մոսկվայում ժամանակավոր զինադադար կնքեցին Հայաստանի եւ Ադրբեջանի զինված ուժերի գլխավոր շտաբների ղեկավարները, որտեղ չկար Ղարաբաղյան բանակի գլխավոր շտաբի ղեկավարը: «Սա հայկական կողմի ամենամեծ բացթողումն էր,- գրում է Միխայլովը,- որից հետո, կարծես կանխազգալով այս սխալը, Երեւանը սկսեց անընդհատ խոսել, որ գալիք բանակցություններում պետք է մասնակցի պաշտոնական Ստեփանակերտը: Տարօրինակ է նման ձեւակերպումներ լսել հայկական կողմից, երբ նրանք չկարողացան Մոսկվայում զինադադարը հաստատել Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչի մասնակցությամբ»:

Վերլուծաբանի կարծիքով՝ չափազանց կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ Ադրբեջանին չհաջողվեց այս փոքրիկ պատերազմի արդյունքում կազմալուծել ԵԱՀԿ Մինսկի խմբի առկա ձեւաչափը, որովհետեւ նրանք հույս ունեին, որ ռազմական հաջողության արդյունքում իրենք կկարողանան դիվանագիտական նոր ճակատներ բացել ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցում: «Այսօր միակ կետը, որ ադրբեջանցիները կարող են շեշտադրել, այն է, որ նրանք փորձեն գերակա դարձնել խաղաղապահ ուժերի մուտքը տարածաշրջան, այսպես կոչված, Մադրիդյան սկզբունքերի փաթեթի կետերի համեմատ»,- նշում է Միխայլովը[1]:

Ապրիլյան պատերազմի քաղաքական հետեւանքներից մեկն էլ հայ-ռուսական հարաբերությունների վերարժեւորման օրախնդիր դարձած գործընթացն է: Տասնամյակներ շարունակ ամենատարբեր մակարդակներում ու հարթակներում խոսվել է հայ-ռուսական դարավոր բարեկամության մասին, հայ հանրությանը նախապատրաստել են հանուն այդ բարեկամության շատ բաներ անտեսելուն եւ այդ բարեկամության համար թանկ գին վճարելուն: Այդ գինն առաջին հերթին քաղաքական է: Վերջին շրջանի հայ-ռուսական բարեկամության գինը Հայաստանի քաղաքական ինքնիշխանության եւ ինքնուրույնության կորուստն է: Իսկ Մոսկվայում էլ Հայաստանի նկատմամբ արմատավորվել է «Ո՞ւր պիտի գնան» ճարտասանական հարց-դիրքորոշումը, որից ելնելով էլ հայ հանրության մեջ նպատակամիտված աշխատանք է տարվել քաղաքական անելանելիության արմատավորման ուղղությամբ:

Սակայն ապրիլյան պատերազմը սրեց եւ հանրային օրակարգի թեմա դարձրեց հայ-ռուսական հարաբերությունների բոլոր հրատապ ու զգայուն հարցերը: Մեծ հաշվով, հայ հանրությունը շոկի մեջ էր: «Մեծ եղբորից» կամ «ավագ դաշնակցից» հիասթափությունն այնքան մեծ էր, որ անգամ իշխանական եւ իշխանամերձ շրջանակներում էին այդ թեմային այս կամ այն կերպ անդրադառնում:

Հայտնի քաղաքական վերլուծաբան Ռուբեն Մեհրաբյանն ահա այսպես է ամփոփել այդ ամենը. «Եվ այս ամենից հետո դեռ կլինեն «դարավոր բարեկամության» մասին անպարկեշտ «ռուսական շանսոն» երգողներ: Այդ «բարեկամության» հիմքի համար քարը քարի վրա չի մնացել: Ակնհայտ է, որ առջեւում մեզ սպասում են ոչ ստանդարտ քայլեր՝ «դարավոր բարեկամության» այս արյունալի ճահճից դուրս պրծնելու համար: Առասպելը հիմնովին փշրված է. ռուսամետ

1 Տես՝ Ռուս ռազմական վերլուծաբանի անաչառ գնահատականը՝ ղարաբաղյան չորսօրյա պատերազմին, http://zham.am/am/news/62495.html

գլուխներին տեղացած սառը ռուսական ցնցուղն արդեն ստեղծել է նոր իրականություն, որից դուրս են մնացել միայն լրիվ «անգլուխները»: Բայց նրանք հաշիվ չեն: Ժամանակն է գործի լծվելու: Մեր նպատակն է՝ կատարել սպառնալիքների եւ դրանց հաղթահարման ուղիների վերագնահատում, նորովի հասկանալ, թե ովքեր են մեր հակառակորդները, ովքեր կարող են լինել մեր դաշնակիցները եւ մեր հակառակորդների համար քաղաքականապես անընդունելի դարձնել նոր արյունահեղության գինը»[2]:

Ապրիլյան պատերազմ ու արցախյան ներքին իրողությունները

Ապրիլյան պատերազմը մի իսկական ցնցակաթված էր արցախյան հանրության համար: Թեեւ գրեթե ամեն օր հանրային խողովակներով խոսվում էր, որ մեր գլխին դամոկլյան սրի պես կախված է պատերազմի վտանգը, այնուամենայնիվ, իշխանամերձ փորձագիտական շրջանակներում գերիշխող էր այն կարծիքը, որ Ադրբեջանը չի համարձակվի մարտահրավեր նետել ղարաբաղյան հիմախնդրի ռազմական լուծումը բացառելու մասին պարբերաբար հայտարարող միջազգային հանրությանը, եւ որ պաշտոնական Բաքվի հայատյաց ու ռազմատենչ հռետորաբանությունն ավելի շատ ուղղված է ներքին լսարանին: Մյուս կողմից էլ՝ չափազանց վստահ էին խոսում ԼՂՀ-ի ու ՀՀ-ի քաղաքական եւ ռազմական ղեկավարները: Վերջիներս մշտապես պնդում էին, որ ամեն ինչ արված է երկրի պաշտպանունակության ամրապնդման համար, եւ որ մեր զինված ուժերը պատրաստ են արժանի հակահարված տալու հակառակորդին:

Սակայն պարզվեց, որ անվիճարկելի ճշմարտություն է այն պնդումը, թե գեներալները միշտ էլ պատրաստվում են... նախորդ պատերազմին: Այո, թերեւս կարելի է պնդել, որ արցախյան ռազմական իստեբլիշմենտը պատերազմին պատրաստ էր նախորդ պատերազմի տրամաբանությամբ: Մինչդեռ նախորդ պատերազմից 22 տարի է անցել եւ այդ ընթացքում շատ բան է փոխվել, շատ ջրեր են հոսել ինչպես աշխարհում, այնպես էլ Ադրբեջանում:

Մյուս տհաճություն էլ այն էր, որ քաղաքական ղեկավարությունն իր հերթին մնացել էր նախորդ պատերազմի քաղաքական աուրայում: Անգամ ելույթների ու հայտարարությունների եզրաբանությունը չէր փոխվել:

2 Տես՝ Առասպելը հիմովին փշրված է. սառը ռուսական ցնցուղ՝ ռուսամետ գլուխների վրա, http://theanalyticon.com/?p=7841

Դեպքերը ցույց տվեցին, որ գրեթե զարգացում չի ապրել նաեւ քաղաքական համակարգը: Վերջինս արտաքուստ ժողովրդավարական էություն ունի, պատված է ժողովրդավարության շղարշով, բայց ներքուստ մրցունակ չէ եւ ի վիճակի չէ ինքնուրույն ճիշտ ու արագ որոշումներ կայացնել: Սա մի համակարգ է, որը բացառում է երկրի որակական զարգացումը, այդ թվում՝ ռազմական ոլորտում: Ավելին՝ համակարգը ոչ միայն չի կանխում ռազմական ոլորտի թերությունները, այլեւ բարենպաստ հող է ծառայում դրանց համար: Մի գեղեցիկ օր բոլորին պարզ դարձավ ռազմական նպատակներով հատկացված բյուջետային միջոցների, մեղմ ասած, ոչ նպատակային ծախսման, իսկ ավելի ստույգ՝ մսխման փաստը:

Արցախյան հանրությունը չափազանց թանկ վճարեց այս ռազմաքաղաքական ատավիզմի համար: Բայց կարող էր շատ ավելին վճարել, ամեն ինչ կարող էր ավելի վատթար լինել՝ հանրությանը կանգնեցնելով ոչնչացման եզրին եւ կասկածի տակ դնելով երկրորդ հայկական պետականության ապագան:

Արդյոք հայկական երկրորդ պետականությունում ճիշտ դասեր քաղեցին ապրիլյան քառօրյա պատերազմից: Առաջին հայացքից՝ այո: Արցախում ընդունված է ասել, որ անվտանգության ապահովման ուղղությամբ հետապրիլյան ամիսներին ավելի շատ բան է արվել, քան ղարաբաղյան առաջին պատերազմից հետո մինչեւ 2016-ի ապրիլն ընկած ժամանակահատվածում:

Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ աշխարհը փոխվել է նաեւ ապրիլից հետո, լուրջ իրադարձություններ են տեղի ունեցել միջազգային ասպարեզում, որոնք անպայման անդրադառնալու են միջազգային օրակարգի վրա, ինչն էլ այս կամ այն կերպ ազդելու է թե տարածաշրջանային զարգացումների եւ թե կոնկրետ ղարաբաղյան կարգավորման վրա: Մինչդեռ դարձյալ այս ամենի վերլուծությունը չկա, ինչպես նաեւ չկան համապատասխան քաղաքական եզրակացություններ:

Սակայն հասկանալու համար, թե արդյոք ճիշտ դասեր են քաղել ապրիլյան դեպքերից, պարզապես հարկ է ուսումնասիրել արցախյան ռազմաքաղաքական իստեբլիշմենտի այսօրվա օրակարգը: Այնպիսի պայմաններում, երբ ոչ միայն ուժգնացել է Ադրբեջանի ղեկավարության ռազմատենչ հռետորաբանությունը, այլեւ այդ երկիրը նոր սպառազինություն է ձեռք բերել եւ անցկացրել իր նոր պատմության մեջ ամենազանգվածային զորավարժությունները՝ հայկական երկրորդ պետականության «քթի տակ»:

Եվ ի՞նչն է այսօր հուզում ԼՂՀ ղեկավարությանը:

Արցախի քաղաքական ղեկավարությունն այսօր ապրում է եւ փորձում է երկրին «ապրեցնել» սահմանադրական բարեփոխումների գաղափարով: Ինչպես ասում են՝ ում ինչն է ցավում…

Սահմանադրության փոփոխումն Արցախում, իմ խորին համոզմամբ, հեռավոր իսկ առնչություն չունի հանրային օրակարգի հետ՝ դա արհեստական կամ կեղծ օրակարգ է: Արցախցիների հազարումի դարդն այսօր Սահմանադրությունը չէ: Հեղուկ գազի գինն Արցախում գրեթե կրկնակի թանկ է ՀՀ-ում իրացվողի համեմատ: Հեռահաղորդակցության միակ օպերատոր «ՂարաբաղՏելեկոմը» դրակոնյան կանոններ ու սակագներ է դրել, իսկ երկրորդ օպերատորի մուտքը հետեւողականորեն կասեցվում է, ու դժվար չէ կռահել սույն իրավիճակի շահառուներին: Մենաշնորհներն առկա են նաեւ մյուս ոլորտներում: Պետական պաշտոնյաները զբաղվում են ապօրինի բիզնեսով: Կոռուպցիան եւ պետական միջոցների փոշիացումը մեծ ծավալների են հասել: Մարդու հիմնարար իրավունքների հարցում լրջագույն խնդիրներ կան: Սոցիալական անարդարությունը քայքայում է պետականության հիմքերը: Այս ամենի հետեւանքն արտագաղթն է, որը ազգային անվտանգությանը սպառնացող գլխավոր վտանգն է այսօր:

Հիմա այս բոլոր հարցերի լուծման բանալին Սահմանադրության փոփոխությու՞նն է: Որեւիցե մեկն Արցախում չի կարողանում հոդաբաշխ ձեւով բացատրել, թե ներկայիս Սահմանադրությունն ինչով է խանգարում նշյալ հարցերի լուծմանը:

Ասում են՝ ապրիլյան քառօրյա պատերազմը շտկումներ մտցրեց սահմանադրական փոփոխությունների գործընթացում: Ինչն առնվազը լուրջ չէ: Թե՛ նախաապրիլյան անմխիթար վիճակը բանակում եւ հատկացված միջոցների, մեղմ ասած, փոշիացումը եւ թե՛ հետապրիլյան աննախադեպ տեմպերով անվտանգության միջոցների ձեռնարկման արդյունավետությունը հնարավոր են եղել նույն համակարգի, կառավարման նույն տիպօրինակի պայմաններում: Ուրեմն՝ շան գլուխն ուրիշ տեղ է թաքնված:

Առհասարակ, անվտանգության խնդիրը հատկապես այս պարագայում շահարկելն անազնիվ է: Անվտանգության ոչ միայն սպառողը, այլեւ ստեղծողն ու կրողը մարդն է՝ իր հողում ազատ, արժանապատիվ, բարեկեցիկ եւ ապահով կյանքով ապրող մարդը: Արցախի իշխանությունները կարող են թեթեւացնել նրա բեռը, հանել կաշկանդող կապանքները, չոտնահարել իրավունքները, վերակենդանացնել նրա հույսն ու հավատը: Եվ կունենան անվտանգ երկիր:

Կարծիք կա, որ սահմանադրական փոփոխությունները պայմանավորված են նաեւ ղարաբաղյան կարգավորմամբ, դրանում առկա

միտումներով եւ հետագայում առավել բարենպաստ ու հարմարավետ պայմանների ստեղծմամբ: Մինչդեռ սա ոչ մի առնչություն չունի իրականության հետ: Ղարաբաղյան կողմն այսօր բանակցային գործընթացին չի մասնակցում: Երբ խորանում ես դրա պատճառների մեջ՝ հասկանում ես, որ կառավարման մոդելը սրա հետ նույնքան կապ ունի, որքան կրթության նոր՝ 12-ամյա համակարգը: Համենայն դեպս՝ եթե, օրինակ, ինձ առաջարկեն թվարկել մեր չմասնակցության իրական պատճառները, ապա կառավարման տիպօրինակը ոչ միայն պատճառների առաջին եռյակում, այլեւ առաջին տասնյակում չի հայտնվի: Այնպես որ, պետք չէ խորամանկել:

Պարզից էլ պարզ է, որ սահմանադրական փոփոխությունները ոչ թե գաղափարախոսություն, հայեցակարգ կամ տեսլական են իրենցից ներկայացնում, այլ ամենասովորական քաղաքական նպատակահարմարություն, կոնյունկտուրա եւ քաղաքական հաշվարկ: Դեռեւս մի տարի առաջ այս մարդիկ խոսում էին խորհրդարանական մոդելի առավելությունների մասին, իսկ հիմա մտափոխվել են եւ ընդունելի են համարում միայն ու միայն նախագահական-սուպերնախագահական տիպօրինակը:

Սահմանադրական փոփոխությունները բացարձակապես ոչ մի կապ չունեն երկրի առջեւ ծառացած մարտահրավերների ու ժողովրդի դարդուցավի հետ եւ հանրային օրակարգ չեն: Ուրեմն՝ ո՞ւմ օրակարգն է սա:

Ոչ իշխանական ու ընդդիմադիր-այլախոհ շրջանակներում ամենատարածված կարծիքն այն է, որ իշխանության վերարտադրության հարց է լուծվում: Սա հիմնականում ճիշտ է, բայց կա մի նրբերանգ՝ իշխանությունը կարող է վերարտադրվել նաեւ սովորական ընթացակարգով, եւ դրան խանգարող լուրջ գործոն չկա Արցախում: 2007-ից ի վեր Արցախում միաբեւեռ հասարակություն է. ներկայիս միակ ընդդիմադիր «Ազգային վերածնունդ» կուսակցությունն իր միակ պատգամավորով բավարար ռեսուրսներ չունի մրցակցելու իշխանությունների հետ:

Սա նշանակում է, որ ոչ թե ամբողջությամբ վերցրած իշխանության վերարտադրության խնդիր կա, այլ իշխանական կոնկրետ շրջանակի-խմբի-անձի վերարտադրման նպատակ: Գործող նախագահ Բակո Սահակյանն արդեն երկու անգամ ընտրվել է եւ գործող Սահմանադրությամբ չի կարող երրորդ անգամ ստանձնել այդ պաշտոնը: Սահակյանի լիազորությունները կդադարեցվեն 2017-ին, մինչդեռ ԱԺ հաջորդ ընտրությունները նախատեսված են միայն 2020 թվականին: Գործող նախագահն, ամենայն հավանականությամբ, կշարունակի պաշտոնավարել մինչեւ 2020 թվականը, որը կհամարվի անցումային

շրջան եւ չի հաշվարկվի որպես լիարժեք նախագահական ժամկետ: Ովքեր պնդում են, թե դա իրականությանը չի համապատասխանում, ապա պիտի ինչ-որ ձեւով փորձեն բացատրել, թե այդ դեպքում անցումային շրջանն ինչի համար է ընդհանրապես: Եթե գործող նախագահը չի լինելու, ապա նոր մարդն անցումային շրջանի կարիքն ընդհանրապես չունի եւ կնախընտրի լիարժեք նախագահական ժամկետը:

Արցախյան պետական-կառավարման համակարգում կան առաջադեմ ու հայրենասեր մարդիկ, ովքեր մտահոգված են այս անցումային շրջանով եւ հասկանում են, որ դա լուրջ հարված է լինելու երկրի իմիջին: Բայց այս եւ նմանատիպ հարցերի մասին հրապարակավ բարձրաձայնելն ընդունված չէ Ստեփանակերտում: Շատ ավելի հավանական է, որ փորձ արվի ներիշխանական կուլիսներում նորից քննարկել հարցը: Այսպես թե այնպես՝ մի բան պիտի արվի, քանի որ եթե փոխվեց վերաբերմունքը հայկական երկրորդ պետականության նկատմամբ միջազգային ասպարեզում, սա լինելու է ամենամեծ վտանգը՝ ցանկացած ժամանակակից զենքից առավել: Իսկ նշյալ դիպաշարով անցումային շրջանը եւ փաստացի 3-րդ՝ ապօրինի ժամկետը հենց այդ մարտահրավերն են լինելու Արցախի անվտանգության համար:

Վերոնշյալից, կարծում եմ, կարելի է այն եզրահանգումն անել, որ չնայած առաջին հայացքից տեսանելի ու ձեռնարկված միջոցներին՝ երկրորդ հայկական պետականությունում անհրաժեշտ դասերը չեն քաղել ապրիլյան դեպքերից:

Չի կարող ապագա ունենալ մի երկիր, որն ունի ահավոր մարտահրավերներ թե՛ դրսից եւ թե՛ ներսից, ու որի ներսի մարտահրավերներն ավելի ահագնացող են: Արցախում իշխանությունը կամ նրա առանձին դրվագներն ԱՅՍՕՐ ամեն դեպքում վերարտադրվելու են: Պարզապես կա երկու ճանապարհ. վերարտադրվել՝ երկրին պատճառելով նվազագույն վնաս եւ վերարտադրվել՝ երկրին պատճառելով առավելագույն վնաս: Պետք է ընտրություն կատարենք վատի ու վատագույնի միջեւ: Արցախյան քաղաքական իստեբլիշմենտն այսօր վատագույնի ճանապարհին է:

Մինչդեռ կա այլ տարբերակ:

Իդեալական տարբերակը սահմանադրական փոփոխություններից հրաժարվելն է եւ 2017-ին հերթական նախագահական ընտրություններն անցկացնելը: Մյուս տարբերակը հետեւյալն է՝ եթե սահմանադրական փոփոխությունների գործընթացի թափանիվն արդեն այնպես է պտտվում, որ կանգնեցնել հնարավոր չէ, ապա առաջարկում եմ 2017-ին լուծարել խորհրդարանը եւ միաժամանակ անցկացնել նախագահական ու խորհրդարանական ընտրություններ, այսինքն՝ այն,

ինչ արցախյան իշխանությունն ուզում է անել 2020-ին: Կխնայենք երեք տարի, կխնայենք միջոցներ, որ կարելի կլինի ուղղել մեր անվտանգությանը, եւ ամենակարեւորը՝ կկանխենք մեր իսկ ծանր հարվածը մեր իսկ թիկունքին՝ չարժանանալով միջազգային հանրության արհամարհանքին եւ մեզ ապահովագրելով անհարկի համեմատություններից: Խորհրդարանի լուծարումն էլ քաղաքական փոփոխությունների, ժողովրդավարական գործընթացների գոնե պատրանք կստեղծի եւ գոնե կպահպանի երկրի փոքրիշատե տանելի իմիջը:

Ի վերջո, վերարտադրությունն էլ որոշակի տրամաբանություն եւ կանոններ ունի: Վերարտադրությունն էլ որոշակի փոփոխություններ է ենթադրում: Ամենաստատիկ, անշարժ վիճակը գերեզմանատներում է լինում, բայց նույնիսկ այնտեղ են փոփոխություններ լինում ու նոր դեմքեր հայտնվում:

Ժողովրդավարություն եւ անվտանգություն

Ապրիլյան դեպքերից արցախյան հանրությունը, ի տարբերություն իշխանությունների, սկսում է ճիշտ եզրահանգումներ անել: Դրանցից ամենակարեւորը ժողովրդավարության եւ անվտանգության անհամատեղելիության մասին առասպելի սասանումն էր: Սույն առասպելը տարիներ շարունակ սերմանվել է արցախյան հանրությունում:

Տարիներ առաջ արցախցի հայտնի լրագրողներից մեկը գլխավոր պաշտոնաթերթում մոտավորապես հետեւյալ միտքն էր արտահայտել՝ եթե ստիպված լինեմ ընտրել ժողովրդավարությունը կամ անվտանգությունը, ապա կընտրեմ անվտանգությունը, եւ ոչ ոք չի կարող ինձ մեղադրել դրանում: Ի պատասխան այս պնդման՝ ընդիմադիր թերթում մեջբերեցին Բենջամին Ֆրանկլինի հայտնի միտքը՝ եթե մարդ իր ազատությունը զոհում է հանուն անվտանգության, ապա արժանի չէ ոչ ազատության եւ ոչ էլ անվտանգության:

Տարիներ շարունակ արցախցուն համոզում էին, որ քանի դեռ մեր գլխին դամոկլյան սրի պես կախված է պատերազմի վերսկսման վտանգը, քանի դեռ նորանկախ երկիրը միջազգային ճանաչում չունի՝ ներքին հարցերը, ժողովրդավարությանն ու մարդու իրավունքներին առնչվող խնդիրները պիտի երկրորդ պլան մղել, պիտի թողնել վաղվա օրվան: Այսինքն՝ երբ ապահովենք մեր անվտանգությունը՝ այն ժամանակ էլ կմտածենք ժողովրդավարության մասին, իմա՝ երբ արդեն անվտանգ կլինենք, այն ժամանակ էլ կմտածենք ազատ լինելու մասին:

Սույն առասպելը կամ, ավելի ճիշտ, գաղափարաքարոզչական կարգախոսը բարենպաստ պայմաններ է ստեղծել իշխանությունների գործունեության հանրային վերահսկողության բացառման, սոցիալական անարդարության խորացման եւ, որ ամենասարսափելին է, բանակը քննադատությունից ու հանրային միջամտությունից զերծ պահելու համար:

Ապրիլյան պատերազմ այս առումով, կարելի է ասել, բացեց մարդկանց աչքերը: Գիտակից մարդիկ սկսեցին հասկանալ, որ հենց ժողովրդավարության բացակայությունն է մեր ժողովրդի ու պետության, մեր զավակների ֆիզիկական անվտանգության ամենամեծ սպառնալիքը: Հանդուրժելով զոռբայությունն ու ապօրինությունները, կոռուպցիան ու երկրի հարստությունների, այդ թվում՝ անվտանգությանը հատկացված միջոցների փոշիացումը, ընտրական կեղծարարություններն ու իշխանությունների վերարտադրումը, սոցիալական ճչացող անարդարությունը՝ մարդ դրանով իսկ վտանգի տակ է դնում իր զավակների կյանքը: Բառի ոչ միայն փոխաբերական, այլեւ բուն իմաստով:

Մարդիկ նաեւ սկսեցին գիտակցել, որ ժողովրդի կողմից չվերահսկվող իշխանությունը վերահսկվում է ուրիշների կողմից, ինքը դառնում է խոցելի ու անպաշտպան եւ վերածվում իր ժողովրդի անվտանգության ամենամեծ սպառնալիքի: Այսինքն՝ որ իշխանությունների վերահսկումը անվտանգության գրավականն է:

Մարդկանց մի զգալի մասին թվում էր, թե իրենց թշվառ կյանքի ու ոտնահարված իրավունքների գնով գոնե ապահովում են իրենց ու զավակների անվտանգությունը: Ապրիլյան դեպքերը ցույց տվեցին, որ ընդհակառակը՝ լավ ապրելով ու կյանքը վայելելով, անկախության պտուղները ճաշակելով, սեփական իրավունքներից թիզ անգամ չզիջելով եւ դրանով իսկ սեփական իշխանությանը վերահսկելով՝ իրականում ավելի ապահով ու անվտանգ կլինեին իրենք ու իրենց զավակները:

Ժողովրդավարության եւ անվտանգության անհամատեղելիության մասին առասպելը Հայաստանում չկար այն տեսքով, ինչ տեսքով քարոզվում էր Արցախում: Սակայն այստեղ եւս այդ թեման հրատապ էր՝ իր ուրույնությամբ: Ինչպես ընդունված է խոսել փորձագիտական շրջանակներում՝ ապրիլյան պատերազմը երեւակեց Հայաստանի կառավարման համակարգում գոյություն ունեցող խնդիրները, ի հայտ բերեց պաշտպանական եւ քաղաքական համակարգի թերությունները, որոնք անհապաղ լուծումներ են պահանջում, այլապես երկարաժամկետ հեռանկարում հնարավոր չի լինի դիմագրավել Ադրբեջանի ագրեսիային:

Ըստ քաղաքագետ Արմեն Գրիգորյանի, ապրիլյան պատերազմը Հայաստանի բյուրոկրատիայի վրա շոկային ազդեցություն է թողել, որովհետեւ ցույց տվեց, որ գործող համակարգը չի կարող արդյունավետ աշխատել պատերազմական իրավիճակում: Պատերազմը եւս մեկ անգամ հաստատեց, որ բյուրոկրատիան փոխելու լուրջ անհրաժեշտություն կա, հակառակ դեպքում՝ այն չի կարողանա դիմագրավել հետագա պատերազմներին եւ լուրջ խնդիրներ կստեղծի հայկական պետականության գոյության համար: Ապրիլյան պատերազմից հետո հասարակությունը սկսել է առավել ակտիվ քննարկել կոռուպցիայի խնդիրը Հայաստանում:

«Հայաստանը եւս ստիպված է պետական ապարատի արդյունավետությունը բարձրացնել,- կարծում է քաղաքագետը,- որովհետեւ այսօրվա բյուրոկրատիան չի կարող ապահովել արդյունավետ անվտանգություն: Նախ՝ այն ուռճացված է եւ, բացի դրանից, խոչընդոտում է մրցակցային տնտեսություն ստեղծելու հնարավորությանը: Գործող բյուրոկրատիայի կոռումպացված լինելու պատճառով առկա պաշարամիջոցներն արդյունավետ չեն օգտագործվում»[3]: Ա.Գրիգորյանի կարծիքով՝ քանի որ Ադրբեջանի հետ ներկայիս լարվածությունը երկար է շարունակվելու, անհրաժեշտ է, որ Հայաստանն ունենա արդյունավետ կառավարման համակարգ, որն ի վիճակի կլինի ոչ միայն շահավետ տնօրինել գոյություն ունեցող ռեսուրսները, այլ նաեւ հավելյալ պաշարամիջոցներ ստեղծել ինքնապաշտպանության համակարգն ուժեղացնելու համար:

«Հայաստանը ուժեղ լինելու այլընտրանք չունի, որովհետեւ չունի այլ ռեսուրս, քան մարդն է,-եզրակացնում է քաղաքագետը,- իսկ մարդու ներուժը օգտագործելու միակ տարբերակը արդյունավետ կառավարման համակարգն է: Եթե Հայաստանը չօգտագործի վերը նշված գործիքները, ապա ուժերի անհավասարակշռությունն ավելի կխորանա, ինչն Ադրբեջանին ավելի շատ համարձակություն կտա նոր հարձակումներ նախաձեռնելու համար»: *(Նույն տեղը)*

Ապրիլը եւ սփյուռքը, կամ՝ եռամիասնության փոխակերպումները

Նորերս IDeA հիմնադրամի նախաձեռնությամբ «Հայաստանի Հանրապետություն» եւ The New York Times թերթերում հոկտեմբերի 28-

3 Տես՝ ՏԻՄ-ից դեպի համապետական ընտրություններ, http://theanalyticon.com/?p=8387#more-8387

ին հրապարակվել է «Գլոբալ հայերի ապագան այսօր է» վերնագրով բաց նամակը՝ ստորագրված տարբեր երկրներում բնակվող անվանի հայերի կողմից[4]:

Նամակը հրապարակվել է Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) 110-րդ տարեդարձի առիթով: Այն ստորագրել են Ռուբեն Վարդանյանը, Նուբար Աֆեյանը, Վարդան Գրեգորյանը, Շառլ Ազնավուրը, Լորդ Արա Դարզին, Սամվել Կարապետյանը, Արթուր Ջանիբեկյանը եւ այլք: Նամակի հեղինակները գտնում են, որ այսօր պատմական հնարավորություն է ստեղծված հայերի միավորման եւ Հայաստանի ապագան միասնաբար կերտելու համար: Նրանք բոլոր հայորդիներին կոչ են անում մտածել, թե նրանցից յուրաքանչյուրն ինչպես կարող է մասնակցել վաղվա առավել հզոր Հայաստանի կերտմանը:

«Նախկին Խորհրդային Միությունից անկախանալուց քառորդ դար անց Հայաստանի երիտասարդ հանրապետությունը դեռեւս խոցելի է, ինչպեսեւ հայկական ինքնությունն աշխարհում: Այժմ մենք պատմական խաչմերուկում ենք եւ, սթափ գնահատելով առկա մարտահրավերները, առջեւում նաեւ աննախադեպ հնարավորություն ենք տեսնում»,- ասվում է հայտարարության մեջ:

Իսկ ինչ ասել է գլոբալ հայերի ապագա: Նախաձեռնության հեղինակների պատկերացմամբ՝ երկարաժամկետ հեռանկարում պետք է ձգտել առնվազն համապատասխանեցնել Հայաստանը համաշխարհային այնպիսի չափանիշներին, ինչպիսիք գործում են հայերից շատերին հյուրընկալած երկրներում: Անհատական ջանքերից բացի, նրանք ակնկալում են բոլոր հայորդիների եւ հայկական կազմակերպությունների միջեւ համագործակցության եւ համախմբման աննախադեպ ոգի ստեղծել: Կոչ անելով հայերին ազգի սոցիալական, տնտեսական, մշակութային եւ տեխնոլոգիական ուժը վերականգնելու ուղղությամբ երկարաժամկետ ներդրումներ իրականացնել՝ առանցքում ունենալով Հայաստանը, միեւնույն ժամանակ նրանք Հայաստանի կառավարությանը զարգացման նոր, համատեղ ջանքերի վրա հիմնված ռազմավարություններ ներդնելու միջոցով այս ուղերձին արձագանքելու հույս են տածում:

Ամենակարեւորը՝ նախաձեռնության հեղինակները վստահ են, որ հաջողության հասնելու համար չի կարելի մեկուսացած՝ որպես Հայաստան եւ Սփյուռք գործել, ընդհակառակը՝ պետք է համախմբվել եւ միասնական ուժ դառնալ:

4 Տես՝ Գլոբալ հայերի ապագան այսօր է, http://www.lragir.am/index/arm/0/society/view/141778

Սա արդեն միանգամայն այլ մոտեցում է հայկական եռամիասնության ուղեծրում: Ինչ խոսք, այն միանշանակ չի ընդունվել հայ հանրությունում, ավելին՝ ազգայնական որոշակի շրջանակներ այս նախաձեռնությունը փորձել են ներկայացնել որպես «ապազգային ազգի» տիպօրինակի արմատավորման փորձ: Սակայն մի բան ակնհայտ է՝ այս նախաձեռնությունն անպայման նպաստելու է ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում Սփյուռքի հանդեպ վերաբերմունքի եւ Սփյուռքում՝ ՀՀ-ի ու ԼՂՀ-ի նկատմամբ ռազմավարության վերաժեւորմանը: Եվ, անշուշտ, երկար սպասված ու լուրջ գործընթաց է: Սրա նշանակությունը հատկապես մեծ է Արցախի պարագայում: Գաղտնիք չէ, որ գնալով նվազում է սփյուռքահայության խանդավառությունն Արցախի նկատմամբ ու դրանով պայմանավորված՝ նրա առարկայական մասնակցությունը նորանկախ երկրի զարգացման գործին:

Հեռուստամարաթոնների շարժընթացը դրա վառ ապացույցն է: Եվ սրա հիմնական մեղավորները, իմ խորին համոզմամբ, երկու հայկական պետությունների իշխանություններն են, որոնք շարունակում են Սփյուռքը դիտել որպես կթան կով եւ այդ իսկ պատճառով ցայսօր չեն մշակել զարգացման համահայկական տիպօրինակ ու չեն կարողացել այդ գործում ներգրավել համայն հայությանը: Ավելին՝ չեն կարողացել պատշաճ վստահություն ստեղծել իրենց նկատմամբ:

Սակայն մեղքի իր բաժինն ուներ նաեւ սփյուռքահայությունը, որն իր հերթին ցայսօր չի մշակել հայկական պետականություններին աջակցելու հստակ ռազմավարություն ու մեխանիզմներ եւ շարունակում է խարխափել զանազան բարդույթների ու կարծրատիպերի մեջ: Սփյուռքահայերը, եզակի բացառությամբ, գերադասում են որեւէ գումար նվիրաբերել ու գլուխներն ազատել դրանց արդյունավետ օգտագործումը վերահսկելու ու երկրի կյանքին գործուն մասնակցություն ցուցաբերելու գլխացավանքից:

Սփյուռքահայությունը, կամա թե ակամա, չէր ընկալում մի պարզ ճշմարտություն: Այն, որ իր տրամադրած գումարները եւ իր աջակցությունը կարող են իմաստավորվել միայն մի դեպքում՝ եթե Արցախում կայանան իրապես ժողովրդավարական երկիր ու քաղաքացիական հասարակություն, ուր կապահովվի իշխանությունների գործունեության նկատմամբ հասարակության վերահսկողությունը, եւ ուր իշխանությունները պատասխանատու կլինեն իրենց յուրաքանչյուր քայլի համար: Այլապես՝ Արցախը կշարունակի մնալ «դանայան տակառ», որը երբեք չի լցվի:

Սակայն այստեղ կա մի նրբանկատ հանգամանք: «Սփյուռք» կամ «սփյուռքահայություն» ասելով՝ մենք հաճախ անտեսում ենք այն բազ-

մազանությունն ու բազմաշերտությունը, որ կան արտերկրի հայկական շրջանակներում: Ինչ խոսք, այդ շրջանակներում կան «ուժային կենտրոններ» եւ «գլխավոր գործող անձինք», բայց նույնիսկ դրանց առկայությունը թույլ չի տալիս հավաքական իմաստով միանշանակ խոսել այդ շրջանակների մասին: Այստեղ էլ կա մեկ ծայրահեղությունից մյուսն ընկնելու վտանգ:

Աշխարհասփյուռ հայության մասին խոսելիս հաճախ է շեշտվում այն հանգամանքը, որ մենք շատ տարբեր ու բազմազան ենք՝ տարանջատված կրոնական եւ քաղաքական հայացքներով: Գումարած դրան՝ լեզվի հանգամանքը: Սակայն իրականում մեզնից է կախված՝ մեր բազմազանությունը մեր թերությո՞ւնն է, թե՞ առավելությունը: Նայած թե հարցին ինչպես ես մոտենում եւ ինչ նպատակներով ու մղումներով: Բազմազանության մասին խոսողներից ոմանք դա որպես թերություն են ընկալում՝ հընթացս պնդելով միասնականության անհրաժեշտության մասին: Միասնականությունը շատերի ընկալմամբ բոլորին մի տանիքի տակ հավաքել է նշանակում, ինչը շատ վտանգավոր միտում է: Միակամ ու միասնական լինելու մասին իշխանությունների կողմից մերթընդմերթ հնչող հայտարարությունների իմաստը երբեմն կարելի է ընկալել որպես կոչ՝ «միասնաբար ծառայեք մեզ»:

Իսկ ինչի՞ շուրջ միասնական լինել: Նախ պիտի քննարկման դրվեն հայության ճակատագրին առնչվող գաղափարները, միասին ընտրվեն ամենահիրատեսականն ու հայանպաստը եւ ապա միայն միասնական լծվել դրա իրականացմանը: Առանց սրա՝ բոլորին մի տանիքի տակ հավաքելն ուղղակի ինքնամեկուսացում ու ինքնաչեզոքացում է:

Միով բանիվ՝ խոսքն այն առանցքի մասին է, որը կարող է իմաստավորել մեր բազմազանությունը եւ այն դարձնել մեր հաղթաթուղթը:

Սակայն մեր բազմազանությունն ավելի արդյունավետ դարձնող առանցքն ինքնըստինքյան չի հայտնվի, դրա համար առաջին հերթին պիտի լուծել հայությանը հուզող խնդիրները եռամիասնաբար քննարկելու արդյունավետ հարթակների ստեղծման հարցը: Իսկ որ նման հարթակները կարեւոր են՝ անվիճելի է: Ինչպես ղարաբաղյան շարժման առաջամարտիկներից մեկն է ասում՝ «պարզվեց, որ թշնամու վրա միասնաբար կրակելն ավելի հեշտ է, քան հայրենիքի ճակատագիրը միասին քննարկելը»:

Մինչդեռ ներհայկական երկխոսությունն ամենակարեւորն է, եւ նման երկխոսության հաջող փորձով ամրապնդված միայն կարող ենք գնալ հայ-թուրքական, հայ-ադրբեջանական եւ այլ երկխոսությունների: Իսկ ներհայկական երկխոսություն չկա թե՛ համահայկական

կտրվածքով եւ թե՛ եռամիասնության առանձին օղակներում: Սրա վառ ապացույցը հայ-թուրքական մերձեցման ոչ վաղեմի փորձն էր, երբ ՀՀ իշխանությունը գնաց այդ երկխոսության՝ առանց հաշվի առնելու Սփյուռքի եւ սեփական հանրության կարծիքը:

Հայոց ցեղասպանության հարյուրամյակի կապակցությամբ ստեղծված հանձնաժողովները նմանատիպ մի հարթակ կարող էին դառնալ, բայց չդարձան: Սակայն, ինչպես Կաթողիկե հայոց Ներսես Պետրոս ԺԹ պատրիարքն էր ասում՝ «մենք դա կարող ենք անել ոչ միայն անցյալի վերքերը բուժելու, այլ նաեւ մեր ապագային միտված հարցերում»:

«Գլոբալ հայերի ապագան այսօր է» նախաձեռնությունն ինքնին վկայում է, որ Սփյուռքը սկսում է գիտակցել՝ կարող է, իրավունք ունի եւ պարտավոր է պահանջատեր լինել նաեւ հայրենիքի հանդեպ:

Հայրենիքի հանդեպ Սփյուռքի պահանջատիրության մասին առիթ եմ ունեցել խոսելու ամենատարբեր մարդկանց հետ: Ամենադիպուկը, թերեւս, ասել է Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսը՝ «մենք իրավունք ունենք տեսնել մեր երազած հայրենիքի պատկերը»:

Այո, Սփյուռքը կարող է, իրավունք ունի եւ պարտավոր է մասնակցել հայրենիքի կայացմանն ու զարգացմանը, ամենատարբեր մասնակցություն ունենալ հանրային կյանքի բոլոր ոլորտներում: Ոչ թե օգնել, այլ մասնակցել՝ ունենալով իր հստակ իրավունքներն ու պարտականությունները:

Այո, Սփյուռքը վերաժեւորում է իր վերաբերմունքը հայկական երկու պետականությունների հանդեպ: Իսկ հայկական երկու պետականությունները վերաժեւորո՞ւմ են իրենց վերաբերմունքը Սփյուռքի հանդեպ: Առայժմ ոչ մի հիմք չկա նման եզրակացություն անելու համար: Ու հիշողության մեջ դեռ թարմ են մնում հետապրիլյան առաջին օրերին արցախյան որոշ պաշտոնյաների նախատինքի խոսքերը սփյուռքահայերի հասցեին: Կշտամբանքի առիթը դրամահավաքին ոչ ակտիվ մասնակցությունն է:

Ցավոք սրտի, երբ Արցախում խոսում են եռամիասնության մասին՝ նկատի ունեն հետեւյալը. եռամիասնություն՝ հանուն Արցախի: Հայաստանում՝ եռամիասնություն՝ հանուն Հայաստանի: Իսկ եռամիասնություն՝ հանուն Սփյուռքի՞: Որեւիցե մեկը մտածո՞ւմ է այս մասին: Իսկ Արցախն ու Հայաստանը տալու ոչինչ չունե՞ն Սփյուռքին: Չէ՞ որ եռամիասնությունը միակողմանի երթեւեկության փողոց չէ:

Բայց սա մեդալի մի երեսն է միայն: Մյուս երեսն էլ բարվոք չէ: Իսկ ի՞նչ ենք ակնկալում Սփյուռքից: Փողից բացի ուրիշ բան ակնկալո՞ւմ ենք: Գոնե հասկանո՞ւմ ենք, թե դրանով որքան ենք վիրավորում մեր սփյուռքահայ եղբայրներին ու քույրերին:

Համահայկական համաժողովներից մեկի ժամանակ, երբ խոսվում էր անելիքների մասին եւ հրատապ խնդիրներ էին բարձրացվում, ՀՀ նախկին նախագահներից մեկն ասել էր՝ ներդրում, ներդրում եւ նորից ներդրում: Ի պատասխան հնչել է՝ վստահություն, վստահություն եւ նորից վստահություն:

Բայց մեկ այլ հարց էլ կա՝ ինչ ենք հասկանում ներդրում ասելով, միայն փո՞ղ: Ուրիշ ներդրում մեր մտքով չի՞ անցնում: Մեր իշխանավորներից մեկին ժամանակին մի հարց էի տվել՝ դուք կուզեիք, որ Տարոն Աճեմօղլուն ձեզ հարյուր դոլար տա՞ր, թե՞ խորհուրդներ տնտեսությունը զարգացնելու համար: Բնականաբար, զրուցակցիս համար հարյուր դոլարն ավելի ընկալելի էր: Շատ ավելի դժվարընկալելի էր այն, որ մեծ տնտեսագետի տված խորհուրդներով արցախյան տնտեսությունը կարող է հարյուր միլիոն դոլարի շահ ունենալ:

Սփյուռքը մի հսկայական ու բազմազան գանձ է եւ, առաջին հերթին, ոչ նյութական, այլ մտավոր: Մեր հայկական համայնքները գործում են ամենատարբեր երկրներում, ամենատարբեր համակարգերի ու վարչակարգերի պայմաններում գործունեության կենսունակ փորձառություն ունեն, ինչը մեզ օդի պես անհրաժեշտ է ու ցանկացած կոնկրետ գումարից շատուշատ ավելի թանկ: Մենք նրանց միջոցով ինքներս կարող ենք միջնորդ լինել ամբողջ աշխարհում ամենատարբեր հարցեր լուծելու գործում եւ դրանով իսկ բարձրացնել աշխարհում մեր կշիռն ու վարկը:

Մեր աչքի առջեւ փոխվում է աշխարհը, եւ մենք քաջ հասկանում ենք, որ փոփոխությունները մեզ չեն շրջանցելու, առավել եւս, որ մեր երկու հայկական պետականությունները մի տարածաշրջանում են, ուր բախվում են աշխարհիս ուժեղների շահերը, այսինքն՝ արտաքին միջամտության վտանգը կա: Այս պայմաններում մենք կարող ենք եւ պարտավոր ենք փոխվել ու աշխարհի համար ավելի ընկալելի դառնալ՝ դրանով իսկ ապահովելով մեր անվտանգությունն ու ազատ ու ստեղծագործ աշխատանքով զբաղվելու մեր հնարավորությունը:

ГЕГАМ БАГДАСАРЯН

Апрельские уроки и процесс переоценки в Арцахе

Апрельские события продемонстрировали, что общество, как в НКР, так и в РА, увязывает безопасность исключительно с военной составляющей. В обществе нет осознания того, что война, возможно, началась потому, что был нарушен не столько военный, сколько политический баланс. Армия со всей ее сверхзначимостью не может быть единственным залогом безопасности. Не менее важна адекватная международным трендам политика. Одним из политических последствий Апрельской войны стал процесс переоценки армяно-российских отношений. Ценой армяно-российской дружбы в последний период стала утеря политического суверенитета и самостоятельности Армении. Из апрельских уроков можно выделить также крушение мифа о несовместимости демократии и безопасности. Люди стали понимать, что именно отсутствие демократии являет собой самую большую угрозу народу и государству, физической безопасности их сыновей. Люди стали также осознавать, что не контролируемая народом власть контролируется чужеродными силами. Война еще раз подтвердила серьезную необходимость смены бюрократии. Апрельские события вынудили также переосмыслить отношения с Диаспорой. Диаспора может и вправе принимать участие в построении политического будущего двух армянских государственностей.

GEGHAM BAGHDASARYAN

Lessons of the April War and the Process of Re-evaluation in Artsakh

The April events showed that the societies both in Mountainous Karabagh and the Republic of Armenia link the security issue entirely with the military component. The society doesn't recognize that the war could have started because the political balance had been violated. The army, with all its super valuation, can not be the only guarantee of security. One of the political consequences of the April war is the re-evaluation process of Armenian-Russian relations. The price of Armenian-Russian friendship in the last period was the loss of political sovereignty and independence of Armenia. The myth about the incompatibility of democracy and security was shattered as a result of the April war. People began to realize that the biggest threat to our state and nation, security of our children, is the lack of democracy. People also are well aware that the authorities are controlled by the foreign forces. The war has once again confirmed the need for change of administrative mechanisms. The April events also forced a re-evaluation of relations with the Diaspora. The Diaspora can and has the right to participate in shaping the political future of two Armenian states.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՒԼՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՒԼՈՒՄ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նախաբան

Ամեն եկող տարին նոր շտկումներ է մտցնում ոչ միայն տնտեսության, այլեւ, ընդհանուր առմամբ, երկրի առաջընթացին ուղղված պետական քաղաքականության եւ մարդկային զարգացման գործընթացներում: Այս իմաստով 2016-ը կարելի է բնութագրել հակասական միտումներով, անգամ՝ անսպասելի զարգացումներով հագեցած ժամանակաշրջան:

Չնայած տարեսկզբին նկատված տնտեսական աշխուժությանը, որն աննախադեպ էր գլոբալ ֆինանսական ճգնաժամից հետո, ինչպես նաեւ հարկահավաքության բարձր տեմպերին ու կոռուպցիայի դեմ հայտարարված պայքարին, Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) հրապարակած տնտեսական ակտիվության տեղեկանքի համաձայն՝ այս տարվա հուլիսին, անցած տարվա նույն ամսվա համեմատ, տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նվազել է 4,3 տոկոսով[1], մինչդեռ վերջին հինգ տարիների ընթացքում տնտեսական անկման ամենամեծ ցուցանիշը կազմել է 0,5 տոկոս[2]: Նման անկումն անակնկալ էր նաեւ գյուղատնտեսական ակտիվ սեզոնի համար, թեեւ իրականում տնտեսական անկումը նաեւ պայմանական է, քանի որ նախորդ ամսվա՝ հունիսի նկատմամբ 2,5 տոկոսանոց աճ, այնուհանդերձ, գրանցվել է: Իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ անկումը կարելի է բացատրել նրանով, որ 2015-ը բավական անբարենպաստ էր ոչ միայն տնտեսական հակասական միտումների առումով. առկա էին նաեւ դրական միտումներ, մինչդեռ միջազ-

1 Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշը ռեկորդային անկում է ապրել: www.azatutyun.am/a/27940261.html

2 Անկում՝ վեցամսյա աճից հետո, http://www.aravot.am/2016/08/27/729228/

գային կառույցների բացասական կանխատեսումները որոշակիորեն խոչընդոտ հանդիսացան ներդրումների եւ գործարար աշխուժության համար:

* * *

Ընդհանուր առմամբ՝ 2015 թվականը բավական դժվարին տարի էր Հայաստանի տնտեսության համար, եւ ներքին ու արտաքին մարտահրավերներով լի: Իրականացվել են տնտեսական աճին ու արտահանման ծավալների մեծացմանը միտված մի շարք ծրագրեր, բայց դրանք միշտ չէ, որ տվել են ցանկալի արդյունքներ: ԱՎԾ-ի հրապարակած տվյալների համաձայն՝ Հայաստանը 3,1 տոկոս աճ է գրանցել3: Շատերը մեր տնտեսական դժվարությունները կապում էին ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցության եւ Ռուսաստանի Դաշնության դժվարությունների հետ4: Նման գայթակղություն ունեցան նաեւ միջազգային կառույցները՝Հայաստանի տնտեսության համար զրո կամ բացասական աճ գուժելով, սակայն ի հեճուկս այդ ամենի, Հայաստանն, այնուհանդերձ, տնտեսական աճ գրանցեց5: Մեր համոզմամբ՝ շոշափելի առաջընթացի համար սա բավարար չէ, մեր ներուժն ավելի մեծ է եւ երկնիշ թվով տնտեսական աճ գրանցելու բոլոր հնարավորությունները կան, բայց ամեն ինչ համեմատության մեջ պետք է նայել: Այս տեսանկյունից նշված արդյունքը հետխորհրդային երկրների մեջ, բավական լավ ցուցանիշ է, մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետխորհրդային երկրներում (Ռուսաստան, Ղազախստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան եւ այլ երկրներ) հիպերինֆլյացիա եղավ, բայց մեր արժույթը պահպանեց իր դիրքերը6: Ակնկալիքները, որոնք չիրականացան անցած տարի, պետք է տեղափոխել հաջորդ տարիներ: Միաժամանակ կարելի է որոշակի օգուտներ քաղել ստեղծված իրավիճակից: Առաջինը պետք է սկսել արտաքին միջավայրից՝ կարելի է հումք ներկրել այն երկրները, որտեղ արժույթների գերարժեզրկում եղավ, եւ Հայաստանում վերամշակող արտադրություն կազմա-

3 ՀՀ նախագահ. 3.1% տնտեսական ակտիվությունը բավարար չէ միջնաժամկետում հասնելու մեր հավակնություններին համարժեք սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակին
http://finport.info/full_news.php?id=23788&lang=1

4 Կանխատեսումները բարենպաստ չեն ԵՏՄ-ի համար
http://www.aysor.am/am/news/2016/04/20/ԵՏՄ-տնտեսություն/1073760

5 http://www.civilnet.am/news/2015/04/15/imf-forecast-recession-armenia-2015/267311

6 ՀՀ Կենտրոնական բանկ www.cba.am

կերպել՝ապահովելով պետության աջակցությունը, իսկ արտադրանքն ուղարկել ԵՄ երկրներ եւ ԱՄՆ: Ներկայումս նման ծրագրերի պակաս Հայաստանում չկա, բայց պետք է մեր երիտասարդ մասնագետներին պահել տեղում, այլապես այդ ծրագրերը կմնան թղթի վրա:

Կրթության ոլորտում եւս պետք է արմատական փոփոխություններ արվեն: Բարեբախտաբար, կան ոլորտներ, որոնցով Հայաստանը կարող է ներկայանալ ԵՏՄ շուկայում: Օրինակ՝ ինովացիաների եւ տեղեկատվական տեխնոլոգիաների համար սպառման լավ շուկաներ կան ԵԱՏՄ երկրներում: Թեեւ այդ երկրներում մեզ նայում են որպես աջակցություն ակնկալող երկրի, բայց մենք բավարար տնտեսական ներուժ ունենք եւ ի վիճակի ենք զգալի մասնակցություն ունենալ ինտեգրման գործընթացին: Առողջապահության ոլորտում նույնպես էական հաջողություններ ունենք, կարող ենք համակարգված ձեւով մատուցել ծառայություններ: Բացի նշված ոլորտներից, Հայաստանը կարող է դառնալ տարածաշրջանային գիտակրթական եւ ուսումնական կենտրոն: Ինչ վերաբերում է նյութական արտադրությանը, ապա դրանցից գյուղատնտեսության ոլորտը 2015-ին երկնիշ աճ է ապահովել, եւ դա սոսկ բարենպաստ եղանակով պայմանավորելը ճիշտ չէ: Որոշակի գործ արվել է, այն հետեւողականորեն զարգացնել է պետք:

Անդրադառնալով անկմանը եւ դրան հակազդելու միտում ունեցող հարկերի հավաքագրման աննախադեպ աճին ու հակակոռուպցիոն պայքարին, պետք է նկատել, որ թե՛ հարկերի հավաքագրման, թե՛ կոռուպցիայի դեմ պայքարի առումով հարկավոր է ավելի համակարգային մոտեցումներ որդեգրել: Վարչական մեթոդներով հարկային մուտքերի առավելագույն ապահովումն, իհարկե, միաժամանակ լուծում է բյուջեի եկամտային մասի խնդիրը, բայց որպեսզի հարկերի հավաքագրումը շարունակական գործընթաց լինի, եւ ունենանք հարկման այն բազան, որը բեռ չէ գործարարների համար, այլ մարտավարություն է այսօր պահանջվում: Այդ ուղղությամբ լրջորեն մտածել է պետք:

Իսկ կոռուպցիայի դեմ պայքարի մասով բավական իրարամերժ միտումներ եղան: Այստեղ մեզ համար շատ կարեւոր է պատասխանատվության մեխանիզմի կիրառումը կառավարության բոլոր օղակներում՝ հատկապես միջին եւ ցածր, որոնք առավել վարժված են կառավարման համակարգի արդյունավետությանը խոչընդոտող գործելաոճին: Միայն ավտոպարկի կրճատման եւ ավիատոմսերի խնայողություններ միջոցով պայքարելը բավարար չէ: Կարելի է գնալ ավելի խիստ ու մտածված կրճատումների՝ նկատի ունենալով, նախեւառաջ, աշխատանքի արդյունավետ կազմակերպման գործոնը, այլ ոչ թե հնարավորինս շատ միջոցներ տնտեսելու պարագան: Միգուցե ասածս ինչ-

որ չափով հակասում է խնայողության ռեժիմի տրամաբանությանը, բայց պետք է շատ ավելին փոխադարձել կառավարման ոլորտի այն մասնագետներին, որոնք բարձր արդյունավետություն եւ առաջադիմություն են ապահովում: Խոսքն այստեղ պորտաբույծների բանակի կրճատման մասին է, ընդ որում՝ դա վերաբերում է ոչ միայն կառավարությունում, այլեւ պետության կողմից հիմնադրված կառույցներում աշխատող եւ որեւէ գործնական հատուցում չտվող անձնակազմերին ու անհատներին:

Դրանցից Համահայկական բանկը, օրինակ, դարձել է համահայկական խայտառակության դրսեւորում. այն տարիներ շարունակ ավելի շատ ծախսում է, քան միջոցներ է ներգրավում7: Ժամանակն է, որ սրան պատշաճ գնահատական տան իշխանությունները: Ինչ վերաբերում է կառավարությանը, ապա ժամանակի պահանջն է, որ նոր նախարարներն ավելի նախաձեռնողական լինեն. ընդհանրապես՝ մեզանում նման աշխատաոճի սղություն է նկատվում: Գաղտնիք չէ, որ 10-20 հոգանոց անձնակազմում առաջընթացն ապահովվում է հիմնականում 2-3 աշխատողի հաշվին: Ինչո՞ւ այս հանգամանքը իշխանություններին չի ստիպում, ի վերջո, գնալ ավելի կտրուկ քայլերի:

Իրականում կան «մանրուքներ», որոնք շատ ավելի մեծ դեր են խաղում: Այսպես՝ կառավարության ղեկավարը վճռական լինելու դեպքում ի զորու է ամենաբարձր մակարդակով լուծել տարբեր խնդիրներ, մինչդեռ միջին եւ ստորին օղակներում դրանք կարող են վարպետորեն շրջանցվել: Խնդիրն այն է, որ արդեն տասնամյակներ շարունակ պետական կառավարման համակարգում վատ ավանդույթ է ձեւավորվել՝ ամբողջ աշխատանքն առանձին անհատներ են կատարում: Մնացածները՝ համակարգչային խաղերով տարված, օրերով, անգամ շաբաթներով աշխատավայրում չեն լինում, եւ նրանց բացակայությունը չի էլ զգացվում:

Պետք է սահմանափակվեն բիզնես կարգով ուղեւորությունները, որոնք ուղղակի տուրիստական շրջագայություններ են: Ցանկացած գործուղում ենթադրում է երկու պարտադիր բաղադրատարր՝ հիմնավորվածություն եւ խստագույն հաշվետվություն այն մարմնին, որը գործուղել է իր աշխատողին: Միջազգային բազմաթիվ համաժողովներում Հայաստանի պատվիրակները կրավորական դիրք են գրավում, առաջին օրը կարող են ներկա լինել, ստանալ արտարժույթով օրապահիկները, իսկ մնացած օրերին ուզածների չափ զբոսնել: Ադրբեջանը, Թուրքիան կամ այլ երկրների մասնակիցները լրջորեն աշխա-

7 «Համահայկական բանկը» ոչ մի կերպ չի կայանում: http://www.aravot.am/2016/03/18/668656/

տում են այն հարցերով, որոնք մենք աչքաթող ենք անում, հետո փորձում ենք սխալները շտկել, որը շատ ավելի ծանր է լինում: Կադրային քաղաքականության մեջ լրջագույն բացթողումներ կան երկրում: Ամբողջ ոլորտներում աշխատանքները ձախողածներին մի տեղից մյուսն են տեղափոխում, փոխանակ մեկընդմիշտ ազատվելու այդպիսի անորակներից եւ ճանապարհ բացելու երիտասարդ, թարմ ուժերի առջեւ:

Պետական կառավարումից զատ, մեծ ուշադրություն է պահանջում հանրային կառավարումը, որի շրջանակներում շատ կարեւոր է ապահովել քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների, անգամ ոչ ֆորմալ միությունների մասնակցությունը որոշումների կայացման եւ իրականացման փուլերում: Այսպիսով՝ ոչ միայն իրավունքը, այլ նաեւ պատասխանատվությունն է կիսվում, ինչը ենթադրում է մասնագիտական մոտեցում միջին եւ ցածր օղակներում, քանզի փորձը ցույց է տալիս, որ վերին օղակներում միայն քաղաքական կամքը բավարար չէ: Հետեւապես՝ նախագահի եւ վարչապետի՝ փոփոխությունների կամքը ներքին օղակներում ընկալելի դարձնելու եւ, համապատասխանաբար, համարժեք գործիքներով այն կենսակոչելու խնդիր կա: Մեր համոզմամբ՝ դրանք չեն իրականացվում նաեւ այն պատճառով, որ տնտեսագիտական միտքը Հայաստանում պահանջարկված չէ: Կան առանձին անհատներ ու խմբեր, որոնց օգնությամբ կարելի է լրջագույն խնդիրներ լուծել: Բայց դրա կարիքը կարծես թե չի զգացվում, ինչն, իր հերթին, մեծ հարված է տնտեսագիտական մտքին: Արդյունքում հայկական տնտեսագիտական դպրոց որեւէ մակարդակով մենք, ցավոք սրտի, չունենք կամ այն շատ հեռու է կայացած լինելուց:

Քաղաքական զարգացումները, որոնք նույնպես իրարամերժ բացատրություններ ունեն, էական դեր են խաղացել8: Իրականում հասունացած քաղաքացիական մի շարք խնդիրներ ոմանք փորձեցին քաղաքականացնել: Ե՛վ օրակարգն առաջ քաշողները, եւ՛ հանգուցալուծողները երեւույթին մոտեցան սխալ մեկնակետից՝ առանց իրավիճակի լրջագույն վերլուծության, ինչը եւ խնդիրը «ջրելու» հետեւանք ունեցավ: Այդ տեսակետից հատկանշական են ինչպես հուլիսյան դեպքերը, այնպես էլ էլեկտրաէներգիայի թանկացման դեմ նախորդ տարվա ակցիաները Բաղրամյան փողոցում: Եվ քանի որ քաղաքականությունը սերտորեն կապված է տնտեսության հետ, հետեւաբար զարմանալի կլիներ, եթե տնտեսությունը դրանից ցնցումներ չապրեր:

Ինչ վերաբերում է զուտ տնտեսական գործոններին եւ ոլորտի հա-

8 «Պայքարելու ենք մինչեւ վերջ», ասել են «Սասնա ծռեր»-ի անդամները http://www.mediamax.am/am/news/politics/19230/

մար կենսական նշանակություն ունեցող ներդրումներին, ապա մեր ուսումնասիրությունները վկայում են, որ հայաստանյան տնտեսությունն ունակ է շատ ավելի մեծ ծավալների ներդրումներ «մարսել», քան արվում են: Խոսքն օտարերկրյա ներդրումների մասին չէ: Դա մերժելի եւ անընդունելի է այն պարագայում, երբ ներքին ներդրումներ չեն ապահովվում: Մենք մեր տնտեսությանը չենք հավատում, ներդրումներ չենք անում, սպասում ենք, որ այլոք դա անեն: Ժամանակն է, որ հանրապետության ղեկավարները սրան ուշադրություն դարձնեն:

ՏԱՑ-ի անկման բացատրություններից մեկն էլ սպառման նվազումն է՝ ոչ միայն արտագաղթի հաշվին, այլեւ որակական առումով. ժողովրդի կենսամակարդակի անկմամբ պայմանավորված՝ բնակչության 1/3-ը աղքատության շեմին է կամ դրանից էլ ցածր, ինչը թույլ չի տալիս օգտվել այն ապրանքներից, որոնք կարող էին բերել տնտեսության զարգացում, ինչպես նաեւ ներդրումների խթանում: Մյուս կարեւոր հանգամանքը մասնավոր տրանսֆերների թվի փոփոխությունն է9: Իրականում մենք պետք է մասնավոր տրանսֆերների հոսքերն արհամարհող երկիր դառնանք, ոչ թե այսքան կախվածություն ունենանք դրանցից: Արտերկրից ստացվող մասնավոր տրանսֆերներն, ի վերջո, անաշխատ եկամուտներ են: Ռիթմիկ գործողությամբ աչքի ընկնող տնտեսությունը, որպես կանոն, սեփական աշխատատեղերի ստեղծած եկամտի հաշվին է ապահովում ապրանքների եւ ծառայությունների սպառումը, այլ ոչ թե՝ դրսից ներարկվող գումարների: Այս ցուցանիշը եւս անկում է ապրել:

Բոլոր այս փաստարկներն անկախության 25 տարիների ընթացքում բերվել են, բայց դա չի խանգարել, որ ԱՎԾ-ն աճեր արձանագրի: Այժմ, կարծում եմ, ԱՎԾ-ն այլ մեթոդների է անցել կամ ստիպված է իրականությունն այլ կերպ ներկայացնել: Խոսքը «վիճակագրական գեղանկարչության» մասին է: Բայց սա այդքան կարեւոր չէ, որքան միտումները, որ տեսնում ենք: Խիտ տնտեսություն ունեցող երկրում ամեն ինչ աչքի առջեւ է, եւ մենք ինքներս կարող ենք արձանագրել՝ կա՞ն տնտեսական ակտիվության միտումներ, թե՞ ոչ, որքան էլ ԱՎԾ-ն փորձի դրանք գունազարդված ներկայացնել: Խնդիրը դարձյալ հանգում է տարիներ շարունակ կառավարման համակարգի անարդյունավետ գործունեությանը: Կան նախարարներ, որոնք անկախ իրենց տարիքից՝ ենթագիտակցորեն դեռ ԽՍՀՄ-ական աշխատաոճ են բանեցնում. փորձում են հանրապետության ղեկավարներին ներկայացնել իրենց ոլորտում եղած ինչ-ինչ կամ մտացածին ձեռքբերումներ՝

9 Տրանսվերների նվազման ուղին:
http://hetq.am/arm/news/65594/transfertneri-nvazman-uxin.html

նրանց աչքում լավ համբավ ձեռք բերելու համար: Շատ քչերն են մտահոգված երկրի ողջ տնտեսության ճակատագրով, քչերն են փորձում իրենց ոլորտից դուրս նույնպես ընդհանուր ծրագրեր առաջ տանել՝ հորիզոնական համագործակցությամբ:

Երկու տարի առաջ ընդունվեց մինչեւ 2025 թվականի հեռանկարային զարգացման ռազմավարությունը10, եւ հիմա եկեք տեսնենք, թե դրանից ինչ կետեր են իրագործվել եւ որոնք են, որ տեղ են գտել պետական բյուջեում: Պարզվում է՝ ոչ մեկը: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը կամ Սփյուռքի նախարարությունը պետք է լինեն Հայաստանի տնտեսության արտակարգ եւ լիազոր դեսպանները դրսում: Ասել, որ նրանք շատ ժամանակ են վատնում քաղաքականության համար եւ տնտեսությանը ժամանակ չի մնում՝ սխալ կլինի, բայց առեւտրային կցորդները մեր դեսպանատների կազմում բացառություններ են կազմում: Անշուշտ՝ կան բացառություններ, լավ աշխատող դեսպաններ, որոնք աջակցության կարիք ունեն: Մինչդեռ այս նախարարություններն իրարից մեկուսի են գործում՝ կամ Ցեղասպանության, կամ մշակութային ինչ-ինչ հարցերում շատ հազվադեպ են փորձում համատեղ հանդես գալ: Նրանք պետք է լիազորված լինեն ներկայացնել Հայաստանի առաջնահերթությունները դրսում եւ կարողանան համապատասխան աջակցություն ստանալ Հայաստանից:

Հետագայում անկումներից խուսափելու համար առաջարկվում է, ի վերջո, շեշտադրումներ անել վերամշակող արդյունաբերության վրա եւ օգտագործել ցանկացած միջոց՝ Հայաստանը տնտեսապես, ինչպես նաեւ արդյունաբերական առումով անկախ երկիր դարձնելու համար: Այս իմաստով մտահոգիչ օրինակ է ոսկերչության ոլորտում արձանագրված վերջին երեք տարիների անկումը, քանի որ մեկ ընկերությանը տրված մենաշնորհը մեծ փսաս է հասցրել մեկ տասնյակ հազարից ավելի տնտեսվարողներին՝ պարտադրելով մտնել այդ, իբր, ազատ գոտի, ինչը հարկային խտրական վերաբերմունքի վառ արտահայտություն է: Իսկ նման ոլորտներ մեր տնտեսությունում շատ են:

Ակնհայտ է, որ հնարավոր չէ միայն գյուղատնտեսության հաշվին փրկել իրավիճակը. եթե որոշակի ամիսներ հնարավոր է անգամ գյուղատնտեսական արտադրության երկնիշ աճ արձանագրել, միեւնույն է՝ դա թույլ չի տա իրավիճակը փրկել, եթե մյուս ճյուղերը չակտիվանան: Արդյունաբերությունն, օրինակ, անկում է ապրել, շինարարությունը դոփում է տեղում, մյուս ոլորտների վիճակը եւս նախանձելի չէ: Պետք է շեշտադրումներ արվեն թիմային աշխատանքի կարեւորութ-

10 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014-2025 ԹԹ. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ: http://www.gov.am/files/docs/1322.pdf

յան վրա: Քաղաքական կամքից, կոչերից, ուղերձներից բացի՝ պետք է աշխատանքից հեռացվեն եւ պատասխանատվության կանչվեն այն մարդիկ, ովքեր չեն ցանկանում կրել իրենց պատասխանատվության բաժինը կամ արդեն ձախողել են իրենց վստահված ոլորտները: Այլապես երկրի ղեկավարների վճռական խոսքը չի կարող արժանի շարունակություն ունենալ:

Խիստ մտահոգիչ են տնտեսությունում հարկային վարչարարությունն ու մենաշնորհների դեմ պայքարը: Հայտնի է, որ ամբողջ աշխարհում հարկային արտոնություններ, ազատ գոտու կարգավիճակ շնորհում են կամ որոշակի տարածքների, կամ տնտեսության որոշակի ճյուղերի՝ դրանց զարգացման նպատակով: Առաջինի վառ օրինակը տողերիս հեղինակի կողմից երկու տասնամյակ պայքարից հետո սահմանամերձ համայնքներին ազատ գոտու կարգավիճակի շնորհումն էր, իսկ մյուսի լավագույն օրինակը՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու արդյունքում Հայաստանի գյուղատնտեսությանը վեց տարով արտոնյալ կարգավիճակի շնորհումը (ներկայումս դա արդեն չի գործում):

Իսկ հիմա՝ ՀԱՐՑ. Ինչպե՞ս կմեկնաբանի ՀՀ կառավարությունը Հայաստանի տնտեսության ճյուղերից ոսկերչությանը արտոնյալ կարգավիճակի շնորհման տրամաբանությունը, եթե այն տրված է մեկ ընկերության՝ «Մերիդիան» ազատ տնտեսական գոտուն11: Ընդ որում, այդ ընկերությանը հաջողվել է իր հովանու տակ բերել ընդամենը մեկ-երկու տնտեսվարողի, մսացած մեկուկես տասնյակ հազարից ավելի տնտեսվարողների հանդեպ, ըստ էության, ցուցաբերվում է խտրական վերաբերմունք: Ավելի ստույգ՝ անհավասար մրցակցային պայմաններ են ստեղծվել ոսկերչության ճյուղում, որը մեր համոզմամբ՝ Հայաստանի ազգային մրցակցային առավելություններից մեկն էր: Իսկ ավելի ստույգ՝ գործ ունենք հենց պետության կողմից մենաշնորհի կարգավիճակի շնորհման բացառիկ եւ մերժելի երեւույթի հետ: Հիշեցնեմ՝ դա մերժելի է նաեւ միջազգային կառույցների կողմից՝ որպես խտրական վերաբերմունքի արտահայտություն: Իսկ եթե ժամանակն է խոսքից գործի անցնել, ապա հայրենի կառավարիչները թող հաշվեն, թե որքան վսաս կհասցվի Հայաստանի պետական բյուջեին, եթե արդեն կայացած ոսկերչության բնագավառից միայն հարկեր չվճարելու համար (քանի որ այլ արտոնություն եւ օգուտ չկա) բոլորը որոշեն «ազատ գոտի» մտնել: Թվում է՝ այսքանը բավական է՝ տագնապի կոչնակ հնչեցնելու համար: Բայց՝ ոչ: Հարցը տնտեսականից վերածվում

11 Ոսկերչական ազատ գոտի Երեւանում:
http://www.lrahos.com/ոսկերչական-ազատ-գոտի-երևանում/

է քաղաքականի: Ռուսաստանի Դաշնությունում մեծ անհանգստություն է առաջացրել այն հանգամանքը, որ հիշյալ կառույցը զբաղվում է Թուրքիայից դեպի Ռուսաստան ոսկերչական իրերի վերավաճառքով կամ թրաֆիքինգով՝ հիշյալ երկրի հանդեպ տնտեսական պատժամիջոցների պայմաններում: Բացի դրանից, մեծ վնաս է հասցվում հայ ոսկերիչներին, որոնք դժվարությամբ փորձում են արտահանել իրենց արտադրանքը, իսկ թուրքական էժանագին ոսկերչական իրերի հետ մրցակցելը բոլորին հայտնի է, թե որքան խնդիրներ է առաջացնում: Մեծն Պարույր Սեւակը կասեր. «Թե չէ՝ հաշվում եք, հաշվում եք, հաշվում…»

Ի դեպ, 2016-ը նշանավորվեց նաեւ Թուրքիայում արտադրված ապրանքների դեմ հանրային մեծ արձագանքով, որը հաջորդեց ապրիլյան կարճատեւ պատերազմին12: Մեր կողմից քայլեր ձեռնարկվեցին սպառողների շրջանում՝ հրաժարվել թուրքական ապրանք գնելուց, որի համար վճարած գումարներն ուղղվում են թուրքական զենքի արտադրությանը, որից էլ սահմանի վրա սպանվում է հայ զինվորը: «Հանուն օրենքի» նախաձեռնության անդամներն այդ օրերին ստիպված էին հասարակության լայն զանգվածներին ջանադրաբար բացատրել, թե ինչու պետք է հրաժարվել թուրքական ապրանքներից եւ կառավարության շենքի առջեւ բողոքի ցույց կազմակերպել՝ իշխանություններին առաջարկելով այլընտրանքներ գտնել հայ գործարարների աշխատանքը խթանելու համար՝ միաժամանակ վերանայելով հարկային ու մաքսային քաղաքականությունը՝ ի նպաստ վերջիններիս, որպեսզի նրանք շահագրգռված լինեն նոր շուկաներ գտնելու:

Մոտավոր հաշվարկով (պաշտոնական վիճակագրություն չկա)՝ 2008-2014 թթ.-ին Հայաստանը ներմուծել է 1,5 միլիարդ դոլարի թուրքական ապրանք, իսկ Հայաստանից դեպի Թուրքիա պաշտոնապես արգելված է հայկական ապրանքների ներմուծումը՝ պայմանավորված Ղարաբաղի հարցով: Բացի դրանից, անկախության տարիների ընթացքում Հայաստանը մոտ 8 միլիարդ դոլարի ապրանքներ է ներմուծել, ինչի համար վճարած գումարները, բնականաբար, ուղղվել են նաեւ զենքի արտադրությանը, եւ այդ զենքը Թուրքիան այսօր մատակարարում է Ադրբեջանին: Մեր համոզմամբ՝ խնդիրն անգամ ավելի լայն ընդգրկում ունի, քան միայն Հայաստանն ու նրա տնտեսությունը: Աշխարհի որեւէ ծայրում, երբ սպառողը գնում է թուրքական ապրանք, անուղղակիորեն հովանավորում է ահաբեկչությունը:

12 Թուրքական ապրանքների ներմուծման դեմ բողոքի ակցիա կանցկացվի Երեւանում: http://newsarmenia.am/am/news/armenia/turqakan_apranqneri_nermutsman_dem_boghoqi_aktsia/

Բազմիցս հիմնավորվել է, որ Թուրքիան «Իսլամական պետության» ահաբեկիչներին հովանավորող երկրներից մեկն է, հետեւաբար՝ ցանկացած մեկը որեւէ երկրում գնելով թուրքական ապրանք, ակամա հովանավորում է այդ խմբավորումներին: Մյուս կողմից՝ տեղական արտադրությունը, հատկապես փոքր եւ միկրո բիզնեսը, պետք է զարգացնել ի հաշիվ զրոյական մաքսատուրքերի: Միկրոբիզնեսը չպետք է հարկվի:

Շատերին մտահոգում է այն հարցը, թե ինչպես վարվեն ՀՀ տասնյակ հազարավոր այն քաղաքացիները, որոնք այս պահին այլընտրանք չունեն եւ Թուրքիայի հետ առեւտրային հարաբերությունների մեջ լինելով՝ փաստորեն սոցիալական խնդիր են լուծում: Իրականում խնդիրը փոքր-ինչ չափազանցված է, քանի որ չկա այդպիսի ապրանքային շուկա, որտեղ միայն թուրքականն է գերիշխում: Մյուս կողմից՝ պետք չէ թերագնահատել հայ գործարարներին. անգամ շարքային գործարարը Հայաստանում երբեք չի նեղվում գաղափարների սղությունից: Ցանկացած հայի մեջ առնվազն մի քանի գաղափար կա առ այն, թե ինչպես կարելի է ապրանք ստեղծել եւ փող վաստակել, այսինքն՝ նրանց պետք է ընդամենը դաշտ տրամադրել, թույլ տալ առաջին երկու տարին չհարկել, խթանել ինքնազբաղվածությունը՝ օրենքի շրջանակներում: Ցավալի է, որ բիզնեսի զարգացման, աշխատատեղերի ստեղծման վերաբերյալ հստակ պետական քաղաքականություն դեռեւս չկա: Կարեւոր է հիշել նաեւ, որ ԱԺ կողմից ընդունվել է «Պարենային անվտանգության մասին» ՀՀ օրենքը[13], համաձայն որի՝ Հայաստանը պետք է դառնա սննդամթերքով ինքնաբավ երկիր, սակայն այդ օրենքն իրականում չի գործում: Մինչդեռ դա հնարավորություն կտար ստեղծելու պայմաններ, որպեսզի հողը մշակվի, բարիք արտադրվի, մի խոսքով՝ համապատասխան տնտեսական քաղաքականություն վարվի:

Մինչ ներմուծման փոխարինման քաղաքականության արդյունքում տեղական ապրանքների արտադրության ծավալումը, թուրքական ապրանքների ներմուծման հնարավոր այլընտրանք կարող են լինել իրանական ապրանքները: Սակայն հարկ է նշել, որ իրենց առատության եւ թվացյալ դրական տոնայնության մեջ մինչեւ օրս հայ-իրանական հարաբերությունները, այդուհանդերձ, եղել են կաշկանդված՝ Արեւմուտքի վարած քաղաքականության պայմաններում: Իրանի նկատմամբ արեւմտյան պատժամիջոցների կամ դրանց էական մասի վերացման պարագայում ակնկալվում է, որ եւ՝ Իրանից, եւ՝ Ռուսաստանից կլինեն ազդանշաններ հայկական բիզնեսին եւ քաղաքական

13 www.parliament.am

վերնախավին, որպեսզի հայաստանյան շրջանակները, իբրեւ ավելի ընդունելի տարբերակ ռուսների ու իրանցիների համար, դառնան միացնող օղակ Իրան-Հայաստան-Ռուսաստան եռանկյունու մեջ, որն ապագայում ավելի լայն շրջանակներ կարող է ընդգրկել: Միաժամանակ, քանի որ արդեն կան դրական ազդակներ թե՛ Ռուսաստանից, թե՛ Իրանից, կարելի է կանխատեսել, որ հայկական բիզնեսը դրական սպասումներ է ունենալու այս պատժամիջոցների վերացումից: Պատժամիջոցների մի մասն իրականում հնարավոր է՝ ավելի շուտ վերացվի, մյուս մասի վերացման խնդիրը դեռ երկար կարող է քննարկվել, քանի որ այդպիսին են պատժամիջոցների տրամաբանությունն ու միջազգային փորձը. դրանք հեշտ մտցվում են եւ շատ դժվար վերացվում: Հետեւաբար՝ կարճաժամկետ հեռանկարում շոշափելի արդյունքներ ակնկալել պետք չէ: Փոխարենը պետք է ուշադիր հետեւել այս գործընթացների զարգացմանը եւ դրա հետ մեկտեղ բարձրացնել հարեւան երկրի հանդեպ ճանաչողական մակարդակը:

Ընդհանուր առմամբ՝ Իրանի իսլամական հանրապետության տնտեսության, քաղաքականության, աշխարհաքաղաքականության նկատմամբ Հայաստանի փորձագիտական հանրությունն ու քաղաքական շրջանակները էապես արդիականացման կարիք ունեն: Ձգտելով Ռուսաստան-Իրան հնարավոր զարգացումներում որոշակի դրական դերակատարության, Հայաստանը պետք է նպատակային վերլուծություններ իրականացնի բոլոր ուղղություններով: Փաստ է, որ Իրանի հետ հարաբերությունները բավականին բարձր մակարդակում են, բայց դրանցում ավելի նախաձեռնողական է Իրանը: Այլ խոսքով՝ ավելի շատ եղել են Իրանից դեպի Հայաստան ուղղված նախաձեռնություններ, քան հակառակ ուղղությամբ: Թե ինչու է դա այդպես, ցույց կտա հպանցիկ անդրադարձը հատկապես վերջին տարիների միտումներին: Անկախության 25 տարիների ընթացքում մեծ մասամբ Իրանի կողմից եկող նախաձեռնությունը, կարծում եմ, պայմանավորված է եղել Արեւմուտքի հետ լարված հարաբերություններով եւ հայկական կողմի որոշակի երկչոտությամբ, ինչը որոշ առումով հասկանալի է: Իրանի դերն ու կշիռը տարածաշրջանում մեծանում են եւ լրջանում՝ որպես գլոբալ խաղացողի, եւ եթե Հայաստանն ունենա ազգային օրակարգ, ապա շատ արագ կարելի է ներդաշնակեցնել արտաքին տնտեսական ասպարեզում Հայաստանի եւ Իրանի շահերը: Վերջինս կարող է դրսեւորվել համատեղ ձեռնարկությունների ստեղծմամբ՝ էներգետիկայի բնագավառում եւ մշակող արդյունաբերության ու այլ ճյուղերում: Իրականում Հայաստանում շատ սահմանափակ տեղեկատվություն ունենք Իրանում իրականացվող բարեփոխումնե-

րի վերաբերյալ եւ այս բացը հարկավոր է լրացնել: Ցանկացած պարագայում՝ տնտեսական համագործակցությունն Իրանի հետ լավ առումով պարտադրված է:

Իրանի հետ տնտեսական համագործակցությունը կարող է լրջագույն արդյունքներ ունենալ ոչ միայն երկկողմ ձեւաչափով, այլեւ հաշվի առնելով Հայաստանի տարածքով Իրանից բնական գազի արտահանումը Վրաստան, ինչպես նաեւ Իրանի հետաքրքրությունն ու պատրաստակամությունը՝ անդամակցելու Եվրասիական տնտեսական միությանը՝ բազմակողմ ձեւաչափով14:

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ-ին, ապա ինչպես վերը նշված հանգամանքների, այնպես էլ քաղաքական ու տնտեսական առումներով կարելի է հիմնավորել Հայաստանի անդամակցությունը տարածաշրջանային այդ նորաստեղծ կառույցին: Հասկանալի է, որ ԵԱՏՄ-ն առայժմ կայացման փուլում է, ուստի խոցելի կետեր շատ ունի, այնուամենայնիվ, որպես տարածաշրջանային միություն, այլընտրանք չունի: Այլընտրանք չունի նաեւ Հայաստանի անդամակցությունն այդ միությանը: Ավելին՝ ԵԱՏՄ անդամակցությունից հրաժարվելը աշխարհաքաղաքական տվյալ իրավիճակում կարող է դիտարկվել իբրեւ արտաքին քաղաքական ինքնամեկուսացում: Այս առումով 2016-ը եւ դրա նախորդ տարին լի էին դժվարություններով ու խնդիրներով: ԵԱՏՄ առաջին երկու տարիները կարելի է բնութագրել որպես կառույցի կազմավորման եւ կայացման ժամանակաշրջան: Այդ ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամտային մասում նվազեցին հարկերը, մասնավորապես վերացան ՌԴ-ից եւ ԵԱՏՄ այլ երկրներից Հայաստան ներմուծվող ապրանքների եւ ծառայությունների դիմաց գանձվող մաքսատուրքերը: Բայց, միաժամանակ, կրճատվեցին Հայաստան եկող տրանսֆերները, ի հայտ եկան նաեւ այլ ռիսկեր, որոնք, սակայն, անցողիկ բնույթի են, թեեւ որոշակի շարունակություն կունենան:

Առավել արմատական խնդիրների թվում կարեւոր է առանձնացնել այն, որ հետխորհրդային տիրույթում եւ հատկապես ԵԱՏՄ անդամ երկրներում գրանցվեց ազգային արժույթների գերարժեզրկում: Իհարկե, Հայաստանում ֆինանսատնտեսական եւ արժութային կայունության իմաստով դեռ շատ խնդիրներ կան, բայց պետությունը՝ ի դեմս ՀՀ Կենտրոնական բանկի վարած դրամավարկային խիստ հավասարակշռված քաղաքականության, խուսափեց հնարավոր ցնցումներից: Այս առումով Հայաստանը կարող է անգամ ուսանելի օրինակ

14 ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉԸ
http://www.noravank.am/arm/articles/list.php?SECTION_ID=7&SHOWALL_1=1

լինել ԵԱՏՄ անդամ երկրների համար: Այստեղ կարեւոր է հաշվի առնել, որ ՀՀ-ն տնտեսական դաշտում առայժմ հիմնականում համագործակցում է Ռուսաստանի դաշնության հետ, մինչդեռ հարկավոր է այդ դաշտն ընդլայնել ու ակտիվորեն համագործակցել նաեւ ԵԱՏՄ անդամ մյուս երկրների՝ Բելառուսի, Ղազախստանի եւ Ղրղզստանի հետ:

Միաժամանակ պետք է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության մեջ մեր ունեցած հնարավորությունները չափազանց մեծ են: Հայաստանը տարիներ շարունակ ցույց է տվել բավական ծանրակշիռ իր ներուժը, ինչի շնորհիվ միանգամայն ի զորու է Ռուսաստանի հետ համագործակցել, օրինակ, ռազմաարդյունաբերության ոլորտում եւ բարձր տեխնոլոգիաների մասով տալ մրցունակ արտադրանք: Մեր համոզմամբ՝ թուրքական ընկերությունների փոխարեն, որոնք ժամանակավորապես լքել են Ռուսաստանի շուկան, Հայաստանը շինարարական իր ընկերություններով կարող է գրավել նրանց տեղը:

Նշված հնարավորություններն, այսուհանդերձ, չեն իրագործվի, եթե չկարեւորվի ազգային օրակարգի ձեւավորումը, որը Հայաստանի տնտեսությունը դուրս կբերի զարգացման մայրուղի: 2016 թվականին մեր երկրի համար հնարավորություններ ստեղծվեցին միանգամից մի քանի ասպարեզներում. մասնավորապես ԵԱՏՄ երկրներում մեծ պահանջարկ նկատվեց Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների նկատմամբ, իսկ այս ոլորտում Հայաստանն առաջատար է: Մեկ այլ օրինակ բերեմ. Հայաստանը հնարավորություն ստացավ կարեւոր գործընկեր դառնալու հատկապես Ռուսաստանի համար՝ Թուրքիայի հետ տնտեսական սահմանափակումների համատեքստում, ինչը պահպանվում է անգամ պատժամիջոցների վերացումից եւ երկկողմ հարաբերությունների կարգավորումից հետո: Դրական է գնահատվում նաեւ ԵԱՏՄ անդամակցության երկու տարիներին Հայաստանից Ռուսաստան գյուղմթերքների արտահանման քառապատկումը՝ հաշվի առնելով բարենպաստ բնակլիմայական պայմանները եւ պետության կողմից կազմակերպչական բնույթի որոշ աջակցությունը: Սակայն մտահոգիչ են մնում մրցունակության բարձրացման ճանապարհին առկա խնդիրները:

Անդրադառնալով ազգային հստակ օրակարգի ձեւավորմանը, հարկ է նկատել, որ մշակելուց հետո կարեւոր է այն իրացնել հետխորհրդային տարածաշրջանում: Կարեւոր է նաեւ բանակցությունների վերսկսումը ԵՄ-ի հետ: Մի խոսքով՝ 2016 թվականը դժվար, փորձություններով լի ժամանակամիջոց լինելու հետ մեկտեղ հնարավորությունների տարի է, հատկապես եթե հաշվի ենք առնում ՀՀ կառավարության կառուցվածքային որոշակի փոփոխությունները եւ գործունեության

նոր ծրագրի ուղղություններն ու քայլերը՝ մասնավորաբար ներդրումների ներգրավման առումով: Իհարկե, ձեւի եւ բովանդակության ներդաշնակություն ստեղծելու ձգտումը կարեւոր է, սակայն հանրությունն ավելի շատ ակնկալում է փոփոխություններ՝ կապված ոչ միայն գերատեսչությունների անվանումների, այլեւ դրանց գործունեության արդյունավետության ու արդար կառավարման հետ: Ինչպես հետխորհրդային բազմաթիվ երկրներում, այնպես էլ Հայաստանում ներդրումները բավական խնդրահարույց են, ընդ որում՝ թե՛ օտարերկրյա եւ թե՛ ներքին ներդրումների մասին է խոսքը: Դրանք պետական հոգածության, խթանման կարիք ունեն: Մեզանում այդպիսի խթան կլիներ առողջ մրցակցությունը եւ, ընդհանրապես, ձեռնարկատիրական դաշտի գրավչությունը:

Բացի անմիջական հարեւանների հետ փոխշահավետ կապերի զարգացումից, Հայաստանը հնարավորություն է ստանում փորձելու իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք առավել ձեռնտու կարող են լինել հայրենական արտադրությանը: Այս առումով կարեւորվում է համագործակցությունը Չինաստանի հետ15: ՀՀ-ն պիտի աշխույժ, գործունակ եւ նախաձեռնողական քաղաքականություն վարի Չինաստանի հետ համագործակցության մեջ, զարգացնի կապերը ոչ միայն առանձին ընկերությունների, այլեւ միջպետական մակարդակով՝ ներառյալ բազմակողմ ծրագրերում գործուն մասնակցությունը: Այդպիսի հնարավորություններ ընձեռում են մասնավորապես Շանհայյան տնտեսական համագործակցությունում դիտորդի կարգավիճակով ծրագրերի քննարկման եւ մշակման, Եվրասիական միջկառավարական խորհրդի, Չինաստան-Հայաստան միջկառավարական հանձնաժողովի ձեւաչափերը:

Հայաստանի տնտեսության ներկայիս վիճակն առավել առարկայական գնահատելու, առկա միտումները սթափ վերլուծելու եւ ապագա զարգացումները կանխատեսելու համար կարեւոր է հաշվի առնել անկախության տարիներին մեր պետության անցած ուղին՝ իր ձեռքբերումներով եւ բացթողումներով:

Նման ուսումնասիրությունները հիմք են տալիս կատարելու մի քանի հիմնական եզրահանգումներ: Նախ՝ Հայաստանի անկախության տարիներին գիտելիքներն ու մարդկային ռեսուրսը չեն գնահատվել հավուր պատշաճի: Մինչդեռ ցանկացած երկրում դա ամենակարեւոր ռեսուրսն է համարվում, առավել եւս՝ սահմանափակ ռեսուրսներով

15 Կարեւոր է Չինաստանի հետ համագործակցությունը բազմակողմ ձեւաչափով. Թ.Մանասերյան
http://www.panorama.am/am/news/2016/05/23/տնտեսագետ-Չինաստան/1584131

Հայաստանում: Սրանից էլ բխում է արտագաղթի խնդիրը, առաջին հերթին՝ երիտասարդ արհեստավարժ կադրերինը, որոնք կարող էին երկրի համար նյութական արժեքներ ստեղծել, սակայն իրենց ընդունակությունների կիրառման հնարավորություն չգտնելով, հեռանում են՝ արտասահմանում կայանալու ակնկալիքով:

Մյուս խնդիրը պետության եւ բիզնեսի համագործակցության խոչընդոտում է, պետության եւ մասնավորի գործընկերության գաղափարի խեղաթյուրումը: Ժամանակակից հնչողությամբ այս հայեցակարգը շտապեցին յուրացնել Արեւմուտքից, սակայն՝ միայն խոսքով: Բովանդակության աղավաղումները կոռուպցիոն նոր ռիսկեր ծնեցին:

Ընդհանուր առմամբ՝ պետք է լավատես լինել: Ամեն նոր կառավարության հետ նոր հույսեր են առաջանում, որ այն, ի վերջո, կամք ու վճռականություն կդրսեւորի եւ կկարողանա հաղթահարել թերությունները, մասնավորապես՝ պետական համակարգի ամբողջ ուղղահայացով արմատացած կոռուպցիան, ինչպես նաեւ անհրաժեշտ բովանդակություն կհաղորդի պետության եւ մասնավոր հատվածի գործընկերությանն ու գործնական աշխատանքին, դրանում ներգրավելով հասարակական շրջանակներին՝ տնտեսագետների, ոլորտի փորձագետների եւ այլ մասնագետների: Պետություն-բիզնես-քաղաքացիական հասարակություն եռանկյունին ի զորու է նոր օգտակար գաղափարներ առաջ քաշել:

Մի բան ակնհայտ է, որ հին համակարգին այլեւս վերադարձ չկա: Իսկ թե ինչպիսին է նոր համակարգը, դժվար է ասել, քանի որ այն տակավին ձեւավորված չէ, այսինքն՝ չենք կարող պնդել, թե ունենք մրցունակ տնտեսություն: Իհարկե, կան բացառություն կազմող առանձին ոլորտներ, սակայն դա քիչ է, մանավանդ եթե համեմատելու լինենք այն արդյունքների հետ, որոնց վերջին երկուսուկես տասնամյակում հասել են Արեւելյան Եվրոպայի երկրները:

Ձեռքբերումները. Այնուամենայնիվ, որոշակի ձեռքբերումներ կան, որոնք շատ դժվարությամբ ու ցավագին կերպով ի հայտ եկան: Առաջինը, որ մենք կարողացանք ձեւավորել, ազատ մրցակցությունն էր, երբ յուրաքանչյուր ստեղծագործող մարդ կարող է փորձել իր գաղափարն իրականություն դարձնել: Ցավոք՝ դրա հակակշիռները նույնպես չուշացան: Դրանք են՝ մենաշնորհները, ստվերային տնտեսությունը եւ անհավասար մրցակցությունը, որը դժվարացնում է փոքր բիզնեսի կայացումը:

Բացթողումները. Որպեսզի բացթողումների վերաբերյալ տնտեսագետի խոսքը տարբերվի քաղաքագետների եւ այլ մասնագետների խոսքից, հարկ է նշել, որ դրանք չափելի են: Տնտեսական անվ-

տանգության տեսանկյունից Հայաստանի տնտեսությունում առայժմ սպառնալիքներ կան, եւ պետք է աշխատել այդ ուղղությամբ: Օրինակ՝ պարենային անվտանգության առումով մենք կարող էինք ինքնաբավ լինել, սակայն դեռ որոշակի կախվածություն ունենք դրսից: Մասնավորապես, մեր հետազոտությունները վկայում են, որ սննդամթերքի առաջին անհրաժեշտության 10 ապրանքային խմբերից Հայաստանը կարող է ինքնաբավ լինել առնվազն 8-ի մասով:

Ունենք նաեւ ժողովրդագրական անվտանգության, արտագաղթի պատճառով ուղեղների արտահոսքի, գիտության, ուրեմն եւ գիտելիքահենք տնտեսության ու գիտելիքահենք կառավարման խնդիրներ եւ այլն:

Ինչ վերաբերում է էներգետիկ անվտանգությանը, ապա պետք է նկատել, որ Հայաստանը ոչ միայն մրցունակ էներգետիկ համակարգ եւ անգամ էլեկտրաէներգիա արտահանելու հնարավորություն ունի, այլեւ կարող է ավելին անել, մասնավորապես՝ այլընտրանքային էներգիայի եւ արեւային էներգիայի արտադրության առումով:

Ամփոփում

Այս հատվածում կարեւոր է պարզել, թե ի վերջո ինչպիսի՞ դերակատարում ունի Հայաստանն աշխարհի տնտեսական քարտեզի վրա: Իհարկե, մեր երկիրը միանշանակ դերակատարում ունի համաշխարհային տնտեսության մեջ: Առաջինը Հայաստանի մտավոր ներուժն է: Ընդ որում, մասնագիտական ներուժը շատ ավելին է, քան դրամականը: Եվ եթե ուզում ենք աշխարհի քարտեզի վրա կանխորոշել Հայաստանի տեղը, ապա միանշանակ կարող ենք ասել, որ դա տեղեկատվական եւ բարձր տեխնոլոգիաներն են, նորարարությունները, որոնք մենք առայժմ ավելի շատ արտահանում ենք, քան իրացնում բուն երկրում: Հայաստանն իր հաստատուն տեղը կարող է գտնել նաեւ զբոսաշրջության, մշակույթի, կրթության, առողջապահական եւ մի շարք այլ ոլորտներում: Մեր երկիրը մրցունակ կարող է լինել նմանապես ոսկերչության ու ադամանդագործության բնագավառներում:

Ուրեմն՝ տարածաշրջանային կտրվածքով, քանի որ մենք անդամակցում ենք Եվրասիական տնտեսական միությանը, պետք է ձգտել այդ երկրների շուրջ 180 միլիոնանոց շուկաները գրավել եւ դրանով միաժամանակ զարգացնել ազգային տնտեսությունը:

Ինչ վերաբերում է Հայաստանի տնտեսական տեսլականին, ապա ներկայիս տեմպերի պարագայում բավական երկար ժամանակ է հարկավոր տնտեսությունը զարգացնելու եւ հզորացնելու համար: Կան-

խատեսումներ անել չենք կարող, քանի որ անկարելի է հիմք ընդունել այսօրվա դանդաղկոտությունը: Այդպիսի քայլերով շարժվելիս՝ առաջիկա հարյուրամյակում անգամ չենք հասնի նշված թիրախներին: Բայց եթե հաջողվի սկսել ճիշտ մեկնակետից, ապա շատ կարճ ժամանակում արդյունքներն ակնհայտ կլինեն: Պետք է անվրեպ օգտագործել եղած հնարավորությունները, առաջին հերթին՝ մարդկային ռեսուրսը: Կադրային ճիշտ քաղաքականություն վարելու, արդյունավետ կառավարման գործելակերպ որդեգրելու դեպքում, համոզված եմ, առավելագույնը 5 տարուց հետո Հայաստանը նշածս բոլոր ուղղություններում կարող է կայանալ իբրեւ տնտեսապես կայուն, հուսալի եւ մրցունակ պետություն:

ТАТУЛ МАНАСЕРЯН

Экономика Армении на стадии возможностей и вызовов развития

Наша страна, безусловно, вносит свой вклад в мировую экономику по ряду отраслей, основанных на знаниях. Первым является интеллектуальный потенциал Армении. Кроме того, профессиональный потенциал гораздо больше, чем денежний потенциал. И если мы хотим предвидеть место Армении на карте мира, то можно с уверенностью сказать, что, например, информационные и высокие технологии, инновации, экспортируются больше, чем потребляют в стране. Армения может найти свою нишу также в области науки, культуры, образования, здравоохранения и туризма. Наша страна может быть конкурентоспособной также в производстве ювелирных и алмазных изделий.

TATOUL MANASSERIAN

Armenia's Economy in the Stage of Development Opportunities and Challenges

Our country, of course, is contributing to the world economy in a number of industries based on knowledge and innovations. The first is the intellectual potential of Armenia. In addition, the professional potential of the nation is much more than the monetary potential. And if we intend to portray the place of Armenia on the world map, we may indicate with no doubt that, for example, information and high technologies are being exported much more than they are being consumed within the country. Armenia can also find its niche in the field of science, culture, education, health and tourism. Our country can be competitive in the production of jewelry and diamond cutting.

ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ՝ «ՄԻՋԱՆԿՅԱԼ» ՊԱՏԵՐԱԶՄ. ՉՍԵՐՏԱԾ ԴԱՍԵՐ

ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ՝ «ՄԻՋԱՆԿՅԱԼ» ՊԱՏԵՐԱԶՄ. ՉՍԵՐՏԱԾ ԴԱՍԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱՆԱՆՅԱՆ
Անկախ քաղաքագետ

«Մսխված» երկտասնամյակ

1994թ. հրադադարի կնքումից ի վեր հայաստանյան քաղաքագիտական շրջանակները, որոնց զգալի մասը «ջատագովական» պարզունակության տարբեր մակարդակներով մշտապես սպասարկում էր 1996 թվականից ՀՀ ոչ ընտիր իշխանության վարած արտաքին քաղաքականությունը, հայոց հանրության մեջ սնուցում էին այն անհեթեթ համոզումը, թե Արցախյան առաջին պատերազմում «ջախջախիչ» պարտություն կրած Ադրբեջանն այլեւս չի հանդգնի վերսկսել ռազմական ագրեսիան «Արցախի», իմա՝ Հայաստանի դեմ[1]: Հրապարակային քաղաքագիտությամբ պայմանավորված գերակա հանրային կարծիքն այն էր, որ ազատագրված տարածքների «ոչ միջանցքային» մասն առանց մեծ դժվարությունների հնարավոր կլինի փոխանակել Արցախի «անկախ կարգավիճակի» դիմաց եւ, այդպիսով, կարգավորել արցախյան հակամարտությունը, փակել նոր պատերազմի հեռանկարն ու զբաղվել, պայմանականորեն ասած, երկրի բարօրության կերտմամբ[2]:

Թե ինչպես էին պատկերացնում Երրորդ հանրապետության «հիմնադիր» եւ նրանից ուղիղ վարչագաղափարական ժառանգականությամբ ածանցյալ երկրորդ ու երրորդ վարչակազմերը Հայոց նորանկախ պետության «բարօրության կերտումը»՝ բոլորիս հայտնի է. երեւույթին գնահատական տալն ակներեւագույն իրողությունների լույ-

1 Сергей Минасян, Нагорный Карабах после двух десятилетий конфликта, неизбежная пролонгация статуськво?, Ереван, Институт Кавказа, 2010, http://c-i.am/research/paper%202_rus.pdf:

2 Nikolay Hovhannisyan, The Karabakh Problem, The Thorny Road to Freedom and Independence, pp. 98-106 http://karabakhfacts.com/wp-content/uploads/2014/07/Nikolay-Hovhannisyan-The-Karabakh-Problem-2004.pdf:

սի ներքո ինքնին անիմաստ է: Հարկ է ընդամենը նշել, որ հանրային գիտակցության մեջ արցախյան հաջորդ պատերազմի գործնական անհնարինության առասպելը հետեւողականորեն առաջ էր մղվում բազում փոխկապակցված պատճառներով: Դրանց հետեւում կանգնած ընդհանուր մտահոգությունն առնչվում էր իշխող վարչակարգի՝ երկիրը սանձարձակորեն հարստահարելու հնարավորինս ընդարձակ եւ անարգել պայմանների ստեղծման հետ: Համապարփակ թալանի մոլուցքը եւ ազգային պետության կերտման հայեցակարգի իսպառ բացակայությունն ու վերջինիս հանդեպ հրապարակավ արտահայտված հեգնանքը[3] ուղիղ հակասության մեջ էին երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու բացարձակ եւ առաջնային բնական առաջնահերթության հետ:

Պաշտպանունակությունն ինքնին շատ ծավալուն, բազմաշերտ իրականություն է, որը սոսկ ռազմական ոլորտից բացի, ներառում է պետականակերտման այլ հիմնարար ոլորտներ՝ ընդհանուր տնտեսությունը, ռազմարդյունաբերությունը, ժողովրդագրական դրության կայունացումն ու շարունակական բարելավման միտման սպասարկումը, երկրում հանրորեն նվազագույնս ընդունելի օրինականության եւ իրավահավասարության միջավայրի հաստատումը եւ այլն: Արցախյան առաջին պատերազմում հայության արձանագրած ընդարձակ, բայց բնույթով միջանկյալ ռազմական հաղթանակից անկախ՝ ազգային պետականությունը վերականգնած հայության առջեւ ոչ միայն չեն վերացել, այլեւ հենց արցախյան առաջին հաղթանակով պայմանավորված՝ սաստկացել են համընդհանուր բնույթի սպառնալիքներն ու մարտահրավերները: Ինչպես եւ 20-րդ դարասկզբին հայոց ինքնիշխան պետականության գոյությունը հայերի պատմական հայրենիքի անգամ փոքր հատվածում ինքնաբերաբար եւ ներքսագույնս անհանդուրժելի էր շրջակա թուրքական պետաքաղաքական միջավայրի համար[4]: Այս իրողությունը լավագույնս արտացոլված է ոչ միայն Թուրքիայի եւ Ադրբեջանի վարած քաղաքականության գործնական դրսեւորումներում, այլեւ ներկայիս Թուրքիայի արտաքին ու ներքին քաղաքականության հիմքում ընկած նեոօսմանականության[5]

3 https://hy.wikisource.org/wiki/ՀՀ_Նախագահ_Լեւոն_Տեր-Պետրոսյանի_մամուլի_ասուլիսը:

4 Խնդրո առթիվ մասնագիտական վերլուծությունների լավագույն ժողովածուներից է «Արարատ» ռազմավարական կենտրոնի կայքում զետեղված հետեւյալ ցանկը. http://www.ararat-center.org/index.php?p=22&l=arm:

5 Omer Taspinar, Turkey’s Middle East Policies: Between Neo-Ottomanism and Kemalism, 2008 http://carnegieendowment.org/publications/index.cfm?fa=view&id=22209 ,Arestakes Simavoryan, Ideological Trends in the context of

հայեցակարգում, ինչպես նաեւ Հայաստանի գոյության «վերահաս» դադարեցումը կանխատեսող Ադրբեջանի բարձրագույն իշխանության ներկայացուցիչների ելույթներում:

Մեր տարածաշրջանում, ինչպես եւ Մերձավոր Արեւելքում, արդյունքները համարյա բացառապես կերտվում են ռազմաքաղաքական հարթությունում՝ մարտի դաշտում եւ արդյունավետ պետականակերտման ոլորտում: Բանակցություններն ընդամենը ամրագրում են ձեռք բերածն ու ժամանակ շահում նոր պատերազմներին ընդառաջ: Հայ-թուրքական հակամարտությունը, որի հիմքում ընկած են հայ ժողովրդի՝ սեփական հայրենիքում ֆիզիկական գոյություն եւ ինքնիշխան պետականություն ունենալու իրավունքի կենսագործումն ու Ցեղասպանության հետեւանքների վերացումը, ունի միայն ուժային լուծում: Մեր տարածաշրջանում, ինչպես Իսրայելի պարագայում է, խաղաղությունը հնարավոր է միայն, եթե այդ պահին հնարավոր չէ պատերազմը:

1994 թվականին հրադադարը չի լուծել Ադրբեջանի ռազմաքաղաքական ողնաշարը ջարդելու խնդիրը՝ անխուսափելիորեն կանխորոշելով նոր պատերազմի բռնկումը: Հրադադարից անցած 22-ամյա ժամանակահատվածն արցախյան առաջին հաղթանակի պարգեւած խոշորագույն ժամանակային պաշարն էր, որն արդյունավետ պետականակերտման, տնտեսական զարգացման եւ բանակաշինության ոլորտներին ծառայելու փոխարեն ծայրագույն ապաշնորհությամբ մսխվել է Երրորդ հանրապետության ապապետական վարչակարգի կողմից:

Իրականությունը՝ հայության պետական եւ ֆիզիկական գոյությունը վտանգող գոյաբանական սպառնալիքները մոռացության տալու ու դրանց նկատմամբ անպատասխանատու եւ թեթեւամիտ վերաբերմունք սերմանելու հարցում մեծ դեր էին խաղում նաեւ իշխանական կատարյալ վերահսկողության ներքո գտնվող հեռուստատեսությունները, արտաքին շահագրգիռ աջակցությամբ գործող՝ բացահայտ կամ քողարկված զիջողականություն քարոզող այլեւայլ լրատվամիջոցներն ու հանրային ազդեցության «ակումբները»: Երկու տասնամյակներ շարունակ հայաստանյան հասարակությունն ապրել է երկու հիրավի տարբեր իրականություններում[6]: Մի կողմից՝ եթերով մատուցվող համապատկերն ուրվագծում է ծայրահեղ սպառողապաշ-

foreign policy of Turkey 03.09.2010, էջ 19-30, http://www.noravank.am/eng/articles/detail.php?ELEMENT_ID=5013:

6 Տես՝ Այվազյան Ա., «Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության համակարգի», Մասն առաջին, Երեւան, 2004, էջ 43-45, http://www.ararat-center.org/upload/files/Himnatarrer_ARM.pdf:

տությամբ ու ցածրորակ ժամանցային անհոգությամբ դրոշմված հանրային կյանքի տեսարան: Մյուս կողմից՝ հատկապես Սերժ Սարգսյանի ինքնիշխանազուրկ եւ կրավորապես անողնաշար արտաքին քաղաքականության պատճառով, պայմանական հրադադարի ռեժիմը ոչ միայն տարեցտարի շարունակում է խլել տասնյակ զինծառայողների կյանքեր, այլեւ արագորեն հյուծիչ դիրքային-դիվերսիոն պատերազմի վերաճելու կայուն եւ ահագնացող միտում է արձանագրում: Նշված երկու իրականություններում ապրելու հանգամանքը առանձնապես վրդովեցուցիչ էր հենց ապրիլյան պատերազմի օրերին, երբ հաշված օրերի ընթացքում ռազմաճակատում ավելի քան հարյուր զինծառայողների զոհվելու հանգամանքն իսկ հայաստանյան հեռուստաընկերություններին ու ժամանցային վայրերին բարոյապես չխանգարեց շարունակել ապրել «խնջույք՝ ժանտախտի ժամանակ» բանաձեւով:

2000-ականների սկզբներին հայաստանյան քաղաքագիտական միտքն առաջ է քաշել եւ զարգացրել մեկ այլ ուշագրավ «տեսություն», ըստ որի, ի տարբերություն պետական համակարգի այլ հաստատությունների, Հայաստանի (ներառյալ Արցախի) Զինված ուժերն իբր կարողացել են բոլոր հիմարար գծերով կայանալ որպես լիովին արդյունավետ եւ ներքուստ գերազանցապես առողջ համակարգային տրամաբանությամբ գործող ու զարգացող ամբողջություն: Շատ սահմանափակ եւ ընտրովի ծավալով այս հաստատումը կարելի էր մասնակիորեն ճշմարտանման համարել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ի տարբերություն այլ ոլորտները կարգավորող պետական գերատեսչությունների՝ ՀՀ զինված ուժերն, իրոք, հարկադրված էին լուծել կենսական նշանակության իրական լրջագույն խնդիրներ, որոնց նկատմամբ այլ ոլորտներում սովորական դարձած անպատասխանատու վերաբերմունքի մասնաբաժինը միանգամայն կործանարար կլիներ ռազմաճակատի կայունությունը պահպանելու առումով: Ի վերջո, հայոց հանրային կյանքում վաղուց ի վեր տարածում գտած ու դեռեւս լիովին չհաղթահարված ներքին քաղաքական մի տրամախոսություն սիրում էր պնդել, թե երկրում սահմանադրական կարգի եւ իրական ժողովրդավարության հաստատման ու տնտեսական զարգացման հիմքերի ստեղծման համար անայլընտրանք նախապայման է արցախյան հակամարտության կարգավորումը[7]:

Այնուամենայնիվ, մեծ խորաթափանցություն չի պահանջվում՝ հասկանալու համար, որ իրականությունը (հաշվի առնելով հայաստանյան

7 Այս եւ տարիների ընթացքում անընդհատ հնչած համանման պնդումների նմուշ՝ Լեւոն Տեր-Պետրոսյան. «Ղարաբաղյան խնդրի լուծումն Արեւմուտքի համար առաջնահերթություն չէ», http://www.panarmenian.net/arm/news/51393/:

ներկայիս քաղաքական-հասարակական կյանքի հայտնի «ուրույնությունները»), թերեւս տրամագծորեն հակառակն է: Չլուծված արցախյան հակամարտությունը, համապարփակ լայնածավալ պատերազմի վերսկսման վտանգը, հնարավոր ռազմական անհաջողությունների կամ պետական ու բանակային շինարարության թերացումների սպասելի բացասական հետեւանքները, որոնց անխուսափելիորեն հետեւելու է ներկայիս վարչակազմի իշխանազրկումը (բացառված չէ նաեւ ֆիզիկական հաշվեհարդարը), պաշտոնական Երեւանին ստիպում են գոնե նվազագույն չափով պահպանել բանակի փաստացի մարտունակությունը եւ հանրային կյանքի որոշակի հավասարակշռությունը:

Խիստ տեսականորեն, եթե Սերժ Սարգսյանի նախագահության առաջին ժամկետի ընթացքում հնարավոր դառնար «կարգավորել» Հայաստանի եւ թուրքական պետաքաղաքական շրջապատի հետ ցեղասպանությամբ ու Հայաստանի՝ ռուս-թուրք-ադրբեջանական մասնատմամբ առաջացած կնճիռը հայ-թուրքական արձանագրությունների եւ Մադրիդյան փաթեթի շրջանակներում, ինչպեսեւ իրականանար ՀՀ զինված ուժերի թվաքանակը շուրջ երեք անգամ նվազեցնելու՝ Սերժ Սարգսյանի երազանքը, ապա ներկայիս քրեաօլիգարխիկ վարչախումբը վերջապես իրեն ազատ կզգար թոթափելու ժողովրդավարական եվրաչափանիշ կաղապարի վերջին պայմանականությունները՝ երկրում հաստատելով հետխորհրդային միջինասիական պետություններին բնորոշ վարչակարգ: Հետեւաբար, ինչպես արդեն ասել ենք, հայաստանյան որոշ ընդդիմադիր քաղաքական, քաղաքագիտական եւ տնտեսվարական շրջանակների համոզմունքը, թե Հայաստանի իրական ժողովրդավարացումն ու զարգացումը անհնար են առանց արցախյան հակամարտության եւ հայ-թուրքական հարաբերությունների նախընթաց կարգավորման, սովորական եւ հաճախ սուբյեկտիվորեն շահագրգիռ անհեթեթություն է:

ՀՀ զինված ուժերն ապրիլյան պատերազմին ընդառաջ

ՀՀ զինված ուժերը՝ որպես ներկայիս հայաստանյան պետական համակարգի առանցքային բաղկացուցիչ, սկզբունքորեն չէին կարող անմասն եւ զերծ մնալ արդի հայոց պետությանը պատուհասած համակարգային արատներից: Այս իրողությունը լիովին ակնհայտ էր հրադադարի կնքումից ի վեր անցած բոլոր տարիներին եւ, հատկապես, ցցուն ու անհանդուրժելիորեն մտահոգիչ է դարձել ապրիլյան պատերազմի օրերին: Բանակի բարձրագույն ղեկավարությունը, ՊՆ հենքային կառույցները, մասամբ նաեւ միջին սպայակազմը, թաթախված

էին երբեմն երեւակայության բոլոր «ողջամիտ» սահմանները գերազանցող կոռուպցիոն գծապատկերների մեջ: Զինված ուժերում առկա կոռուպցիոն երեւույթները լրջագույն սպառնալիք են Հայաստանի ազգային անվտանգությանը: Վերոհիշյալ սպառնալիքները շատ բազմազան են եւ կարող են դասակարգվել ըստ այլեւայլ չափորոշիչների: Բանակի բարձրագույն ղեկավարության պարագայում, բացի սովորական կոռուպցիոն գծապատկերների գործարկումից, մշտապես առկա էր եւ շարունակում է հարատեւել քաղաքական բնույթի սպառնալիքը՝ Հայաստանի ազատագրված տարածքը հանձնելու ոտնձգությանը՝ հնարավոր հանցակից մասնակցության առումով: Մինչ վերջերս որպես ՊՆ նախարար պաշտոնավարած Սեյրան Օհանյանն ուժի արտաքին կենտրոնների փորձագիտական ծառայությունների կողմից դիտվում էր որպես տարածք հանձնելու «գործողության» առանցքային դերակատար:

Լեւոն Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի եւ, ի մասնավորի, Սերժ Սարգսյանի նախագահության օրոք բանակցային գործընթացում իբրեւ բացառիկ «հնարավորությունների պատուհան» դիտված պահերին, երբ թվում էր՝ հասունացել է կարգավորման հայտնի փաթեթներով հակամարտությունը հանգուցալուծելու ժամանակը, ի հայտ էր գալիս ազատագրված տարածքներ հանձնելու գործնական անհնարինության եւ անիրագործելիության ըմբռնումը, որը պայմանականորեն ձեւակերպվում էր որպես «հասարակությունների անպատրաստություն»[8]: Արդեն ասել ենք, որ ազատագրված տարածք հանձնելու ոտնձգությունը բոլոր հնարավոր իրատեսական փորձագիտական եզրակացություններով պետք է անխուսափելիորեն հանգեցներ իրավիճակի վերահսկելիության կորստի, ծանրագույն ռազմաքաղաքական անկայունության եւ, որպես հետեւանք, տարածքային զիջումներ կատարելու հանդգնած վարչակարգի տապալմանը[9]: ՀՀ բոլոր նախագահները «զիջողական գայթակղության» ամենաթեժ պահին ողջամտորեն գիտակցել են «իրենց գլխին գալիքը» եւ այլեւայլ՝ գերազանցապես «բլեֆային» հնարքներով խուսափել իրենց իշխանության ու կյանքի համար ճակատագրական սխալ գործելուց:

8 «Քի Ուեսթի ծնունդն ու վախճանը», http://www.mediamax.am/am/news/keywest/541/:

9 Տարածքային «զիջումը» հանգեցնելու է նոր անողոք պատերազմի վերսկսմանը, http://galatv.am/hy/anatylitcs/146516/, Տես նաեւ՝ Այվազյան Ա., «Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության համակարգի», Մասն առաջին, Երեւան, 2004, http://www.ararat-center.org/upload/files/Himnatarrer_ARM.pdf, «Ռազմավարության եւ անվտանգության հարցեր», կազմող՝ Այվազյան Ա., Երեւան, 2007, http://www.ararat-center.org/upload/files/Razm_&_Anvtang.pdf եւ այլն:

Արտաքին ուժի կենտրոնների համար անհրաժեշտ էր ունենալ տարածք հանձնելու պատրաստ գերազդեցիկ պետական պաշտոնյայի պահուստային տարբերակ: Այս տեսանկյունից Սեյրան Օհանյանն «անգնահատելի» թեկնածու էր՝ հաշվի առնելով իրավիճակը գնահատելու եւ այլազան ազդեցություններին ոչ համարժեք տրվելու՝ վերջինիս քանիցս դրսեւորած հակումը: Տվյալ դեպքում պետք է աշխատեր հայկական «դը Գոլ» կամ «Արիել Շարոն» պատրանքը, երբ «պատերազմի բովով անցած բանակի հերոս հրամանատարը», ի տարբերություն անվճռական քաղաքացիական ղեկավարության, իր կամային որակների, հանրային անխախտ հեղինակության շնորհիվ ստանձնում է ցավոտ փոխզիջումների գնալու եւ դրանք անշեղորեն ի կատար ածելու վճռականություն եւ պատասխանատվություն՝ դառնալով երազած տարածաշրջանային «խաղաղության կերտողն ու կնքահայրը»: Այս իմաստով Սեյրան Օհանյանի՝ ապրիլյան պատերազմին ու բանակաշինության ոլորտում հանրորեն բացահայտված լրջագույն թերացումներին հաջորդած պաշտոնանկության նկատմամբ արտաքին տարաբեւեռ ուժի կենտրոնների ցուցաբերած անտարբերությունը կարող է մեկնաբանվել իբրեւ ժամանակավոր հրաժարում կարճաժամկետ եւ միջնաժամկետ կտրվածքով Հայաստանին տարածքային զիջումները պարտադրելուց:

ՊՆ նախարարի պաշտոնում Սեյրան Օհանյանին հաջորդած Վիգեն Սարգսյանը արցախյան հակամարտության կարգավորման հայեցակետի տեսանկյունից նույնքան «հանձնող» է[10]: Այսուհանդերձ՝ նոր նախարարի հայտնի կամազուրկ եւ Սերժ Սարգսյանի ընտանիքի հանդեպ «ձեռնասուն» որակներն ի սկզբանե զրոյացնում են հիշյալ անձի՝ ՀՈՒ համակարգում ինքնուրույնամետ դերակատար դառնալու հնարավորությունները, ուստիեւ վերջինիս սակավարժեք են դարձնում՝ որպես հանձնման գործընթացի իրականացման «պահուստային» երաշխավորի: Բանիմաց փորձագետների ոչ հրապարակային գնահատմամբ՝ ապրիլյան պատերազմից հետո պաշտպանության նախարարի պաշտոնում Վիգեն Սարգսյանի նշանակումը ՀՀ քաղաքական իշխանությունների նկատմամբ անվստահության կտրուկ աճ արձանագրած բանակի վրա տեխնիկական անդեմ կամակատարի միջոցով ուղիղ՝ չմիջնորդավորված կառավարում հաստատելու քաղաքական ակտ էր:

Խոշոր վտանգ է ներկայացնում նաեւ բարձրագույն սպայակազմի մեծագույն մասի անմիջական, անվերահսկելի եւ խորը սերտաճումը գործարարության ոլորտի հետ, որը բանակի կառավարման ասպա-

10 Վիգեն Սարգսյանը խոսում է արցախյան հակամարտության կարգավորման շրջանակում Հայաստանի ազատագրված տարածքի հանձնման «անխուսափելիության» մասին: Տես՝ https://youtu.be/fdRgqug-QYc:

րեզում հանգեցնում է բնական առաջնահերթությունների խեղմանը: Նույնքան անհանդուրժելի է արհեստավարժության, պատշաճ մասնագիտական կրթության եւ կենսորեն անհրաժեշտ գործնական հմտությունների պակասը հրամանատարական տարբեր մակարդակներում: Առանձնապես ուշագրավ եւ որպես երեւույթ՝ խստագույնս դատապարտելի են բանակը նորագույն տեխնոլոգիական սարքերով ու տեխնոլոգիաներով հագեցնելու նկատմամբ տարիներ ի վեր ցուցաբերված անպատասխանատվությունը եւ կոռուպցիոն արատավոր մոտեցումները[11]: Հիշյալ ոլորտում զինվորական բարձրագույն ղեկավարության եւ անձամբ Սեյրան Օհանյանի դրսեւորած լիակատար անպատասխանատվության պատճառով ապրիլյան պատերազմում մենք ունեցել ենք մարդուժի եւ ռազմական տեխնիկայի անհարկի եւ աններելի կորուստներ:

Բանակաշինության ոլորտում ակներեւ թերացումների եւ, հատկապես, բանակը արդիական սպառազինություններով համալրելու գերխնդրի տապալման խորապատկերին ՊՆ համակարգում տեղի ունեցած մասնակի պաշտոնանկությունները՝ մանավանդ այն տեսանկյունից, որ մեղավորները չենթարկվեցին քրեաիրավական պատշաճ պատասխանատվության, դրական որեւէ տեսանելի փոփոխություն չեն առաջացրել: Բանակաշինության ոլորտի թերացումները քողարկելու եւ հայրենաբնակ ու սփյուռքյան հայոց հասարակություններում չհիմնավորված ապահովության պատրանքը պահպանելու նկատառմամբ բացահայտ կամ անուղղակի իշխանամետ քարոզչական թեզեր տարածող քաղաքագիտական շրջանակներն, իրենց հերթին, տարիներ շարունակ ասպարեզ են հանել զգալի քանակի փորձագիտական վերլուծություններ, որոնցում փորձ էր արվում զարգացնել այն տեսությունը, թե իբր Հայաստանի եւ Ադրբեջանի ունեցած սպառազինությունների խմբաքանակների միջեւ ի վնաս հայկական կողմի առկա անհամաչափությունն արդյունավետորեն հավասարակշռվում է թե՛ հայկական կողմի ձեռք բերած զինատեսակների թիրախային առավելությամբ[12] եւ թե՛ հայ-ռուսական անվտանգության համատեղ

11 http://www.pastinfo.am/hy/news/2015/05/13/Կարեն-Վարդանյան-Չկակամուրջ-բարձր-տեխնոլոգիաների-ոլորտի-եւ-բանակի-միջեւ/86282, «ԼՂ ՊԲ հրամանատար. Մինչ ապրիլյան պատերազմը խորքային հետախուզության տեխնիկական միջոցներ չեն եղել», http://www.azatutyun.am/a/27916875.html:

12 Минасян С., Азербайджан против РА и НКР: военно-политический баланс, оценки боеспособности и перспективы развития вооруженных сил, տես՝ https://vk.com/doc-49005451_214563678?dl=78428fcd174e3759ad , Минасян С., Военно-технические аспекты и проблемы контроля над вооружениями на Южном Кавказе, տես՝ http://www.noravank.am/upload/pdf/120_ru.pdf:

համակարգերում ներգրավված լինելու շնորհիվ[13]:

Բոլորովին չգերագնահատելով վերոնշյալ տեսությունների եւ տեսաբանների մատուցած փսասի համեստ ծավալները՝ ստիպված ենք նշել, որ դրանք իրենց չափով նույնպես նպաստել են երկրի առջեւ ծառացած վերահաս գոյաբանական սպառնալիքներն ընթացիկ վերլուծություններով իմաստակաբար ստվերելու ապաշնորհ գործին: Ասվածից չի բխում, որ տողերիս հեղինակը ինքնին անհնար է համարում պաշտպանական ոլորտին հատկացվող ադրբեջանականից նվազ միջոցներով երկրի ռազմական անվտանգությունը երաշխավորելու հնարավորությունը, այլ սկզբունքորեն մերժում է ակնբախ վիճակագրական աճպարարություններով հանրությանն ապակողմնորոշելու եւ ինքնիշխանազրկող կայսերապաշտ վերպետական կառույցների չեղյալ աջակցությանն ապավինելու արատավոր սովորույթը:

Հայաստանը՝ նոր պատերազմի նախաշեմին

Ի տարբերություն ներկայիս հայաստանյան ռազմարվեստի տեսաբանական մտքի ամլության՝ արտաքին վերլուծական կենտրոնները եւ մասամբ ադրբեջանական կողմը ապրիլյան պատերազմին նախորդած շրջանում որոշակի խորությամբ անդրադարձել են սպասվելիք Արցախյան երկրորդ պատերազմի հնարավոր դիպաշարերին: Մի կողմ դնելով հատկապես ադրբեջանական կողմին բնորոշ անպատեհ քարոզչական զեղումները, կարելի է ուրվագծել Բաքվի պատկերացրած «բլիցկրիգ»-ի բոլոր էական գծերը: Ապշերոնյան ռազմավարները (ստրատեգները) գիտակցում էին, որ անգամ ռազմաճակատի բոլոր ուղղություններով արձանագրվելիք հաջողությունները հազիվ թե թույլ տային հաշված շաբաթների ընթացքում ռազմակալել Արցախի ներկայիս 12.000 քառակուսի կմ տարածքն ամբողջությամբ: Հետեւաբար, իրենց պատկերացրած մեծապես ռիսկային ռազմավարությունը պետք է հիմված լիներ ռազմական, դիվանագիտական եւ հոգեբանական գործոնների համադրման վրա: Ենթադրվում էր, որ ադրբեջանական «բլիցկրիգ»-ի հիմնական ուղղությունը պետք է լիներ Ակնա-Ասկերան-Ստեփանակերտի՝ Կարկառ գետի հովտով ձգվող հատվածը: Շեղող հարձակողական հարվածները պետք է ուղղվեին հյուսիսում Մարտակերտի եւ հարավում Հորադիզ-Հադրութի՝ արաքսամերձ գոտու ուղղությամբ:

Միաժամանակ պետք է իրականացվեին խափանարար խոշորածավալ ներթափանցումներ Քարվաճառի շրջանում՝ մարտակերտյան

13 Минасян С., Россия и Армения: прагматика и стереотипы, http://www.globalaffairs.ru/global-processes/Armeniya-i-Rossiya-pragmatika-i-stereotipy-17864:

դիրքերի անվտանգությունը խարխլելու եւ Արցախ-Գեղարքունիքի մարզ հաղորդակցային ուղիները փակելու նպատակով: Նոր պատերազմի սկիզբը պետք է ազդարարվեր գերազանցապես ռուսական արտադրության հրթիռա-հրետանային կայանքների ստվարածավալ գործարկմամբ, արցախյան առաջնագծի դիրքերի, զորամասերի, սահմանամերձ եւ գլխավոր բնակավայրերի անխնա հրթիռակոծությամբ, որոնք պետք է առաջացնեին ռազմական արագ կառավարման համանկում (կոլապս), խաղաղ բնակչության մեջ ահռելի քանակի զոհեր եւ բարոյալքված բանակային ստորաբաժանումների ու բնակչության անկանոն նահանջ: Բաքվի ռազմական տեսաբաններն ակնկալում էին, որ հատկապես կենտրոնական ուղղությամբ հայկական դիրքերի ճեղքումը եւ Ստեփանակերտի մատույցներում հայտնվելը վերջնականապես կջլատեն ու կքայքայեն արցախյան հատվածում ՀՀ ԶՈՒ մարտունակությունը, որից հետո, իրենց հաշվարկների համաձայն, պետք է դադարեր որեւէ կազմակերպված պաշտպանություն եւ սկսվեր բանակի ու բնակչության անկառավարելի, խուճապահար նահանջ Արցախի ողջ տարածքից:

Ի տարբերություն ադրբեջանական կողմի, Երրորդ հանրապետության ապապետական, ինքնիշխանազուրկ եւ արտաքնապես կրավորական քաղաքական ուղի բռնած մեր իշխանությունները հետեւողականորեն զլացել են հրապարակավ մատնանշել ռազմական նոր ագրեսիայի սանձազերծման դիմաց Ադրբեջանից պահանջվելիք գինն ու հատուցումը: Ազգային-պետական ճամբարը հետեւողականորեն նշում էր, որ այդ գինը, ինչպես նաեւ արեւելյան ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ցեղասպանությամբ եւ ապօրինի արտաքին մասնատմամբ ոտնահարված բնական, անօտարելի իրավունքների վերականգնումը հրամայաբար ենթադրում են ՀՀ-Ադրբեջան պետական սահմանի հաստատում Կուր գետի երկայնքով[14]:

Պաշտոնական Հայաստանի անմարմին դիվանագիտությունը անգամ կամք ու համարձակություն չի ունեցել հաստատելու, որ Արցախյան առաջին պատերազմի արդյունքներով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ձեւավորված ներկայիս տարածքային սահմանազատումն ինքնին հայկական կողմի առավելագույն երեւակայելի փոխզիջումն է: Էթնիկական հատկանիշով բնակչության վերատեղաբաշխումն ըստ ռազմաքաղաքական վերահսկողության գոտիների նորագույն պատ-

14 Кананян А., “Довильское заявление неприемлемо для армянской стороны”, http://inosmi.ru/caucasus/20110601/170141600.html, Տես նաեւ՝ http://eurasnews.ru/armeniya/александр-кананян-единственным-реше/, http://www.7or.am/ru/news/view/36015/Քանանյան:

մության մեջ քաղաքականապես ընդունված եւ միջազգային իրավունքի նախադեպային սկզբունքով ճանաչված մոտեցումն է, որը հետեւողականորեն կիրառվել է այն դեպքերում, երբ պատմական հիշողության եւ հակամարտային ժառանգությամբ պայմանավորված համակեցության անհնարինությունը հանգուցալուծվում էր դիմակայող էթնիկական միավորների վերատեղաբաշխմամբ: Այս սկզբունքը կայուն ամրագրում է ստացել Երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպայի հետպատերազմյան տարածքային կարգավորմամբ՝ Սիլեզիայի, Պոմերանիայի, Արեւելյան Պրուսիայի, Սուդետների եւ մասամբ Իստրիայի օրինակով: Ըստ վերահսկողության գոտիների էթնիկական բնակչության վերախմբավորման սկզբունքն ընդունվել եւ իրավասու է ճանաչվել նաեւ Բոսնիա-Հերցեգովինայի պարագայում՝ առանձին Սերբական եւ Խորվաթ-մահմեդական համադաշնության ստեղծմամբ եւ դրանց տարածքներում էթնիկապես համատարր գոտիների իրավական ամրագրմամբ:

Քաղաքականությունը հնարավորի արվեստ է: Ի սկզբանե անիրապաշտ, գործնականում անիրագործելի եւ Հայաստանի համար անխուսափելիորեն կործանարար կարգավորման փաթեթներից կառչելը խեղում է կարգավորման գործընթացի բուն էությունը, Ադրբեջանի եւ ուժի արտաքին կենտրոնների համար Հայաստանի առավելագույն զիջումների նշաձողի մասին կեղծ պատրանքներ ստեղծում՝ դրանով իսկ խթանելով հիմախնդիրը հերթական անգամ ռազմական արկածախնդրությամբ հանգուցալուծելու գայթակղությունը:

Ապրիլյան պատերազմից առաջ Հայաստանում եւ հարակից տարածաշրջանում (Հարավային Կովկաս) ստեղծվել էր աշխարհաքաղաքական բեւեռների մրցակցությամբ եւ սեփական կարողությունների մասին գերագնահատված պատկերացումներ ունեցող Ադրբեջանի սանձարձակ նկրտումներով պայմանավորված գերլարված իրավիճակ: 1994 թվականի արդյունքներով ձեւավորված ստատուս--քվոյի «անընդունելի» լինելու մասին ԵԱՀԿ համանախագահող երկրների[15] ու Ադրբեջանի[16] պարբերաբար բարձրաձայնած հայտարարությունները եւ դրանց ի պատասխան՝ զսպման նվազագույն հակադարձ քայլերից սարսափող պաշտոնական Երեւանի անողնաշար քաղաքականությունը հանգեցրել էին մի իրավիճակի, որում ադրբեջանա-

15 «Ստատուս-քվոն անընդունելի է եւ գնալով ավելի վտանգավոր է դառնում». ԵԱՀԿ ՄԽ-ի ամերիկացի համանախագահ», http://www.amerikayidzayn.com/a/warlick-nagorno-karabakh-status-quo-is-unsustainable/1915853.html:

16 Ալիեւ. Ստատուս-քվոն անընդունելի է, Հայաստանը պետք է դուրս բերի զորքերը. «ՌԻԱ», http://www.aravot.am/2016/06/20/705904/:

կան նոր ռազմական արկածախնդրությունը, ըստ ամենայնի, անխուսափելի էր:

Տեղական, տարածաշրջանային եւ համաշխարհային յուրաքանչյուր դերակատար նպատակ ուներ խթանելու սեփական հիմարար կամ ընթացիկ շահերից բխող զարգացումները: Սերժ Սարգսյանի վարած ապաշնորհ եւ համակարգորեն ձախորդ ներքին ու արտաքին քաղաքականության պատճառով բոլոր մակարդակներում Հայաստանի դիրքերի եւ հեղինակության շեշտակի թուլացումը, տարեցտարի աճող ու կատարելապես անհանդուրժելի դարձած ադրբեջանական ռազմական սադրանքներին ի պատասխան՝ զսպման նվազագույն հակադարձությունից խուսափելը, արտագաղթի պահպանվող բարձր ցուցանիշները, հայաստանաբնակ հայության թվացյալ համընդհանուր բարոյալքությունը Ադրբեջանի ղեկավարության համար մեծ պատրանք ու գայթակղություն էին ստեղծում սողացող պատերազմի միջոցով ապացուցելու իրենց միանշանակ եւ գերակա ռազմաքաղաքական առավելությունը: Միացյալ Նահանգները՝ լավագույնս տիրապետելով տարածաշրջանի բոլոր անցուդարձերին եւ խորքային ծալքերին, առերես կրավորանման կեցվածք է ընդունել՝ թույլ տալով այլ դերակատարներին առավելագույնս մխրճվել սեփական նպատակների իրագործման փորձերի մեջ: Այս մոտեցումը ամերիկյան քաղաքականության վաղեմի դասագրքային հնարք է, երբ բոլոր հնարավորությունները սպառած եւ տկարացած մրցակիցները հարկավ ստիպված էին ընդունել Վաշինգտոնի վերջնական «արբիտրաժը»:

Եթե սպասվող վայրիվերումներին ընդառաջ ԱՄՆ-ն որդեգրել էր արտաքուստ սպասողական եւ ավարտին՝թելադրող քաղաքական կեցվածք, ապա Ռուսաստանի Դաշնությունն՝ ի դեմս նախկին խորհրդային տարածության կայսերամետ վերինտեգրման ջատագով Վ.Պուտինի, ձգտում էր առանց «տեղում ավելորդաբար երկար դոփելու» իրականացնել ԵԱՏՄ տեսքով Խորհրդային միության «վերակենդանացման» հերթական քայլը՝ ներառելով Ադրբեջանը վերոհիշյալ վերպետական միավորի կազմում: Վերջին տարիների ընթացքում մի շարք անկախ փորձագետների, ինչպեսեւ Կրեմլի՝ Արցախ ժամանած որոշ էմիսարների քանիցս բացատրվել է ազատագրված տարածքի հասարակության ներկայացուցիչների կողմից, որ նպատակահարմար չէ Հայաստանի նկատմամբ ՌԴ ընթացիկ քաղաքականությունը կառուցել Հայաստան-պաշտոնական Երեւան երեւույթների նույնացման սկզբունքով: Ընթացիկ քաղաքական գործընթացներում այսպիսի գործնական նույնացումը կարող է միանգամայն աշխատող դիտվել, սակայն համազգային ճգնաժամային նշանակության հարցերում

եւ տեսությունը եւ փորձը վկայում են, որ պաշտոնական Երեւանը չունի անհրաժեշտ ներքին պաշար՝ ազգային պետականության հանդեպ իրականացնելու այնպիսի կործանարար գործողություններ, ինչպիսիք տարածքային զիջումներն են: ՌԴ ղեկավարությունը, ցավոք, ժամանակին չկամեցավ ըմբռնել այս նուրբ, բայց վճռորոշ տարբերությունը, որի պատճառով լուրջ եւ իր համար անսպասելի խնդիրների բախվեց ապրիլյան պատերազմին հաջորդած շաբաթներին:

Ռուսաստանյան հաշվարկը բավական պարզունակ էր, թեեւ, կարծես թե, հենվում էր Ռուսաստանին Հայաստանի հպատակության իրական պատկերին: Նախորդ երկու տասնամյակներին Ռուսաստանը նախանձախնդրորեն ոտնձգում եւ տիրանում էր մեր երկրի ռազմավարական նշանակության բոլոր տնտեսական ոլորտներին, կենսական նշանակության ենթակառուցվածքներին, արտադրական հզորություններին: Ռուսական ռազմահենակետի ընդարձակումը, ՀԱՊԿ-ին եւ ԵԱՏՄ-ին պաշտոնական Երեւանի անդամակցումը Կրեմլում ստեղծել են Հայաստանի քաղաքական ղեկավարության բացարձակ կառավարելիության ու անվերապահ հպատակության պատրանք: Ուստի Մոսկվան լիովին համոզված էր, թե ժամանակն է վերջ դնել Արցախում Հայաստանի ռազմաքաղաքական գերակայությանը, որն իրենց հաշվարկներով պետք է չեզոքացվեր կարճատեւ պատերազմի հետեւանքով՝ հայկական կողմի շեշտակի թուլացմամբ ու Արցախում ռուսաստանյան «խաղաղարար» ստորաբաժանումների տեղակայմամբ:

Կրեմլը «ծանր է տանում» այն հանգամանքը, որ հրադադարի կնքումից անմիջապես հետո, ի հեճուկս նախնական պայմանավորվածությունների, հայկական եւ ադրբեջանական կողմերի լռելյայն համաձայնությամբ միշտ կանխվել է ռուսաստանյան «խաղաղապահների» մուտքը արցախյան հակամարտության գոտի: Սույն թվականի ապրիլին կրեմլյան ակնկալիքների համաձայն՝ կարճատեւ ռազմական բախումից հետո Արցախում վերջապես կհայտնվեին ռուսաստանյան «խաղաղապահ» զորքերը՝ դառնալով Արցախի հետագա ճակատագիրը տնօրինող վճռորոշ գործոն, եւ իրենց հայեցողությամբ կիրականացնեին որոշ տարածքների հանձնումը Ադրբեջանին՝ ԵԱՏՄ կազմ վերջինիս մտնելու դիմաց:

Եթե աշխարհաքաղաքական ուժի բեւեռներն ու տարածաշրջանային այլ դերակատարները ուշի ուշով հետեւում եւ առաջ էին տանում սեփական քաղաքական ծրագրերը, ապա, ինչպես բազմիցս առիթ ունեցանք նշելու, Հայաստանը, կարծես թե, գտնվում էր արտաքին քաղաքական խորը թմբիրի մեջ: Զարմանալիորեն էլ ավելի խորը թմբիրի մեջ էր Արցախի մարզային (հեղինակի պնդմամբ՝ Արցախը ՀՀ ինքնիշ-

խան տարածքի անքակտելի մասն է՝ դե-ֆակտո հատուկ մարզային կարգավիճակով-*խմբ.*) քաղաքական վերնախավը, որը գրեթե կատարյալ անտարբերությամբ էր վերաբերվում Ադրբեջանի ռազմական սադրանքներին: Նրա կողմից հրադադարի պայմանակարգի խախտումները վերջին տարիներին համընդհանուր բնույթ ունեն: Պաշտոնական Ստեփանակերտն ավելի շատ հետաքրքրված էր Երեւան մայրաքաղաքի օրինակով Արցախի մարզում եւս «սահմանադրական բարեփոխումների» իրականացմամբ՝ չխոստովանվող հույս տածելով հասնելու վարչական արտոնյալ պաշտոնավարման ժամկետների երկարաձգման (տարբեր ներիշխանական շրջանակներն՝ ըստ իրենց ունեցած նախապատվությունների[17]):

Ի տարբերություն մարզային քաղաքական վերնախավի, Արցախի բնակչությունը խորապես մտահոգված էր 2010 թվականից ի վեր տարեցտարի վատթարացող ռազմական իրադրությամբ: Համարյա ամեն օր սաստկացող տեւական փոխհրաձգությունները, զոհերի, վիրավորների եւ խափանարար ներթափանցումների թվի աճը բնակչության շրջանում առաջացնում էին սողացող մոտալուտ պատերազմի զգացողություն: Ապրիլյան պատերազմին նախորդած ամիսներին զոհված արցախաբնակ զինվորականների թաղումներին հետզհետե աճող պարբերականությամբ հնչում էին մինչ այդ ոչ սովորական զրույցներն այն մասին, թե հարկավոր է վայրկյան առաջ իրականացնել անհրաժեշտ չափի խիստ պատժիչ հակահարվածներ՝ Ադրբեջանին ռազմական ուժ ցուցադրելու եւ վերջինիս նոր ռազմական արկածախնդրություններից զերծ պահելու համար[18]: Այսպիսով՝ հարկադրված պատերազմի մարտահրավերի ընդունումը արցախյան հանրության կողմից վերստին սկսել է դիտվել որպես ոչ ցանկալի, բայց անայլընտրանք միջոց՝ խաղաղությունն ու կայունությունը վերահաստատելու եւ ապագա սերունդների անվտանգությունը երաշխավորելու համար: Թեեւ նախքան ապրիլյան քառօրյա պատերազմը, առավել խոշոր սրացումներից հետո, Արցախում նկատվում էր զինապարտության տարիքի տղամարդկանց՝ մարզից հեռանալու բավական սահմանափակ միտում, ընդհանուր առմամբ, հնարավոր պատերազմի վերսկսմանը բնակչության հոգեբանական պատրաստվածությունը հիմնականում գոհացուցիչ էր:

17 «Բակո Սահակյանի պես մարզպետ Արցախին հաստատ պետք չէ», http://galatv.am/hy/news/168134/:

18 «Մեր սերունդը սկսել է արցախյան ազատամարտը, եւ մենք պետք է այն ավարտին հասցնենք, որպեսզի մեր երեխաներն ու թոռները վերջապես կայուն ու երկարատեւ խաղաղություն վայելեն». այս կարգի մտքերը լայնորեն շրջանառվում էին հասարակության բոլոր շերտերում:

Խոսելով ապրիլյան պատերազմի նախաշեմին ստեղծված իրավիճակի մասին, հարկ է եւս մեկ անգամ փաստել, որ, ի տարբերություն «դասական» ակտիվ ռազմագործողությունների, մեզ պարտադրված հյուծող պատերազմում Հայաստանը հաղթանակի բավարար պաշար չուներ: Լավագույն, բայց ներկա իշխանության օրոք լիովին աներեւակայելի լուծումը կանխարգելիչ հարձակողական պատերազմով հակառակորդի ռազմաքաղաքական ողնաշարը կոտրելն էր՝ Ադրբեջանը վերջնական ռազմական պարտության մատնելուն եւ Կուր գետով ՀՀ պետական սահմանը հաստատելուն միտված ռազմավարության կենսագործմամբ: Սակայն, քանի դեռ Երեւանում ազգային-պետական իշխանություն ու ինքնիշխանություն տակավին չեն հաստատված, մենք, ի մեծագույն ցավ բոլորիս, գործնականում կարող ենք քննարկել միայն ժամանակ շահող ինչ-ինչ մասնակի լուծումներ: Այս լուծումներն արտաքին ճակատում պետք է հետապնդեն միայն մեկ միջանկյալ նպատակ՝ ժամանակավորապես հետ շրջել Հայաստանի համար ի սկզբանե փակուղային հյուծող պատերազմի տրամաբանությունը[19]:

Ապրիլյան քառօրյա պատերազմը

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը սկիզբ առած իրադարձությունները, որքան անսպասելի էին զուտ օրացուցային ժամանակագրության տեսանկյունից, նույնքան կանխատեսելի էին՝ որպես նախորդ տարիներին ընթացած ռազմաքաղաքական զարգացումների տրամաբանական հետեւանք: Գրեթե տարակուսանք չի հարուցում, որ համաշխարհային ուժի կենտրոնները տեղյակ էին սպասվելիք ռազմական գործողությունների մասին: Փաստաթղթավորված ապացույցների հայթայթման անհնարինությունը միշտ նմանօրինակ պնդումները պահելու է թեականության տիրույթում, թեպետ հայտնի մեթոդաբանության տեսանկյունից՝ ներքին կուռ տրամաբանություն եւ պատճառահետեւանքային ամուր կապ ունեցող իրադարձությունների շղթաներն ինքնին կարող են տեղեկացվածության կամ լռելյայն ներգրավվածության վերաբերյալ բավարար ապացույց համարվել: Ասվածը վերաբերում է նաեւ ՀՀ նախագահի աթոռը զբաղեցնող անձին եւ նրա առավել մտերմիկ նեղ շրջանապատին[20]: Մի բան, այնուամենայ-

19 «Ադրբեջանին խիստ պատիժ պետք է հասցնել, նույնիսկ սահմանամերձ գյուղերը ոչնչացնել», http://galatv.am/hy/news/869586908490/:

20 Հնարավոր պետական դավաճանության մասին չճշտված եւ մասնակիորեն ենթադրելի վարկածներին մենք կանդրադառնանք ստորեւ:

նիվ, ակնհայտ է՝ հայկական Զինված ուժերը չեն գտնվել մարտական պատշաճ պատրաստվածության վիճակում[21]:

Ռազմական փորձագետների մեծամասնության կարծիքով՝ Ադրբեջանը անմիջական եւ վերջնականապես հստակեցված նպատակ չի ունեցել սկսելու լայնածավալ պատերազմ: Ամենայն հավանականությամբ, Բաքուն ձգտում էր որոշ՝ հայկական կողմի համար առավել խոցելի կամ ադրբեջանական հրամանատարության համար ամենաանձկալի դիրքերի գրավմամբ ու տեղայնական խորության առաջխաղացմամբ պաշտոնական Երեւանին համակարգային խուճապի մատնել եւ համապարփակ պատերազմի սպառնալիքի ներքո կորզել առկա բանակցային կարգավորման փաթեթով նախատեսվող տարածքային զիջումներ:

Ինչպես արդեն նշվել է, տեղային նշանակության մարտերում հայկական կողմի սպասված անհաջողությունները, տարածքային ու մարդկային կորուստները պետք է «համոզեին» հայ հանրությանը, որ միակողմանի տարածքային զիջումներն անխուսափելի են եւ այլընտրանք չունեն: Պետական դավաճանության շրջանառվող վարկածի համաձայն՝ պաշտոնական Երեւանը պետք է անհրաժեշտ նախապայմաններ ստեղծեր ադրբեջանական բանակի վերոնշյալ տեղայնական հաջողությունները խթանելու համար, որպեսզի այս ճանապարհով կարողանար իր իսկ ազգային հանրության առջեւ արդարացնել համաշխարհային ուժի կենտրոններին տարածքային զիջումները կատարելու բազմիցս կրկնված խոստումը[22]: Բացի դրանից, ենթադրվում էր,

21 Այս հոդվածի համատեքստում հեղինակը գիտակցաբար զերծ է մնալու վերջինիս՝ որպես տեղաբնակի, անձամբ կամ ի մոտո հայտնի թերացումների եւ անպատասխանատու վարքագծի բազմաթիվ դրվագները հրապարակելուց: Ցավոք, թույլ տված «թերացումների» համար պատասխանատուները հազիվ թե ուրվագծվող ապագայում կրեն պատշաճ քրեաիրավական պատասխանատվություն, թեեւ խիստ անբավարար չափով որոշ առավել անհանդուրժելի երեւույթները մասամբ շտկվել են, մասնավորապես՝ առաջնագծում նվազագույն անհրաժեշտ քանակի զինամթերքի եւ թշնամու տեղաշարժի տեսողական վերահսկողության սարքավորումների ապահովման տեսանկյունից:

22 «Տեսանյութը եւս մեկ անգամ մտածելու առիթ է տալիս, որ ապրիլյան պատերազմը պայմանավորվածությունների արդյունք էր», http://galatv.am/hy/news/153605/, «Ժիրայր Սեֆիլյան. Հայրենի հողի եւ պետության տարածքի ամեն կտորը ռազմավարական նշանակություն ունի», http://www.aniarc.am/2016/05/19/sefilian-gala-interview-talish-lele-tepe/, «Որտեղի՞ց Անդրիաս Ղուկասյանին աղմկահարույց տեսանյութը», http://www.aravot.am/2016/06/15/704114/ եւ http://www.aravot.am/2016/06/15/704114/, «Դավաճանություն. Ովքե՞ր եւ ու՞մ հրամանով են պատերազմից առաջ տարել հայկական հենակետերի զենքերը», http://politik.am/դավաճանություն-ովքե: Տես նաեւ՝ Զինվորների 80 տոկոսը ապրիլի 1-2-ի գիշերն

որ սույն կարճաժամկետ եւ Բաքվի համար տեղայնաբար հաջողակ պատերազմի ավարտին Ադրբեջանի օգտին կատարվելիք տարածքային հանձնումները պետք է իրականացվեին այդ նպատակով Արցախ մուտք գործելիք ռուսաստանցի «խաղաղապահների» անմիջական վերադիտող մասնակցությամբ:

Այսուհանդերձ՝ վերոնշյալից չի բխում, որ ապրիլին Հայաստանը վերահաս անմիջականությամբ կանգնած չէր համապարփակ լայնածավալ պատերազմի լրջագույն սպառնալիքի առջեւ: Առավել քան հավանական է, որ ապրիլի 2-ից սկսված գործողություններում Ադրբեջանը փորձարկել է յուրօրինակ ռազմավարություն. նախ՝ սկսելով տեղայնական բնույթի հետախուզախափանարար հարձակողական ներթափանցում ենթադրող ռազմական գործողություններ՝ Բաքուն գործնականում ստուգում էր Հայաստանի զինված ուժերի մարտական պատրաստությունը, պաշտպանական համակարգի ճգնաժամային արդյունավետությունը եւ պաշտոնական Երեւանի քաղաքական ու դիվանագիտական համարձակության աստիճանը: Եթե Բաքվի եւ արտաքին ուժի կենտրոնների կանխատեսումներն ու սպասելիքները ողջ ծավալով իրականություն դառնային եւ հանկարծակի հուժկու հարձակման ենթարկված հայկական առաջապահ ստորաբաժանումներն ի զորու չլինեին արդյունավետ պաշտպանական մարտեր մղել ու սկսեին անկանոն նահանջ, ապա որպես տեղայնական սկսված պատերազմը արագորեն կվերաճեր համապարփակ «բլիցկրիգ»-ի փորձի:

Համաշխարհային պատմությունն աներկբայորեն վկայում է, որ «պայմանավորված պատերազմները» երբեք չեն ընթանում հակամարտող կողմերի քաղաքական ու ռազմական ղեկավարության միջեւ (երրորդ շահագրգիռ կողմերի միջնորդ մասնակցությամբ կամ բացակայությամբ) նախապես ձեռք բերված փակ գաղտնի պայմանավորվածությունների շրջնակում: Եթե քառօրյա պատերազմի առաջին ժամերին անհրաժեշտ զինամթերքով չապահովված եւ անսպասելի բաց ճակատային հարձակման ենթարկված առաջապահ դիրքերի շարքայինները եւ կրտսեր ու միջին սպայական անձնակազմը չցուցաբերեին անօրինակ եւ անխտիր բոլոր դերակատարների համար անսպասելի սխրանք ու դիմադրություն, ապա հաշված ժամերի ընթացքում որպես տեղայնական սկսված պատերազմը հաստատապես կվերաճեր լայնածավալ «բլիցկրիգ»-ի: Ամենաթեժ քառօրյա մարտերից հետո մի շարք արտաքին փորձագիտական շրջանակներ ընդգծված զարմանքով խոստովանել են, որ իրենց համար բոլորովին անսպասելի էր հա-

է զոհվել խրամատներում. Մանվել Սարգսյան, http://www.aniarc.am/2016/06/16/manvel-sargsyan-april-1-2-victims/:

յոց բանակի դաշտային ստորաբաժանումների զինվորականության դրսեւորած արիությունը:

Վերոնշյալի լույսի ներքո կարելի է հաստատապես պնդել, որ մասնավորաբար Բաքվի եւ Կրեմլի ոչ հայանպաստ ծրագրերի իրականացումը նախեւառաջ կանխվել է հենց ճակատում կանգնած հայ զինվորականության «չհաշվարկված» խիզախության շնորհիվ: Ի հեճուկս նախորդ տարիների ընթացքում Ռուսաստանի կողմից Ադրբեջանին մի քանի միլիարդ դոլարի հասնող հարձակողական սպառազինություններ մատակարարելու եւ ապրիլյան հարձակումը առնվազն անուղղակիորեն խրախուսելու հանգամանքի՝ ծավալված ռազմական գործողությունների ընթացքը ցույց տվեց, որ Ադրբեջանն այսօր էլ չունի ինքնուրույնաբար կարճ ու հաղթական ռազմարշավով Հայաստանին պարտության մատնելու եւ «իր տարածքային ամբողջականությունը վերականգնելու» կարողություն:

Եվ Ադրբեջանի, եւ արտաքին ուժի կենտրոնների համոզմամբ՝ երկու տասնամյակ տեւող քաղաքական-սոցիալական անարդարությունից բարոյալքված կամ պարզապես դառնացած հայ հանրությունը չպետք է դրսեւորեր համընդհանուր պատրաստակամություն երկրորդ անգամ եւս հանրովի լծվելու երկրի պաշտպանության մարտերին: Այդ իսկ պատճառով հայոց ազգային-հասարակական կյանքի նրբությունները չճանաչող շրջանակների համար բոլորովին անսպասելի եւ մեծապես անակնկալ էր ապրիլյան մարտերի առաջին իսկ օրվանից Հայաստանից եւ Սփյուռքից մեծ թվով զինվորագրված կամավորության երեւույթը[23]: Բնական է, որ կամավոր զինվորագրման գործընթացը հայոց պետական համակարգի ներկայիս խղճուկ կացության պայմաններում պետք է աչքի ընկներ մի շարք անկանոն՝ ոչ բավարար կերպով կազմակերպված եւ տեղ-տեղ մինչեւ իսկ մերժելի դրվագներով: Հատկապես կաղում էր զինկոմիսարիատների աշխատանքը, որը բացատրվում է արդյունավետ պաշտպանական հայեցակարգի փաստացի բացակայությամբ եւ մոբիլիզացիոն մեխանիզմների առարկայական չմշակվածությամբ:

Այսուհանդերձ, Արցախ ժամանած բազմահազար կամավորներն ինքնաբերաբար լուծել են բազմաթիվ եւ ոչ միայն ռազմական բնույթի խնդիրներ: Նախ՝ ի հեճուկս Արցախի «անկախության» ապաշնորհ բեմադրումից առաջացած ներազգային թվացյալ երկպառակության պատրանքի՝ արտաքին ուժերին եւ ներքին տարակուսյալներին ի ցույց վերստին հաստատվել է, որ ճգնաժամային պահերին հայաստա-

23 Գրիգորյան Ա., «Ապրիլյան պատերազմ. երկրորդ շանս», http://www.mediamax.am/am/news/second_chance/17719/:

նաբնակ հայությունն ունակ է ինքնակազմակերպվել՝ երկրի արդյունավետ պաշտպանության գերխնդիրը անգամ ապապետական վարչակարգի իշխանության օրոք իրականացնելու համար: Ուշագրավ էր նաեւ սփյուռքյան համայնքների չուշացած արձագանքը, որն արտահայտվել է նյութական աջակցության խողովակների գործարկմամբ եւ որոշ քանակի կամավորների ժամանմամբ:

Համակարգային հարթության վրա ապրիլյան պատերազմը եւ նրան հաջորդած ժամանակահատվածը հաստատել են այն ակներեւ իրողությունը, որ անբավարար պետական-ազգային ինքնիշխանության պայմաններում պարզապես անհնար է վարել ազգային պետականության շահերից բխող արտաքին ու ներքին քաղաքականություն եւ երկրի պաշտպանունակության ամրապնդմանը միտված գործողություններ: Տողերիս հեղինակը դեռեւս 2009 թվականից պարբերաբար նշում էր, որ Ադրբեջանի սանձազերծած նոր հարձակողական պատերազմի դեպքում ամենալուրջ խնդիրն ու սպառնալիքը լինելու են ոչ թե հակառակորդի ցեղասպանական «բլիցկրիգ»-ի տապալումը, այլ արտաքին միջամտությամբ պատժիչ համաչափ հակահարված հասցնելու հրամայականի կասեցումը[24]:

Այդ համոզմունքը վերաբերում էր ապրիլյան պատերազմով հաստատված այն իրողությանը, որ այն պահին, երբ Բաքվին ու համաշխարհային ուժի կենտրոններին պարզ դառնա, որ ադրբեջանական բանակը հասել է իր հնարավորությունների առավելագույնին, որին պետք է հաջորդի հայկական ուժերի պատժիչ հակահարվածը, շահագրգիռ գերտերությունները՝ քաջատեղյակ լինելով պաշտոնական Երեւանի համայն թշվառությանը, վերջինիս նկատմամբ սկսելու են ճնշումներ գործադրել՝ հայկական կողմի պատժիչ հակահարվածն ամեն հնարավոր եղանակով նվազեցնելու կամ իսպառ բացառելու նպատակով:

Այսպիսով՝ ապրիլյան պատերազմը եկավ հաստատելու տարիներ առաջ իմ արտահայտած մտավախությունների իսկությունը: Մոսկովյան «Տիզբոն» կանչված շտաբի պետ Յուրի Խաչատուրովը համարյա բացահայտ գործակալական հպատակությամբ համաձայնեց ստանձնել ռազմական գործողությունները դադարեցնելու եւ ադրբեջանական հարձակման առաջին ժամերին գրավված մի շարք կարեւոր դիրքերի վերադարձը կանխող պայմանավորվածությունն ի կատար ածելու պատասխանատվությունը: Այդ իսկ պատճառով բանակի դաշտային հրամանատարությունը պետք է քաջ գիտակցի Ադրբեջա-

24 “Агдамизация - как неизбежный финал любой азербайджанской агрессии”, 2009, http://armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=34554&SectionID=0&RegionID=0&Date=11/13/2010&PagePosition=1:

նին պատժիչ հակահարված չհասցնելուց բխող բոլոր վատթարագույն հետեւանքների անմիջական ազդեցությունը երկրի ճակատագրի ու իրենց իսկ վրա՝ նրանց հետայսու պատրաստ դարձնելով պատշաճ ինքնիշխան կամք դրսեւորելու եւ անխուսափելիորեն անհրաժեշտ բախտորոշ որոշումներ կայացնելու՝ ի հեճուկս եւ ի հակադարձություն Երեւանից ստացվող կապիտուլացիոն հրահանգների:

Ասվել է, որ ապրիլյան քառօրյա պատերազմի սանձազերծմամբ Բաքվի հետապնդած նվազագույն նպատակը քարտեզի վրա աչքի համար նկատելի տեղայնական առաջխաղացում ապահովելն էր: Հետեւաբար, հայկական կողմի պատժիչ պատասխան գործողությունների նվազագույն հնարավոր ծավալը, իր հերթին, պետք է ներառեր Թարթառ քաղաքի «աղդամացումը» եւ հարավում հայկական դիրքերի բնականոն եզրագծի ամբողջացումը՝ Հորադիզ կայարանի ու համանուն ամբարտակի վրա 1994թ. սկզբներից ընդհատված վերահսկողության վերահաստատմամբ[25]: Հիշյալ քայլերը թույլ կտային.

- Շրջել Հայաստանի դեմ վարվող եւ հայկական կողմի համար միանգամայն փակուղային՝ հյուծող պատերազմի տրամաբանությունն ու ընթացքը եւ ժամանակ շահել,
- Սթափեցնող պատշաճ ազդեցություն գործել՝ Բաքվի իշխանությունների եւ Ադրբեջանի բնակչության «ռեւանշիստական» մոլագարությունը զսպելու համար,
- Ընդունելի չափով ապահովել Մարտակերտի սահմանամերձ հատվածի բնակավայրերի անվտանգությունը՝ այնտեղ բնականոն քաղաքացիական կյանքը վերականգնելու համար,
- Դադարեցնել հորադիզամերձ ջրամբարի ամբարտակով՝ Արաքսի իրանապատկան ափով Բաքու-Նախիջեւան երթեւեկությունը, որի շնորհիվ գոնե միջնաժամկետ կտրվածքով էապես խաթարվելու էր Բաքու-Նախիջեւան հաղորդակցային տեղաշարժը,
- Ձգալիորեն վերականգնել տարածաշրջանում Հայաստանի ինքնուրույն քայլերին ընդունակ ռազմաքաղաքական գործոն լինելը, որն էապես սասանված է 1994 թվականից ի վեր երկրի ծայրաստիճան ապաշնորհ կառավարման հետեւանքով:

Կարիք չկա ասելու, որ վերոհիշյալ վճռական քայլեր ենթադրող կետերից ոչ մեկը, բնականաբար, չի իրականացվել[26]:

25 «Հորադիզ կայարանն ու ջրամբարի ամբարտակը պետք է հետ բերվեն. արցախցի քաղաքագետն առաջարկում է չսպասել Ադրբեջանի կողմից ագրեսիայի վերսկսմանը», http://galatv.am/hy/your-voice/147575/:

26 «Մենք պարտավոր ենք եւ միանգամայն ի վիճակի ենք Ադրբեջանին հասցնել «համաչափ» ռազմական պատիժ», http://galatv.am/hy/news/144864/, «Պատերազմը տարիներով հետաձգելու միակ ճանապարհը մեկ տասնյակից ոչ

Ապրիլից հետո. չսերտած դասեր

Ապրիլյան քառօրյայից անմիջապես հետո Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) նախագահ, գիտական եւ հասարակական գործիչ Կարեն Վարդանյանը կատարել է մի շարք հրապարակային բացահայտումներ, որոնցում բաց մեղադրանքներ են հնչել Պաշտպանության նախարարության ռազմատեխնիկական ոլորտի մի շարք պատասխանատուների հասցեին[27]: Այդ պաշտոնյաները մեղադրվում էին ոչ միայն անարհեստավարժության, կոռուպցիոն գործարքների մեջ թաթախված լինելու, այլեւ բանակի ռազմատեխնիկական ոլորտի զարգացումը միտումնավոր նենգադուլի (սաբոտաժ) ենթարկելու մեջ[28]: Հրապարակված դրվագներն այնքան դատապարտելի էին, որ հանրության համընդհանուր վրդովմունքի պատճառով ՀՀ նախագահի ներկայացող անձը խելամտորեն նախընտրել է պաշտոնանկ անել մի քանի առավել մերժելի դեմքերի[29]: Տվյալ պաշտոնանկությունները, բնականաբար, ըստ էության, ոչ մի կառուցվածքային գերխնդիր չեն կարգավորել: Սակայն ապրիլյան ցնցումները, ի վերջո, նպաստել են բանակի եւ հասարակության ինտելեկտուալ-ինժեներական շրջանակների միջեւ արդյունավետ համագործակցության սաղմերի առաջացմանը[30]: Մասնավորապես հիշատակելի է անօդաչու թռչող սարքերի նախագծման եւ փորձառական արտադրության ասպարեզը[31]:

Ապրիլյան քառօրյայից հետո զգալի բովանդակային փոփոխություններ է կրել արցախյան հակամարտության կարգավորման հռչա-

---

պակաս ադրբեջանական գյուղերի ոչնչացումս է», http://galatv.am/hy/news/143870/:

27 «Պաշտպանության փոխնախարարը «ջրել» է SS ոլորտի հետ համագործակցությունը. Կարեն Վարդանյան», http://newspress.am/archives/26638:

28 «ՊՆ-ում կան մարդիկ, ովքեր թյուրիմացության մեջ են գցել պետության ղեկավարությանը» http://analitik.am/news/view/293721#sthash.BLXQ8Apv.dpuf:

29 «Կարեն Վարդանյան. ՊՆ պաշտոնանկ արված ղեկավարներն ամենից շատն էին կապված տեխնոլոգիաների կիրառման հետ», http://www.nt.am/am/news/220478/:

30 «Կադրային փոփոխություններից հետո ՊՆ-ի հետ համագործակցությունն ավելի արդյունավետ է. Կարեն Վարդանյան», http://nyut.am/?p=129584&l=am, «Կարեն Վարդանյան. ՊՆ-ի հետ համագործակցությունն ինտենսիվ է», http://www.aravot.am/2016/09/05/732205/:

31 «Ապրիլյան պատերազմը մեզ որոշակի դասեր տվեց. Կարեն Վարդանյան», https://infoleader.am/blog/2016/09/30/ապրիլյան-պատերազմը-մեզ-որոշակի-դասեր/#.WD_0QLhS2V4, «ՊՆ-ում աղմկոտ պաշտոնանկություններից հետո SS ոլորտի պատասխանատուները լիահույս են՝ համագործակցությունը կկայանա», http://www.1in.am/1906682.html:

կագրային նպատակով ԵԱՀԿ Մխ հովանու ներքո ծավալվող բանակցային գործընթացը[32]: Այնպես չէ, որ փոխվել է գործընթացի հիմքում ընկած՝ միմյանցից ածանցված եւ այլեւայլ պայմանական անուններով կոչվող կարգավորման փաթեթների էությունը, բայց հատկապես քառօրյային անմիջապես հաջորդած ժամանակահատվածում էապես փոփոխվել են գործնական շեշտադրումներն ու շահագրգռությունները: Գլխավոր քննարկվող հարց է դարձել իրադրության՝ նոր պատերազմին չգահավիժելու դիպաշարի կանխման եւ հրադադարի պայմանակարգի խախտման միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրումը[33]:

Ապրիլյան քառօրյայի ռազմագործողությունների ժամանակ եւ հատկապես «խաչատուրովյան» զինադադարից հետո, ինչպես եւ ենթադրվում էր, նոր ուժգնությամբ ծագեց Արցախ «խաղաղապահ» օկուպացիոն ստորաբաժանումների ներթափանցման սպառնալիքը[34]: Խոսքը նախեւառաջ հենց ադրբեջանական նոր ագրեսիայի անուղղակի շահագրգիռ հովանավոր ռուսաստանյան զինվորական ստորաբաժանումների մասին է[35]: Մի շարք հայ գործիչներ եւ փորձագետներ ոչ միայն ներկայացրել են Արցախում «խաղաղապահ» զորամիավորումների հայտնվելուց բխող անվտանգության հիմարար սպառնալիքները, այլեւ հանրամատչելիորեն բացատրել են Ստեփանակերտի մարզային ղեկավարությանը, որ օտար զինուժի ներթափանցման նկատմամբ նվազագույն թողտվական կամ գոնե կրավորապես չեզոք վերաբերմունքը ոչ միայն հղի է վերջիններիս անխուսափելի փաստա-

32 Բանակցային գործընթացի հետապրիլյան առանձնահատկությունների մասին տես՝ «Արցախյան ճակատում երրորդ պատերազմն անխուսափելի է. Ալեքսանդր Քանանյան» http://www.1in.am/2036945.html:

33 Ջեյմս Ուորլիք. «Շարունակում ենք աջակցել հետաքննության ԵԱՀԿ մեխանիզմի ձեւավորմանը»: http://www.aravot.com/2016/11/07/824344/ , «Մենք լիովին աջակցում ենք Մինսկի խմբի նախաձեռնությանը՝ հետաքննել հրադադարի խախտման դեպքերը». Գերմանիայի դեսպան», http://www.aravot.am/2016/01/27/651555/ , «Զախարովա. Բաքուն դեմ էր ղարաբաղյան գոտում միջադեպերի հետաքննության մեխանիզմին», http://newsroyal.com/view_post.php?id=240015:

34 «Դրույթներ՝ օտարերկրյա «խաղաղապահ» օկուպացիոն ստորաբաժանումներ Արցախ մտցնելու հնարավոր ոտնձգությունը կանխարգելելու վերաբերյալ», http://galatv.am/hy/your-voice/145002/:

35 “Появление хотя бы одного миротворца в Арцахе недопустимо”, http://armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=145121, «Արցախում հայկական ուժերից բացի, այլ ուժ լինել չի կարող. Հայկ Խանումյանը ԼՂ-ում ռուս խաղաղապահներ տեղակայվելու մասին», http://www.tert.am/am/news/2015/12/12/haykkhanumian/1872108:

ցի իշխանազրկմամբ, այլեւ սպառնում է իրենց իսկ ֆիզիկական գոյությանը[36]: Ուշագրավ է, որ տողերիս հեղինակը եւ մի քանի այլ փորձագետներ տարիներ շարունակ՝ որպես «խաղաղարար» օկուպացիոն զորամիավորումների ներթափանցման ենթակառուցվածքային հենք, հիշատակում էին Իվանյանի (Խոջալուի) օդանավակայանը[37]:

Ապրիլյան պատերազմի օրերին եւ դրան անմիջապես հաջորդած ժամանակահատվածում ի հայտ էր եկել նմանօրինակ իրավիճակներին բնութագրական՝ նախորդ պատերազմի բովով անցած անվանի

36 «Խաղաղապահների» թեմայով եւս մի կարեւոր նկատառում. մարդը պիտի առնվազն կատարյալ իդիոտ լինի չհասկանալու համար, որ հայտնի երկրի «խաղաղապահներն» Արցախ չեն գալու պատերազմը կանխելու կամ արցախաբնակ ՀՀ քաղաքացիների անվտանգությունն ապահովելու համար: Նրանց միակ նպատակը լինելու է Արցախի տարածքում հաստատել ուղիղ զինվորական կառավարում, ինչպես՝ 1988-1991 թթ.: Անկախ սկզբնափուլում հատուկ ջոկատային «խաղաղապահների» թվաքանակի նվազության, նրանք առավելագույնս շահագործելու են իրենց գերտերության ուժի առջեւ մեր բնակչության թվացյալ վախն ու անօգնականության զգացումը: Արցախում նրանց միակ «առաքելությունն» է՝ երաշխավորել ազատագրված տարածքների անարգել հանձնումն Ադրբեջանին: Մուտք գործելու առաջին իսկ րոպեներից նրանց թիվ մեկ մարտական առաջադրանքը լինելու է կոշտագույն միջոցներով բոլորին՝ աշխարհին, Երեւանին եւ արցախցիներիս ցուցադրել, թե ով է այդուհետ իրավիճակի միակ տերը... Երկուսուկես տասնամյակ ազգային կառավարման ներքո ապրած Արցախում դա, ինչպես ասացի, հնարավոր է միայն կայծակնային եւ կոշտագույն ուժային քայլերով: Աֆղանստանում՝ Ամինի ֆիզիկական ոչնչացման հայտնի դրվագը՝ վկա: Նույն պետությունն է եւ նույն հիմարկը... Այսպիսով՝ ՀՀ Արցախի մարզի քաղաքական եւ ուժային ոլորտների պատասխանատուներ. ձեր ճակատագրի մասով ամենափոքրն իսկ տարակուսանք մի՛ փայփայեք: Կայսրության վերականգնման «վեհագույն» նպատակի ճանապարհին՝ անկախ ձեր նկատմամբ ունեցած «ամենաջերմ համակրանքից» ձեզ անպայման զոհելու են. «Ничего личного, только бизнесс»: «Խաղաղապահների» անվամբ «սպեցնազը» նախ գալու է հենց ձեր հետեւից, քանզի հենց տեղում ձեր կայծակնային «չեզոքացմամբ», ըստ իրենց տխմար հաշվարկի, հնարավոր կլինի իրականացնել նրանց առջեւ դրված բուն եւ միակ առաջադրանքը՝ արցախյան ռազմաքաղաքական գործոնի զրոյացման եւ տարածքների հանձնման միջոցով ապահովել Ադրբեջանի մուտքը ԵՏՄ եւ ՀԱՊԿ՝ ԽՍՀՄ վերականգնման ուղղությամբ հերթական հաջողության մասին իրենց հանրությանը հպարտորեն զեկուցելու համար», տես՝ https://web.facebook.com/alexandr.kananyan/posts/1137172092974298:

37 «Խաղաղապահների» անվան ներքո Արցախ օկուպացիոն ուժերի ներթափանցումը կրկին օրակարգային լրջագույն սպառնալիք է դառնում... Հազար անգամ հարկադրված էի ասել, որ Ստեփանակերտի օդանավակայանն արտաքին հրահանգով կառուցվել է հենց այդ օկուպացիոն զորքերն Արցախ փոխադրելու համար: Այլ բան չեմ ասում, բայց այս պահին հարկ է ուշադիր լինել այդ «օբյեկտում» տեղի ունեցող նվազագույն իսկ շարժի նկատմամբ: Այնտեղից հանկարծ անակնկալներ չունենանք», տես՝ https://web.facebook.com/alexandr.kananyan/posts/1136548133036694:

հրամանատարների՝ վերստին ասպարեզ իջնելու, ինքնակամ որոշմամբ ճգնաժամային պահերին իրենց պատասխանատվության նախկին գոտիներում ռազմական գործողությունները համակարգողի դեր ստանձնելու եւ այդուհետ՝ քաղաքական նոր հավակնություններով հանդես գալու երեւույթը: Խոսքը Արցախի ՊԲ նախկին փոխհրամանատար Վիտալի Բալասանյանի եւ Արցախյան առաջին պատերազմի երկրորդ կեսից մինչեւ 1999 թիվը ՊԲ հրամանատար պաշտոնավարած Սամվել Բաբայանի մասին է:

Ռազմական գործողությունների առաջին իսկ ժամերին Ասկերան-Ակնա ուղղությանը քաջածանոթ Վիտալի Բալասանյանը ներքին մղումով մեկնել էր հրամանատարության գտնվելու օպերատիվ վայրը եւ ինքնաբուխ ստանձնել կենտրոնական պաշտպանական ուղղության պատասխանատվությունը: Համարձակ եւ ինքնուրույն գործելով՝ նա կանխարգելիչ հրթիռահրետանային հարվածներ է հասցրել հայկական առաջապահ դիրքերի մերձավորությամբ կուտակվող եւ Արցախի մայրաքաղաքի ուղղությամբ հարձակողական գործողություններ սկսելու հրամանի սպասող ադրբեջանական բանակային ստորաբաժանումներին՝ հակառակորդին պատճառելով ծանր կորուստներ, առաջացնելով խուճապ եւ անձնակազմի ու քաղաքացիական բնակչության անկանոն նահանջ[38]: Պատահական չէ, որ այս անգամ ոչ միայն Արցախում, այլեւ ողջ Հայաստանում ճանաչելիության եւ վարկանիշի կտրուկ աճ արձանագրած գեներալը մտահոգության լուրջ առիթներ է ընծայել որպես ՀՀ նախագահ հանդես եկող անձին, որը հետագա ամիսներին ջանք չխնայեց Վիտալի Բալասանյանին հեղինակազրկելու համար[39]:

Ուշագրավ են նաեւ Արցախի Պաշտպանության բանակի նախկին հրամանատար, երկար տարիներ Հայաստանից բացակայած Սամվել Բաբայանի՝ Երեւանում, ապա ընդամենը 2 օրով Արցախում հայտնվելը, Հայաստանի որդեգրած պաշտպանական հայեցակարգի արմատական քննադատությունը եւ արցախյան իշխանության վերահսկողությունից դուրս քաղաքական բեւեռ ձեւավորելու՝ ձախողմամբ ավարտված փորձը[40]:

38 «Քառօրյա պատերազմի ուշագրավ դրվագներ», http://www.lragir.am/index/arm/0/country/view/131565:

39 Նկատի ունենք «Սասնա ծռերի» հետ կապված դրվագները: Օրինակ՝ «Վիտալի Բալասանյանը այս պահից միջնորդական առաքելություն չի իրականացնելու. Վարուժան Ավետիսյան. 1in.am», http://www.aravot.am/2016/07/23/719157/:

40 «Սա Ղարաբաղի հարց չէ, Հայոց պետականության հարց է», http://www.civilnet.am/news/2016/05/31/interview-samvel-babayan/294106:

Ապրիլյան քառօրյայի ընթացքում Արցախի մարզային իշխանության վարչական եւ քաղաքական կեցվածքը նույնպես շատ հեռու էր արդյունավետ եւ առկա մարտահրավերներին հարիր լինելուց: Հատկապես իրավիճակի լրջությանը ոչ համարժեք էին ԼՂՀ նախագահի տիտղոսով հանդես եկող Արցախի մարզպետի քայլերը, իսկ գործնականում՝ դրանց տեսանելի բացակայությունը: Այս քննադատության տեղին եւ իրականությանը համապատասխանող լինելու հանգամանքը, այնուամենայնիվ, չպետք է ստվերի այն պարզ իրողությունը, որ բոլոր բացթողումների, թերացումների եւ ոմանց ենթադրած պետական դավաճանության համար, վերջին հաշվով, առաջնահերթորեն պատասխանատու է պաշտոնական Երեւանը՝ ի դեմս ներկայիս ապապետական գաղութային վարչակազմի:

Մի կողմ թողնելով պետական գաղտնիքի հետ առնչվող բուն պատերազմական օրերին ստեփանակերտյան վարչարար վերնախավի կատարած կամ չկատարած քայլերի քննությունը՝ անդրադառնանք նրանց թողտվությամբ Արցախի հասարակական կյանքում նկատված անպատշաճ ընդամենը երկու երեւույթի, որոնցից յուրաքանչյուրը վկայում է մեր ազգային-պետական կյանքում առկա համակարգորեն մտահոգիչ իրավիճակի մասին: Խոսքը նաեւ այնպիսի երեւույթների մասին է, որոնք պետք է անգամ այս իշխանությունների օրոք հետագայում իսպառ եւ խստագույնս բացառվեն:

Սրանցից առաջինն աղերսվում է ռազմական ճգնաժամային իրավիճակում հանրության մեջ բնականորեն ծագող խուճապային տրամադրությունների հոգեբանորեն եւ կազմակերպչականորեն գրագետ կառավարմանը: Իրենց ընտանիքների անդամներին Արցախից վայրկյան առաջ հեռացնելու հարցում քաղաքացիական եւ զինվորական ղեկավարության տարբեր մակարդակների որոշ ներկայացուցիչների անվայել պահվածքը պետք է հետեւողական քննության արժանանար, քանի որ ցանկացած մակարդակի պատասխանատուների վարքագիծն ինքնին զգալի ազդեցություն է գործում կամ պարզապես պայմանավորում է նրանց ղեկավարած ոլորտների աշխատակիցների ու համայնքների բնակչության տրամադրությունը: Պատերազմական իրավիճակում քաղաքացիական բնակչության տեղաշարժը պետք է վերահսկվի ողջամտորեն համակարգվող սխեմաներով՝ բացառելով տարբեր մակարդակների անպատասխանատու պաշտոնյաների մեղքով առաջացող չհիմնավորված մտահոգությունները, որոնք գործնականում հանգեցնում են խուճապային տրամադրությունների: Այս իմաստով առանձնակի խիստ պատժի պետք է ենթարկվեն հասարակության աչքի առջեւ նմանատիպ վարքագիծ դրսեւորող հրամանատարները:

Երկրորդ դրվագը, որն առաջին հայացքից միգուցե անէական թվա, առնչվում է Թալիշ գյուղի բնակելի տների թալանին: Հարձակման պատճառով ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը բնակավայրից հեռացած բնակիչների ունեցվածքը, բազում ականատեսների վկայությամբ, անխնա թալանի էր ենթարկվել: Քաղաքական տարրական գիտակցության եւ կամքի առկայության դեպքում, անշուշտ, հնարավոր էր եւ այսօր էլ ուշ չէ կատարել պատշաճ քննություն, բացահայտել կատարելապես անհանդուրժելի, հանցավոր այս քայլերին առավել ակտիվ մասնակցություն բերած անձանց ինքնությունը, նրանց ենթարկել նմանատիպ հանցագործությունների համար օրենքով սահմանված առավելագույն պատժաչափի եւ ձեռնարկել կանխարգելիչ այնպիսի միջոցներ, որոնք հետայսու իսպառ կբացառեն ռազմական գործողությունների գոտում հայտնված եւ ժամանակավորապես տարհանված բնակավայրերում յուրայինների կողմից քաղաքացիների ունեցվածքի թալանի որեւէ նկրտում:

Ապրիլյան պատերազմը եւ դրան շուրջ երկու ամիս հաջորդած մարտական ճգնաժամը հարուցել են հրադադարի գծի պաշտպանությանն առնչվող եւս մեկ կարեւոր չլուծված խնդիր՝ աշխարհազորի եւ պահեստազորի մարտական հերթապահության արդյունավետ կազմակերպման ու համաչափ բաշխման առումով: Հայկական «երկու հանրապետությունների» անտեղի բեմականացումը, ի թիվս բազում այլ համապետական վնասների, ակնբախորեն արտացոլվել է նաեւ այս պարագայում: Ռազմական գործողություններին իբր ուղղակիորեն չմասնակցող Հայաստանի տարածքում պահեստազորի որեւէ կանոնավոր զորահավաք հիշյալ ամիսներին չի անցկացվել: Դրա հետեւանքով հրադադարի արցախյան հատվածի հետպատերազմական պայմաններում սահմանների պաշտպանության ողջ ծանրությունն ընկել է Արցախի մարզի զինապարտների վրա, որի պատճառով մարդիկ անընդհատ եւ երկարատեւ կերպով զրկվել են իրենց բնականոն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու հնարավորությունից: Այս հանգամանքների բերմամբ՝ Արցախի մարզի տնտեսության կրած վնասները դեռեւս կարոտ են համակողմանի հաշվարկման: Հազիվ թե վիճարկելի է, որ միասնական ազգային-պետական մարմին, տնտեսական ու պաշտպանական համակարգ ունեցող Հայաստանը եւ վերջինիս ինքնիշխան տարածքի անխզելի մաս կազմող Արցախը պետք է համընդհանուր եւ համաչափ կերպով բաշխեն պահեստազորի կողմից ճակատային գծի արդյունավետ պաշտպանության երաշխավորման բեռը:

Ապրիլյան պատերազմին նախորդած եւ անմիջապես հաջորդած շրջանում Հայաստանի ներքին իրավիճակը համակարգային ակ-

նարկների տեսքով վերլուծելու սույն մասնակի փորձս աներկբայորեն վերահաստատում է այն ընդհանուր համոզմունքն ու իրողությունը, որ Հայաստանի պես գոյաբանական տարողության մարտահրավերների առջեւ հարատեւորեն կանգնած հայոց պետությունը ոչ միայն ընթացիկ ռազմաքաղաքական անվտանգությունն ու տնտեսական անհրաժեշտ զարգացումն ապահովելու, այլեւ, առհասարակ, երկարաժամկետ հեռանկարում որպես պետություն եւ էթնիկ-քաղաքացիական հանրություն վերապրելու համար հարկավ պետք է օժտված լինի ներքին ու արտաքին քաղաքականություն վարելու համար բավարար պետական ինքնիշխանության մակարդակով[41]: Երկրագնդի որեւէ կետում՝ առավել եւս Հայաստանում եւ հարակից տարածաշրջանում («Հարավային Կովկաս»), ինքնիշխան պետականության հայտով ընդունակ է հանդես գալ միայն հետխորհրդային արատավոր ժառանգությունը եւ պետականազրկության հազարամյա շրջանից ժառանգած բազմակի ապապետական ավանդութային վարքագծերն ու բարդույթները հաղթահարած՝ սահմանադրական օրինականություն եւ իրավահավասար, ժողովրդավար հասարակություն կերտած հանրությունը:

Հայաստանի ազգային անվտանգությունն ու գոյությունը ինքնին անհամատեղելի են սոսկ անվանապես անկախ արտաքին գաղութատիրական կառավարման պայմաններում: Ուստի ներկայիս ապապետական գաղութային վարչակարգի իշխանազրկումից եւ երկրում ազգային համապարփակ համաձայնությամբ հաստատվելիք սահմանադրական օրինականության ու ազգային շահի գերակայությամբ գործող իրավասու եւ օրինավոր իշխանության հաստատումից հետո միայն հնարավոր կլինի խոսել Հայաստանում հիմարար բարեփոխումներ իրականացնելու, երկիրը կենսականորեն անհրաժեշտ պաշտպանական համակարգով օժտելու հնարավորությունների ու գործնական հեռանկարների մասին: Մինչ այդ առաջարկվող բոլոր լուծումները կարող են վերաբերել սոսկ մեր պետական կյանքի առավել խոցելի սպառնալիքների մասնակի ճգնաժամային կառավարմանը եւ ամենաանհանդուրժելի երեւույթների հնարավորինս արդյունավետ զսպմանը:

41 Ինքնիշխանության երեւույթի, «իրավունքներից հրաժարվելու» արատավոր ավանդույթի եւ ապրիլյան պատերազմի մի շարք հիմնական ու խորքային ծալքերի մասին հանգամանորեն խոսվում է քաղաքագետ Մանվել Սարգսյանի հեղինակած «Ինքնիշխանություն VS անվտանգություն. Լեռնային Ղարաբաղում ապրիլյան պատերազմը բացահայտել է հայկական քաղաքականության արատավորությունը» հոդվածում. http://theanalyticon.com/?p=7810:

Ի հեճուկս երկրում հարատեւող ապապետական գաղութային վարչակարգի հարուցած արգելակման՝ հայոց ազգային-քաղաքացիական հանրությունն իր ունեցած ներուժի շնորհիվ այսօր եւս ի զորու է ոչ միայն միավորվել երկիրը պաշտպանելու, այլեւ վճռորոշ պահերին հայոց պետականության գոյությանը կործանարար հետեւանքներով սպառնացող դավաճանական քայլերի ունակ ներկա իշխանությունների գայթակղությունը չեզոքացնելու համար: Այս ներուժը, սակայն, անսպառ չէ, ուստի ազգային պատասխանատվությամբ եւ մայր հայրենիքում որպես լիիրավ ու ազատ քաղաքացի ապրել վճռած անձինք պետք է շարունակեն ձեւավորել արդյունավետ քաղաքական կառույցներ ու հանրային համախմբող տրամադրություններ՝ երկրում համակարգային իշխանափոխություն իրականացնելու եւ հիրավի ինքնիշխան ազգային պետականության հիմքերը դնելու համար:

АЛЕКСАНДР КАНАНЯН

Вторая арцахская «промежуточная» война: невыученные уроки

В статье анализируются процессы международного, регионального и внутриполитического характера, приведшие к четырехдневной апрельской войне 2016 года. После установления режима прекращения огня в 1994 году руководство Армении, в лице трех президентских администраций, теснейшим образом связанных между собой по политическому происхождению и концептуальному мышлению, не только не предприняло каких-либо действенных структурных шагов, направленных на укрепление обороноспособности страны, содействию репатриации и развитию по возможности самодостаточной экономики, но и антигосударственной политикой системного уровня привело к резкому ухудшению демографической ситуации и становлению в стране авторитарной криминально-олигархической формы правления. Вооруженные силы, несмотря на всю сложность и фундаментальную значимость стоящих перед ними задач, в первую очередь на уровне генералитета, были сильнейшим образом ослаблены коррупцией, недостаточной слаженностью внутренней организации, нехваткой или отсутствием необходимого числа и видов вооружений. Особенно отрицательную роль сыграла продиктованная узкоклановыми олигархическими интересами политика фактического отказа от государственного суверенитета в пользу неоимперских «интеграционных» проектов, приведшая не только к резкому ослаблению дипломатических позиций Армении на международном поприще, но и к де-факто колонизации страны, практически полностью потерявшей способность к самостоятельному принятию военно-политических решений стратегического характера, необходимых для поддержания должного уровня обороноспособности и интересов национальной безопасности. В данном контексте апрельская война, инициированная Азербайджаном при заинтересованном пособничестве РФ, преследовала цель нанести максимально возможный урон в живой силе и технике на наиболее уязвимых участках линии прекращения огня, создать всеобщую панику и убедить армянское общество в безальтернативности территориальных уступок и де-факто капитуляции Армении. РФ, в свою очередь, рассчитывала, что после

первых локальных поражений Армения даст согласие на ввод в Арцах российского «миротворческого» контингента, с помощью которого реальный контроль над территорией перейдет в руки Москвы, которая постарается обменять ее часть взамен на согласие Азербайджана стать частью «евразисйкого» неоимперского интеграционного проекта. Однако, несмотря на все системные изъяны в государственном и военном строительстве, благодаря беспримерному героизму рядовых военнослужащих и младшего офицерского состава, азербайджанский мини блицкриг был сорван, а переговорный процесс стал все более концентрироваться вокруг прагматической цели поддержания относительной стабильности режима перемирия и недопущения новых «бесконтрольных» военных столкновений, способных перерасти в полноценную войну. После апрельской войны в вооруженных силах Армении произошли некоторые положительные изменения фрагментарного значения, в определенной степени поднявшие уровень технической оснащенности передовых оборонительных позиций.

ALEXANDER KANANYAN

The Second and 'Intermediate' War of Artsakh: Unlearned Lessons

The article analyzes the international, regional and domestic processes which led to a four-day April war in 2016. After the ceasefire in 1994, Armenian leadership, in the persons of three presidential administrations, closely related to each other by their political origin and conceptual thinking, not only failed to take any effective structural steps aimed at strengthening the country's defense, as far as possible promotion of repatriation and the development of self-sufficient economy, but also by its anti-state policies in the system-level, led to a sharp deterioration in the demographic situation and the establishment of authoritarian criminal-oligarchic form of government in the country. The armed forces, despite the complexity and fundamental significance of the challenges facing them, were most strongly attenuated by corruption, lack of coherence of the internal organization, or by the lack of the weapons in the necessary quantity and types. The policy of the actual rejection of national sovereignty in favor of neo-imperial «integration» projects, dictated by

the narrow clan oligarchic interests, played a particularly negative role, which led not only to a sharp weakening of Armenia's diplomatic position in the international arena, but also to the country's de facto colonization and almost complete loss of the ability to make independent decisions of a strategic nature in the military-political sphere, required to maintain a proper level of defense capability and national security interests. In this context, the April war, initiated by Azerbaijan together with the interested complicity of the Russian Federation, was aimed at causing the maximum possible losses in manpower and technology at the most vulnerable sections of the ceasefire line, creating a general panic and convincing the Armenian society in the inevitability of territorial concessions and de facto surrender of Armenia. The Russian Federation, in turn, relied, that after the first local lesions Armenia will agree to enter into Artsakh Russian «peacekeeping» contingent with the help of which the effective control over the territory will pass into the hands of Moscow, which will try to exchange a portion in return for agreeing to Azerbaijan to become part of «Eurasian» neo-imperial integration project. However, despite all of the system deficiencies in the State and military construction, due to the unparalleled heroism of ordinary soldiers and junior officers, Azerbaijani mini blitskrig was disrupted, and the negotiation more concentrated on the pragmatic purpose of maintaining relative stability of the ceasefire and preventing further «uncontrolled» military collisions that could escalate into a full-fledged war. After the April war some positive changes of fragmented values, which to some extent raised the level of the technical equipment of advanced defensive positions, were made in the armed forces of Armenia.

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ
«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի նախագահ

Նախաբան

Հայաստանյայց առաքելական եկեղեցին Հայաստանի անկախությունից ի վեր փորձում է ավելի մեծ դերակատարություն ստանձնել պետության եւ հանրության կյանքում, ինչը բնորոշ է նաեւ նախկին խորհրդային երկրներին: Սակայն յուրաքանչյուր երկիր ունի իր առանձնահատկությունները:

Եթե անկախության առաջին տարիներին եկեղեցին ընկալվում էր որպես ազգային բացառիկ կառույց, ապա հետագայում նրա հանդեպ հանրային վերաբերմունքը սկսվեց փոխվել, ինչն արտահայտվում է ԶԼՄ-ներում եւ սոցիալական ցանցերում եկեղեցուն ուղղված ուժգնացող քննադատությամբ, որը երբեմն վերաճում է պարզապես վիրավորանքների:

Նման սուր քննադատության պատճառները տարբեր են: Մեր կարծիքով, որը հիմնված է վերջին տարիներին ԶԼՄ-ներում կրոնին առնչվող հոդվածների պարբերական մշտադիտարկման արդյունքների վերլուծության վրա[1], առաջին պատճառը երկրում հաստատված անարդարության մթնոլորտն է: Նման իրավիճակում հանրությունն ակնկալում է, որ եկեղեցին կորդեգրի արդարության պաշտպանի դիրքորոշում, ինչը, սակայն, տեղի չի ունենում: Ընդհակառակը՝ եկեղեցու վերնախավն աստիճանաբար սերտաճում է իշխող վերնախավի հետ՝ երբեմն իշխանությանը մատուցելով ծառայություններ, որոնք

1 Coverage of Religious Issues in the Armenian Media 2010, Stepan Danielyan, 12.04.2011, http://www.religions.am/eng/articles/coverage-of-religious-issues-in-the-armenian-media-2010/
Մտքի, խղճի եւ կրոնի ազատությունը Հայաստանում. տարեկան զեկույց -2013, Ստեփան Դանիելյան,
http://www.religions.am/arm/documents/comments/Մտքի-խղճի-եւ-կրոնի-ազատությունը-Հայաստանում/

հանրության ներսում ընկալվում են իբրեւ իրենց դեմ ուղղված գործողություններ: Արդյունքում իշխանության հանդեպ եղած բացասական վերաբերմունքը սկսում է տարածվել եկեղեցու վրա:

Հանրության բացասական գնահատանքին են արժանանում հատկապես բարձրաստիճան հոգեւորականների վարած կյանքն ու պահվածքը, որն առանձնապես չի տարբերվում վստահություն չվայելող իշխանության կարկառուն դեմքերի պահելակերպից: Մյուս պատճառները պետք է փնտրել միաբանների հանրային ելույթներում ժամանակ առ ժամանակ հնչող անհանդուրժողական տեսակետներում, որոնք կարելի է համարել եկեղեցու հրապարակային քաղաքականության դրսեւորումներ: Այդ տեսակետները հիմնված են ավանդական կարծրատիպերի վրա եւ հակասում են ՀՀ սահմանադրությանը, օրենսդրությանը եւ իրենց բնույթով ագրեսիվ ու անհանդուրժող են:

Դեռեւս 2000-ական թվականներից եկեղեցին փորձում է ձեւակերպել իր սոցիալական հայեցակարգը: Այդ նպատակով նույնիսկ համապատասխան գրասենյակ է հիմնվել[2], սակայն հասարակությանը հասանելի որեւէ արդյունք առայժմ չկա: Միեւնույն ժամանակ՝ իրենց հրապարակային ելույթներում եկեղեցու սպասավորները շարունակում են հանդես գալիս երբեմն ծայրահեղ անհանդուրժողականության կոչերով: Հանրակրթական դպրոցներ, զինված ուժեր եւ այլ ոլորտներ եկեղեցու մուտքը, որի ընթացքում հաճախ թույլ են տրվում կոպիտ օրինախախտումներ, նույնպես բացասաբար է ընկալվում հանրության մի զգալի հատվածի կողմից: Ավելին՝ սահմանադրական եւ օրենսդրական փոփոխությունների շնորհիվ այդ փաստաթղթերում ի հայտ են եկել տարընթերցումների տեղիք տվող մի շարք ձեւակերպումներ, որոնք կասկածի տակ են դնում Հայաստանի՝ աշխարհիկ երկիր լինելը[3]:

Սույն հոդվածում մենք կներկայացնենք եկեղեցու միաբանների հանրային հռետորաբանությունը՝ փորձելով զերծ մնալ անհարկի մեկնաբանություններից, ինչպես նաեւ ցույց կտանք եկեղեցականների հռետորաբանությունը երկրորդող պետական պաշտոնյաների դիրքորոշումները եւ դրանց համահունչ կերպով ընթացող օրենդրության փոփոխությունները:

2 Մայր աթոռում ստեղծվել է Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակ, www.yerkir.am, 11 հուլիսի 2013, 16:33, http://www.yerkir.am/news/view/53367.html

3 Սահմանադրական փոփոխությունները եւ կրոնի ու հավատամքի ազատության իրավունքը, www.religions.am, 19.02.2016, http://www.religions.am/arm/articles/Սահմանադրական-փոփոխությունները-եւ-կրոնի-ու-հավատամքի-ազատության-իրավունքը/

Կրոնի եւ հավատամքի ազատության իրավունքի վերաբերյալ եկեղեցականների եւ պետական պաշտոնյաների խտրական դիսկուրսը

Եկեղեցի-պետություն հարաբերությունների պետական քաղաքականությանը նվիրված որեւէ հայեցակարգ դժվար է գտնել, սակայն որոշակի եզրահանգումներ կարող ենք անել՝ վերլուծելով կղերականների եւ պետական պաշտոնյաների հրապարակային հայտարարություններից պատառիկներ, որոնց կանդրադառնանք հոդվածի հաջորդ հատվածներում:

2015-ի հոկտեմբերի 7-ին Ազգային ժողովի նիստի ժամանակ ԱԺ փոխնախագահ Է.Շարմազանովը հայտարարեց, որ Հանրային հեռուստառադիոընկերության գործառույթների մեջ պետք է ներառել նախեւառաջ քաղաքացիների հոգեւոր դաստիարակության խնդիրը եւ առաջարկեց կրոնական հաղորդումներ հեռարձակել: Հաղորդումների նպատակը ԱԺ փոխնախագահը պարզաբանեց «աղանդների դեմ պայքարի» համատեքստում: Այդ կապակցությամբ քսանից ավելի հասարակական կազմակերպություններ հանդես եկան հայտարարությամբ[4]:

Նույն միտքը կրկնել է ՀՀԿ խորհրդարանական խմբակցության ղեկավար Վահրամ Բաղդասարյանը, ինչից պետք է ենթադրել, որ դա իշխող կուսակցության քաղաքականությունն է. «Գաղտնիք չէ, որ ժողովրդավարության քողի տակ բավականին գումարներ են մուտք գործում հանրապետություն եւ այդ գումարներն օգտագործվում են, որպեսզի խոչընդոտեն մեր ազգային արժեքները, մեր ավանդույթները, մեր ընտանիքի ամրությունը, մեր եկեղեցին, եւ այստեղ շատ մեծ գործ ունի անելու Հանրային հեռուստատեսությունը»,- ասել է Բաղդասարյանը: Ըստ նրա, «աղանդների» վրա բավականին գումարներ են դրվում, որպեսզի կարողանան պառակտել «մեր Սուրբ Առաքելական եկեղեցին»:

ՀԿ-ներն իրենց հայտարարության մեջ՝ հակադարձելով պաշտոնատար անձանց, նշում են. ««Աղանդների» նկատմամբ ԱԺ մեծամասնության պատասխանատուները նման ծանր մեղադրանքներ ներկայացնելով՝ չեն հստակեցնում, թե ինչ են հասկանում «աղանդ» ասելով, չեն նշում, թե որ կրոնական կազմակերպություններն են «ազգային արժեքները» խոչընդոտելու համար դրսից «բավականին գումարներ» ստանում: Մենք՝ հայտարարության տակ ստորագրած կազմակեր-

4 Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը քրեական հանցագործություն է, 03/11/2015, www.aravot.am/2015/11/03/624854/

պություններս, անընդունելի ենք համարում Հանրային հեռուստառադիոընկերության եթերը կրոնական նպատակներով օգտագործելը: Ինչպես նաեւ դատապարտում ենք Հայաստանի կրոնական կազմակերպություններին ազգի թշնամի հայտարարելու՝ հիշյալ պաշտոնյաների հայտարարությունները»[5]:

Այստեղ տեղին է հիշեցնել 2014-ին Մայր աթոռ սուրբ Էջմիածնի Հայորդաց տների տեսուչ-տնօրեն Կոմիտաս Վարդապետ Հովնանյանի հայտարարությունն այն մասին, թե իր ունեցած տվյալների համաձայն՝ Հայաստանում գործում են շուրջ 210 աղանդներ, որոնք դրսից տարեկան ստանում են կես միլիարդ դոլար եւ այն օգտագործում «մեր պետությունը քայքայելու համար», սակայն այս առիթով հրաժարվել է բացատրություն տալ ԱԱԾ քննիչներին եւ այդ տվյալները հիմնավորող որեւէ ապացույց ներկայացնել[6]:

Կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հնչեցվող նմանօրինակ արտահայտությունները պատահականություն չեն: Մի առիթով «Ազգ» պարբերականն անդրադարձել է վարչապետ Տիգրան Սարգսյանի՝ 2008-ին արած հայտարարությանը՝ գրելով. «Ուշագրավ էր վարչապետի որակումը, թե «եկեղեցին տարանջատված է պետությունից» միտքը հնամաշ է: «Եթե եկեղեցին մենք ենք, ապա ես ինչպե՞ս եւ ո՞ր պահին տարանջատեմ իմ մեջ քրիստոնյա մարդուն»[7]:

Պետական պաշտոնյաների խոսքերն ավելի են հստակեցնում եկեղեցու ներկայացուցիչները: Գեւորգյան հոգեւոր ճեմարանի կրոնների պատմության դասախոս Տեր-Ղեւոնդ քահանա Մայիլյանն իր հարցազրույցում պարզաբանում է այդ մոտեցումը. «Չեմ կարծում, թե տրամաբանական է, որ իմ տանը պետք է սեփական իրավունքներս քննարկեմ մեկի հետ, որը համարձակվել է ոտնահարել դրանք,- ասել է քահանան: - Չէ՞ որ իմ երեխային են գողանում, իմ հոտի անդամներին, իմ տան դուռն են թակում, քննադատում են ազգային ավանդույթներս, բայց եթե զբաղվում են հոգեորսությամբ կամ քարոզչությամբ, որը դեմ է մեր ազգային մշակույթին ու մտածելակերպին, վերջապես, ոտնահարվում են մարդու իրավունքները, ապա մեր կողմից մերժելի են: Մորմոնները ինչո՞ւ են շատացել. որովհետեւ խլել են մեր հոտի անդամներին»,- բացատրում է Տեր-Ղեւոնդ քահանա Մայիլյանը[8]:

5 Նույն տեղում

6 ԱԱԾ-ն հարցաքննել է Կոմիտաս վարդապետին, http://www.aravot.am/2014/10/28/510655/
Կոմիտաս վարդապետ Հովնանյանը հերքում է այն, ինչ նշված է ԱԱԾ որոշման մեջ, http://www.aravot.am/2014/10/28/510719/

7 Տե՞ս «Ազգ» օրաթերթ #167, 13-09-2008 (http://azg.am/AM/2008091316)

8 Տես՝ armenianow.com, published: 21 ապրիլի 2006թ.

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր-Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հարցազրույցից· «Առաքելական եկեղեցին՝ որպես կրոնական հաստատություն, ազգային է մեզանում, եւ այս առումով ազգայինն ու հոգեւորը նույնացել են դարերի ընթացքում եւ դարձել հայության արժեհամակարգը: Դրանով հայ ժողովուրդը եւ նախնյաց ժառանգությունն իր մեջ ներառած Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին ճակատագրերով նույնանում են»[9]:

«Սահմանափակել աղանդների ազատությունը» հոդվածում ասվում է. «Վանաձորի Սբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցու քահանա Տեր-Վահան Ազարյանը կարծում է, որ Հայ առաքելական եկեղեցին աղանդների դեմ պայքարում պետք է գլոբալ աշխատանքներ սկսի պետության հետ համատեղ: «Մենք պետք է հիշենք, որ սա շատ մարդկանց համար բիզնես է, պարզապես աշխատանք: Մենք շատ խնդիրներ ունենք լուծելու կրթության, դաստիարակության ոլորտներում: Մեր քաղաքացիները պետք է գիտակցեն, որ եկեղեցին հենց իրենք են եւ, առաջին հերթին, իրենք պետք է իրենց պաշտպանեն աղանդներից»[10],- ասում է նա: Ըստ հոգեբան Վլադիմիր Միքայելյանի, պետք չէ աղանդներին ազատ գործունեության հնարավորություն տալ՝ հիմնվելով մտքի, խղճի, դավանանքի ազատության սկզբունքի վրա. «Ազատությունն այն կատեգորիան է, որը զարգացման է բերում, իսկ աղանդը, զրկելով մարդուն մտածելու կարողությունից, զրկում է նաեւ զարգանալու հնարավորությունից»[11]:

Աշխարհիկացման եւ անհատականության գաղափարներին է պաշտոնապես անդրադարձել Հայաստանյայց առաքելական եկեղեցու քահանայաց ժողովը: Սա արդեն պաշտոնական տեսակետ է՝ հաստատված եկեղեցական ժողովի կողմից: 2009-ին ԶԼՄ-ները տարածել են եկեղեցու պաշտոնական տեղեկատվությունը, որտեղ նշվում է. «Փետրվարի 16-17-ը Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնի առիթով Մայր աթոռ սուրբ Էջմիածնում Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ քահանաների ավանդական հավաքը, որին մասնակցում էին թեմական առաջնորդներ, Մայր աթոռի միաբաններ եւ շուրջ 300 քահանաներ»: Եկեղեցու մամլո պաշտոնական տեղեկատվության մեջ նշվում է. «Երկօրյա նիստերի արդյունքում քննարկման առարկա դարձան ժամանակակից մարտահրավերները՝ աշխարհիկացման եւ անձնապաշտության գործընթացները,

9 Տես՝ Հանրապետական կուսակցության պաշտոնական կայք (http://hhk.am/news/news.php?action=fullnews&id=2757)

10 Տես՝ «Առավոտ» օրաթերթ, 04/05/2009

11 Տես՝ «Առավոտ» օրաթերթ, 04/05/2009

արարչաստեղծ աշխարհը խեղող զանազան մեղքերն ու մոլությունները, ազգային եւ կրոնական ինքնությունների սահմանների վերացման միտումները, որոնք վտանգում են դարերով թրծված եւ քրիստոնեական մեր սուրբ հավատով շաղախված ազգային ինքնության անաղարտ նկարագիրը»[12]:

Փաստորեն մամլո տեղեկատվության մեջ քննադատվում է երկրի՝ աշխարհիկ լինելու մասին դրույթը, ինչպես նաեւ որպես մարտահրավեր են հայտարարվում «ազգային եւ կրոնական ինքնությունների սահմանների վերացման միտումները»: Սա արդեն եկեղեցու պաշտոնական դիրքորոշում է:

Այսօրվա Հայաստանի գործող իշխանության քաղաքականության մասին ամենացայտուն կերպով արտահայտվել է ՀՀ նախագահը: 2008թ. սեպտեմբերի 28-ին եկեղեցական մի արարողության ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանն արել է հետեւյալ հայտարարությունը. «Հարյուրամյակներ շարունակ չունենալով պետականություն, եկեղեցին առաջնորդել է մեր ժողովրդին մինչեւ 21-րդ դար: Հայոց պետականության յուրաքանչյուր պետական ծառայող պետք է իր պարտքը վերադարձնի եկեղեցուն, որպեսզի մեր եկեղեցին ավելի հզորանա եւ մեր հավատը մեզ առաջնորդի դեպի ավելի լավ ապագա»[13]:

Այդ ժամանակվա ԿԳ նախարար Արմեն Աշոտյանն այսպես է տեսնում եկեղեցու դերը դպրոցներում. «Դպրոցը նաեւ դաստիարակության վայր է, դպրոցը հայի ինքնության պահպանման վերարտադրման, հայոց պետության քաղաքացի կերտելու վայր է: Եվ այստեղ ոմ ապավինել, եթե ոչ Մայր աթոռի, մեր սուրբ եկեղեցու աջակցությանը: Եկեղեցու հետ համագործակցությունը թույլ է տալիս մեզ, մեր երեխաներին ներմուծել բարոյականություն, բարոյագիտություն եւ արժեքներ, թույլ է տալիս մեր աշակերտներին կոփել որպես հայեր եւ թույլ է տալիս առաջին անգամ իրենց համար թակել հոգեւոր իմաստության դռները»[14]:

2014-ի մարտի 3-ին Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի որոշմամբ պատվավոր դոկտորների կոչում է շնորհվել Հայ եկեղեցու երեք եպիսկոպոսների: Ակադեմիայի նախագահն այսպես է

12 Քահանայից հավաք Մայր աթոռում, http://www.lragir.am/index/arm/0/country/view/24759, 19/02/2009:

13 Հայոց պետականության յուրաքանչյուր պետական ծառայող պետք է իր պարտքը վերադարձնի եկեղեցուն. Նախագահ, aaa.ar.newsarmenia.ru, սեպտեմբեր 2008, http://ar.newsarmenia.ru/arm1/20080929/41957028.html

14 Մայր աթոռ, Կլոր սեղան-քննարկում՝ նվիրված «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, մայիս 2012, http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20120221_21&flag=am

բացատրել այդ որոշումը. «Սա առաջին դեպքը չէ. ակադեմիան մշտապես ուշադրություն է դարձնում հոգեւորականների հայագիտական եւ պատմական գործունեությանը», ինչպես նաեւ «հայ ժողովուրդը դարեր շարունակ պետականություն չի ունեցել եւ ապավինել է եկեղեցուն, որտեղ կրթվել են հայոց հոգին եւ միտքը»[15]: Հայտնի են դեպքեր, երբ գիտական թեզերը գրախոսության համար ուղարկվում են եկեղեցու «Քրիստոնեական դաստիարակության» կենտրոնին[16]:

Այդ միտումներն ավելի ակնհայտ են դառնում 2010թ. փետրվարին Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից ընդունված չափորոշիչներից, որոնցով պետք է առաջնորդվեն Հայաստանի տարածքում գրանցված ռադիո եւ հեռուստատեսային ընկերությունները: Փաստաթղթում մասնավորապես սահմանվում է, որ անչափահասների առողջության, մտավոր ու ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն հաղորդումները, որոնք «նսեմացնում եւ վարկաբեկում են ազգային եկեղեցուն ու նրա կողմից քարոզվող արժեքները»[17]: Նման հաղորդումներն, ըստ այդ փաստաթղթի, արգելվում են: Նշենք, որ ոչ մի իրավական փաստաթղթում չի սահմանվում, թե ինչ է նշանակում «ազգային եկեղեցի» հասկացությունը: Մյուս կրոնական կազմակերպությունների նսեմացման արգելքի կետ այդ փաստաթղթում չկա:

Եկեղեցին ձգտում է իր ազդեցությունը տարածել այն ոլորտներում, որտեղ ձեւավորվում է հանրային կարծիքը՝ դպրոցներ, գիտություն, լրատվամիջոցներ: Սակայն չի զլանում ազդեցություն ձեռք բերել նաեւ ուժային կառույցներում:

2014-ին «Քայքայիչ պաշտամունքները եւ փողոցային արատավոր բարքերը որպես պաշտպանունակության սպառնալիք» թեմայով ՀՀ պաշտպանության նախարարությունում մեկնարկած գիտագործնական կոնֆերանսի ժամանակ պաշտպանության նախարարն ասել է. «Աղանդները բացասաբար կարող են ազդել զինուժի վրա: Չեմ ուզում մտածել այդ մասին, բայց սարսափելի է պատկերացնել, թե ինչ կարող է կատարվել մարտական դիրքում, եթե այնտեղ կանգնած զին-

15 Օվ. Մադաթյան, Պատվավոր դոկտորի կոչում՝ երեք բարձրաստիճան հոգեւորականների, Առավոտ, հուլիս 2014, http://www.aravot.am/2014/07/04/476851

16 Sara Khojoyan, A Scientific Research Failed For Religious Motives: The Church Intervenes into Science, February 2014, http://kron.armhels.com/?p=900&lang=en

17 Նմանակեք, բայց դատապարտեք, Առավոտ օրաթերթ, փետրվար 2010, http://www.aravot.am/2010/02/16/354249/

վորի հավատամքն այլ լինի»[18]: Պաշտպանության նախարարությունը «Քայքայիչ պաշտամունքների եւ փողոցային արատավոր բարքերի դեմ» ծրագրի շրջանակում մշակել է ճանապարհային քարտեզ, ըստ որի՝ սպաներն ու հոգեւորականները դպրոցներում միասին պայքարելու են «քայքայիչ աղանդների» դեմ եւ նույնիսկ դպրոցականներին բաժանելու են ավետարաններ: Պետք է նշել, որ «քայքայիչ աղանդներ» կամ ուղղակի «աղանդ» արտահայտությունը պետական պաշտոնյաները հաճախ են օգտագործում, սակայն որեւէ իրավական փաստաթուղթ Հայաստանում գոյություն չունի, որտեղ տրված լինեն այդ եզրերի սահմանումները: Ըստ էության, այդ բառեզրի տակ հասկացվում են Հայաստանում գործող եւ գրանցված կազմակերպությունները, որոնց անուղղակի նկատի ունեն այդ հասկացությունը օգտագործողները, որի միջոցով փորձում են խույս տալ հնարավոր մեղադրանքից՝ որեւէ կոնկրետ կազմակերպության կողմից դրա համար պատասխանատվություն կանչելու դեպքում: ՊՆ նախարի ելույթից մեջբերումը ցուցադրում է նախարարության կողմից կրոնական կազմակերպությունների հանդեպ դրսեւորվող խտրական մոտեցումները: Դրա ցուցադրում է նաեւ Պաշտպանության նախարարության հաստատած՝ ««Փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի» ուղղությամբ 2014թ. նախատեսվող միջոցառումների պլանը»[19]:

2014-ի հունիսին ՀՀ ոստիկանության Երեխաների իրավունքների պաշտպանության վարչության պետը հայտարարել է, որ աղանդների դեմ պայքարի շրջանակում ոստիկանները Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչների հետ համատեղ դաստիարակչական աշխատանքներ են տարել դպրոցներում «աղանդավոր» երեխաների հետ, այդ թվում «այդ պայքարին» ներգրավել նրանց ընկերներին[20]: Տիկին Դուրյանը մասնավորապես ասել է. «Ունենում ենք որոշակի քանակի դեպքերի ահազանգեր, երբ երեխաները ներգրավվում են աղանդների մեջ եւ հիմնականում ներգրավողները ծնողներն են: Մեզ անհանգստացնում է երեխաների հոգեվիճակը, իհարկե՝ երեխաները չեն կարողանում իրենք կողմնորոշվել, շատ անգամ ծնողները ստիպողաբար են տանում նրանց: Ես ոստիկանության ներկայացուցիչ եմ եւ հա-

18 Սարսափելի է պատկերացնել, թե ինչ կկատարվի, եթե մարտական դիրքում կանգնած զինվորի հավատամքն այլ լինի. Սեյրան Օհանյան, MediaMall, ապրիլ 2014, http://topnews.mediamall.am/?id=77317

19 «Փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի» ուղղությամբ 2014թ. նախատեսվող միջոցառումների պլան, http://www.religions.am/files/9844/library/legal/L014.pdf

20 «Շատ կարեւոր է մեր եկեղեցու ներկայացուցիչների մուտքը դպրոց», Religions.am, հունիս 2014, http://www.religions.am/arm/news/

վատացնում եմ ձեզ, որ ոստիկանությունն անում է ամեն ինչ, ջանքեր չի խնայում, որպեսզի օգնի այն երեխաներին ու երիտասարդներին, ովքեր հայտնվել են դժվարության մեջ: Անցյալ տարի մենք կազմակերպեցինք մեծ միջոցառումների շարք, մեկ ամիս տեւողությամբ: Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչների հետ մենք այցելեցինք դպրոցներ, որի նպատակն էր, որ եկեղեցու ներկայացուցիչները մտնեն դպրոց: Դպրոցներ կային, որ մեր եկեղեցու ներկայացուցիչներին շատ լավ էին ճանաչում: Չեմ կարող մոռանալ մի դպրոց՝ դա Գեղարքունիքում էր, որտեղ եկեղեցու ներկայացուցիչը դասամատյան ուներ, երեխաներին բոլորին անուններով գիտեր, եւ այդտեղ, բնականաբար, չէր կարող ոչ մի աղանդ թափանցել: Այսինքն՝ շատ կարեւոր է մեր եկեղեցու ներկայացուցիչների մուտքը դպրոց, երեխաների հետ հանդիպումները: Մենք նստել ենք այդ հանդիպումների ժամանակ, եւ չեմ կարող չփաստել, որ մեր եկեղեցու ներկայացուցիչների խոսքը բավականին ծանրակշիռ ու լսելի է, եւ երեխաներին դա հասու է: Մենք՝ ոստիկաններս, աշխատում ենք երեխաների եւ ծնողների հետ: Համենայն դեպս, փորձում ենք այնպես անել, որպեսզի, եթե ծնողը չափահաս է, գնում է այդ ուղով, գոնե երեխային ստիպողաբար չտանի, որովհետեւ երեխայի հոգեկան աշխարհն է փոխվում»[21]:

Պետք է նշել, որ ՀՀ ոստիկանությունում ծառայության մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 7-րդ կետում սահմանափակվում են որեւէ կրոնական կազմակերպության անդամ լինելը եւ կրոնական քարոզչություն կատարելը: Առավել եւս պետք է չթույլատրվի որեւէ կրոնական կազմակերպության օգտին ծառայության ընթացքում գործողություններ կատարելը:

«Ժամանակ» օրաթերթին տված հարցազրույցում Մայր աթոռ սուրբ Էջմիածնի թանգարանների եւ գրապահոցների տնօրեն Ասողիկ քահանան այսպես է բնորոշում ազգ-եկեղեցի կապը. «Մենք չպետք է մոռանանք պատմական այն ճշմարտությունները, որ դարեր առաջ արձանագրել են մեր այրերը: Եղիշեն ասում է՝ Ավետարանը մեր հայրն է, եկեղեցին մեր մայրն է, եթե մենք մեր կաշին քերենք, ապա դրա տակից եկեղեցի դուրս կգա, որովհետեւ հավատքը, կրոնը նույնացվել են մեր էությանը, դարձել են մեր մաշկի գույնը: Եվ այսօր մեր հասարակությանը ապակողմնորոշել, այսպես անջատել, եկեղեցին մեկ այլ մարմնի վերածել՝ ճիշտ չէ: Դա նշանակում է՝ ազգին, ժողովրդին զրկել իր ինքնությունից»[22]:

21 Հասարակության բարոյականության քրիստոնեական հիմքերը մեզանում եւ արդի խնդիրները, 17.06.2014, https://www.youtube.com/watch?v=r2dOmlu4Evg

22 Միայն քաղցր խոսքերով չես կարող մարդուն ճշմարտություն ուսուցանել, «Ժամանակ», 25.03.2010թ.

Հայաստանի հելսինկյան կոմիտեի՝ «Մարդու իրավունքները Հայաստանում 2014 թվականին» տարեկան զեկույցում[23] բերվում են կոնկրետ տեղեկություններ. «Զինվորական կոմիսարիատներում զորակոչիկներին տալիս են լրացնել անկետա, որտեղ նրանք պետք է նշեն իրենց կրոնական հայացքները: Եղել են դեպքեր, երբ զինվորական հոգեւորականները տարբեր կրոնական կազմակերպությունների անդամ այլադավան զինվորականների հետ «բացատրական եւ դաստիարակչական աշխատանքներ» են իրականացրել: Զեկույցում ասվում է, որ կրոնական այլ կազմակերպությունների անդամների հանդեպ բանակում դրսեւորված խտրական վերաբերմունքի օրինակ է «Կյանքի խոսք» եկեղեցու հետեւորդ Աշոտ Մկրտչյանի (անուն-ազգանունը փոխված է) հետ կատարված դեպքը, ով զինվորական ծառայության ընթացքում, հակառակ իր կամքի, ստիպված է եղել Հայ առաքելական եկեղեցու քահանայի գլխավորությամբ աղոթել: Մկրտչյանը «Մեդիալաբ » կայքին պատմել է, որ երբ զորամասում կասկածել են, որ այլ եկեղեցու հետեւորդ է, իրեն տարել են հրամանատարի մոտ եւ առաջարկել հրաժարվել իր եկեղեցուց: Սկսել են ծաղրել, սպառնացել, որ եթե զորամասում ծառայող քահանայի ամենօրյա աղոթքներին չմասնակցի, նրա համար վատ կլինի: Զորամասի ղեկավարության հետ խնդիրներ չունենալու համար նա 8 ամիս իր կամքին հակառակ մասնակցել է Հայ առաքելական եկեղեցու քահանայի անցկացրած ծեսերին:

Հակաօդային պաշտպանության զորքերի հոգեւոր հովիվ Տեր-Կորյուն քահանա Կարապետյանն իր մի ելույթում նշել է , որ եկեղեցու ներկայությունը բանակում օգնում է հայ զինվորին ավելի հայրենասեր լինել, հոգեբանորեն սատար կանգնել իր ընկերներին: «Բանակում աղանդավորներն այնքան են, որքան կան մեր երկրում, եւ որոնց մի մասը գալիս է ծառայության: Բանակ եկած աղանդավորների առնվազն 80 տոկոսը վերադառնում է Հայ առաքելական եկեղեցի,- ասել է քահանան: Եկեղեցու եւ պետպաշտոնյաների հրապարակային խոսքերից նման մեջբերումներ կարելի է շատ անել, սակայն մենք կսահմանափակվենք այսքանով:

Պետք է նաեւ ասել, որ այս ոլորտները ղեկավարող որեւէ պետական պաշտոնյայի նշանակումից հետո կաթողիկոսը պարտադիր կերպով նրանց հետ հանդիպում է: Մասնավորապես՝ 2016-ին վարչապետ նշանակված Կարեն Կարապետյանի առաջին պաշտոնական հանդի-

23 Մարդու իրավունքները Հայաստանում, Զեկույց 2014, Հայաստանի հելսինկյան կոմիտե, http://armhels.com/wp-content/uploads/2015/02/Ditord-69-Arm.pdf

պուլմերից մեկը եղել է կաթողիկոսի հետ: «Վարչապետ Կարապետյանը եւ Ամենայն հայոց կաթողիկոսը քննարկել են մի շարք հարցեր, որոնք վերաբերել են եկեղեցի-պետություն հարաբերությունների հետագա ամրապնդմանն ու այլ խնդիրների»[24]:

Կարգալույծների «դիսկուրսը»

XIX դարավերջին եւ XX դարասկզբին հայկական եկեղեցում ձեւավորվել էր բարենորոգչական շարժում, որն իր առջեւ դրել էր ժամանակի մարտահրավերներին համապատասխան բարենորոգումներ իրականացնելու խնդիրը: Պատմական գիտությունների թեկնածու Հովհաննես Հովհաննիսյանը «Մաղաքիա Արք. Օրմանյանը եւ 20-րդ դարասկզբի Հայ եկեղեցու բարենորոգչական շարժման հիմնահարցը» հոդվածում[25] անդրադարձել է այդ շարժմանը. «XX դարասկզբին Հայ առաքելական եկեղեցու ներքին կյանքում նոր թափով սկսեցին գործունեություն ծավալել եկեղեցու բարենորոգությանն ուղղված մի շարք ուղղություններ (հոսանքներ): Բարենորոգչական այդ ուղղությունների նպատակն էր տեսնել հզորացած, բարենորոգված եկեղեցական կառույց, սակայն այդ նպատակին հասնելու միջոցների ու մեթոդների ընտրության հարցում բարենորոգիչների հայացքները աչքի էին ընկնում ընդգծված տարամիտությամբ: Բնական է նաեւ այն, որ այդ շարժումն ուներ իր հակառակորդները հոգեւոր ու հասարակական շերտերում: Եվ, չնայած ընդդիմադիր ուժերը նույնպես միասնական չէին, պետք է նշել, որ ներեկեղեցական կյանքը բարենորոգելու ամենամեծ խոչընդոտը ոչ թե այդ թեւերի միջեւ մղվող անզիջում պայքարն էր, այլ բարենորոգումներին ընդդիմադիր կամ դրանք ընդհանրապես մերժող պահպանողական հոգեւորականները»,- գրում է նա՝ շարունակելով. «Կասկած չի հարուցում այն փաստը, որ Մ.Օրմանյանի ակտիվ ուսուցչական գործունեության շնորհիվ նրա աշակերտներ Կարապետ Տեր-Մկրտչյանը եւ Գարեգին Հովսեփյանը դարձան բարենորոգչական շարժման գործուն ջատագովներ: Մի փոքր ավելի ուշ բարենորոգչական շարժման ակտիվ կողմնակիցներ ձեւավորվեցին նաեւ Մ.Օրմանյանի գլխավորած՝ Արմաշի հոգեւոր ճեմարանում՝ ի դեմս Բաբկեն

24 Վարչապետը կառավարությունում հյուրընկալել է Ամենայն հայոց կաթողիկոսին, հոկտեմբեր 19, 2016, http://araratnews.am/varchapeteh-karavaruthyunum-hyurehnkalel-e-amenayn-hayoc-kathoghikosin/

25 Հովհաննես Հովհաննիսյան, «Մաղաքիա Արք. Օրմանյանը եւ 20-րդ դարասկզբի Հայ եկեղեցու բարենորոգչական շարժման հիմնահարցը», 26.09.2012 http://www.religions.am/arm/articles/Մաղաքիա-Արք.-Օրմանյանը-եւ-20-րդ-դարասկզբի-հայ-եկեղեցու-բարենորոգչական-շարժման-հիմնահարցը/

Կյուլեսերյանի եւ Թորգոմ Գուշակյանի»[26]: Շարժման անդամներից էր, ի դեպ, ականավոր գիտնական Երվանդ Տեր-Մինասյանը:

Նպատակ չունենալով քննարկել այդ շարժումը, պետք է միայն նշենք, որ շարժումս, ի վերջո, հաջողության չհասավ, բայց այնուամենայնիվ չափազանց լուրջ եւ արդիական խնդիրներ էին վեր հանել:

Մեզ հետաքրքրող խնդիրն այն է, թե արդյոք եկեղեցում կամ գոնե այս կամ այն պատճառներով կարգալույծ արված միաբանների շարքերում կամ եկեղեցու բարեփոխման խնդիր դրած անհատներ, թե՞ եկեղեցուց հեռացվածներն իրենց հրապարակային ելույթներում միայն միջանձնային հարաբերությունների խնդիրներն են արծարծում: Կամ ավելի պարզ ասած՝ կամ արդյոք գաղափարական տարաձայնություններ եկեղեցու ներսում: Դա հասկանալու համար մենք կներկայացնենք հատվածներ կարգալույծ արված կամ եկեղեցուց ինքնակամ հեռացած հոգեւորականների հարցազրույցներից ու հրապարակային նամակներից, որտեղ նրանք պարզաբանում են այն հակասությունները, որոնց արդյունքում եկեղեցուց հեռացվել կամ էլ կարգալույծ են հռչակվել:

1999 թվականից ի վեր, երբ կաթողիկոս ընտրվեց Գարեգին Բ Ներսիսյանը, կարգալույծ են հռչակվել մի քանի տասնյակ միաբաններ, ըստ մամուլում շրջանառվող տեղեկությունների՝ մոտ 100 հոգեւորական: Կարգալույծներից ոմանք հանդես են եկել բաց նամակներով ու հարցազրույցներով, որտեղ քննադատության են ենթարկում կաթողիկոսին, վեր հանում եկեղեցու ներսում տիրող բարքերը, միջանձնային հարաբերությունները, ֆինանսական չարահումները, նեպոտիզմը[27] եւ իրենց տեսակետներն են հայտնում եկեղեցում տեղ գտած անառողջ երեւույթների՝ կոռուպցիայի, հովանավորչության եւ հակոտնյա այլ դրսեւորումների մասին: Այդ հարցազրույցները կարող են հետաքրքիր վերլուծության թեմա հանդիսանալ, քանի որ փակ կառույց լինելով՝ եկեղեցին իր ներքին խնդիրները չի հրապարակայնեցնում, բայց կարգալույծ հռչակվածներից շատերն ազատորեն արտահայտվում են: Այդ տեսակետից ներեկեղեցական քննադատության դիսկուրսը հետաքրքրություն է ներկայացնում:

Մեզ հետաքրքրում են այն հրապարակումները, որոնք վերաբերում են եկեղեցու հնարավոր բարեփոխումների խնդրին եւ դրանց հետ կապված՝ կարգալույծների դիտարկումներին: Այստեղ նույնպես մենք ձեռնպահ կմնանք մեկնաբանություններ անելուց:

26 Նույն տեղում

27 Արգասավոր պաշտոնների հանձնումը մոտ ազգականներին: Առհասարակ՝ հասարակական գործերում ազգակցական-խնամիական կապերով ղեկավարվելը

««Առաջին լրատվական»-ի հետ զրույցում Տեր-Սահակ քահանան ասաց, որ Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից կարգալույծ հռչակված հոգեւորականները միավորվում են եւ արդեն կազմակերպել են առաջին ժողովը, որին 24 կարգալույծ հոգեւորականներ են մասնակցել, սակայն մանրամասներ, թե որտեղ են ժողով կազմակերպել, եւ ովքեր են ներկա եղել, քահանան չշտապեց հաղորդել: Նա նշեց, որ մինչեւ հիմա տասնչորս տարվա ընթացքում Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից կարգալույծ են հռչակվել ավելի քան 100 հոգեւորականներ: Ըստ Տեր-Սահակի, կարգալույծ անելու հիմնական պատճառն այն է, որ մարդիկ չեն ուզում համակերպվել տիրող իրավիճակին, ըմբոստանում են, կարծիք են հայտնում: «Տեսեք, Տեր-Վաչեն այդքան հանցանքներ ունի եւ կարգալույծ չի եղած մինչեւ հիմա, եթե դու հանում ես անմեղներին, ինչո՞ւ ես մեղավորներին պահում»,- հավելեց Տեր-Սահակը»[28]:

«Այսօրվա խռովության, այլասերված վիճակի մեղավորը կաթողիկոսի կողմից պարտադրված նոր կանոնագիրքն է, որը նա Էջմիածնից հարկադրաբար պարտադրում է համայնքներին՝ ընդունելու եկեղեցու կառավարման իր ուզած ձեւը, որը համահունչ չէ տվյալ երկրի, տվյալ պետության, տվյալ համայնքի սովորություններին: Այս քայլով նա հետամուտ է լինում միայն իր անձնական, նյութական շահերին, բնականաբար՝ սա չի ընդունվում համայնքների կողմից, տեղի է ունենում շահերի բախում: Մեր շահը հայապահպանությունն է, որ չփչանանք այստեղ, իսկ իր շահը նյութական շահն է, կալվածքները: ....Նոր կանոնագրքի համաձայն՝ ուզում էին ամբողջ ունեցվածքը, կալվածքները վերցնել իրենց ձեռքը, այսինքն՝ վաղը Գարեգին Բ-ն կարող է ասել, որ իրեն 150.000 եվրո է պետք, շտապ ուղարկեք Էջմիածին: Եվ այդ գումարները պետք է ծախսվեն ոչ նպատակային, այսինքն՝ չեն նպաստելու մեր հայապահպանման գործին եւ կրոնական համայնքի ամենօրյա աշխատանքներին: Նա փոխանակ Հայաստանի եկեղեցիների եւ վանքերի մասին մտածի (օրինակ՝ հուշարձանագետ Սամվել Կարապետյանի հետ զրույցում նա ասել է՝ ես սարերում եղած վանքերի հետ գործ չունեմ, իսկ մենք գիտենք՝ ինչքան պատմական բարձրարժեք վանք եւ եկեղեցի ունենք անմխիթար, անտերության մատնված, որոնք արդեն փլուզվում են), սփյուռքի եկեղեցիներն է կանոնակարգում: ...Քրեաօլիգարխիկ համակարգի ներկայացուցիչները կառուցում են նոր եկեղեցիներ, քանի որ լիքը փող ունեն, ուզում են եկեղեցու ճանապարհով այդ փողերը լվանալ, մաքրել: Այստեղ էլ կան շահեր,

28 Կարգալույծ հոգեւորականները համախմբվում են ընդդեմ Ամենայն Հայոց Հայրապետի, 15/02/2013, http://topnews.mediamall.am/?id=13910

եթե չլինեին այդ շահերը, հին վանքերն ու եկեղեցիները կնորոգեին: Հարցը հասավ նրան, որ Գարեգին Բ-ն փաստաթուղթ ուղարկեց Նիս, որով եկեղեցին ոչ առաքելական հռչակեց: Ինչպես նրա անձնական որոշումը, այնպես էլ Գերագույն հոգեւոր խորհրդի որոշումներն այսօր լեգիտիմ չեն, այսինքն՝ խորհրդի ընդունած որոշումներն ապօրինի են: Պոլսո պատրիարքն այս կապակցությամբ նույն վերը նշված նամակի մեջ գրում է. «Հանկարածակիի եկանք, երբ ստացանք ձեր կողմից ուղարկված եկեղեցու Գերագույն հոգեւոր խորհրդի նոր ցանկը, քանի որ խորհրդի անդամներն ընտրվում են ազգային եկեղեցական ժողովի կողմից եւ ոչ թե նշանակվում են կաթողիկոսի կողմից»[29]:

Հիշեցնենք, որ 2009-ի հոկտեմբերի 31-ին տեղի է ունեցել Հայաստանյայց առաքելական եկեղեցու 3-րդ ներկայացուցչական ժողովը: Ժողովի ժամանակ ընդունվել է Թեմական կանոնադրության ուղենշային փաստաթուղթը: Այն բաղկացած է 17 հոդվածից, որոնք այն ուղենիշներն են, որոնց հիման վրա պետք է ստեղծվեն թեմական եւ ծխական կանոնադրությունները: Թեմերի եւ ծխերի կանոնադրությունները պետք է համապատասխանեցվեն մինչեւ 2012-ի վերջը: Ուղենշային կանոնադրությունը վերաբերում է միայն Էջմիածնի թեմերին: Թեմական կանոնադրության ուղենշային փաստաթուղթն ուժեղացնում է Մայր աթոռի վերահսկողությունը թեմերի նկատմամբ, ինչպեսեւ ֆինանսական վերահսկողություն է սահմանում: Կանոնադրության մասին ավելի մանրամասն վերլուծություն կարելի է գտնել Կիմիտակա Մատսուզուտիի եւ Ստեփան Դանիելյանի հոդվածում[30]:

2011-ին հայկական մամուլը հաճախ էր անդրադառնում Շվեյցարիայի Ժնեւ քաղաքի Սուրբ Հակոբ եկեղեցու եկեղեցական խորհրդի եւ Էջմիածնի միջեւ ծագած կոնֆլիկտին: Ըստ «Լրագիր» կայքի, կոնֆլիկտի պատճառը Էջմիածնին դրամական հատկացումներ կատարելու հետ է կապված: Էջմիածինը պահանջում էր այն ավելացնել[31]: Ըստ «Ազգ» օրաթերթի տեղեկատվության. ««Ազգը» նախանցյալ համարում ներկայացրել էր Հայ եկեղեցու Շվեյցարիայի թեմում ստեղծված վիճակը՝ հիշեցնելով մարտի 17-19-ին Մայր աթոռում Վեհափառ հայ-

29 Կաթողիկոսը 14 տարի անց էլ չի համակերպվել իր պաշտոնին: Մեր զրուցակիցն է Ֆրանսիայի Նիս քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր-Սահակ քահանան 28/03/2013, http://www.lragir.am/print/arm/1/interview/print/80748

30 Kimitaka Matsuzato & Stepan Danielyan, Faith or Tradition: the Armenian Apostolic Church and Community-Building in Armenia and Nagorny Karabakh, “Religion, State and Society” journal, Published online: 22 Mar 2013, http://www.tandfonline.com/doi/abs/10.1080/09637494.2013.769741

31 www.lragir.am, 6.05.2010, «Համայնքը դիմել է Շառլ Ազնավուրին»

ռապետի նախագահությամբ գումարված Գերագույն հոգեւոր խորհրդի որոշումը թեմում առաջնորդական տեղապահ նշանակելու Մեսրոպ աբեղա Պարսամյանին եւ գործող հոգեւոր հովիվ Աբել քահանա Մանուկյանին Մայր աթոռ այլ ծառայության ետկանչելու մասին: Տեղեկացրել էինք նաեւ, որ Ժնեւի հայոց եկեղեցական խորհուրդը որոշել է մերժել Հոգեւոր գերագույն խորհրդի կարգադրությունը՝ պնդելով միաժամանակ, որ Աբել քահանան ինքն էլ չի ցանկանում հեռանալ»[32]:

Այս եւ մյուս դեպքերի հիմքում հիմնականում ընկած է ֆինանսական խնդիր:

«Այդ գումարը տալիս են հանցագործները, քրեական տարրերը, սա ժողովրդից գողացված եւ յուրացված գումարն է, այդ գումարներով նրանք կառուցում են եկեղեցիներ իրենց մեղքերի քավության եւ խղճի հանգստության համար, եւ Գարեգին Բ-ն այս մարդկանց օրհնում է, սրբացնում, ազգի հերոս է դարձնում, շքանշաններ բաժանում: Եկեղեցու վերնախավի մի ստվար զանգված շփացած, ցոփ ու շվայտ կյանքով է ապրում, իսկ իրենց խնկարկուները եւ շեփորահարները օգտվում են դրանից: Սրանք այն երիտասարդներն են, որոնց կաթողիկոսն ուղարկում է արտերկրներ («յուղոտ» տեղեր), նրանք իրենց համարում են կաթողիկոսի զինվորներ»[33]:

«Եկեղեցու շահը վեր է ամեն ինչից: Միեւնույն է՝ եթե փորձես բարձրաձայնել որեւէ խնդիր՝ կապված եկեղեցական իշխանության չարաշահման հետ, հիշիր, կաթողիկոսն իմունիտետ ունի, նրա վրա ոչ մի բան չի ազդում: Հիշիր, եկեղեցու շահը վեր է ամեն ինչից… պաշտիր կաթողիկոսին, քանզի նա քո կուռքը պետք է լինի»[34]:

«Մեր եկեղեցին բաժանված է երկու մասի՝ հարուստներ եւ աղքատներ, իսկ դա ամենամեծ սխալն է: Չի կարելի. Աստծո առջեւ բոլորն են հավասար: Ավետարանի մեջ էլ ասվում է, որ եթե քո աջ ձեռքը բարերարություն է անում, ապա ձախը դրա մասին չպետք է իմանա: Մենք պետք է նրանց հասկացնենք, որ եթե բարերարություն եք անում, դա Աստծուն է ուղղված, իսկ դուք հավասար եք մյուսներին: Սակայն

32 azg.am 2.04.2011, «Մտահոգիչ իրավիճակ Ժնեւի Հայոց եկեղեցական խորհրդում»

33 Կաթողիկոսը 14 տարի անց էլ չի համակերպվել իր պաշտոնին: Մեր զրուցակիցն է Ֆրանսիայի Նիս քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր-Սահակ քահանան 28/03/2013, http://www.lragir.am/print/arm/1/interview/print/80748

34 Կարգալույծ հոգեւորականի աղմկահարույց նամակը Գարեգին Բ-ին, 2016-08-21 http://asekose.am/hy_AM/news/11/228961-kargalouyc-hogeorakani-axmkaharouyc-namake-garegin-b-in.html

մենք նրանց հավելյալ հարգանք ենք ցուցաբերում՝ դրանով գայթակղության տանելով: Հարուստների համար եկեղեցու առաջին մասում աթոռներ են դնում, որը միայն հոգեւոր դասի համար է նախատեսված, իսկ մյուսները պետք է կանգնեն. ինչո՞ւ… Եկեղեցին սինեմայի զալ չէ, որ տոմս առնեն ու ըստ այդմ նստեն: Սա եկեղեցի է, որտեղ մտնելիս, անկախ ամեն ինչից, բոլորը հավասար են»[35]:

«Մեր եկեղեցին այսօր վախի վրա հիմնված է առաջ գնում, ամեն մարդ վախենում է խոսելուց, վախենում է սեփական տեսակետն արտահայտելուց, որովհետեւ եթե այդ տեսակետը չի համընկնում բարձրաստիճան հոգեւորականների տեսակետի հետ, այդ մարդու գլխին տալիս են: Իսկ այդ մարդն ընտանիք, երեխաներ, հարազատներ ունի: Դրա համար էլ լռում ու չեն խոսում: Եթե մեր հոգեւորականներին այսօր ազատություն տան, ես վստահ եմ, որ նրանք ոտքի կելնեն ու բոլորն էլ բարեփոխումներ կանեն, կխոսեն»[36]:

«Այսօր, դժբախտաբար, մեր եկեղեցին եկեղեցի հասկացողությունից դուրս է եկել, դարձել է մի ընկերություն, հիմնարկ, որտեղ քահանան պաշտոնյա է, եպիսկոպոսը՝ մասնաճյուղի տնօրեն, կաթողիկոսն էլ՝ գլխավոր տնօրեն: Այդ ձեւով ուզում են եկեղեցի ղեկավարել: Եկեղեցին պետք է հիմնված լինի սիրո վրա: Եկեղեցու մեջ կանոն, ստորագրություն, թուղթ, նամակ՝ այդպիսի բաներ չկան: Եկեղեցին Քրիստոսի մարմինն է, եւ մենք իր անդամներն ենք»[37]:

«Այժմ ես անպաշտոն եմ, բայց կարգալույծ չեմ, թեեւ, որ կարողանային, դա էլ կանեին: Ես Կիլիկիո միաբան եմ, ինձ զրկել են Արեւմտյան Եվրոպայի պատրիարքության մեջ ունեցած իմ պաշտոնից: Գրավոր նամակով են ինձ տեղեկացրել այդ մասին, բայց պատճառ չկար նշված: Նրանք զայրացել էին իմ ելույթից, որն ունեցել էի հունիսի 29-ի ցույցի ժամանակ՝ դեսպանատան շենքի դիմաց,- «Ասպարեզի» հետ զրույցում ասաց Տեր-Արմեն քահանա Մելքոնյանը եւ փոխանցեց այն ամենը, ինչ ասել էր ինքնաբուխ, խաղաղ ցույցի ժամանակ,- ես իմ խոսքում ասել էի, որ հավաքվել ենք այստեղ՝ «Սասնա ծռեր» խմբի

35 Կարգալույծ արված հոգեւորականը բացահայտումներ է արել, հարցազրույց կարգալույծ արված քահանա Տ. Մարտիրոս Բերբերյանի հետ, http://galatv.am/hy/news/680780545/#.U2O35oQgmVA.facebook

36 Կարգալույծ արված հոգեւորականը բացահայտումներ է արել, հարցազրույց կարգալույծ արված քահանա Տ. Մարտիրոս Բերբերյանի հետ, http://galatv.am/hy/news/680780545/#.U2O35oQgmVA.facebook

37 «Մեր եկեղեցին դարձել է մի հիմնարկ, որտեղ քահանան պաշտոնյա է, եպիսկոպոսը՝ ֆիլիալի տնօրեն, կաթողիկոսն էլ՝ գլխավոր տնօրեն», http://hetq.am/arm/news/54383/mer-ekexecin-dardzel-e-mi-himnark-ortex-qahanan-pashtonya-e-episkoposy-filiali-tnoren-katoxikosn-el-glkhavor-tnoren.html

հերոս տղաներին զորակցություն հայտնելու, որոնք իրենց արյունով պահպանել են մեր սահմանները, իսկ այսօր մեծ ցավ ենք ապրում, որ այդ հերոս տղաները ենթարկվում են բռնության: Նրանք իրենց այդ քայլով հաստատում են, որ հայ ժողովուրդը ծնկի չի գալու, ապրելու է ազատ եւ անկախ Հայաստանում,- պատմում է քահանան»[38]:

«Այս քայլը իմ մտքի ազատության դեմ է: Մեզնից յուրաքանչյուրն ազատ է իր միտքն արտահայտելու համար: Ես 20 տարի ապրել եմ Եվրոպայում, իսկ այդ տարիների ընթացքում իմ հոժարությամբ, առանց շահի ծառայել եմ իմ ժողովրդին: Ես կանգնել եմ իմ ժողովրդի կողքին եւ իր իրավունքները պաշտպանել: Եկեղեցին սատարում է իշխանությանը, ես ուրիշ մեկնաբանություն չունեմ այս հարցում,-եզրափակում է նա»[39]:

«Սակայն ժամանակը եկաւ փաստելու, թէ արտաքինն ու նիւթականն էր էականն ու Ձեզ հետաքրքրողը: Անկարելի է, որ վախի եւ սպառնալիքի մթնոլորտի մէջ առողջ սերունդներ հասնին, բան մը որուն պատճառով պիտի տուժեն մեր ժողովուրդը եւ Մայր եկեղեցին, որոնք ամէն ժամանակէ աւելի կարիքը ունին մաքրակրօն, զարգացած եւ իրաւ՛ եկեղեցականներու եւ ո՛չ թէ գարշապար լիզողներու... Վաճառականական եւ առեւտրական յատկութիւններ ունենալը անպայմանօրէն խելացիութեան յայտարարներ չեն: Դուք կրնաք մարդ առնել ու ծախել, սակայն ԵՐԲԵՔ ՉԷՔ ԿՐՆԱՐ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՊԱՀԵԼ ԵՒ ԻՐԱՑՆԵԼ»[40]:

«Ձեր մտածելակերպին պէս սոփեստ եւ անպատասխանատու են ձեր արտայայտութիւններն ու որոշումները: Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին իր դարաւոր գոյութեան ընթացքին արտաքին հարուածներէն այնքան չէ սոսկացած, որքան այն անմիտ եւ քանդիչ փորձերէն, զորս դո՛ւք, Վեհափառ, ծոցածին զաւակը այս նոյն Եկեղեցւոյ, կը պատրաստէք ի՛ր մէջէն՝ ի՛ր դէմ: Հայ Եկեղեցին բաժնել իր նկարագրէն՝ պիտի նշանակէր կտրել պորտը իր անցեալէն, ուր կրօնի զգացումն ու ազդեցութեան գաղափարը փոխադարձաբար իրար ամրապնդած եւ իրար հետ շաղահիւսուած են, յօրինելով մեր Հայու

38 Հոլանդիայում ցույցերին մասնակցած քահանային պաշտոնազրկել են, բայց չեն հիմնավորել, 18 օգոստոս, հարցազրույց Տեր-Արմեն քահանա Մելքոնյանի հետ, 2016, http://www.asparez.am/news-hy/holandia-cuyc-qahana_hy/

39 Հոլանդիայում ցույցերին մասնակցած քահանային պաշտոնազրկել են, բայց չեն հիմնավորել, 18 օգոստոս, հարցազրույց Տեր-Արմեն քահանա Մելքոնյանի հետ, 2016, http://www.asparez.am/news-hy/holandia-cuyc-qahana_hy/

40 Երուսաղեմի պատրիարքը հանդիմանական նամակ է հղել Գարեգին 2–րդին, օգոստոս 25, 2016, http://www.7or.am/am/news/view/112364/

դիմագիծը եւ ստեղծելով հրաշքը մեր դարերուն»[41]:

«Այս օրերուս, մեր Եկեղեցին կը գտնուի այնպիսի վիճակներու եւ երեւոյթներու դիմաց, որոնք լուրջ կասկածներու եւ տրտում հեռապատկերներու կը տանին մեր միտքը, երբ վայրկեանի մը համար միայն աչքի առաջ ունենանք մեր երբեմնի ազգային եւ կրօնական այն բոլոր առաքինութիւնները, որոնց շնորհիւ մեր ժողովուրդը երբեմն բան մը արժած եւ տակաւին կրնայ արժել: Քա՛ջ գիտցէք, որ ժողովուրդի մը ոյժին եւ մեծութեան գաղտնիք նիւթն ու նիւթականը չեն, որովհետեւ ժողովուրդներ չեն մեռներ իրենց ստացած ֆիզիքական վէրքերէն, այլ աւելի, հոգեկանէն: Մեզ ազգովին հարուածողը մեր դիմագրաւած աղէտներէն աւելի մեր ազգին ղեկավարներու անտարբերութիւնն ու եսակեդրոնացումն է, եւ այս մէկը բնական մահ մը կրնայ նկատուիլ ժողովուրդի մը համար: Ժամանակը եկած է, Վեհափառ, որ դուք պարտիք վերագտնել ձեր հոգեկան արժէքները, եթէ երբեւիցէ ունեցած էք, ապա թէ ոչ, դուք եւս ձեզ հռչակէք կարգազուրկ եւ մեր Մայր եկեղեցին փրկէք ամբողջական կործանումէ»[42]:

«Ինձ ցաւ պատճառեց այն, որ Գարեգին Բ Ներսիսյանը Ազգային ժողով ներկայացրեց մի ցուցակ՝ 400 կառույցներ («օբյեկտ» բառը օգտագործելով), որոնք հարկերից ու տուրքերից պետք է ազատվեն: Ես իբրեւ հոգեւորական համամիտ եմ, որ եկեղեցին պետք է տուրքերից որոշ տեղերում ազատվի, սակայն սա այն դեպքում, երբ խոսքն անմիջապես եկեղեցու ու հոգեւոր հարցերին է վերաբերում, մնացած դեպքում բարի եղեք բոլորին հավասար հարկեր եւ տուրքեր վճարեք՝ գործարան եք կառուցում, ագարակներ եք պահում, թե մեկ այլ բան: Այդ 400 կառույցի ցուցակի մեջ ինչեր են մտնում՝ գետեր, լճեր, մարզադաշտեր, շենքեր եւ այլն: Իսկ Ազգային ժողովի անբարոյական անդամները ընդունեցին այն՝ դա մեծ անբարոյականություն է, քանզի այդ տուրքերը գնում են երեխաներին, ուսուցիչներին, թոշակառուներին եւ մեր հանրային կյանքի բոլոր կարիքներին, եւ հետեւաբար Ազգային ժողովը Ամենայն հայոց կաթողիկոսի հետ մեկտեղ կողոպտում են մեր ժողովրդին: Ազգային ժողովն այդ նախաձեռնությունը հաստատելով՝ կանաչ լույս է տալիս որոշ անձանց՝ զբաղվելու բիզնեսով: Հոգեւորականը չի կարող զբաղվել բիզնեսով»[43]:

41 Երուսաղեմի պատրիարքը հանդիմանական նամակ է հղել Գարեգին 2-րդին, օգոստոս 25, 2016, http://www.7or.am/am/news/view/112364/

42 Երուսաղեմի պատրիարքը հանդիմանական նամակ է հղել Գարեգին 2-րդին, օգոստոս 25, 2016, http://www.7or.am/am/news/view/112364/

43 Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյան. «Գարեգին կաթողիկոսը, նստած աթոռին, իրեն Աստված է զգում», 05.05.2014, http://galatv.am/hy/news/7547546454/

«Ազգային եկեղեցական ժողովն ունի երեք կարեւոր հանգամանք՝ ընտրում է կաթողիկոսին, փոփոխություններ է մտցնում մեր կանոնադրության մեջ, եւ երրորդ՝ ընտրում է Գերագույն հոգեւոր խորհուրդ: Գարեգին Ներսիսյանը առաջին օրից, երբ եկավ բազմեց Լուսավորչի գահին, պատվեր արձակեց եւ իր համար ոչ հանդուրժելի եկեղեցական անդամներին հանեց եւ կազմեց նոր հոգեւոր խորհուրդ: Հետեւաբար այդ օրվանից էլ նոր կազմավորված այդ հոգեւոր խորհրդի ստորագրություններն ապօրինի են ու հետեւանքները տեսնում ենք առ այսօր: Մեսրոպ արքեպիսկոպոս Պոլսո պատրիարքի նամակը՝ հղված Գարեգին Երկրորդ կաթողիկոսին, ամբողջությամբ կետ առ կետ նշում է այդ տարիների ընթացքում նրա թույլ տված սխալները: Գործունեության սխալն այդտեղից է գալիս ու շարունակվում»[44]:

««Չեն գործում կանոնները, եկեղեցին վերածվել է, այսպես ասած, մի օբյեկտի, որը կառավարում են երկու եղբայրները եւ մեկ քրոջ որդին». եկեղեցուն այսպիսի բնութագրում էր տվել Գերմանիայում բնակվող Մայր աթոռ սուրբ Էջմիածնի կարգալույծ հոգեւորական Հովհաննես աբեղա Սահակյանը՝ Գարեգին Բ-ին ուղղված իր բաց նամակում: Արդյունքում եկեղեցին իր դերակատարությունը փոխել է՝ իշխանություններին ծառայող, ռեժիմին սպասարկող մի կառույց է դարձել, որն իրավունք չունի եկեղեցի կոչվելու: Սա արդեն վերջնակետն է: Հիմնական խնդիրը, որը մենք պետք է լուծենք, երկու ճանապարհ ունի. առաջինը, որը ես կնախընտրեի, հանդարտ ճանապարհն է՝ Գարեգին Բ-ի հրաժարականը, իսկ երկրորդը՝ գահընկեցությունը: Մեր ֆեյսբուքյան էջում նյութեր կան, որտեղ փաստարկներ են բերվում, որ Գարեգին Բ-ն ընտրված չէ, այլ Լուիս Սիմոն Մանուկյանի փողերով, ոճրագործության արյան գնով նա հասել է պաշտոնի՝ կաշառելով այն ժամանակվա իշխանություններին, եկել է Երեւան, կանգնել է եկեղեցու գլուխ եւ սկսել է քայքայել այն: Պետք է ասեմ, որ մարդիկ դժգոհ են այն վիճակից, որը տիրում է Սփյուռքում, որովհետեւ Սփյուռքը քանդվում է: Այն, որ Հայաստանում վերջին ցույցերի ժամանակ ամենավերջին այլանդակ խոսքերով նախշազարդում էին կաթողիկոսին, դա ժողովրդի, ազգի տրամադրությունն է»[45]:

Ինչպես տեսնում ենք, կարգալույծների մեծ մասի քննադատության հիմնական թեմաներն են կաթողիկոսի անձը, նրա մոտ հարազատնե-

44 Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյան. «Գարեգին կաթողիկոսը, նստած աթոռին, իրեն Աստված է զգում», 05.05.2014, http://galatv.am/hy/news/7547546454/

45 Տեր-Սահակ. Գարեգին Բ-ն կամ պետք է հրաժարական տա, կամ գահընկեց արվի, 08.09.2016 http://newsline.am/am/news/view/40745.html

րի կողմից եկեղեցու «բռնազավթումը», որոշումների ընդունման ու ֆինանսական միջոցների վերահսկման ոչ թափանցիկ լինելը եւ կաթողիկոսի ու բարձրաստիճան այլ հոգեւորականների կոռուպցիայի թեմաները:

Մյուս հիմնական թեման, որ հաճախ կարելի է գտնել ելույթներում, դա եկեղեցու ոչ արդյունավետ պայքարն է «աղանդների» դեմ. «Մարտահրավերները շատ են, սակայն դրանցից առաջինը ես համարում եմ որակյալ եւ ուսյալ, սրբակենցաղ ու աստվածահավատ եկեղեցականների պատրաստությունը, որից էլ կախված է եկեղեցու առաքելության հաջողությունը: Իսկ երկրորդ մարտահրավերը աղանդավորական, հեթանոսական շարժումներին, ինչպես նաեւ անաստվածությանը դիմակայելն է ուղղափառ վարդապետությամբ, առաքինի կյանքով եւ անձանձրույթ ավետարանչությամբ»[46]:

Հանուն արդարության պետք է նշենք, որ եկեղեցու բարեփոխումների մասին հոդվածներ եւ վերլուծություններ, այնուամենայնիվ, հրապարակվում են: Նման ծավալուն վերլուծություններով, ի մասնավորի, հանդես են գալիս կարգալույծ հռչակված միաբանները:

«Սա նախ եւ առաջ պահանջում է մտածելակերպի լուրջ փոփոխություն: Ես որքան հասկացա, մեր եկեղեցին դեռ պատրաստ չէ բարեփոխումների, հակառակ որ դա անխուսափելիորեն անհրաժեշտ է մեզ: Ես ավելի շատ սիրում եմ գործածել «բարեկարգում» բառը, քանի որ ոչ թե ցանկություն կա փոփոխելու եղածը, այլ՝ վերականգնելու կորցրածը: Սակայն ցանկությունը շատ քիչ է, եթե չլինեն համապատասխան կադրեր: Բացի դրանից, մեզ մոտ, ցավոք սրտի, գործում է բուրգի օրենքը, հետեւաբար ամեն ինչ թողնված է մեկի տրամադրությանը: Քրիստոնեական մյուս եկեղեցիներում այդպես չէ: Այնտեղ եկեղեցու հետ կապված բոլոր հարցերը լուծում է Եպիսկոպոսաց ժողովը, որն օժտված է լիարժեք իրավասություններով՝ ներկայացնելու Եկեղեցու ամբողջական դեմքը: Այդ ամենը, անշուշտ, կատարվում է՝ հավատարիմ մնալով ուղղափառ դավանանքին եւ Սուրբ Հայրերի ուսուցումներին ու կանոնական որոշումներին: …Առաջին հերթին ծեսի լեզվի՝ գրաբարի մատչելիությունն է: Սա նշանակում է, որ եկեղեցական յուրաքանչյուր արարողության ժամանակ հավատացյալը կամ նորադարձ հայորդին պետք է հասկանա աստվածապաշտության աղոթքները, շարականները, զգա դրանց հոգեպարար զորությունը, հպվի երկնային շնորհներին: Բայց ինչպե՞ս դա կարող է տեղի ունե-

46 Մեր եկեղեցում, ցավոք սրտի, գործում է բուրգի օրենքը, հարցազրույց Հայր Եղիա Խաչատրյանի հետ, 28 դեկտեմբերի 2013, http://www.lragir.am/index/arm/0/interview/view/93150

նալ, եթե նա չի հասկանում Սուրբ Պատարագի եւ ժամերգությունների լեզուն: Ես կողմ չեմ գրաբարը փոխելուն: Աշխարհաբար լեզուն չունի այն աստվածեղեն խորհրդավորությունն ու հմայքը, ինչ որ ունի մեր Հայրերի լեզուն՝ գրաբարը: Սակայն կարելի է յուրաքանչյուր ծեսի տեքստը առանձին-առանձին հրատարակել փոքրիկ գրքույկների տեսքով՝ մի էջին դնելով գրաբար բնագիրը, իսկ զուգադիր էջին՝դրա աշխարհաբար փոխադրությունը: Կամաց-կամաց վարժվելով տեքստերի բովանդակությանը, գրաբարն այդուհետ մեզ համար կդառնա հասկանալի եւ սիրելի: Երկրորդ կարեւոր բարեփոխումը ծեսի միօրինակությունն է, ծիսական գրքերի նույնականացումը: Երբեմն տարբեր հրատարակությունների ծիսամատյաններն ունենում են բովանդակային տարբերություններ, ինչն էլ բերում է ծեսի բազմազանության: Հայ եկեղեցին պետք է չբավարարվի միայն ծիսակատարությամբ, այլ անհագորեն սերտի եւ տարածի Աստծո Խոսքը: Դե իհարկե, այս ամենի կողքին հրատապ հրամայական է կյանքի կոչել վանական ավանդույթը՝ իր ուրույն առաքելությամբ»[47]:

Հայր Եղիան հանդես է եկել նաեւ հոդվածաշարով, որը նվիրված է Եկեղեցու ճեմարանի խնդիրներին ու կրթության հարցերին[48]:

Կարգալույծ հռչակված՝ Ժնեւ քաղաքի Սուրբ Հակոբ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր-Աբել քահանա Մանուկյանը «Հայ եկեղեցին ժամանակի մարտահրաւերներուն դիմաց» գիրքը նույնպես եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերին ու բարեփոխումների խնդիրներին է նվիրված[49]:

Էջմիածնի նախկին միաբան աստվածաբան Գեւորգ Ղազարյանը նույնպես հաճախ է հանդես գալիս լուրջ վերլուծություններով[50]:

Եկեղեցու բարեփոխումներին նվիրված ծավալուն հոդվածաշարերով է հանդես գալիս նաեւ Լոս Անջելեսի Մխիթարյան վարժարանի նախկին տնօրեն Ոսկան Մխիթարյանը, որը կարգալույծ եղած հոգեւորական չի, ոչ էլ Էջմիածնի միաբան է եղել, սակայն այդ հոդվածա-

47 Մեր եկեղեցում, ցավոք սրտի, գործում է բուրգի օրենքը, հարցազրույց Հայր Եղիա Խաչատրյանի հետ, 28 դեկտեմբերի 2013, http://www.lragir.am/index/arm/0/interview/view/93150

48 Հոգեւոր ճեմարանի առաքելությունը, 26 օգոստոսի, 2015, http://hetq.am/arm/news/62262/hogevor-tchemarani-araqelutyuny.html

49 Հայ եկեղեցին ժամանակի մարտահրաւերներուն դիմաց, Դոկտ. Աբէլ քինյ. Մանուկեան, Պէյրութ, 2006, http://new.religions.am/hy/document/religious/hay-ekeghets-in-zhamanaki-martahrawernerown-dimats

50 Ազգ եւ եկեղեցի. աստվածաբանական-պատմական մոտեցում, Գեւորգ Ղազարյան, http://www.religions.am/arm/articles/Ազգ-եւ-եկեղեցի-աստվածաբանական-պատմական-մոտեցում/

շարը լրջորեն վերլուծում է Եկեղեցու բարեփոխման խնդիրը տարբեր ասպեկտներում[51]: Մի քանի հոդվածների հղումները բերված են տողատակում:

Օրենսդրության փոխակերպումները եկեղեցու դիսկուրսին համապատասխան

Վերը մենք ցույց տվեցինք, թե որոնք են կղերականների պատկերացումները պետության եւ հասարակության կյանքում եկեղեցու դերի մասին: Այժմ ցույց կտանք այդ պատկերացումներին համապատասխան օրենսդրության փոխակերպումները: Այստեղ պետք է հաշվի առնել, որ Հայաստանը միացել է միջազգային բազմաթիվ կոնվենցիաներին, նաեւ Հայաստանը ստանձնել է միջազգային շատ պարտավորություններ եւ չի կարող կատարել օրենսդրական փոփոխություններ, որոնք ակնհայտ կերպով կխախտեն այդ պարտավորությունները, սակայն փորձեր են արվում որոշակի երկիմաստ ձեւակերպումների միջոցով շրջանցել այդ պարտավորությունները:

2005թ. Սահմանադրության մեջ ասվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում: Ուշագրավն այն է, որ այս ձեւակերպումը գրեթե նույնությամբ կրկնվում է Վրաստանի սահմանադրության մեջ, սակայն մեկ էական տարբերությամբ. Վրաստանի դեպքում շեշտվում է Վրաց եկեղեցու բացառիկ դերակատարությունը Վրաստանի պետության մեջ, մեր դեպքում՝ հայ ժողովրդի կյանքում եւ «ինքնության պահպանման գործում»: Այսինքն՝ առկա են երկու հայեցակարգային տարբերություններ՝ մեկի դեպքում եկեղեցին պետականաստեղծ կառույց է դիտարկվում, մյուսում՝ ազգային կամ, ավելի հստակ ձեւակերպման դեպքում, էթնիկ ինքնության վերարտադրության գործոն: Վրացական իրականության մեջ եկեղեցու միջոցով ասիմիլյացվում են մյուս ժողովուրդները, իսկ մեր դեպքում՝ առանձնանում ենք մյուս ժողովուրդներից:

2015-ին ուժի մեջ մտած նոր Սահմանադրության 17-րդ հոդվածում նշվում է, որ երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների

51 Հայց. Եկեղեցւոյ բարեկարգութեան հրատապ հարցը, Ոսկան Մխիթարյան, http://www.religions.am/arm/articles/Հայց_-Եկեղեցւոյ-բարեկարգութեան-հրատապ-հարցը-i/, Հայց. Եկեղեցին պատանդ է, Ոսկան Մխիթարյան, http://www.religions.am/arm/articles/Հայց-Եկեղեցին-պատանդ-է/

ազատությունը, ինչպես նաեւ ասվում է, որ կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից: Հայաստանի՝ աշխարհիկ պետություն լինելու մասին որեւէ հիշատակում չկա: Հաջորդող՝ 18-րդ հոդվածով ՀՀ-ը ճանաչում է Հայ առաքելական եկեղեցու բացառիկ առաքելությունը.

«Հոդված 17. Պետությունը եւ կրոնական կազմակերպությունները

1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:
2. Հայաստանի Հանրապետությունում կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից:
Հոդված 18. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին
1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում:
2. Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել հատուկ համաձայնագրով»:

17-րդ հոդվածում, ի տարբերություն նախորդ Սահմանադրության համապատասխան հոդվածի, «Պետությունը անջատ է եկեղեցուց» ձեւակերպումը փոխարինված է «կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից» դրույթով: Հիմքեր կան ենթադրելու, որ փորձ է արվում օրենսդրորեն տարանջատել «կրոնական կազմակերպություն» իրավական կարգավիճակը Հայ եկեղեցու իրավական կարգավիճակից եւ, կարծես թե, պատահական չէ, որ Սահմանադրության նախագծում Հայ եկեղեցուն առանձին հոդված է նվիրված (Հոդված 18), որտեղ խոսվում է Հայ առաքելական եկեղեցու «բացառիկ» դերակատարության մասին: Այսինքն՝ փորձ է արվում տարանջատել «կրոնական կազմակերպություն» եւ «Հայաստանյայց առաքելական եկեղեցի» հասկացությունները, դրանք, ըստ էության, դառնում են տարբեր իրավական կատեգորիաներ: Փաստորեն Սահմանադրության մեջ կան նախադրյալներ, որոնք վկայում են, որ օրենսդրական հետագա փոփոխությունների օգնությամբ Հայաստանը կարող է վերածվել ոչ աշխարհիկ երկրի: Մի շարք օրենքների ուսումնասիրությունն այն տպավորությունն են ստեղծում, որ դրանք նախապես «պատրաստել» են նման օրենսդրական զարգացման համար:

ՀՀ բազմաթիվ օրենսդրական ակտեր պարունակում են դրույթ, համաձայն որի՝ որոշակի ոլորտում աշխատող պաշտոնատար անձը իրավունք չունի անդամակցել որեւէ կրոնական կազմակերպության: Այդպիսի դրույթներ կան Զինվորական ծառայություն անցնելու մասին օրենքում (հոդված 1, մաս 3, կետ 3), Ոստիկանությունում ծառայության մասին օրենքում (հոդված 39, մաս 7), ՀՀ ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին օրենքում (հոդված 43, մաս 1, կետ 8), Քրեակատարողական ծառայության մասին օրենքում (հոդված 32, մաս 7, կետ 1), Հայաստանի փրկարար ծառայության մասին օրենքում (հոդված 39, մաս 1-ին, կետ է), Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին օրենքում (հոդված 30, մաս 1-ին, կետ 7), եւ այլն: Ընդ որում, բոլոր դրույթները միանման են, այսինքն՝ անհատականացված չեն տվյալ օրենքի առարկայի ու նպատակի համար:

Նշված դրույթներն ընդհանրացված ու բացարձակ կերպով սահմանափակում են մտքի, խղճի ու կրոնական ազատության, կրոնական համոզմունքների ազատության իրավունքը աշխատանքային հարաբերություններում, որը կարող է գտնվել եւ՛ քաղաքացիաիրավական, եւ՛ հանրային հարաբերությունների հարթությունում: Պարզելու համար, թե արդյոք սահմանափակումը իրավաչափ է, վերլուծենք այդ իրավունքի բովանդակություն, ինչպես նաեւ իրավունքի թույլատրելի սահմանափակման հիմքերը եւ նպատակները մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերի համաձայն: Այս խնդրով ավելի մանրամասն վերլուծությունը կարելի է գտնել տվյալ փաստաթղթում[52]:

Հայտնի է, որ Հայ առաքելական սուրբ եկեղեցու սպասավորները հոգեւոր ծառայություն են իրականացնում ՀՀ զինված ուժերի համակարգում: Ըստ հրապարակված պաշտոնական տվյալների, միայն 2016 թվականին շուրջ 70 միաբաններ հոգեւոր ծառայություն են իրականացնում զորամասերում՝ մինչեւ 5 տարի ժամկետով: Ակնհայտ է, որ նրանք զորամասերում իրականացնում են այլընտրանքային ծառայություն՝ նրանց ծառայությունը կապված չէ մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու եւ օգտագործելու հետ: Այդուհանդերձ՝ նրանց հավաքագրումը չի կատարվում Այլընտրանքային ծառայության մասին օրենքով սահմանված կարգով: Ծա-

52 Արա Ղազարյան, Ստեփան Դանիելյան, ՀՀ մի շարք օրենքներում կրոնական հիմքով խտրական ձեւակերպումների վերանայման անհրաժեշտության մասին (Կարծիք), http://www.religions.am/arm/articles/ՀՀ-մի-շարք-օրենքներում-կրոնական-հիմքով-խտրական-ձեւակերպումների-վերանայման-անհրաժեշտության-մասին- Կարծիք/

ռայությունն իրականացվում է՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. ամենայն հայոց կաթողիկոսի հրամանով, որն օրենքի կարգավորումից դուրս է: Մյուս կողմից ակնհայտ է, որ նրանց ծառայությունն այլընտրանքային քաղաքացիական ծառայություն չէ, քանի որ ծառայությունն իրականացվում է զորամասերում: Հետեւաբար, հարց է ծագում, թե որ օրենքով են այդ անձինք իրականացնում հոգեւոր, այլընտրանքային ծառայություն ՀՀ զինված ուժերում: Եթե որպես կարգավորող իրավանորմ փորձենք հիմնվել «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի վրա (որը վերնագրված է «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու բարեխնամ գործունեությունը» եւ սահմանում է, որ ՀԱՍԵ-ն իրավունք ունի ունենալու մշտական հոգեւոր ներկայացուցիչ զորամասերում), ապա դա կհակասի այդ օրենքի առարկային ու նպատակին, քանի որ նշված օրենքը վերաբերում է ՀԱՍԵ-ի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ հարաբերություններին, այլ ոչ թե այլընտրանքաին զինվորական կամ քաղաքացիական ծառայությանը: Բացի դրանից, 10-րդ հոդվածում խոսվում է զինված ուժերում ՀԱՍԵ-ի ներկայացուցիչ ունենալու, այլ ոչ թե զինվորական ծառայություն իրականացնելու մասին: Հետեւաբար, 10-րդ հոդվածը չի կարող հանդես գալ հոգեւոր ծառայությունը որպես այլընտրանքային զինվորական ծառայության տարատեսակ սահմանված լինելու իրավական հիմք: Նմանապես, հնարավոր չէ պնդել, որ հոգեւոր ծառայությունը որպես այլընտրանքային զինվորական ծառայության տարատեսակ սահմանված է Այլընտրանքային ծառայության մասին օրենքի համաձայն, քանի որ այդ օրենքում նման բան ուղղակիորեն սահմանված չէ:

Վերը նշվածից կարելի է եզրահանգել, որ ՀԱՍԵ-ի սպասավորների հոգեւոր ծառայությունը զինված ուժերում օրենքով չնախատեսված գործունեություն է, այսինքն՝ անօրինական է[53]:

Նույնպիսի երկիմաստ ձեւակերպումներ կան կրթության մասին օրենքում: Հայաստանի Հանրապետության հանրակրթության մասին օրենքի գլուխ 1-ի հոդված 4-ի 3-րդ կետում ասվում է. «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական եւ աշխարհիկ բնույթը», սակայն նույն հոդվածի 8-րդ կետում ասվում է. «Կրոնական գործունեությունը եւ քարոզչությունն ուսումնական

53 Այս մասին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ՀՀ մի շարք օրենքներում կրոնական հիմքով խտրական ձեւակերպումների վերանայման անհրաժեշտության մասին» հոդվածում, հեղինակներ՝ Արա Ղազարյան, Ստեփան Դանիելյան, http://www.religions.am/arm/articles/ՀՀ-մի-շարք-օրենքներում-կրոնական-հիմքով-խտրական-ձեւակերպումների-վերանայման-անհրաժեշտության-մասին- Կարծիք/

հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: Ակնհայտ է, որ հանրակրթությունը կամ ունի աշխարհիկ բնույթ, կամ չունի եւ դասերի ժամանակ կրոնական քարոզը կամ արգելվում է, կամ չի արգելվում: Փաստորեն «…բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» շարադրանքը հիմք է պատրաստում հետագայում մեկ այլ օրենքով՝ հավանաբար կրոնական կազմակերպությունների մասին նոր օրենքով (ինչն արդեն շուրջ 10 տարի Վենետիկի հանձնաժողովի քննադատությունների պատճառով չի հաջողվում անցկացնել, չնայած նրան, որ արդեն երեք նախագծեր են շրջանառության մեջ դրվել), օրինականացնելու համար եկեղեցականների մուտքը հանրակրթական դպրոցներ եւ այնտեղ կրոնական քարոզների իրականացումը:

Վերջաբան

Մեր նպատակն էր ցույց տալ, որ արագորեն ընթանում է եկեղեցու եւ պետության սերտաճման գործընթացը, սակայն չի կարելի պնդել, որ եկեղեցու դերի մեծացմանը զուգահեռ մեծանում է նաեւ եկեղեցու հեղինակությունը: Ճիշտ հակառակը՝ հանության գիտակցության մեջ խորանում է այն տեսակետը, որ եկեղեցին նույնպես կոռումպացված այնպիսի մի կառույց է, ինչպիսին Հայաստանի իշխանությունն է: Այդ տեսակետի հաստատմանը նպաստում են կարգալույծ եղած միաբանների բաց նամակներն ու հարցազրույցները, որոնք հաճախ են հայտնվում ԶԼՄ-ներում՝ ձեւավորելով եկեղեցու հանդեպ բացասական հանրային կարծիք: Սակայն չի կարելի պնդել, որ կարգալուծության դեպքերի հիմնական պատճառն ունի գաղափարական հիմքեր եւ եկեղեցու ներսում առկա է բարեփոխումների շարժում:

Հոդվածում վերլուծված են խղճի ազատության իրավունքի վերաբերյալ Հայաստանյայց առաքելական եկեղեցու ներկայացուցիչների եւ ՀՀ պետպաշտոնյաների հրապարակային ելույթները: Միաժամանակ լուսաբանվում են այդ հայտարարություններին համահունչ կերպով կատարվող օրենսդրական դաշտի փոխակերպումները, ինչպես նաեւ ներկայացվում են կարգալույծ հռչակված միաբանների հրապարակային հայտարարություններից ու ելույթներից դրվագներ՝ հասկանալու համար, թե արդյո՞ք եկեղեցում կան այլընտրանքային կարծիքներ եկեղեցու բարեփոխումների եւ արդիականացման հարցերի վերաբերյալ:

СТЕПАН ДАНИЕЛЯН

Общественный дискурс Армянской апостольской церкви

Наша цель была показать, что процесс сращивания Церкви и Государства происходит в ускоренном темпе. Однако при этом нельзя утверждать, что параллельно с ростом роли церкви, растет также и ее авторитет. Наоборот, в сознании общества углубляется мнение, что церковь такая же коррумпированная структура, как и власть. В статье проанализированы публичные выступления представителей Армянской Апостольской церкви и государственных должностных лиц РА о праве свободы совести. Одновременно освещены трансформации, происходящие в законодательном поле в соответствии этими заявлениями, как и для понимания существуют ли в церкви альтернативные мнения в вопросах реформ и модернизации церкви, представлены фрагменты из выступлений духовных лиц, лишенных духовного сана.

STEPAN DANIELYAN

Public Discourse around the Armenian Apostolic Church

The purpose of this study is to show that the process of coalescence of Church and State is happening at an accelerated pace. However, we cannot argue that the church's credibility increases in correlation with the growth of its role. On the contrary, the view that the church is as corrupt as the authorities deepens in the social consciousness. The author analyzes public statements by the representatives of the Armenian Apostolic Church and the Armenian government officials about the right of freedom of conscience. At the same time, the article covers transformations taking place in the legislative field in line with these statements, as well as some fragments of public statements and speeches by clerics defrocked to understand whether there are alternative views within the church about reform and modernization issues.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎՐԱ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐԱՏ ԱՏՈՎՄՅԱՆ
Իրավաբանների հայկական ասոցիացիայի խորհրդի անդամ, Շվեյցարիայի շրջանավարտների ասոցիացիայի խորհրդի անդամ

Նախաբան

Անկախության հռչակումից ի վեր Հայաստանի երրորդ Հանրապետությունը գտնվում է ժողովրդավարական, իրավական եւ սոցիալական պետություն կառուցելու ճանապարհին: Մեզանում դեռեւս ընթանում են պետական եւ տեղական ինքնակառավարման, դատաիրավական համակարգերի բարեփոխումներ, ձեւավորվում է ազգային օրենսդրությունը՝ հիմք ընդունելով միջազգային իրավական հանրաճանաչ սկզբունքները, իսկ սահմանադրական բարեփոխումները, կարծես, արդեն ավանդույթ են դարձել:

Աստիճանաբար ձեռք ենք բերում մարդուն, նրա իրավունքները եւ արժանապատվությունը հարգելու, նրանց օրինական կարգով պաշտպանելու ավանդույթներ, որոնք նախկինում չենք ունեցել: Սակայն այդ ամենը տակավին սաղմային վիճակում են, քանի որ մարդու իրավունքների լիարժեք ապահովմանը, տնտեսական զարգացմանը, իրավունքի գերակայությանը հնարավոր է հասնել միայն արդյունավետ գործող մեխանիզմներ ստեղծելով: Անհրաժեշտ է անվերապահորեն կյանքի կոչել օրենքի եւ դատարանի առջեւ բոլորի հավասարության, պատժի անխուսափելիության սկզբունքները, ձեւավորել անկախ դատական իշխանություն, իրական բարեփոխումների եւ կոռուպցիայի դեմ հետեւողական պայքարի միջոցով բարձրացնել պետական իշխանության եւ նրա վարած քաղաքականության հանդեպ ազգաբնակչության վստահությունը եւ այլն:

Առանձնահատուկ կարեւորություն են ներկայացնում նաեւ հասարակության իրավական մշակույթի բարձրացումը, իրավական ժխտողականության վերացումը, իրենց իրավունքների եւ պարտականութ-

յունների մասին մարդկանց իրազեկության ապահովումը, քանզի սեփական իրավունքների եւ ազատությունների վերաբերյալ անտեղյակությունը պարարտ հող է պետական մարմինների, դրանց պաշտոնյաների կողմից մարդու իրավունքների խախտման եւ կոռուպցիոն բնույթի երեւույթների տարածվածության համար:

Բազմաթիվ անելիքներ կան այս ճանապարհին, եւ այն պետք է անցնել միասնաբար՝ համախմբելով պետության եւ հասարակության ողջ ջանքերը, քանզի Հայաստանը բոլորիս երկիրն է, եւ մենք ու միայն մենք պետք է կառուցենք ու շենացնենք այն: Միջազգային հանրությունը կարող է միայն աջակցություն ցուցաբերել ամուր ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կառուցմանը, սակայն չի կարող տվյալ երկրի քաղաքացիների փոխարեն դա անել: Այս ճանապարհին իշխանությունն ու քաղաքացիական հասարակությունը պետք է հանդես գան որպես հավասար գործընկերներ, սերտորեն համագործակցեն միմյանց հետ, քանզի առանց քաղաքացիական հասարակության աջակցության իշխանությանը հազիվ թե հաջողվի բարեփոխումներ իրականացնել, իսկ իշխանության քաղաքական կամքի բացակայության պարագայում քաղաքացիական հասարակության համար գրեթե անհնարին կլինի հասնել իր առջեւ ծառացած արմատական խնդիրների լուծմանը:

Սույն հոդվածի շրջանակներում արծարծվում են քաղաքացիական հասարակության էության, Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման եւ պետության հետ վերջինիս համագործակցությանն առնչվող հարցերը:

Քաղաքացիական հասարակության էությունը

Վերջին տարիներին մեզանում, կարծես, բավական նորաձեւ է դարձել խոսել քաղաքացիական հասարակության եւ նրա հետ համագործակցության դերի ու նշանակության մասին: Սակայն, մեր կարծիքով, անհրաժեշտ է հստակ պատկերացնել քաղաքացիական հասարակության էությունը, պետություն-քաղաքացիական հասարակություն համագործակցության դրսեւորումներն ու յուրահատկությունները, ինչպես նաեւ մեր իրականության մեջ քաղաքացիական հասարակության կայացմանը խոչընդոտող հանգամանքները:

Առկա են քաղաքացիական հասարակության տարատեսակ սահմանումներ, որոնք ընդհանրացնելով, քաղաքացիական հասարակությունը կարելի է բնորոշել որպես ազատ քաղաքացիների եւ կամավոր կերպով ստեղծված ոչ առեւտրային կազմակերպությունների

ինքնադրսեւորման միջավայր, որոնք պաշտպանված են պետական իշխանության, բիզնեսի, ինչպես նաեւ այլ արտաքին գործոնների ուղղակի միջամտությունից ու կամայական կանոնակարգումից:

Պետական իշխանությունը սահմանափակելու՝ ազատականների ձգտման մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում պետական ապարատը ոչ պետական ոլորտից սահմանազատելու՝ նրանց փորձը: Կարելի է առանձնացնել պետական եւ ոչ պետական ոլորտների տեսական սահմանազատման հինգ մոդելներ եւ, հետեւաբար, պետության օրինական գործունեության սահմանների ուրվագծման հինգ տեսակներ:

Առաջին տարբերակում (որը ներկայացված է Բոդենի, Գոբբսի, Սպինոզայի եւ այլոց աշխատություններում) պետությունը դիտարկվում է որպես բնական իրավիճակի լիակատար ժխտում: Այս մինչպետական իրավիճակը երբեմն ցուցադրվում է իբրեւ համեմատաբար խաղաղ, սակայն առավել հաճախ՝ ծայրահեղ անկայուն եւ հակահասարակական, այսինքն՝ չդադարող պատերազմի իրավիճակ: Պետությունը ձեռք է բերում իր լեգիտիմությունը կամ մանդատը, որպեսզի կոտրի պատերազմի այս բնական իրավիճակը՝ շնորհիվ վախի մթնոլորտում ապրող ազգաբնակչության հետ պայմանագրի կնքման: Արդյունքում ի հայտ եկող քաղաքացիական հասարակությունը դիտվում է որպես պետությանը եւ նրա օրենքներին համահավասար գործոն:

Երկրորդ տարբերակի համաձայն (Պուֆենդորֆ, Լոք, Կանտ, Ադամ Ֆերգյուսոն եւ այլք), հասարակությունը կրում է բնական բնույթ: Պետությունը պետք է նրան պաշտպանի ու ղեկավարի, սակայն պետության դերը բնական վիճակի փոփոխումը չէ: Պետությունը զենք է, որի օգնությամբ հասարակությունն իրականացնում կամ կատարելագործում է իր ազատությունն ու հավասարությունը: Կանտի խոսքով՝ բնական իրավիճակի պայմաններում հասարակությունը կարող է գոյություն ունենալ, սակայն ոչ քաղաքացիական հասարակությունը, այսինքն՝ ոչ քաղաքական միավորումը, որն ապահովում եւ երաշխավորում է սեփականության իրավունքը հանրային օրենքների շնորհիվ:

Երրորդ տարբերակը, որում Պուֆենդորֆի-Լոքի մոդելը հասնում է իր արտահայտման գրեթե բարձրակետին, առավել վառ ներկայացված է Բյորկի «Մտորումներ Ֆրանսիայի հեղափոխության մասին» պամֆլետին տրված՝ Թոմաս Պեյնի պատասխանում: Այստեղ առաջին անգամ առանցքային է դառնում «քաղաքացիական հասարակությունն ընդդեմ պետության» թեման: Պետությունն ընկալվում է որպես անխուսափելի չարիք, իսկ բնական հասարակությունը՝ անվերապահ բարիք: Պետությունը ոչ այլ ինչ է, քան հասարակական իշխանություն, որը պատվիրակված է հանուն հասարակության ընդհանուր շահի:

Պեյնի տեսանկյունից մարդկանց բնորոշ է բնական ձգտումը՝ ապրել մի հասարակությունում, որը գոյություն է ունեցել մինչեւ պետության առաջացումը եւ որում, շնորհիվ շահերի եւ համերաշխության փոխկապակցության, ապահովվում են համընդհանուր անվտանգությունն ու խաղաղությունը: Այսպիսով՝ որքան ավելի կատարյալ է քաղաքացիական հասարակությունը, այնքան առավել չափով է այն ինքնուրույն կառավարում սեփական գործերը եւ այնքան ավելի քիչ հնարավորություններ է թողնում կառավարությանը:

Չորրորդ տարբերակի համաձայն (Հեգել), պետության դերն է՝ պաշտպանել քաղաքացիական հասարակությունը, ավելի բարձր կանգնելով նրա նկատմամբ եւ ուրվագծելով նրա սահմանները: Քաղաքացիական հասարակությունում նկատվում է ազատության ոչ բնական իրավիճակ, սակայն՝ պատմականորեն ձեւավորվող բարոյական կյանքի դասավորվածություն, որն ընդգրկում է տնտեսությունը, ճնշման հասարակական խմբերն ու ինստիտուտները, որոնք պատասխանատու են քաղաքացիական իրավունքի եւ «սոցիալական ապահովության» իրականացման համար: Պետությունը ոչ հասարակության լիարժեք ժխտում է, որը գտնվում է չդադարող պատերազմական իրավիճակում (Գոբբս, Սպինոզա), ոչ էլ նրա կատարելագործման գործիք (Պուֆենդորֆ, Լոք): Որպես նոր իրողություն՝ այն գծում է քաղաքացիական հասարակության սահմանները եւ պաշտպանում է նրա անվտանգությունը՝ «ձեւական համընդհանրությունից» «օրգանական իրողության» փոխակերպման նպատակով: Քաղաքացիական հասարակությունը ինստիտուցիոնալ առումով մեկուսի, ինքնիշխան պետության կարիք ունի եւ, միաժամանակ, նրա համար պայմաններ է ստեղծում, իսկ պետությունը քաղաքացիական հասարակության մասերը միավորում է ինքնորոշվող միասնության մեջ՝ այդպիսով բարոյական կյանքը հասցնելով մինչեւ համընդգրկուն, բարձրագույն միավորի: Միայն ճանաչելով քաղաքացիական հասարակությունը եւ պահպանելով նրա ստորադաս դիրքը, պետությունը կարող է պահպանել նրա ազատությունը:

Հինգերորդ մոդելի շրջանակում մտավախություն է հայտնվում, որ պետական միջամտության նոր ձեւերը ճնշում են քաղաքացիական հասարակությունը: Ընդգծվում է քաղաքացիական հասարակության պաշտպանության եւ նորացման կարեւորությունը, որը հասկացվում է իբրեւ պետությունից անմիջական կախվածություն չունեցող ինքնակազմակերպվող, օրենքով երաշխավորված ոլորտ: Այս տեսակետը վառ արտացոլված է Ջոն Ստյուարտ Միլի աշխատություններում եւ պարզորոշ նկարագրված է Տոկվիլի՝ նոր, մոդեռնի ժամանակաշրջա-

նին բնորոշ՝ համաժողովրդական կերպով ընտրվող բռնապետության մասին դիտարկումներում: Մոդեռնի գլխավոր քաղաքական խնդիրն այստեղ այն է, թե ինչպես պահպանել ժողովրդավարական շարժումը դեպի հավասարություն՝ արգելապատնեշ դնելով պետական իշխանության չարաշահումների, պետության կողմից քաղաքացիական հասարակության չեզոքացման եւ քաղաքացիներին ազատությունից զրկելու ճանապարհին[1]:

«Քաղաքացիական հասարակություն» բառեզրը գործածության մեջ մտավ 18-րդ դարից սկսած: Մինչ այդ, գիտական միտքը դրանից չէր օգտվում, քանի որ պետությունը եւ հասարակությունը դիտարկվում էին որպես մեկ ամբողջություն: Ավելի ուշ շրջաններում եւս հասարակության եւ պետության միջեւ սկզբունքային տարբերակում չէր դրվում: Դա այդքան էլ հեշտ չէր, որովհետեւ պետությունը նույնպես հասարակության կազմակերպման մի տեսակ է: Ժամանակ պահանջվեց, որպեսզի տեսականորեն ընկալվեն դրանց զատող սահմանները եւ համոզվեն, որ մեկը մյուսի մասն է կազմում: Քաղաքացիական հասարակության տակ սկսեցին հասկանալ հարաբերությունների հատուկ ոլորտ՝ գլխավորապես գույքային, շուկայական, ընտանեկան, բարոյական, որը պետք է պետությունից որոշակի չափով անկախ լինի: Այսպիսով՝ քաղաքացիական հասարակության հարցը պատմականորեն սկսեց դիտարկվել որպես մարդկային կեցության առավել մտածված ու նպատակահարմար կարգ: Ըստ որում, առաջարկվող բոլոր մոդելներում եւ հայեցակարգերում հստակ գերիշխում էր մի գլխավոր գաղափար՝ պետության հրաժարումը միակ «կազմակերպչի եւ համակարգողի» դերին հավակնելուց, բոլոր սոցիալական կապերն իր ձեռքում կենտրոնացնելուց:

Կարելի է նշել ցանկացած քաղաքացիական հասարակության հիմքում, անկախ այս կամ այն երկրի առանձնահատկություններից, ընկած մի շարք առավել ընդհանուր գաղափարներ եւ սկզբունքներ.

1. տնտեսական ազատություն, սեփականության ձեւերի բազմազանություն, շուկայական հարաբերություններ,
2. մարդու եւ քաղաքացու բնական իրավունքների անվերապահ ճանաչում եւ պաշտպանություն,
3. իշխանության լեգետիմություն (օրինականություն) եւ ժողովրդավարական բնույթ,
4. օրենքի եւ արդարադատության առջեւ բոլորի հավասարութ-

1 Ժողովրդավարության, պետության եւ քաղաքացիական հասարակության մասին առավել մանրամասն տես՝ Джон Кин, Демократия и гражданское общество /Пер. с англ.; Послесл. М.А. Абрамова. М.: 2001.

յուն, անձի պատշաճ իրավական պաշտպանվածություն,

5. իշխանությունների տարանջատման եւ փոխգործակցության սկզբունքի վրա հիմնված իրավական պետություն,

6. քաղաքական եւ գաղափարական բազմակարծություն, օրինական ընդդիմության առկայություն,

7. խոսքի եւ մամուլի ազատություն, զանգվածային լրատվության միջոցների անկախություն,

8. պետության չմիջամտություն քաղաքացիների անձնական կյանքի, նրանց փոխադարձ պարտականությունների եւ պատասխանատվության ոլորտ,

9. դասակարգային խաղաղություն, գործընկերություն եւ հասարակական համաձայնություն,

10. մարդկանց արժանապատիվ կենսամակարդակն ապահովող արդյունավետ սոցիալական քաղաքականություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ քաղաքացիական հասարակությունը կարելի է հակիրճ բնութագրել որպես պետական եւ քաղաքական հարաբերություններից դուրս (տնտեսական, սոցիալական, մշակութային, բարոյական, հոգեւոր, ընտանեկան, կրոնական) հարաբերությունների համակցություն, որոնք ձեւավորում են ազատ անհատ-սեփականատերերի եւ նրանց միավորումների բնորոշ շահերի յուրահատուկ ոլորտ[2]:

Քաղաքացիական հասարակության գործառույթներն են.

- մարդկանց կյանքի մասնավոր ոլորտի պաշտպանությունը,
- բացարձակ գերիշխանությունից իշխանության զսպումը՝ հասարակական վերահսկողություն իրականացնելու միջոցով,
- հասարակական հարաբերությունների եւ գործընթացների կայունացումը,
- հանրային շահի պաշտպանությունն ու ներկայացումը,
- իրավական պետության սահմանադրական սկզբունքի կենսակոչմանը

միտված հետեւողական պայքարը:

Քաղաքացիական հասարակության դերի ու նշանակության վերաբերյալ մոտեցումները, գնահատականները միանշանակ չեն: Դա է վկայում նաեւ համաշխարհային փորձը: Որոշ դեպքերում զարգացած քաղաքացիական հասարակությունը դիտվում է որպես իրավական պետության ձեւավորման, պետության զարգացման, բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ նախապայման, որոշ դեպքե-

2 Առավել մանրամասն տես՝ Теория государства и права. Курс лекций /Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. – М., 1999.

րում էլ համարվում է, որ ամուր քաղաքական կամքի առկայության եւ արդյունավետ կառավարման (Good Governance) սկզբունքների վրա խարսխված պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման համակարգի պարագայում, պետության եւ հասարակության կյանքում քաղաքացիական հասարակության դերակատարումը նվազագույն է:

Քաղաքացիական հասարակությունն ավանդաբար ուժեղ է արեւմտյան երկրներում, եւ դրանով են մեծապես պայմանավորում այդ պետություններում մարդու իրավունքների պաշտպանության, սոցիալական բարեկեցության բարձր եւ կոռուպցիայի ցածր մակարդակը:

Զարգացած արեւմտյան պետություններում արդյունավետ գործող պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգն աչալրջորեն վերահսկվում է քաղաքացիական հասարակության կողմից: Պետական պաշտոնյայի ցանկացած վրիպում, որը կարող է ստվեր գցել, իր, իր կառույցի կամ կուսակցության հեղինակության վրա, լուրջ սպառնալիք է այդ անձի կարիերային: Բազմաթիվ են դեպքերը, երբ պաշտոնյաները հրաժարական են տվել կամ ազատվել են աշխատանքից այնպիսի արարաքներ թույլ տալու համար, որոնք խաթարել են նրանց հանդեպ վստահությունը հասարակությունում: Այդ պետություններում բավական հաճախակի են դեպքերը, երբ հասարակական պարսավանքներից հետո պաշտոնյան կամովին լքում է իր պաշտոնը:

Զարգացած կառավարման համակարգ ունեցող պետություններում պաշտոնյային արգելվում է աշխատավարձից բացի այլ եկամուտներ ունենալ: Եվ եթե պարզվի, որ նա ծախսել է ավելի շատ, քան վաստակել է, պատասխանատվության միջոցների է ենթարկվում: Ընդ որում՝ պատասխանատվության ենթարկվելու կամ հրաժարական ներկայացնելու պատճառները կարող են տարբեր լինել, ասենք՝ պաշտոնյան անձնական նպատակներով օգտագործել է ծառայողական ավտոմեքենան կամ բջջային հեռախոսը, հանգիստ է վայելել ինչ-որ մասնավոր անձի հաշվին, խախտել է ճանապարհային երթեւեկության կանոնները եւ ճանապարհային ոստիկանին ներկայացնելով ծառայողական վկայականը, փորձել է խուսափել պատասխանատվությունից, SMS գրագրություն է ծավալել ստրիպտիզ ակումբի պարուհու հետ եւ այլն: Օրինակ՝ Գերմանիայի պաշտպանության նախարար Քարլ-Թեոդոր Գուտտենբերգը հրաժարական է տվել, երբ իր ատենախոսությունում հայտնաբերել են գրագողության տարրեր: Ֆրանսիայում աշխատանքի նախարարը վայր է դրել լիազորությունները, երբ ի հայտ էր եկել շահերի բախում նրա բարեկամների ու նախարարության միջեւ: Ամեն

ինչից զատ՝ դա նաեւ հեղինակության հետ կապված կարեւոր խնդիր է: Արեւմտյան երկրներում հանրային բոլոր պաշտոնները կապված են կուսակցությունների հետ, եւ իրական քաղաքական գործընթացի պարագայում ցանկացած միջադեպ օգտագործվում է քաղաքական հակառակորդների կողմից, եւ որպեսզի վնաս չպատճառեն իրենց կուսակցություններին, արատավորված պաշտոնյաները հրաժարական են տալիս[3]:

Ցավոք, սեփական օգուտին վերաբերող շատ հարցերում արեւմտյան երկրներից օրինակ վերցնող հայաստանյան պաշտոնյաներն այս մի հարցում խուսափում են ընդօրինակել իրենց արտասահմանցի գործընկերներին եւ չեն ուզում հրաժարական տալ՝ անգամ շատ ցածր հասարակական հեղինակություն ունենալու պարագայում:

ԱՄՆ-ում չկա ոստիկանության կենտրոնացված համակարգ: Երկրով մեկ գործում են մոտ 10.000 տարբեր ոստիկանական ստորաբաժանումներ, որոնց ղեկավարները հիմնականում նշանակվում եւ վերահսկվում են համայնքների ղեկավարների կողմից: Եթե համայնքի ղեկավարը բնակիչներից հիմնավոր բողոքներ է ստանում ոստիկանության ստորաբաժանման ղեկավարի կամ աշխատակիցների գործողությունների կամ անգործության վերաբերյալ եւ միջոցներ չի ձեռնարկում, ապա նա կարող է դրա համար վճարել իր քաղաքական կարիերայով, քանի որ հնարավոր է, որ այլեւս չվերընտրվի: Սա հասարակական վերահսկողության մի յուրօրինակ մեխանիզմ է, որը Հայաստանում դեռեւս չի կազմավորվել, քանի որ մեզանում չի ձեւավորվել քաղաքակիրթ ընտրական մշակույթ եւ չկա ընտրական գործընթացների նկատմամբ հասարակական վստահություն:

Սինգապուրում, որն ունի կառավարման ավտորիտար համակարգ, քաղաքացիական հասարակությունը բավականաչափ զարգացած չէ: Այդ հանգամանքը հիմնավորվում է նաեւ նրանով, որ պետական կառավարման համակարգը գործում է այդքան արդյունավետ, օպերատիվ ու խելամիտ, որ քաղաքացիները միավորումներ ստեղծելու եւ դրանց միջոցով իրենց իրավունքները, ազատությունները եւ օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտություն չունեն: Սինգապուրում քաղաքացիական հասարակության պասիվության հանգամանքը բոլորովին չի խանգարում, որ այդ երկիրը հանդիսանա բարեկեցիկ, զարգացած, իրավական, կոռուպցիայի նվազագույն մակարդակ ունեցող պետություն: Այդ արդյունքն այնտեղ ապահովվում է պետական խստիվ հսկողությամբ, որը տասնամյակների ընթացքում պաշ-

3 https://www.novayagazeta.ru/articles/2015/12/04/66664-kak-za-granitsey-postupayut-chinovniki-podozrevaemye-v-korruptsii-i-drugih-prestupleniyah

տոնյաների ու քաղաքացիների շրջանում ձեւավորել է յուրահատուկ մտածելակերպ եւ պահվածք: Օրինակ՝ այնտեղ համապատասխան պետական մարմինը փորձաքննություն իրականացնելու համար ձեռներեցից վերցրել է նոր ներկրված հյութերի 6 շիշ: Մի քանի օր անց մարմնի ներկայացուցիչը զանգահարել է ձեռներեցին, խնդրել այցելել իրենց ու ետ վերցնել 3 շիշը, որոնք չեն օգտագործվել: Ձեռներեցն ասել է, որ դրա կարիքը չկա, քանի որ նա հյուրասիրում է մարմնի աշխատակիցներին: Պաշտոնյան խիստ տոնով հայտարարել է, որ դա անհնար է, քանի որ կդիտարկվի որպես կոռուպցիա: Հաջորդ օրը պաշտոնյան, հանձնման-ընդունման ակտը ձեռքին, վկայի ուղեկցությամբ ներկայացել է գործարարի գրասենյակ եւ վերադարձրել 3 շշերը[4]: Նման կարգի օրինակները դեռեւս հումորով եւ զարմանքով են ընդունվում հայաստանյան հասարակությունում:

Տարբեր երկրներում քաղաքացիական հասարակության վերաբերյալ առկա է դրական եւ բացասական վերաբերմունք: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում միջազգային եւ օտարերկրյա ֆինանսավորմամբ իրականացվող հասարակական, կրթական ծրագրերի հանդեպ վերաբերմունքը կտրուկ փոխվեց այդ պետության եւ Արեւմուտքի միջեւ հարաբերությունների վատթարացման խորապատկերին: Ադրբեջանում, Թուրքիայում քաղաքացիական հասարակությունը դիտվում է որպես վարչակարգի սպառնալիք եւ այլն:

Ամփոփելով քաղաքացիական հասարակության վերաբերյալ դրական եւ բացասական ընկալումները, կարելի է նշել, որ դրական տեսանկյուն է դիտվում մասնավորապես այն, որ քաղաքացիական հասարակությունը հակակշիռների եւ զսպումների համակարգի կարեւորագույն տարր է: Այն հնարավորություն է տալիս վերահսկել ու սահմանափակել պետական մարմինների եւ բիզնեսի գործունեությունը՝ կանխելով իրավախախտումները:

Բացի դրանից, քաղաքացիական հասարակությունը հնարավորություն է ընձեռում լավագույնս պաշտպանել տարբեր սոցիալական խմբերի իրավունքներն ու շահերը՝ այդ թվում օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու եւ իշխանության վրա ճնշում գործադրելու միջոցով: Սակայն միշտ չէ եւ բոլորի կողմից չէ, որ դա դրական հանգամանք է դիտվում: Այսպես՝ լեհ հայտնի իրավապաշտպան, լեհական «Սոլիդարնոստ» շարժման ակտիվիստ, Լեհաստանի մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամի նախկին ղեկավար, վաղամեռիկ Մարեկ Նովիցկին մեր զրույցներից մեկի ժամանակ նշեց, որ Լեհաստանում քաղաքացիական հասարակության ինստիտուտները՝

4 http://iravaban.net/143047.html

հատկապես արհեստակցական միություններն այնքան ակտիվ են, որ երբեմն խոչընդոտում են երկրի տնտեսական զարգացմանն ու կառավարության կողմից նախաձեռնվող բարեփոխումների գործընթացին, որոնք առաջին հայացքից ժողովրդականություն չեն վայելում, սակայն հեռանկարում կարող են օգտակար լինել հանրության համար:

Քաղաքացիական հասարակության գաղափարի ընդդիմախոսները նշում են, որ որոշ դեպքերում քաղաքացիական հասարակության ինստիտուտները «դրսի ուժերի» կողմից օգտագործվում են որպես հեղափոխության գործիք, կամ որ նրանց գործունեությունը կրում է ձեւական բնույթ, անօգուտ է: Նույնիսկ ի հայտ է եկել այդ վիճակը բնութագրող եզրույթ. «գրանտակերներ»:

Հանրահայտ է, որ զարգացած քաղաքացիական հասարակությունը իրավական պետության կառուցման կարեւորագույն նախապայմանն է: Իրավական պետության բարոյական հենքը համամարդկային արժեքներն են՝ ազատությունը, արդարությունը, մարդասիրությունը: Իրավական պետությունը կարելի է բնութագրել հետեւյալ հատկանիշներով.

1. Օրենքի գերակայությունը հասարակական հարաբերությունների բոլոր բնագավառներում:
2. Պետության եւ իրավունքի հարաբերակցության մեջ իրավունքի առաջնայնությունը, այսինքն՝ պետությունն ինքը եւս պետք է գործի իրավունքի հիման վրա եւ իրավունքի սահմաններում: Պետության՝ հանձինս նրա օրենսդիր մարմնի, հրապարակած օրենքները եւ այլ օրենսդրական ակտերը պետք է համապատասխանեն իրավունքի հանրաճանաչ չափանիշներին՝ ազատության, արդարության, հավասարության, մարդասիրության պահանջներին:
3. Անհատի եւ պետության՝ որպես իրավունքի սուբյեկտների, հավասարությունը եւ նրանց փոխադարձ պատասխանատվությունը: Լինելով իրավունքի սուբյեկտ, իրավական պետությունը ենթակա է իրավաբանական պատասխանատվության: Իրավական պետության քաղաքացին կարող է դատի տալ պաշտոնատար անձանց (պետությանը), եթե պետությունը չի կատարել քաղաքացիների հանդեպ իր ունեցած պարտականությունները: Եվ, համապատասխանաբար, եթե անհատը չի կատարել իր պարտականությունները պետության առջեւ, ապա վերջինս իրավունք ունի օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու իրավախախտ քաղաքացուն:
4. Անձի իրավունքների ու ազատությունների պաշտոնական ճանաչումը, դրանց ամրագրումը Սահմանադրությունում եւ մնացած օրենքներում. իրականացման մեխանիզմների ապահովումը:

5. Բոլորի հավասարությունը օրենքի եւ դատարանի առջեւ, մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանությունը, այսինքն՝ քաղաքացին իրավունք ունի Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքներով ամրագրված իր հիմնական իրավունքների ոտնահարման դեպքում իրավասու ազգային դատարանի միջոցով արդյունավետորեն վերականգնելու այդ իրավունքները:

6. Օրենքների եւ մյուս նորմատիվ ակտերի իրականացման նկատմամբ վերահսկողության ձեւերի մշակումը:

7. Հասարակությունում քաղաքական բազմաձեւության (բազմակուսակցական համակարգ) առկայությունը[5]:

Բացի դրանից, իրավական պետությունը այն պետությունն է, որտեղ գոյություն ունեն հստակ, կայուն եւ բոլորին հայտնի «խաղի կանոններ» մարդու եւ իշխանության միջեւ: Դա մի պետություն է, որտեղ մարդը հստակ գիտի, թե ինչպես կարձագանքեն իշխանություններն իր վարքագծին, քանզի այդ պետությունում կառավարում են ոչ թե ինքնակամ պաշտոնյաները, այլ օրենքը:

Քաղաքացիական հասարակությունը սերտորեն համագործակցում է նաեւ ժողովրդավարական պետության հետ: Ժողովրդավար պետությունում հնարավոր է եւ հաճախ իրականացվում է հսկողություն իշխանական կառույցների գործունեության նկատմամբ՝ քաղաքացիական հասարակության միջոցով:

Ժողովրդավարական պետությունը ստեղծում է անձի իրավունքների ու ազատությունների իրականացման համար անհրաժեշտ քաղաքական-իրավական դաշտը: Ժողովրդավարության իրավունքը նշանակում է, որ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներն անմիջականորեն կամ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետության կառավարմանը մասնակցելու իրավունք ունեն: Այսինքն՝ ընտրել պետության ղեկավար, ձեւավորել խորհրդարան, ինչպես նաեւ կազմավորել տեղական ինքնակառավարման մարմիններ:

Շատ հաճախ ժողովրդավարությունը նույնացվում է մեծամասնության իշխանության հետ: Սակայն, ինչպես վկայում է պատմությունը, մեծամասնությունը կարող է շատ դաժան լինել առանձին անհատների եւ փոքրամասնությունների նկատմամբ: Մեծամասնությունն էր Սոկրատեսին դատապարտել մահվան, նա էր պահանջում պատժել

5 Կոծինյան Ա. Իրավական պետությունը որպես նորագույն ժամանակի հատուկ պետահիրավական կառույց //Քրեակատարողական համակարգի կադրերի վերապատրաստումը (գիտամեթոդական հոդվածների ժողովածու), Երեւան, 2002, էջ 103-104:

Քրիստոսին, նրա համաձայնությամբ էր իրականացվում հրեաների, լեհերի եւ այլ ազգությունների սպանդը ֆաշիստական Գերմանիայի կողմից, մեծամասնությունն էր տասնամյակներ ի վեր իրականացնում հայկական ջարդերը Օսմանյան Թուրքիայում եւ այլն: Ուրեմն մեծամասնության անսահմանափակ իշխանությունը շատ դեպքերում վտանգավոր է առանձին մարդկանց ու խմբերի համար: Ուստի, մեր պատկերացմամբ, ժողովրդավարությունը մեծամասնության սահմանափակ իշխանությունն է, սահմանափակ՝ առանձին մարդկանց պատկանող բոլոր իրավունքներով եւ ազատություններով: Այսպես՝ մարդու իրավունքներն ու ազատությունները սահմանափակում են մեծամասնության իշխանությունը: Նրանք առաջին հերթին սահմանափակում են օրենսդրի (խորհրդարանի) իշխանությունը, քանզի ասում են, որ խորհրդարանի անդամները չեն կարող կոճակի սեղմումով որոշել, որ վաղը մենք կգնդակահարենք բոլոր հանցագործներին, կարգելենք վարձատրել աշխատանքը, կվերացնենք մասնավոր սեփականությունը եւ կպետականացնենք հողն ու քաղաքացիներին պատկանող այլ ունեցվածքը եւ այլն: Խոսքը իրավունքի գերակայության մասին է:

Ժողովրդավարական պետությունում անձը կարող է զբաղեցնել պետական այս կամ այն պաշտոնը (որոշ օբյեկտիվ պահանջների բավարարելու դեպքում): Ժողովրդավարական պետությունում քաղաքացիները հանրաքվեներին, խաղաղ հանրահավաքներին, ցույցերին, երթերին մասնակցելու ճանապարհով, զանգվածային լրատվության միջոցներով ունակ են ազդել ներքին եւ արտաքին քաղաքականության ոլորտներում պետական որոշումների կայացման գործընթացի վրա: Կուսակցությունները, միությունները, լոբբին, այլ հասարակական խմբերը՝ իրենց շահերից ելնելով, իշխանության վրա ճնշում գործադրելու հնարավորություն ունեն: Խոսքի եւ օրինական միջոցներով սեփական կարծիք արտահայտելու ազատությունը ժողովրդավարական կառավարման անհրաժեշտ բաղադրատարրն է: Ժողովրդավարական պետությունը չի բացառում քաղաքացիական անհանդուրժողականության իրավունքը, եթե իշխանությունն ընթանում է մարդկանց իրավունքների խախտման ճանապարհով[6]:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտների մասին չկա միասնական մոտեցում: Օրինակ՝ ոմանց կարծիքով ՁԼՄ-ները, կուսակցությունները քաղաքացիական հասարակության ինստիտուտներ չեն համարվում, ոմանք էլ հակառակ տեսակետն ունեն: Մեր

6 Ատովմյան Մ. Մարդու իրավունքները քո իրավունքներն են, Երեւան, 2004, էջ 8-9:

կարծիքով՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտներ են հասարակական կազմակերպությունները (այդ թվում նաեւ արհեստակցական միությունները, համայնքային, բարեգործական եւ իրավապաշտպան կազմակերպությունները), ՁԼՄ-ները, հասարակական կառույցների կոալիցիաները, հասարակական ցանցերն ու նախաձեռնությունները, կուսակցությունները:

Տարբեր սոցիալական խմբերի համագործակցության եւ միավորման հիման վրա գործող քաղաքացիական հասարակության ինստիտուտները հարթեցնում են սոցիալական հակասություններն ու ներդաշնակեցնում հասարակական հարաբերությունները: Նրանք նաեւ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ լուրջ հասարակական վերահսկողության միջոց են հանդիսանում:

Քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացը Հայաստանում

Հայաստանում քաղաքացիական հասարակության ձեւավորման գործընթացը մեկնարկեց անցած դարի 90-ական թվականների սկզբներից, երբ սկսեցին ձեւավորվել առաջին հասարակական կազմակերպությունները: Մեզանում հասարակական կազմակերպությունների մասին առաջին օրենքն ընդունվել է 1996 թվականին, երկրորդը՝ 2001 թվականին եւ ներկայումս ընդունման գործընթացում է գտնվում նոր խմբագրությամբ երրորդ օրենքը, որը, հավանաբար, ուժի մեջ կմտնի 2017 թվականին: Այսօրվա դրությամբ Հայաստանում գրանցված են ավելի քան 5000 հասարակական կազմակերպություններ, որոնցից մոտ 800-ը արհեստակցական կազմակերպություններն են: Սակայն, տարբեր գնահատականներով, իրականում գործում են գրանցված կազմակերպությունների 10-15 տոկոսը: Ուրախալի է, որ Հայաստանում առկա են մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք իրենց գործունեության ոլորտներում (մարդու իրավունքների, կանանց, երեխաների, զինծառայողների, վարորդների, սպառողների, հաշմանդամների իրավունքների պաշտպանություն, կոռուպցիայի դեմ պայքար եւ այլն) լիարժեք կայացել են, ունեն կուտակված մեծ փորձ, գիտելիքներ, հմտություններ եւ կարողություններ, վայելում են պետության եւ հասարակության հարգանքը, համագործակցում են պատկան պետական մարմինների հետ եւ կարողանում են որոշակի կերպով օրակարգ թելադրել: Օրինակ՝ կառավարության վերջին հակակոռուպցիոն նախաձեռնությունների զգալի մասը պայ-

մանավորված է Իրավաբանների հայկական ասոցիացիայի ակտիվ գործունեությամբ, որը համապատասխան առաջարկներ, հիմնավորումներ ու վերլուծություններ է ներկայացրել կառավարություն, ինչպես նաեւ միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, որոնց կազմակերպած բազմաթիվ միջոցառումներին ակտիվորեն մասնակցել են պետական պատկան մարմինների ներկայացուցիչները:

Կայացած եւ մասնագիտական հասարակական կազմակերպությունների առկայությունը բավական մեծ ռեսուրս է, որը պետությունը փորձում է օգտագործել: Դրա ապացույցներից մեկն այն է, որ տարբեր պետական մարմինների ղեկավարներին կից գործում են հասարակական կազմակերպություններից բաղկացած հանրային խորհուրդներ, որոշ աշխատանքային խմբերի գործունեության մեջ ներգրավվում են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Այնուհանդերձ՝ չենք կարող ասել, որ Հայաստանում պետությունն ամբողջովին օգտվում է հասարակական կազմակերպությունների ներուժից: Օրինակ՝ Լեհաստանում տարիներ ի վեր պետությունը որոշ սոցիալական ծրագրերի իրականացումը (պրոթեզների արտադրություն, տարեցների ներտնային սպասարկում եւ այլն) պատվիրում է հասարակական կազմակերպություններին, քանի որ վերջիններս, ինչպես ցույց են տվել հաշվարկները, այդ ծառայություններն ավելի էժան եւ որակով են մատուցում, քան պետական համապատասխան օղակները: Հայաստանում դեռեւս համագործակցության այդ աստիճանին չենք հասել:

Հասարակական կազմակերպությունների առջեւ կանգնած ամենաբարդ խնդիրը մեզանում ֆինանսական միջոցների հայթայթումն է: Ֆինանսավորման հիմնական աղբյուրը միջազգային եւ օտարերկրյա կազմակերպություններից ստացվող դրամաշնորհներն են, ինչը բավական խոցելի է դարձնում ՀԿ-ներին: Պետությունը, Սփյուռքը փոքր ծավալով են ֆինանսավորում հասարակական կառույցներին, իսկ նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու վերաբերյալ առկա իրավակարգավորումները զգալապես բարդացնում են գործընթացը:

Ինչ վերաբերում է արհեստակցական միություններին, ցավոք սրտի, նրանք նորանկախ Հայաստանում որպես ինստիտուտ չգտան իրենց տեղը: Ինչպես նշվեց վերը, կան գրանցված շուրջ 800 արհեստակցական կազմակերպություններ, կան դրանց ճյուղային հանրապետական միություններ, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա, որը կոլեկտիվ պայմանագրեր է կնքում ՀՀ կառավարության եւ Հա-

յաստանի գործատուների հանրապետական միության հետ, սակայն մենք չունենք արհմիութենական շարժում: Արհմիությունների գործունեությունը հանրության համար նկատելի չէ, եւ արդյունքում աշխատողները Հայաստանում ամենաանպաշտպան խավերից են:

Ակնհայտ է, որ որոշ կազմակերպություններում գործում են ճորտատիրական կարգեր: Այս իրավիճակը բխում է նաեւ նրանից, որ աշխատողները տարբեր պատճառներով չեն ցանկանում միավորվել ու ստեղծել արհեստակցական կազմակերպություններ կամ մասնակցել դրանց գործունեությանը: Հայաստանում արհեստակցական միությունների գործունեության իրավական հենքն են «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքը եւ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը:

Մեր պետությունում գործում են զանգվածային լրատվության բազմաթիվ միջոցներ (հեռուստա- եւ ռադիո ընկերություններ, թերթեր, լրատվական գործակալություններ, կայքեր եւ այլն): Այս դաշտը կանոնակարգվում է 2003 թվականին ընդունված «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով:

Ներկայումս Հայաստանում առկա են հանրապետական եւ տեղական նշանակության տասնյակ հեռուստաընկերություններ, սակայն դրանց գերակշռող մեծամասնությունը՝ խոսքը հատկապես Երեւանում գործող հեռուստաընկերությունների մասին է, պատկանում է կամ կուսակցությունների, կամ էլ խոշոր գործարարների, ինչը չի կարող չազդել հաղորդումների բովանդակության վրա:

Ինչ խոսք, շուկայի փոքրությունը, տնտեսության պասիվությունը ուղղակիորեն ազդում են նաեւ ԶԼՄ-ների ֆինանսական վիճակի վրա, քանի որ միայն գովազդի կամ թերթի համարների վաճառքի հաշվին, առանց ֆինանսավորման այլ աղբյուրների, գործել գրեթե անհնար է: Չափազանց քիչ է լրագրողական հետաքննություններ իրականացնող ԶԼՄ-ների թիվը: Մյուս էական խնդիրը լրագրողների արհեստավարժությունն է, որը հաճախ հեռու է ցանկալի մակարդակից: Ի տարբերություն բազմաթիվ երկրների, Հայաստանում բավական թույլ է իշխանության վրա ԶԼՄ-ների ազդեցությունը: ԶԼՄ-ները կարող են տասնյակ անգամ անդրադառնալ այս կամ այն պաշտոնյայի անօրինական գործունեությանը, անվայել պահվածքին, սակայն դա հիմք չի դառնում այդ անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու, նրա հրաժարականի, պաշտոնից ազատման կամ հաջորդ ընտրություններում չվերընտրվելու համար:

Հայաստանում գործում են հասարակական կազմակերպություններից բաղկացած մի շարք կոալիցիաներ եւ ցանցեր, օրինակ՝ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան, որը բաղկացած է 7

ՀԿ-ներից, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան, որը բաղկացած է երեւանյան եւ մարզային շուրջ 80 ՀԿ-ներից, մոտավորապես 150 ՀԿ ունի «Հանրային ցանցը», որի անդամների գրեթե 70 տոկոսը մարզային ՀԿ-ներ են: Այս ցանցը համագործակցում է նաեւ Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ: Եղած կոալիցիաներն ու ցանցերը հանրությանը հուզող որոշ հարցերի շուրջ՝ կոռուպցիայի դեմ պայքար, մարդու իրավունքների պաշտպանության տարբեր դիտանկյուններ եւ այլն, ունեն միասնական դիրքորոշում, որն ավելի լսելի է իշխանության համար, որովհետեւ մի բան է, երբ խնդիրը բարձրաձայնում է մեկ կազմակերպություն եւ բոլորովին այլ բան, երբ դա անում են տասնյակ կազմակերպություններ համատեղ:

Կան նաեւ հասարակական կազմակերպությունների փոխգործակցության այլ ձեւաչափեր՝ Հանրային խորհուրդ, Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմ եւ այլն:

Որպես քաղաքացիական հասարակության համեմատաբար նոր սուբյեկտ են հանդես գալիս տարբեր հասարակական նախաձեռնություններ ու շարժումներ (դրանց մի մասն ակտիվորեն գործում է սոցիալական ցանցերում՝ միաժամանակ ցուցաբերելով մասնագիտական աջակցություն մարդկանց, օրինակ՝ վարորդներին), որոնց գործունեության որոշ դրվագներ ներկայացնում ենք ստորեւ:

2011թ. փետրվարի 15-ին վրացական պետամարանիշներով մեքենաների վարորդները Վանաձորի կենտրոնական հրապարակում՝ Լոռու մարզպետարանի առջեւ, անցկացրին բողոքի հանրահավաք, որին մի քանի հարյուր քաղաքացիներ էին մասնակցում:

Նույն օրը Երեւանում տեղի ունեցավ բողոքի մեկ այլ գործողություն. կառավարության շենքի դիմաց հավաքվել էին բացօթյա առեւտրով զբաղվող հարյուրի չափ քաղաքացիներ, որոնք կրկնում էին իրենց շուրջ մեկամսյա պայքարի պահանջը՝ նախ ապահովել իրենց աշխատատեղերով, հետո փակել ապրուստ հայթայթելու ներկա ճանապարհը: Նրանք վրդովված էին, որ նորընտիր քաղաքապետը քաղաքում կարգուկանոն հաստատելը սկսել էր հասարակության ամենաթույլ ու խոցելի խավից: Ակցիայի մասնակիցները ՀՀ վարչապետից պահանջում էին պատասխանել մեկ ամիս առաջ իրեն ուղղված պահանջագրին: Սակայն այս անգամ եւս մնալով անպատասխան, նրանք շարժվեցին դեպի ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակ, որի առջեւ շարունակեցին բողոքի գործողությունը:

2012թ. տաքսու վարորդները բողոքի ակցիաներ էին կազմակերպում՝ ընդդեմ դեղին պետհամարանիշների պարտադրման: Նրանք

պահանջում էին մշակել նոր օրենք, որն իրենց հնարավորություն կտա վճարել մի քանի ամսվա կամ մեկ տարվա համար, ձեռք բերել կտրոն եւ աշխատել: Պայքարող տաքսիստներից մեկն ակամայիս դարձել էր այս շարժման «Փիար մենեջեր», քանի որ մշտապես ԶԼՄ-ներով հնչեցնում էր տաքսիստների մտահոգություններն ու պահանջները:

2012թ. փետրվարին «Մենք ենք մեր քաղաքի տերը» քաղաքացիական նախաձեռնությունը բողոքի ակցիաներ էր սկսել՝ ի պաշտպանություն Մաշտոցի պուրակի: Ակցիաներն ընթանում էին «Էլ ոչ մի այգի՝ գերակա շահին», «Այսուհետ մարդն է գերակա», «Մաշտոցի այգին պետք է մնա հանրային» կարգախոսներով: Մասնակիցները պահանջում էին անհապաղ դադարեցնել զբոսայգում իրականացվող շինաշխատանքները եւ կանաչ տարածքները, վերջապես, բարեկարգել ոչ թե սրճարանների ու խանութների համար, այլ՝ մարդկանց հանգստի եւ ժամանցի: Նրանք շինարարության ամբողջ գործընթացը համարում էին ապօրինի, քանի որ նախապես որեւէ հանրային իրազեկում կամ քննարկում չէր անցկացվել տարածքի կառուցապատման մասին:

2013 թվականի հուլիսի 20-25-ը Երեւանում, երիտասարդ ակտիվիստների նախաձեռնությամբ, անցկացվեցին բողոքի ցույցեր՝ ընդդեմ քաղաքապետարանի այն որոշման, ըստ որի երթուղային տաքսիների ուղեվարձը պետք է թանկանար 50%-ով՝ 100 դրամի փոխարեն դառնալով 150 դրամ: Բողոքի ցույցերի արդյունքում հուլիսի 25-ին Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը կասեցրեց ուղեվարձի բարձրացման մասին որոշման գործողությունը:

«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» օրենքում փոփոխություններից դժգոհող տասնյակ քաղաքացիներ 2014թ. հոկտեմբերին բողոքի ակցիաներ անցկացրին կառավարության շենքի առջեւ: Նրանք վեր էին պարզել «Օրենքը հակասահմանադրական է», «Մի՛ զրկեք աշխատող կանանց իրենց վաստակից», «Իմ երեխային զրկում եք տակդիրից, որ ինչ անեք», «Շքեղության հարկը հանում եք, հղի կանանց նպաստը՝ կրճատում» եւ այլ պաստառներ: Նույն թվականի մարտ ամսին բողոքի ակցիաներ էր նախաձեռնել նաեւ «Դեմ եմ» նախաձեռնությունը՝ ուղղված պարտադիր կուտակային կենսաթոշակների համակարգի ներդրման դեմ:

Հանրային ընդվզումները 2015-ին շարունակվեցին, եւ հունիսի 19-23-ը Երեւանում մեծ թափ ստացան «Ոչ՝ թալանին» նախաձեռնության կազմակերպած բողոքի գործողությունները՝ ուղղված էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ, որը հայտնի է *ElectricYerevan* անունով: Ցուցարարներն իշխանություններից պահանջում էին չեղարկել ՀՀ տարածքում էլեկտրաէներգիայի թանկացման մասին

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015թ. հունիսի 17-ի որոշումը: Հունիսի 23-ի առավոտյան ժամը 5:30-ի սահմաններում ոստիկանությունը խաղաղ ցուցարարների նկատմամբ կիրառեց ջրցան մեքենաներ, հատուկ ջոկատայինների ուժ եւ այլ միջոցներ: Հոսպիտալացվեցին ու բերման ենթարկվեցին հարյուրավոր քաղաքացիներ:

2016թ. հոկտեմբերի 16-ին «Հանուն օրենքի» հասարակական շարժումը բողոքի ակցիա իրականացրեց Երեւանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի առջեւ: Այն ուղղված էր ընդդեմ հոկտեմբերի 14-ին հայաստանյան խորհրդարանական պատվիրակության անդամների հանդեպ ԵԽԽՎ նախագահ Պեդրո Ագրամունտի ցուցաբերած կողմնակալ եւ անհարգալից վերաբերմունքի: Ազատ քննարկման ժամանակ ԵԽԽՎ նախագահին անջատել էր պատգամավոր ՀՀ ԱԺ պատգամավոր Նաիրա Կարապետյանի (ՀՀԿ խմբակցություն) եւ ՀՀ ԱԺ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի (ԲՀԿ խմբակցություն) խոսափողները, երբ վերջիններս փաստում էին ԵԽԽՎ-ի կողմնակալությունն ու կաշառված լինելը: Ըստ «Հանուն օրենքի» շարժման անդամների, ոտնահարվել են հայկական պատվիրակության իրավունքներն ու խոսքի ազատությունը: Ուստի նրանք դատապարտում են Պեդրո Ագրամունտի պահվածքը եւ պահանջում նրա հրաժարականը: Ակցիայի կազմակերպիչներն, ի նշան իրենց բողոքի, ԵԽԽՎ-ի երեւանյան գրասենյակին հանձնեցին պահանջագիր եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի նկարով ԱՄՆ դոլարներ:

Սա միակ դեպքը չէ, երբ միջազգային կազմակերպությունների եւ դիվանագիտական ներկայացուցչությունների Երեւանում տեղակայված գրասենյակների առջեւ տեղի են ունենում հասարակական ակցիաներ: Այսպես, տարիներ առաջ ՄԱԿ-ի գրասենյակի առջեւ ցույցեր եղան ի պաշտպանություն քուրդ ժողովրդի առաջնորդ Օջալանի, Ռուսաստանի Դաշնության դեսպանատան առջեւ՝ ի պաշտպանություն Ռուսաստանում կալանավորված հայազգի վարորդ Հրաչյա Հարությունյանի եւ այլն:

Ապրիլյան քառօրյա պատերազմից անմիջապես հետո հանրության լայն շրջանակներում նորովի ծավալվեցին կոռուպցիայի հետ կապված քննարկումները: Մարդիկ սկսեցին հստակ հարցադրումներ անել, մատնանշել կոռուպցիայի իրենց հայտնի կոնկրետ դեպքեր, վերլուծել, թե արդյո՞ք արդյունավետ կառավարման համակարգ ունենալու պարագայում հնարավոր չէր խուսափել զինծառայողների մեծաքանակ զոհերից, ինչպե՞ս հաղթահարել կոռուպցիան, այդ թվում՝ պաշտպանության ոլորտում եւ այլն: Այս հարցադրումներն, ի դեպ,

մեծ հնչեղություն ստացան նաեւ 2016թ. նոյեմբերին, երբ ՀՀ կառավարությունը հանդես եկավ Պաշտպանության նախարարության հատուկ հիմնադրամին քաղաքացիների աշխատավարձից յուրաքանչյուր ամիս 1000-ական դրամ փոխանցելու նախաձեռնությամբ: Կրկին շատ քաղաքացիներ, հասարակական եւ քաղաքական գործիչներ նորացրին «թալանչի չինովնիկներին կուլակաթափ անելու» կոչերը: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, «կուլակաթափությունը» կարող է ծնել նաեւ բացասական հետեւանքներ: Դրա փոխարեն նպատակահարմար է քրեականացնել ապօրինի հարստացումը, եւ այդ ճանապարհով էլ պետությունը փորձում է գնալ: Ապրիլին բոլորս ականատես եղանք նաեւ հանրության յուրօրինակ համախմբմանը, երբ քաղաքացիները, տարբեր շարժումներն ու կազմակերպությունները շատ արագ դրամի, սննդի, դեղորայքի եւ բանակին անհրաժեշտ այլ պարագաների հավաք կազմակերպեցին:

2016թ. հուլիսի 17-ին Հայաստանում տեղի ունեցավ աննախադեպ երեւույթ՝ «Սասնա Ծռեր» խմբավորման մի խումբ զինյալ անձինք գրավեցին ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գունդը, ինչի արդյունքում երկրում 15 օր շարունակ տիրում էր ծայրաստիճան լարված եւ պայթունավտանգ իրավիճակ: Խմբի անդամները զենքը վայր դրեցին եւ հանձնվեցին իրավապահներին հուլիսի 31-ին: Ողջ այդ ընթացքում գնդին հարող տարածքներում եւ Երեւանի փողոցներում տեղի էին ունենում խմբի աջակիցների հանրահավաքներ, երթեր, ցույցեր: Սոցիալական ցանցերում հնչում էին ինչպես խմբի գործողությունները դատապարտող, այնպես էլ նրանց սատարող կարծիքներ: Երկու շաբաթ տեւած դիմակայության ընթացքում տեղի ունեցան ոստիկանների հետ ցուցարարների մի շարք բախումներ, որոնց հետեւանքով վիրավորվեցին քաղաքացիներ, լրագրողներ, ոստիկաններ, բազմաթիվ քաղաքացիներ բերման ենթարկվեցին ոստիկանության բաժիններ, բռնություն գործադրվեց որոշ լրագրողների նկատմամբ, զոհվեց 3 ոստիկան: Այս իրավիճակը ցույց տվեց, որ Հայաստանում կան մարդիկ, որոնք պատրաստ են ռադիկալ ճանապարհով երկրում փոփոխություններ ապահովել եւ կան բազմաթիվ քաղաքացիներ, որոնք գոնե բարոյապես սատարում են նման մարդկանց: Դա շատ լուրջ ահազանգ էր ինչպես երկրի իշխանության, այնպես էլ հասարակության համար:

Վերլուծելով հետագա իրադարձությունների ընթացքը, կարելի է փաստել, որ ապրիլյան պատերազմը եւ ՊՊԾ գնդի գրավումը խթանեցին ներքին քաղաքական եւ բարեփոխումներին միտված նոր զարգացումներ, հասարակությունում մի տեսակ նոր հնչեղություն հա-

ղորդեցին կոռուպցիայի դեմ պայքարի կարեւորությանը, քանի որ, հատկապես ապրիլյան իրադարձությունները, առավել քան ակնհայտ դարձրեցին կոռուպցիայի ողջ բացասական հետեւանքները՝ կոռուպցիային տալով արյան տեսք:

Վերջաբան

Ամփոփելով վերոգրյալը, կարող ենք փաստել, որ անցած 25 տարիների ընթացքում քաղաքացիական հասարակությունը Հայաստանում զարգացման լուրջ ճանապարհ է անցել, սակայն այն չենք կարող լիարժեք կայացած համարել մի քանի պատճառներով:

Առաջին՝ պետական եւ համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության, ներգրավվածության մակարդակն այդքան բարձր չէ, ինչպես մի շարք այլ երկրներում: Օրինակ՝ քաղաքացիները կարող են էլեկտրոնային փոստով առաջարկներ ներկայացնել Պրահայի ավագանու կայանալիք նիստերի օրակարգի վերաբերյալ: Երբեմն քաղաքացիներից ստացված առաջարկներն ընդգրկվում են օրակարգում: Չեխիայի բազմաթիվ համայնքներում կազմակերպվում են տարեկան քաղաքացիական ֆորումներ: Դրանք կազմակերպվում են համայնքի ամենամեծ դահլիճում եւ նրանց աշխատանքներին, կամավորության սկզբունքով, մասնակցում են համայնքի բնակիչները: Ֆորումների ընթացքում համայնքի ղեկավարը հանդես է գալիս հաշվետվությամբ նախորդ տարում կատարված աշխատանքի վերաբերյալ, այնուհետեւ ներկայացնում հաջորդ տարվա անելիքները: Այնուհետեւ մասնակիցները բաժանվում են 10-15 հոգանոց աշխատանքային խմբերի եւ քննարկում համայնքի ղեկավարի առաջարկները, տալիս իրենց գնահատականը, ներկայացնում առաջարկներ, որոշում գերակայությունները: Համայնքային իշխանությունը մյուս տարվա աշխատանքների ծրագիրը եւ բյուջեն կազմում է՝ հաշվի առնելով ֆորումի աշխատանքի արդյունքները:

Երկրորդ՝ Հայաստանում բավական քիչ է լրագրողական հետաքննություններ իրականացնող ԶԼՄ-ների թիվը: Հասարակական կազմակերպությունները հազվադեպ են իրականացնում պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մշտադիտարկում: Եզակիներից էին տարիներ առաջ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի իրականացրած նոտարական համակարգի գործունեության մշտադիտարկումները, որոնք մեծապես նպաստեցին կառավարության կողմից

այդ ոլորտում բարեփոխումների իրականացմանը: Հասարակական կազմակերպությունները պետք է վերահսկեն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը, արձանագրեն փաստացի իրավիճակը, վեր հանեն օրենսդրական եւ ինստիտուցիոնալ կոռուպցիոն ռիսկերը, ներկայացնեն բարեփոխումներին միտված իրենց առաջարկները եւ հետեւողական լինեն ոլորտի բարեփոխման հարցում:

Երրորդ՝ հայաստանյան հասարակությունը, առհասարակ, շատ պասիվ է երկրի, համայնքի շենացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին անմիջականորեն մասնակցելու գործում: Այս կապակցությամբ չենք կարող չհիշատակել, թե ինչպես էին Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո Լեհաստանի տարբեր շրջաններից ժամանած հասարակ քաղաքացիներն իրենց ձեռքերով վերականգնում ֆաշիստների կողմից հիմնահատակ ավերված մայրաքաղաք Վարշավան, ինչպես էին ապագա շինարար ուսանողները դասախոսների ղեկավարությամբ իրենց ուժերով ավերակներից վերականգնում Դրեզդենի հռչակավոր պատկերասրահը (Ցվինգերը): Երկու դեպքերում էլ մարդիկ մեծ պատիվ էին համարում ավերածությունների շուտափույթ վերականգնումը, ընդ որում՝ նույնությամբ պահպանելով շինությունների նախկին տեսքը:

Իսկ ինչպես ենք մե՞նք վերաբերվում մեր պատմամշակութային ժառանգությանը: Ձեռնարկո՞ւմ ենք արդյոք բավարար քայլեր մեր երկրի մշակութային մայրաքաղաք Գյումրիի բազմաթիվ բնակիչներին փտած տնակներից դուրս բերելու եւ նորմալ բնակարաններով ապահովելու համար: Ակտիվ եւ հետեւողակա՞ն ենք արդյոք այն հասարակական ակտիվիստների նման, որոնք Աֆղանստանում ամիսներ շարունակ համառ պայքարի արդյունքում մոտավորապես 200 դպրոց նորոգած եւ կառուցած շինարարական կազմակերպությունների ղեկավարներին ստիպեցին շինարարության մեջ ներդնել կառուցապատման ժամանակ թալանված գումարները եւ նորակառույց կամ վերանորոգված դպրոցները բերել այն տեսքին, որ նախատեսված էին իրենց հետ կնքված շինարարական աշխատանքների մասին պայմանագրերով: Նախաձեռնո՞ղ ենք մենք արդյոք այն երկրի շարքային քաղաքացիների նման, որոնք ձեռքի հասարակ մետրով մի քանի հատվածներում չափել են նորակառույց ճանապարհի լայնությունը եւ պարզել, որ իրականում այն 2,5 մետր է՝ իշխանության հայտարարած 4 մետրի փոխարեն:

МАРАТ АТОВМЯН

Воздействие гражданского общества на общественно-политическую жизнь Армении

Данная статья посвящена сути, функциям, наиболее общим идеям и принципам, лежащим в основе любого гражданского общества. В статье представлены пять моделей теоретического разделения государственного и негосударственного секторов, соответственно, пять видов обозначения границ законной деятельности государства, взаимосвязь между гражданским обществом и демократическим, правовым государством. Теоретические аспекты подкреплены примерами из практики разных стран и Армении, касающимися взаимодействия государства с гражданским обществом, воздействия гражданского общества на государство, на процесс принятия решений. Кроме того, в статье проанализированы нынешнее состояние гражданского общества в Армении, а также обстоятельства, препятствующие его дальнейшему развитию.

MARAT ATOVMYAN

The Impact of Civil Society on the Public and Political Life of Armenia

This article deals with the essence, functions, as well as the most common ideas and principles underlying any civil society. The article presents five models of theoretical separation of the public and non-public sectors, and, respectively, five forms of indication of the limits of the state’s legitimate activities. It also focuses on the correlation between a civil society and a democratic, jural state. The theoretical aspects are supported by examples from the experiences of Armenia and other countries concerning the interaction between the state and civil society, the impact of civil society on the state and the decision-making process. In addition, the article analyzes the current state of civil society in Armenia, as well as the circumstances hindering its further development.

ԻՆՉ ՊԻՏԻ ԱՐՎԻ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԿՈՐԾԱՆՎԻ

ԻՆՉ ՊԻՏԻ ԱՐՎԻ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԿՈՐԾԱՆՎԻ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երեւանի պետական համալսարանի դասախոս

Հեղինակի խնդրանքով նույնությամբ պահպանված են հոդվածի լեզվաոճական եւ մատուցման ձեւի առանձնահատկությունները

Արդեն համարյա էրկու տասնամյակ ա, ինչ Հայաստանը կործանվելու եզրին ա, ու էսօր սա արդեն շատերին ա պարզ, մանավանդ՝ ապրիլյան պատերազմից հետո:

Էսօր, էս հոդվածը գրելու պահին, նոր վարչապետ ունենք, ով ուզում ա Հայաստանի վիճակը շտկի, ու սրա համար կառավարության կազմը նորոգում ա: Թե որ նույնիսկ հավատամ էլ, որ մեր նոր վարչապետի էս ցանկությունը լրի՛վ անկեղծ ա, ու որ ինքը լրի՛վ անկեղծ հավատում ա, որ իրա արած փոփոխությունները կլավացնեն Հայաստանի վիճակը, բայց մի կաթիլ անգամ չեմ հավատում, որ մեր նոր վարչապետի էս անկեղծ ճիգ ու ջանքերը որեվէ բան կփոխեն: Թե որ հմի Հայաստանի ողջ կառավարությունն էլ հրաժարական տա, ու սրա տեղը մի 400-500 «սուրբ» նշանակվի, մեկ ա, մի կես տարի հետո էլի նույն կոտրած տաշտակն ենք ունենալու:

Ախր, թե որ ավտոյի մոտոռը փշուր-փշուր ա, մնացած մասերն էլ լրիվ փչացած են, աշխարհի ամենահանճարեղ վարորդն է՛լ, «սրբերի» ամենահանճարեղ խումբն է՛լ էդ ավտոն տեղից չի շարժի, թե որ էդ ավտոյի մոտոռն ու էդ մասերը լրիվ չփոխվեն, այսինքն՝ հասարակարգը չփոխվի:

Մեր կուսակցական առաջնորդները բոլորն էլ ասում են, թե էս իշխանությունները պիտի փոխվեն ու, անկասկած, ճիշտ են ասում:

Բայց ի՞նչ պիտի արվի իշխանությունը փոխելո՛ւց հետո: Սրա մասին մեր կուսակցապետերի ու (ինչքան ե՛ս եմ տեղյակ) մեր բոլոր մտածողների կարծիքներն անխտիր չափազանց անորոշ են ու հակասական: Այնինչ գլխավոր խնդիրը հենց նոր հասարակարգը հաստատելու հստակ ծրագիր ունենալն է:

Գլխավոր հարցը հետեվյալն ա. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԻՆՉ ՊԻՏԻ ԱՐՎԻ, ԻՆՉ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՎ ՊԻՏԻ ԱՐՎԻ ՈՒ Ո՞ՆՑ ՊԻՏԻ ԱՐՎԻ:

Էս համառոտ շարադրանքը էդ հասարակարգը փոխելու հզորագույն մտածողների (լիբերթարների) առաջարկած ծրագրի մասին ա, մի ծրագիր, ինչը ձեռնտու չի աշխարհի ոչ մի խարդախ քաղգործչի:

Էս ծրագիրը, ինչին ասում եմ՝ ԲԱՐՈՅԱԿԱՐԳԻ ԾՐԱԳԻՐ, ըստ էության, Հայաստանում անհայտ ա:

Իմ շարադրանքը, անկասկած, լրիվ չի ու երեվի կցկտուր ա, բայց էս շարադրանքի վերջում դրել եմ էն նվազագույն թվով գրքերի ցուցակը, ուր կա ասածս ԲԱՐՈՅԱԿԱՐԳԻ ծրագրի ամբողջական շարադրանքը:

* * *

«Ժողովուրդ կա, ում գաղափարախոսությունը սնահավատության, նախապաշարմունքի ու մոլորությունների մի էնքա՛ն տարօրինակ խառնուրդ ա, որ էդ ժողովուրդը ոչ մի անգամ չի կարում պարզի, թե իրա դժբախտությունների ու թշվառության պատճառն ի՛նչն ա, ու հենց սրա համար էլ պատմության բեմից վերանում, գնում ա»:

ԱԼԵՔՍԻՍ ԴԸ ԹՈՔՎԻԼ

* * *

«Կարգին երկիր կառուցելու խնդիրը, համարյա լրիվ, ԿՐԹԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ Ա, է՛ն առումով, որ ժողովրդի մեծ մասը (առաջին հերթին՝ մտավորականությունը) պիտի կրթվի լիբերալիզմ-լիբերթարիզմի ոգով ու յուրացնի սա, որ իմանա, թե իրա ուզածն ի՛նչ ա»:

ՖՐԻԴՐԻԽ ԱՎԳՈՒՍՏ ՖՈՆ ՀԱՅԵԿ

* * *

«Մտածելու ունակություն ունեցող մարդու ու էդ ունակությունից զուրկ մարդու արանքը ԱՆԱՆՑԱՆԵԼԻ անդունդ կա»:

ԼՈՒԴՎԻԳ ՀԱՅՆՐԻԽ ԷԴ ԼԵՐ ՖՈՆ ՄԻԶԵՍ

* * *

«Իշխողների մակարդակը հազվադեպ ա միջինից բարձր էղե, թե՛ բարոյական, թե՛ մտավոր առումով, ու շատ անգամ էլ՝ միջինից ցածր ա էղե... ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ Ա, երբ մեր քաղաքական բոլոր ջանքերը հիմնում ենք Է՛ն խարխուլ հույսի վրա, թե իբր մեզ կհաջողվի, որ գտնենք գերազանց կամ գոնե ունակ իշխողներ... [Ուրեմն] «Ո՞Վ ԻՇԽԻ, ՈՐ ԼԱՎ ԸԼՆԻ» հարցը պիտի փոխարինենք նոր հարցով՝ «ԿԱ՞Ք ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐՆ ԸՆԵՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԿԱՐԵՆԱՆՔ ՎԱՏ ԿԱՄ ԱՆՃԱՐԱԿ ԻՇԽՈՂՆԵՐԻՆ ԹՈՒՅԼ ՉՏԱՆՔ, ՈՐ ԴՐԱՆՔ ՉԱՓԱԶԱՆՑ ՇԱՏ ՎՆԱՍ ՏԱՆ...»:»

ԿԱՌԼ ՌԵՅՄՈՒՆԴ ՊՈՊԵՐ

«ԼԱՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՐՔԵԼԸ ՇԱՏ ՀԱՍԱՐԱԿ ԲԱՆ Է»-ի առիթով

Մի անգամ խոսք ընգավ, թե ով լավ պրեզիդենտ կըլնի, ու ներկանեռից մեկը՝ ԿամԱՁ-ի մի վարորդ, ասեց.

– Թո ընձի դնեն պրեզիդենտ, նե՞նց ղեկավարեմ որ:

Ես ասի.

– Աբո ջան, շատ եմ խնդրում, մի քանի օրում ընձի համար մի ջուխտ լավ կոշիկ կարի էլի, ինչ կըլնի:

– Բայց ախր ես կոշկակար չեմ,– ասեց Աբոն: – Ա՛յ, կոշիկ կարելը սովորած ըլնեի՝ էդ ուրիշ բան, անպայման կկարեի:

Ես ասի.

– Արա՛, Աբո, դու որ կոշիկ կարելը պիտի սովորես, որ նոր կարենաս մի ջուխտ կոշիկ կարես, քու կարծիքով՝ երկիր ղեկավարելը կոշիկ կարելուց էդքան ավելի հեշտ գործ ա, որ առանց սովորելու վստահվստահ ասում ես, թե շատ լավ կղեկավարես:

Ես էս Հայաստանում ոչ մեկին չգիդեմ, ով վստահ չըլնի, թե կարա շատ լավ պրեզիդենտ կամ վարչապետ կամ էլ նախարար ըլնի: Բայց, ախր, հասարակությունը մի ջուխտ կոշիկից անսահման ավելի բարդ բան ա:

Սրա համար էլ էստեղ գրում եմ իմ իմացածը երկրի հանրությունը կազմակերպելու Էն ձեվերի մասին, որ ավստրիացի հանճարեղ մտածողներից եմ սովորե, որ Աբոյի պես մարդիկ կարդան ու իրանց համեստ պահեն, ու մեկ էլ ՈՐ ՄԵՐ ՔԱՂԳՈՐԾԻՉՆԵՐՆ ԻՄԱՆԱՆ, ԹԵ ՈՐՏԵՂԻՑ ՍՈՎՈՐԵՆ, ԹԵ ԿԱՐԳԻՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՆՑ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ:

Հեծանիվը վաղո՛ւց-վաղո՛ւց են հայտնագործե, ու ես մենակ էդ հեծանվի տե՛ղն եմ ասում:

* * *

Մի էրկու խոսք լեզվիս մասին: Ես որ մի բան եմ գրում, ուզում եմ, որ կարդացողն ինձ լրի՛վ հասկանա, կամ՝ հասկանա, ինչքան որ հնարավոր ա: Սրա համար էլ գրում եմ բարբառին մեծ տեղ տալով, ու իմ էս ոճս պաշտպանելու համար մենակ մի քաղվածք եմ բերում. «ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է՝ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻՑ ՑԱԾՐ ԴԱՍԵԼԸ», **Հրաչյա Աճառյան**, «**Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն»,** էջ՝ 141:

* * *

Իմ էս շարադրանքը, անկասկած, ԿՑԿՏՈՒՐ Ա, ԱՀԱՎՈՐ ԹԵՐԻ Ա ՈՒ ԿԱՏԵԳՈՐԻԿ, ՈՒ ԵՍ ԷԼ ԷՍ ՀԱՐՑԵՐԻ ԽՈՐԸ ՄԱՍՆԱԳԵՏԸ ՉԵՄ, բայց, ստիպված, էս բաները ե՛ս եմ գրում, որովհետեվ էս 26 տարի ա, ինչ մեր «մասնագետները» կարային սրանք ավելի հիմնավոր գրեին, բայց չեն գրում: Ու սրա համար էլ հետաքրքրվողին խորհուրդ եմ տալի, որ կարդա էս շարադրանքի վերջը դրած **ՖՐԻԴՐԻԽ ԱՎԳՈՒՍՏ ՖՈՆ ՀԱՅԵԿԻ ՈՒ ԼՈՒԴՎԻԳ ՀԱՅՆՐԻԽ ԷԴԼԵՐ ՖՈՆ ՄԻԶԵՍԻ ԳՐՔԵՐԸ:**

Հոդվածիս հիմնական նպատակներից մեկը հայ ընթերցողին էս գրողների գրքերով **ՀԵՏԱՔՐՔՐԵԼՆ Ա:**

ԵՍ ՉԵՄ ՄՏԱԾՈՒՄ, ՈՐ ՍԱ ԴԱՍԱԳԻՐՔ Ա:

<u>ՄԱՍՆ 1-ԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՈՐԾԱՆՎՈՒՄ Ա

(Երեվի մնացել ա մի 10-20 տարի)

Դասական ու նորագույն (20-րդ դարի ավստրիական) տնտեսագիտության հիմունքներին ու մեր քաղաքակրթության պատմությանը քիչ թե շատ ծանոթ մարդուն արդեն 1990-ական թվերի սկզբներին պարզ էր, որ Հայաստանը բռնել ա կործանվելու ճամփեն, որովհետեվ արդե՞ն էդ օրերին Հայաստանի բնակիչները հսկայական քանակով թողնում ու Հայաստանից գնում էին: Բայց շարքային մտածողն էն օրերին էս բանը չէր զգում: Շարքային մարդուն թվում էր, թե Հայաստանի բնակիչների թիվն է՛լ, Հայաստանի կյանքն է՛լ անսահման ա:

Էսօր արդեն շատ մարդու ա պարզ, որ Հայաստանը դատարկվում ա, որովհետեվ Հայաստանի 1990 թվի մոտ չորս (կարող ա՝ չորս ու կես) միլիոն բնակչից ամենաքիչը մեկ ու կես միլիոնն արդեն իրա երկիրը թողե ու գնացել ա: Էդ օրերից անցել ա համարյա երեք տասնամյակ, ու գնացողների թիվը չի պակասում: Չի պակասում ու հլը կարող ա ավելանա, ու շա՛տ ավելանա, որովհետեվ կյանքի դժվարությունն ահավոր արագ ու ահավոր շա՛տ ա շատանում):

Ուրեմն, թե որ հրաշք չէղավ, ԱՄԵՆԱՇԱՏԸ ՄԻ 20-40 ՏԱՐՈՒՑ ՀԵՏՈ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴ ՉԻ ՄՆԱ:

(Իմիջիայլոց, **Հայաստանի վիճակն էնքան արագ ա վատանում (ու ոչ մի անգամ չի լավանում), որ էս պահին ինչ կանխատեսություն**

էլ անես, էկող տարի էս ժամանակ կանխատեսածիցն ավելի վատ ա ընելու: Օրինակ, բնագիտական ֆակուլտետներ դիմողների թիվը քչանում էր, բայց մի տարի առաջ ոնմ մտքով կանցներ, որ էս տարի Պետհամալսարանի էդ ֆակուլտետների հայտարարած տեղերի ԿԵՍՆ ազատ կմնա (սա գրվել ա 2013 թվին):

(Ժողովուրդը հասկացել ա, որ ԷՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՖԻԶԻԿՈՍ, ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ ՈՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ՝ ԲՆԱԳԵՏ ՊԵՏՔ ՉԻ: Սարսափելի ա, բայց երեվում ա, որ **նույն բանն էլ հայոց լեզու-գրականություն մասնագիտությանն ա սպասում**: Ուրեմն, ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄՏԱԾՈՒՄ Ա, ՈՐ ԷՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԵՆԸ ՊԵՏՔ ՉԻ):

Հայաստանը կդատարկվի:

Սա էսօր արդեն Թուրքիայի ու Ադրբեջանի թուրքերն էլ են տենում, ու իզուր չի, որ Ադրբեջանի պրեզիդենտ Ալիեվը մի անգամ հայտարարել ա, թե իրանք Հայաստանի հետն էլ չեն կռվելու: Փոխարենը՝ նստելու են ու սպասեն, մինչեվ Հայաստանը լրիվ դատարկվի, որ իրանք էլ «զուռնա-դհոլով հանգիստ մտնեն Հայաստան»:

Ու թե որ գործերի վիճակն սենց մնա, ու բան չփոխվի, հնարավոր ա, որ Հայաստանի դատարկվելու պրոցեսը շատ ավելի արագանա, ու Հայաստանը վերանա մի 10-20 տարում: Ու հնարավոր ա, որ էս պրոցեսն արդեն անդառնալի ա, բայց երբ մարդը տենում ա էս բաները, չի կարում սուս անի: Ու ոնց սուս անի, թե որ չի ուզում հավատա, որ վերանում ա Է՛ն երկիրը, որտեղ իրա նախնիներն են մի քանի հազար տարի ապրե, ու որտեղ պիտի իրա զավակները, թոռներն ու ծոռներն ապրեն:

Թե որ էս գնացած միլիոն ու կեսին կոտորած ըլնեին կասեինք, թե մի սարսափելի եղեռն ա էղե: Բայց թե որ մեր տնտեսության ու երկրի կյանքի համար սա՛ չի եղեռնը, բա ինչն ա: Բա էս սիպտակ եղեռնը տեսնողը ոնց ա կարում խոսա մեր «տնտեսական առաջընթացի» մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ, ՔԻՉ-ՔԻՉ, ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ԻՐԱՆՑ ՀԱՐԱՉԱՏ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ:

Էկեք իլը մտածենք, թե ինչից են հրաժարվում, որ հասկանանք, թե խի՛ են հրաժարվում:

ՀՆՉ Ա ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հայրենիքի գաղափարը, քիչ թե շատ, նոր գաղափար ա: Մեր հին նախնիները **հայրենիք** ասելով՝ լրիվ ուրիշ բան էին հասկանում: **Հին Հայաստանում մարդու հայրենիքը իրա հորից ժառանգած հողային տարածքն էր, ու էն օրերի բոլոր հայերը չէին, որ հայրենիք ունեին**: Էն օրերին հայրենիք ունեին մենակ հողատերերը, մենակ ազնվականները, իսկ շարքային հայը՝ շինականը կամ ռամիկը, հայրենիք չուներ:

Լեոն իրա ***Հայոց պատմության*** մեջն ասում ա, որ 16-րդ դարում Հայաստանում կար 17 հայրենիք: (Ինչքան հիշում եմ, սենց էր գրած, կամ՝ հակառակը): Էս լուսի տակ որ նայենք մեր պատմությանը, արդեն սրա անցքերը մեզ լրիվ ուրիշ ձեվով կէրեվան: Արդեն կհասկանանք, որ հայոց հին շրջանի էն անհամար կռիվները, որ էս վերջին մի էրկու դարում համարում ենք կռիվ «հանուն հայրենիքի», **էղել են մենակ խոշոր հողատերերի կռվները՝ հանուն իրանց տարածքների, իրանց սեփական անհատական հայրենիքների**, ու դրանք ուրիշ ոչ մի վերացական հոգեվոր նպատակ չեն ունեցել:

Նույն Լեոն պատմում ա, թե Կամսարական իշխանները ոնց իրանց անհատական հայրենիքը փողով ծախին ու գնացին Բյուզանդիա ու էնտեղ ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ ԱՌԱՆ: Էն օրերին դա լրիվ նորմալ բան էր համարվում:

Հայրենիքի էսօրվա գաղափարը, էսօրվա իմաստը ստեղծվել ա 18-19-րդ դարում, Հեգելի կործանարար փիլիսոփայության ու ֆրանսիական ու գերմանական մտածողներից մի քանիսի գործերի հիմքի վրա, մանավանդ՝ Ֆիխտեի, Ռոդբերտուսի, Լասալի, Զոմբարտի, Պլենգեի, Լենշի գաղափարների (էս էրկուսը՝ հիմնվելով նացիոնալ սոցիալիզմի ուսուցիչներ Օսվալդի ու հետո՝ Շպենգլերի ու վան դեր Բրուկի գաղափարներին), ովքեր վերջը ստեղծին նացիոնալիզմի կործանարար ուսմունքը:

(Հիշենք, որ կոմունիզմ-սոցիալիզմի գաղափարախոսությունները հենց Հեգելի փիլիսոփայության տարբերակներն են [**Պոպեր Կ.** – ***Բաց հասարակությունն ու դրա թշնամիները***]):

Հայրենիքի էս նոր, էս կոլեկտիվ ու լրիվ վերացական (այսինքն՝ իրականում գոյություն չունեցող) գաղափարը, նացիոնալիզմի հետ մերված, թունավոր համաճարակի պես տարածվեց ողջ աշխարհով մեկ, շատ անգամ ձուլվելով կրոնական ֆունդամենտալիզմին:

Բայց հայրենիքի էս կոլեկտիվ գաղափարն ինչքան էլ վերացական ըլնի, մեզնից ամեն մեկի մտքում կա՛: Ու ինչ ա սա, ինչ ա հայրենիքը շարքային մարդու համար (այսինքն՝ նորմալ մարդու, ու ոչ թե խաբեբա քաղգործչի համար):

Իմ համար, օրինակ, հայրենիքն իմ ընտանիքն ա, իմ արդեն հանգուցյալ ծնողներն ու պապ ու տատը, իմ հանգուցյալ ախպերն ա, քուրըս ա ու իրա էրկու աղջիկը, որ արդեն 16 տարի ա, ինչ գնացել են արտասահման, որովհետև էստեղ սովամահ էին ըլնում, իմ մանկության հուշերն են ու Մալիշկա գյուղը, որտեղ ե՛ս եմ ծնվե ու մեծացե:

Հետո՝ իմ հայրենիքը իմ մոտ արյունակիցներն են, հետո էլ՝ հեռուները. իմ մանկության ու պատանեկության ընկերներն են, էսօրվա էն մի քանի ընկերն ա, որ մնացել ա մի ժամանակվա մի քանի հարյուր ընկերոջից: Պետական համալսարանն ա, որտեղ ես արդեն մոտ 50 տարի ապրում եմ ժամանակիս մեծ մասը. իմ էրկու թոռն ա, ում ահավոր սիրում եմ, ու հույս ունեմ, որ իրանք էլ ընձի են սիրում (գոնե մի քիչ):

Հետո՝ իմ էսօրվա գործն ա, այսինքն՝ հայոց գիր ու գրականության ու լեզվի ու մեկ էլ տնտեսագիտության, իրավագիտության ու բարոյագիտության ու մեկ էլ ֆիզիկայի պրոբլեմները (առաջիններն ուսումնասիրում ու քննում եմ արդեն մոտ 30 տարի): Դասախոսի ու ուսուցչի գործն ա, ինչով զբաղվում եմ արդեն մոտ 50 տարի: Ու հետո նոր էն մնացած բաներն են, որ կապված են իմ հոգեվոր կյանքին, այսինքն՝ մեր պատմությունն ու ճարտարապետությունն ու մեր ողջ մշակույթը ևն:

Բայց ամենակարեվորը՝ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ, մեզնից ամեն մեկի համար (ինչն էս ասածս ամեն ինչից անջատ ու առանձին չի ու մերված, ձուլված ա էս բոլորին ու հլը հազար ու մի ուրիշ բանի, որ կարող ա՝ հեչ չենք էլ նկատում ու գլխի էլ չենք) ՄԵՐ ԵՐԱԶԱԾ Է՛Ն ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆՆ Ա, Է՛Ն ՍՈՎՈՐՈՒՅԹ ՈՒ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԽՈՒՄԲՆ Ա, ԻՆՉԸ ԲՈԼՈՐԸՍ ԷԼ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՆՔ ԵԶԱԿԻ ՈՒ ԱՀԱՎՈՐ ԹԱՆԳ: ԱՅՍԻՆՔՆ՝ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՈՒ ՄԵՐ ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ Է՛Ն ՆՈՐՄԵՐՆ ԵՆ, ԻՆՉԸ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՆՔ ՀՈՒՅԺ ՑԱՆԿԱԼԻ ՈՒ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՍՐԱՆՔ ՄԻ ՕՐ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿԸԼՆԵՆ:

Մենք որ հելնում ու բանակ ենք գնում, որ մեր հայրենիքը պաշտպանենք, այսինքն՝ մեր հայրենի հողը պաշտպանենք, ուզում ենք պաշտպանենք մեր երազած, ա՛յ, է՛ս կարգը, ուզում ենք պաշտպանենք հենց է՛ն բարոյաիրավական նորմերը, որ համարում ենք սիրուն, ընդունելի, անխախտ ու զուտ հայկական, ու մեկ էլ մեր լեզուն, որովհետև չենք ուզում սա կորցնենք ու ուրիշ լեզվով խոսանք:

Ուրեմն,ՀԱՅՐԵՆԻՀՈՂԸ,ԱՌԱՆՑՍՐԱՎՐԱՅԻԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ, ՈՉ ՄԻ ՀԱՅՐԵՆԻՔ ԷԼ ՉԻ, ՈՒ ԱՌԱՆՑ ԷՍ ԿԱՐԳԻ՝ ՈՉ ՄԵԿԻՆ ԷԼ ՊԵՏՔ ՉԻ:

Ու երբ էսօր մեր էրեխեքին տանում են հայկական բանակն ու էնտեղ իրանց ծեծում ու ջարդում են, բռնաբարում ու սպանում են, էդ ժամանակ **ծեծում ու ջարդում ու բռնաբարում ու սպանում են հենց է՛ն բարոյաիրավական նորմերը, ինչի համար էդ էրեխեքը պիտի իրանց կյանքը զոհեն, թե որ պետք ըլնի, այսինքն՝ ծեծում ու ջարդում ու բռնաբարում ու սպանում են հենց էդ էրեխեքի ՀԱՅՐԵՆԻՔԸ:**

Ու թե որ էդ էրեխեքը կանգնեն ու ասեն. «Տո ձեր էլ մերը, ես խի՞ պիտի իմ կյանքը զոհեմ էս տեսակ այլանդակ բարոյաիրավական նորմերի համար, այսինքն՝ էս տեսակ հայրենիքի համար», բա ճիշտ չե՞ն ասի:

(Փառք աստծու, որ 2016-ի ապրիլին մեր հերոս ջահելներն ու մեծերը սենց չմտածին ու կանգնան թշնամու դեմն ու հաղթին: Բայց որ մեր էս այլանդակ ղեկավարներն անընդհատ մեր ջահելների արնի գնով տարած հաղթանակները դարձնեն պարտություն, մեր ջահելներն է՛լ, մեծերն է՛լ մի օր հենց սե՞նց կմտածեն – սա նոր եմ ավելացրե):

Է՛ն հայերը, որ էսօր թողում ու Հայաստանից գնում են՝ հրաժարվում են էսօրվա Հայաստանի հենց էս այլանդակ ու գարշելի «բարոյաիրավական» նորմերից, այլանդակ ու գարշելի հոգեվոր մթնոլորտից:

Ու ով որ դրանց մեղադրում ա, գաղափար անգամ չունի, թե ի՞նչ ա հայրենիքը, որովհետև երբ էդ մեղադրողն ասում ա. «Համակերպվեք ձեր էղած հայրենիքի հետ, որովհետև սա՛ է ձեր հայրենիքը», էդ մեղադրողը, ըստ էության, ասում ա. «Համակերպվեք էս այլանդակ ու գարշելի բարոյաիրավական նորմերի հետ»:

Ջահելների ահագին մասն էսօր օրինակ ա վեկալում հենց գողերից, ավազակներից, թալանչիներից, պոռնկաբարո ու լկտի ու անամոթ անասուններից, որովհետև ԱՋՆԻՎ ՈՒ ՍԿՋԲՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՅՆ ԷՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԿՅԱՆՔԻ ՈՉ ՄԻ ՇԱՆՍ ՉՈՒՆԻ, ՄԱՆԱՎԱՆԴ, ԹԵ ՈՐ ՀԵՏՆ ԷԼ ԻՍԿԱԿԱՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ Ա:

Ու Հայաստանի էսօրվա բարոյահոգեբանական ընդհանուր մթնոլորտն էնքա՞ն գարշելի ա, որ հուսալիք են Հայաստանի համարյա բոլոր հայերը, ու ջահելներն էլ արդեն համարյա չեն էլ փորձում դառնան մաթեմատիկոս, ֆիզիկոս, բնագետ ևն, ևն, ևն, ևն:

Թե որ մի ընտանիքի հերը իրա ընտանիքի անդամներին անընդհատ ու իզուր տեղը ահավոր ծեծի, ջարդի, բռնաբարի, ու ինքն էլ հարբեցող ու ծայրաստիճան անբարոյական ըլնի, ու էդ ընտանիքի անդամները թողան իրանց հորն ու հայրենական տունն ու գնան, ուր որ կարում են, **ո՞վ կարա մեղադրի դրանց: Ո՞վ կասի, թե խի՞ եք ձեր հայրենական տունն ու ձեր հորը թողնում ու գնում:**

Հակառակը, մարդիկ դրանց կասեն, թե խի՞ էիք էսքան ժամանակ համբերե էդ այլանդակ ու անբարոյական հորը, ու խի՞ եք էսքան ժամանակ մնացե էդ այլանդակ ու անբարոյական տանը:

ՀԱՅՐԵՆԻՔՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ ԿԱՄ ԲԱՐՈՅԱԿԱՐԳԸ

Էս շարադրանքի մեջն էն տեսակ հասարակարգին, ինչի բարոյաիրավական նորմերն ու ողջ կառուցվածքը մարդկության էրազն ա էղե մինչեվ էսօր, որովհետեվ տենց հասարակարգն ամենահանգիստը (ոչ կոնֆլիկտայինը), ամենաարդարն ու ամենաբեղունն ա, կասեմ՝ ԲԱՐՈՅԱԿԱՐԳ, ու ուզում եմ էս գրածիս մեջը համառոտ ասեմ, թե էդ բարոյակարգը ո՞նց են հաստատում, թե բարոյակարգ հաստատելու գիտությունն ի՞նչ ա, ու դա ի՞նչ ա ասում:

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀԵՆՑ ՏԱՆ ՄԻՋԻ ՀԱՍԱՐԱԿԱՐԳՆ Ա, ոչ թե մենակ տունն ու տան մեջի էղած-չեղածը. ոչ թե մենակ էդ տան հերն ա, այլ տան մեջի էդ տան հոր հաստատած կարգ ու կանոնն ա: Կարճ ասած՝ ոչ թե տան հե՛րն ա «հայրենիքը», այլ էդ տան մեջի կարգն ու բարոյականությունը, մնացած ամեն ինչի հետ միասին:

Անբարոյական հոր անբարոյական տունը **մենակ էդ ՀՈՐ հայրենիքն ա**, ու էդ տունն արդեն էդ բռնաբարված ընտանիքի հայրենիքը չի: Էս նույն ձեվով էլ՝ էսօրվա Հայաստանը մեր ժողովրդի (ԹԵ՛ ԷՍՏԵՂ ՄՆԱՑԱԾՆԵՐԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՄԱՍԻ, ԹԵ՛ ԱՐԴԵՆ ԳՆԱՑԱԾՆԵՐԻ) հայրենիքը չի:

Ուրեմն, դատարկ տունը՝ ինքը, իլը **հայրենական օջախ** չի: Սա մենակ է՛ն ժամանակ ա դառնում հայրենական օջախ, երբ մեջը մի ընտանիք ա ապրում ու, ԳՈՆԵ ԷԴ ՏԱՆ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՈՒ ԷԴ ՏԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՈՎ, ԱՐԺԱՆԱՊԱՏԻ՛Վ Ա ԱՊՐՈՒՄ: Էս նույն ձեվով էլ՝ **մենակ քար ու հող ու սար ու ջուրը հայրենիք չի: Սրանք հայրենիք են դառնում, երբ սրանց վրա մի ժողովուրդ ա ապրում՝ իրա ՏԱՆԵԼԻ բարոյաիրավական կարգ ու կանոնով ու ներկա ու անցյալ պատմությունով**:

Բայց երբ էս տան, էս սար ու քար ու հող ու ջրի վրա ապրող ժողովրդին ճորտացնում են ու ստիպում են, որ հարմարվի ԱՆբարոյաիրավական այլանդակ նորմերի, ըլնի թշվառ ու սոված, աղքատ ու անապագա, էդ ժամանակը ժողովուրդը հրաժարվում ա տենց հայրենիքից, ու ստիպված՝ հելնում ԳՆՈՒՄ Ա, ՈՐ ՄԻ ՈՒՐԻՇ ՀԱՅՐԵՆԻՔ ԳՏՆԻ:

Մենք մի 20 տարի առաջ ազատագրինք Ղարաբաղի հողն ու ջուրը, բայց ո՞ւմ էր պետք էդ հողն ու ջուրը, թե որ ղարաբաղցիները պիտի

(էսօրվա պես) թողնեն էդ հողն ու ջուրը ու գնան ուրիշ երկրներում իրանց համար հայրենիք ման գան:

Էսօրվա Հայաստանը, Ղարաբաղն էլ հետը, հլը որ, գող ու հանցագործ պաշտոնյայի ու կաշառակերի ու անբարոյականի հայրենիքն ա, որովհետեվ մենակ սրանք են իրանց հիանալի զգում էսօրվա Հայաստանում, ու մենակ սրանք են, որ ուրիշ երկրում չեն կարա էս նույն վարք ու բարքով ապրեն, որովհետեվ ուրիշ ոչ մի կարգին երկրում սրանց էս անբարոյական շարժուձեվը չեն հանդուրժի:

Ու **հենց սրանք են, որ էսօր ՆՎԱՃԵԼ ԵՆ մեր առաջվա ՔԻՉ ԹԵ ՇԱՏ բարոյական հայրենիքն ու դա դարձրել են իրանց ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ հայրենիքը**:

Ասածիցս հետեվում ա, որ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՍՕՐՎԱ ՎԻՃԱԿՆ ՕՐՀԱՍԱԿԱՆ Ա, ու էս օրհասական վիճակի մեղավորը մեր նախորդ էրկու ու էս ներկա կառավարություններն են, որովհետեվ սրա՞նք են մեր էսօրվա անբարո կարգի ստեղծողներն ու պաշտպանները, ու ՍՐԱՆՔ ՈՉ ՄԻ ԳՆՈՎ ՉԵՆ ՈՒԶՈՒՄ, ՈՐ ԷՍ ԱՆԲԱՐՈ ԿԱՐԳԸ ՓՈԽՎԻ ՈՒ ԴԱՌՆԱ ԲԱՐՈՅԱԿԱՐԳ (ու, իհարկե, ՀԱՄ ԷԼ՝ ՄԵՆՔ, ՈՐՈՎՀԵՏԵՎ, ՎԵՐՋԻՆ ՀԱԾՎՈՎ, ՍՐԱՆՑ ՀԵՆՑ ՄԵ՞ՆՔ ԵՆՔ ԹՈՂԵ ՈՒ ՀԵՆՑ ՄԵ՞ՆՔ ԵՆՔ ԹՈՂՆՈՒՄ, ՈՐ ՄՆԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽԸ):

Մեր էս վերջին երեք կառավարությունը մի սարսափելի գենոցիդ արեց, հենց իրա ժողովրդի համարյա կեսին երկրից քշեց: Մեր էս վերջին կառավարությունը հանդիսավոր օրերին անընդհատ գլուխ ա գովում իրա «տնտեսական բարձր ցուցանիշներով ու ձեռքբերումներով»: Բայց, ոնց որ ասվեց, սրանց ՄԻԱԿ «ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆ» ԷՍ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԷՍ ՍԻՊՏԱԿ ԳԵՆՈՑԻԴՆ Ա, ՊԵՏԱԿԱՆ ԱՀՌԵԼԻ ՊԱՐՏՔՆ Ա ՈՒ ՃՈՐՏԱԿԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԶՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ: Ուրիշ կարեվոր «ձեռքբերում» չկա:

ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՓՐԿԻ

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԲԱՐՈՅԱԿԱՐԳ Ա ՈՒԶՈՒՄ, ու սրա համար էլ պահանջում ա, որ ընտրություններն արդար ըլնեն: Բայց ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԵՆԱԿ-ՄԵՆԱԿ ՀԵՆՑ ԻՐԱՆՔ, ԲԱՐՈՅԱԿԱՐԳ ՉԵՆ ՍՏԵՂԾԻ, ԹԵԿՈՒԶ ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԴԱՐ ԸԼՆԵՆ:

Խի՞:

Որովհետեվ արդար ընտրված նոր իշխանությունը ՊԻՏԻ ԻՄԱՆԱ, թե բարոյակարգը ո՞նց են ստեղծում, ու ո՞նց են նորմալ հասարակությունը սարքում, ու ՊԻՏԻ ՈՒԶԵՆԱ, որ տենց կարգ սարքի, թե չէ՝ հենց

ինքը շատ արագ կայլասերվի ու հին ու անարդար կառավարություններից ոչ մի բանով չի տարբերվի:

Ամենանորմալ հասարակությունը ստեղծելու ձեվերը մարդկությունը հայտնագործել ա էրկու անգամ, հայտնագործել ա ԼՐԻՎ ՊԱՏԱՀԱԿԱՆ, ու անունն էլ դրել ա **դեմոկրատիա** (Ճիշտ կըլներ, որ սրա անունն ըլներ **բարոյակարգ**): Հայտնագործել ա՝ մի անգամ Հին Աթենքում՝ մի 25-26 դար առաջ, մի անգամ էլ՝ Եվրոպայում՝ մի 400 տարի առաջ:

Բայց էս էրկու անգամն էլ դեմոկրատական կարգը լրիվ չի էղել, էղել ա կիսատ-պռատ, ու քանի որ էս ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱՐԳ ԱՍԱԾԸ ՇԱՏ ՓԽՐՈՒՆ ԲԱՆ Ա, սրան վռազ վարկաբեկում են, ու սա այլասերվում ու դառնում ա մի սարսափելի, մի գարշելի կարգ, ինչի անունը կարելի ա, որ սոցիալիզմ դրվի: (Սոցիալիզմի էն այլանդակ վարյանտները, որ էղան Ռուսական կայսրության մեջ, Չինաստանում, Կամբոջայում, Գերմանիայում ու հմի էլ կա Հյուսիսային Կորեայում ու մի քանի ուրիշ տեղ, ակնհայտ սարսափելի ու գարշելի են ու կործանարար:

(Բայց իմ ասած իմաստով սոցիալիստական ա էղե, օրինակ, հին Եգիպտոսի հասարակարգը: Հարյուր տոկոսանոց սոցիալիզմ էր Հին Սպարտայում, ու Սպարտայի սոցիալիզմն էնքա՞ն դասական սոցիալիզմ էր, որ Ռուսաստանի բոլշեվիկներն ու գերմանական նացիստները Սպարտայի սոցիալիստական կարգի մեծ մասը, մանավանդ իրանց իշխանության սկզբում, ուղղակի պատճենեցին: Իմ ասած իմաստով էսօր համարյա ողջ եվրոպայում ա սոցիալիզմ, իլը որ իրա մեղմ ձեվով, ու նույնիսկ ԱՄՆ-ն ա արդեն քիչ-քիչ դառնում սոցիալիստական):

Բարոյակարգ ստեղծելու համար գիտելիք ա պետք, ու էս գիտելիքը ստեղծվել ա վերջին մի քանի դարում (սխալ չի ըլնի, թե որ ասենք՝ վերջին երեք դարում): Բայց էսօր, համարյա ողջ աշխարհում ու մանավանդ՝ Հայաստանում, բարոյակարգի տեսությունը վարկաբեկված ա:

(Էս վարկաբեկված տեսությանն առաջ ասում էին լիբերալիզմ: Լիբերալիզմը լրիվ հակադիր ա սոցիալիզմին: Բայց քանի որ մարդկության փորձը ցույց ա տվե ու էսօր է՛լ ա ցույց տալի, որ սոցիալիզմի թունդ տեսակներն ա՞նպայման են կործանարար, էսօրվա սոցիալիստները ավտորիտարիստներն ու տոտալիտարիստները հայտարարում են, թե իբր իրանք է՛լ են լիբերալ:

(Սրա ցայտուն օրինակը Ժիրինովսկու կուսակցության անունն ա):

(Սրա համար էլ էսօրվա իսկական լիբերալներն իրանց ասում են լիբերթար, իսկ ես, շատ անգամ գործածում եմ թե, «լիբերալ», թե՛ «լիբերթար», թե՛ «լիբերալ-լիբերթար» տերմինները, բոլորն էլ «լիբերթար» իմաստով):

(Լիբերթարիզմի հակառակորդներն էսօր ուրախ-ուրախ հայտարարում են, թե լիբերթարիզմը ողջ աշխարհում պարտվել ա: Համաձայն եմ, պարտվել ա, բայց էս պարտությունը չի նշանակում, որ լիբերթարիզմը սխալ ա: Կարդացեք էս շարադրանքն ու ինքներդ համոզվեք՝ լիբերթարիզմի ասածները սխալ են, թե՞ ճիշտ):

Ու թե որ լիբերթարիզմը սենց վարկաբեկված էլ մնաց, ԿՈՐԾԱՆՎԵԼՈՒ Ա ՄԵՐ ԷՍ ՈՂՋ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, որովհետև **էսօր բոլոր աշխարհում թագավորողը բարոյակարգին հակառակ տեսությունն ա, այսինքն՝ քողարկված սոցիալիզմի տեսությունը, ինչը կործանարար ա, որովհետև սա անընդհատ կրճատում ա նյութական ու հոգևոր բարիքների արտադրությունն ու քչացնում ա մարդկային բարոյականությունը, իսկ Երկիր մոլորակի բնակչությունն էլ անընդհատ ա աճում, չնայած համաշխարհային սարսափելի պատերազմներին:**

Թե էս ողջ քաղաքակրթության գլուխը, իրոք, ինչ ա գալու, մի կողմ թողնենք: Որ սա քանդվավ, մենք ոտի տակ ենք մնալու, սա երևվի հաստատ: Բայց Հայաստանը քարտեզի վրայից վերանալու ա ավելի շուտ, էս գալիք 20-40 տարում, էն էլ՝ թե «բախտներս բերի» ու սա ավելի շուտ չըլնի:

Վերանալու ա, թե որ ժողովուրդն սենց սուսուփուս նստի ու հանգիստ հանդուրժի Հայաստանը նվաճած էն անբարոներին, ովքեր ժողովրդի մեծագույն մասին դարձրել են ճորտ ու ստրուկ, իսկ ժողովրդի էն մասին, ինչը համաձայն չի՝ դառնա ճորտ ու ստրուկ, ստիպել են, որ Հայաստանից հեռանա:

Մեր ժողովրդի էս մտավոր ու քաղաքացիական ծայրահեղ ծուլության պատճառը նախ ՄԵՐ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ, ԱՌՀԱՍԱՐԱԿ, ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆՆ Ա:

ՄԱՍՆ 2-ՐԴ

ԲԱՐՈՅԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Նախ՝ նորից զգուշացնեմ, որ դասական բարոյագիտության, տնտեսագիտության ու իրավագիտության անգլիական ու ավստրիական դպրոցների գործերին իմ ծանոթությունը ոչ մի անգամ էլ լրիվ ու սիստեմատիկ չի, ու էստեղի իմ շարադրանքը, անկասկած, թերություն ու

սխալ էլ ունենա, մանավանդ, որ էս շարադրանքի մեծագույն մասը (ասածս գործերն ուսումնասիրելուց հետո) արդեն ի՛մ մտածմունքի արդյունքն է, ու ո՛չ արտագրություն է, ոչ էլ՝ թարգմանություն:

Ով ուզում ա էդ գործերին կարգին ծանոթանա, պիտի նայի էս շարադրանքի վերջը իմ դրած Հայեկի ու Միզեսի մի քանի անչափ կարեվոր գրքերի ցուցակը, դրանք ճարի ու մի լավ ուսումնասիրի:

ԻՄ ԷՍ ՇԱՐԱԴՐԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ՈՆՑ ՈՐ ԱՐԴԵՆ ԱՍԵԼ ԵՄ, ԷԴ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐԺԵԼՆ Ա:

1. Ի՞ՆՉ Ա ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրի հասարակարգը կազմակերպում են ոչ թե հատուկ «իմաստուն» առաջնորդների ծրագրերով, ԱՅԼ ԷԴ ԵՐԿՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՎ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՎ, ԻՆՉԸ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ Ա ԷԴ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒ ԻՆՉՆ ԷԼ ՀԵՆՑ ԷԴ ԵՐԿՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՉՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԾՐԱԳԻՐՆ Ա:

Էս ծրագիրը, ըստ էության, է՛ն քաղաքացիական պայմանագիրն ա, ինչը «կնքում են» տվյալ երկրի բոլոր քաղաքացիներն (ուրեմն, համ էլ իշխանավորները, պետերի խումբը, պետություն կոչվածը), թե էդ երկրում մարդիկ իրար հետ ի՞նչ կագով, ի՞նչ պայման ու օրենքով պիտի ապրեն:

Մեր ուզածը ԲԱՐՈՅԱԿԱ՛Ն ԿԱՐԳՆ Ա, ուրեմն մեր ուզածը ԲԱՐՈՅԱԿԱ՛Ն ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅՈՒՆՆ Ա, որովհետև ուզում ենք, որ մեր երկրում ԲԱՐՈՅԱԿԱ՛Ն ԿԱՐԳ, այսինքն, ԲԱՐՈՅԱԿԱ՛ՐԳ հաստատվի:

Օրենսդրության խնդիրը՝ օրենքների հենց էն տեսակ ժողովածուներ մշակելն ա, ինչն ապահովի Դեյվիդ Հյումի նշած բարոյական երեք նորմի ԼԻԱԿԱՏԱՐ ՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒ ԱՆԽԱՓԱՆ գործունեությունը (Հյումի նորերը տես մի քիչ հետո):

Իսկ սրա համար էլ ԲԱՐՈՅԱԿԱՐԳ ՀԱՍՏԱՏՈՂ **ԱՄԵՆ ՄԻ բարոյական (ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ, ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ) ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՅԻ) ՀԵՆՑ ԱՌԱՋԻՆ ՀՈԴՎԱԾԸ ՊԻՏԻ ՇԱՐԱԴՐԻ ՀՅՈՒՄԻ ԱՍԱԾ ԵՐԵՔ ՆՈՐՄՆ ՈՒ ՍՐԱՆՑ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ (ինչն աշխարհի ոչ մի սահմանադրության մեջ չկա):**

Սահմանադրության մնացած հոդվածներն էլ պիտի լրացնեն էս նորմերն ու ապահովեն սրանց պարտադիր ու լիակատար ու անխափան գործունեությունը:

ՔՐԵԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԵՐԸ ՊԻՏԻ ՉՀԱԿԱՍԵՆ ՀՅՈՒՄԻ ՆՈՐՄԵՐԻՆ ՈՒ ՈՂՋ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ, ու պիտի լրացնեն սահմանադրության հաստատած նորմերը (վերջին հաշվով՝ Հյումի նորմերը) կիրառելու ձեվերը: Այսինքն՝ պիտի լենացնեն առանձին անհատների մասնավոր սեփականության տիրույթները (դոմենները), ու անհատական իրավունքները:

Օրինակ՝ **ԲԱՆԱԿԻ ՈՒ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՉ ՄԻ ԱՆԳԱՄ ՈՒ ՈՉ ՄԻ ՊԱՅՄԱՆՈՎ ՉՊԻՏԻ ՀԱԿԱՍԵՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻՆ ՈՒ ՉՊԻՏԻ ԿՐՃԱՏԵՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԻՍԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄՆԱՑԱԾ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՉ ՄԻ ՊԱՅՄԱՆՈՎ ՉՊԻՏԻ ՆԵՂԱՑՆԵՆՍՐԱՆՑԱՆԴԱՄՆԵՐԻԱՆՀԱՏԱԿԱՆԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**:

Բացի սրանք, օրենքի առաջ բոլորի հավասարության նորմը պահանջում ա, որ **բանակն իր առանձին զինվորական ոստիկանությունն ու դատարանը** ՉՈՒՆԵՆԱ, ՈՒ ԹԵ՛ ԲԱՆԱԿՈՒՄ, ԹԵ՛ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՉԼԻՆԵՆ «ՍԵՓԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՊԵՍ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ: Սա նշանակում ա, որ ԴԱՏԱՒՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՊԻՏԻ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ըլնի:

Եթե Հյումի երկրորդ նորմի ասած օրենքը (տես հետո) մեր օրերի Արեվմտյան Եվրոպայում, Անգլիայում կամ ԱՄՆ-ում կիրառվող հռոմեական իրավունքի թեզերի պես պարտադիր գործող թեզերի մի ամբողջություն ըլնի (դրանց միջի «սոցիալիզմը» ուրիշ անբարո դրույթները հանած ՈՒ ԳՐՎԱԾ Հյումի նորմերի ոգով), ու իշխանությունն էլ բաժանված ըլնի երեք անկախ մասի՝ դատական, օրենսդիր ու գործադիր, ընդ որում՝ իշխանության մարմիններն էլ լրի՛վ ըլնեն ընտրովի (ՎԵՐԻՑ ՎԱՐ ՈՒ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՑՈՒՑԱԿԱՑԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ) ու բացի սա, գործադիր իշխանության ամեն մի պաշտոնյան ու հիմնարկը (օրինակ, նախարարությունը կամ վարչությունը) ՏԱՐԵԿԱ՛Ն ՀԱՇՎԵՏՈՒ ԸԼՆԻ (ԱՆԿԱԽ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ), ՈՒ ՀՍԿԵԼԻ ՈՒ ՊԱՏԺԵԼԻ ԸԼՆԻ, ու համ էլ ըլնի տնտեսական օրենքով պաշտպանված ազատ մրցություն, խոսքի, մամուլի ու ինֆորմացիա ստանալու օրենքով պաշտպանված ու անպայման գործող ազատություն, էդ ժամանակ, ու մենակ էդ ժամանակ, էղած հասարակարգը կըլնի ԲԱՐՈՅԱԿԱՐԳ:

Ո՞ր մի հայը կասի, որ մեր ուզածը հենց է՛ս կարգը չի, հենց բարոյակա՛րգը չի:

Հայաստանի հասարակարգը հաստատող մեր վերջին երեք սահմանադրության մեջը լիքը հակասություն կա, ու էդ հակասությունները թույլ են տալի, որ կառավարությունը զավթի ողջ իշխանությունը, հեչ անի անհատի հիմնական համարյա բոլո՛ր իրավունքները, խլի ուզածդ անհատի մասնավոր սեփականությունը (դա մեկ-մեկ նույնիսկ հայտարարելով «պետության գերակա շահ»), ու իրա հարկային, մաքսային ու կոմունալ տարիֆներով ուղղակի ու բացահայտ ու պետական մակարդակով լկտի-լկտի թալանի իրա սեփական ժողովրդին:

Հայաստանի էսօրվա սահմանադրությունը ոչ մի անգամ դեմոկրատական ու իհարկե՝ բարոյական չի, ու սրա հաստատած քաղաքական կարգը բարոյակարգ չի:

Սահմանադրությունը է՛ն քաղաքացիական պայմանագիրն ա, ինչով ժողովրդի մեծամասնությունը իրա երկիրը կառավարող վճարովի «ծառաներ» ա վարձում, ճիշտ ա, մի քիչ տարօրինակ ձեվով, ընտրելով, ու իբր՝ մեծամասնության կամքով:

Ոնց որ ասվեց, սահմանադրությունը է՛ն ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ Ա, ինչին համաձայն ա տվյալ երկրի քաղաքացիների մեծամասնությունը, ու ինչն էդ մեծամասնությունը պարտադիր ա համարում էդ երկրի բոլո՛ր-բոլո՛ր քաղաքացիների համար, անկախ դրանց պաշտոններից:

Բայց ո՞վ ա տեսե, որ մեկի հետ պայմանը նե՞նց կապես, ինչն էդ մեկին թույլ տա, որ ԷԴ ՄԵԿՆ անի **ամե՛ն-ամե՛ն** ինչը, քեզ էլ զրկի իրան հսկելու իրավունքից է՛լ, հաշվետվություն պահանջելու իրավունքից է՛լ, պայմանագիրը խզելու իրավունքից է՛լ, իրան (օրենքով) պատժելու իրավունքից է՛լ:

2. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՄԻ ՆՈՐՄԵՐԸ

Մեր էսօրվա ողջ քաղաքակրթությունը, քիչ՝ թե շատ, հիմնված ա ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ հետեվյալ երեք ՆՈՐՄԻ վրա:

1. ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՐԱ ԱՆՁԵՌՆՄԽԵԼՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԸ (բացի մենակ ու մենակ հաջորդ կետով (այսինքն՝ պառլամենտի ընդունած օրենքով) որոշվող ԹԵԹԵՎ հարկերը): Սա, անկասկած, նշանակում ա, որ ՈՉ ՄԵԿԸ, ՈՉ ԷԼ ՆՈՒՅՆԻՍԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (պետերի խումբը), իրավունք չունի խլի

ամե՛ն մի է՛ն տեսակ քաղաքացու անհատական ունեցվածքը, ով հանցագործ չի, իրավունք չունի նույնիսկ «պետության գերակա շահի» պատրվակով, ինչն ակնհայտ հակասում ա էս նորմին:

Սա նշանակում ա, որ անհատական ունեցվածքի տերը կարա իրա սեփականությունը տնօրինի իրա ուզած ձեվով, նվիրի կամ կտակի իրա ուզած մարդուն, ու նույնիսկ վառի (թե որ հարկերը մուծել ա):

2. Անհատական ունեցվածքը սրա տիրոջ ուզած ձեվով ուրիշների հետ պարտադիր գործող բարոյական (օրինական) պայմանով տնօրինելու նորմը: Այսինքն՝ հանրության անդամների (մարդկանց) հարաբերությունները պարտադիր գործող ու անփոփոխ պայմաններով (այսինքն՝ անփոփոխ ու պարտադիր գործող օրենքներով, ու ոչ թե մահակով կամ թնդանոթով) վարելու նորմը, ենթադրելով, որ ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋ ԲՈԼՈՐ ԷԼ ՀԱՎԱՍԱՐ ԵՆ:

3. ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԱԶԱՏ ՄՐՑՈՒԹՅԱՆ (այսինքն՝ ինչ որ իմաստով նորից օրենքի առաջ բոլորի հավասարության) նորմը, որպես սոցիալական արդարություն հաստատելու ու նյութական ու հոգեվոր բարիքներն արդար բաշխելու միակ ու անհատից կամ անհատների կազմակերպված խմբից անկախ միջոցը, ու համ էլ որպես նոր տեխնոլոգիա ու առհասարակ՝ նոր բան հայտնագործելու ամենաբեղուն միջոցը:

Սրա համար էլ ՑԱՆԿԱՑԱԾ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ՀԵՆՑ ՍՐԱՆՔ ՊԻՏԻ ԸԼՆԵՆ, որովհետեվ մենակ սրա՜նք ու սրանք իրագործող սահմանադրական, քրեական ու քաղաքացիական օրենքներն են, որ կարան սրանով ղեկավարվող երկրում ԲԱՐՈՅԱԿԱՐԳ հաստատեն:

Ցանկացած բարոյական սահմանադրության նպատակը պիտի ըլնի Հյումի էս երեք նորմը երկրում իրագործելը, ու հենց էս նորմերով էլ պիտի հաստատվի լիբերթար կոչված բարոյակարգը: Լիբերթար բարոյակարգն էղել ա մարդկության վաղեմի երազանքը:

Տնտեսագիտական ու իրավագիտական վերլուծությունն ու մարդկության փորձը ցույց են տալի, որ հասարակության մեջն ինչքան էս նորմերն ավելի լրիվ իրագործվեն, էնքան էդ հասարակության անդամ անհատի ազատություններն ու բարեկեցությունը շատ կըլնի, ու հոգեվոր ու նյութական բարիքների արտադրությունն էլ կըլնի հնարավոր ամենաշատը:

Բայց էս նորմերն իրագործելը չափազանց դժվար բան ա, ու սրանք ոչ մի երկրում ոչ մի անգամ լրիվ չեն իրագործվե: Ամենաշատը սրանք իրագործվել են 18-19-րդ դարերի Անգլիայում, ու մեկ էլ՝ ԱՄՆ-ում, անկախության դեկլարացիան ընդունելուց հետո, ԲԱՅՑ ՄԵՆԱԿ ՄԻ ԿԱՐԾ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ՄԵՆԱԿ ՄԻ ՔԱՆԻ ՏԱՍՆԱՄՅԱԿ, ԷՆ ԷԼ՝ ԿԻՍԱՏ-ՊՌԱՏ:

Հետո սկսվեցին սոցիալիստական ու նացիստական համաճարակները, ու էս նորմերի մի մասն արդեն կիրառող բոլոր երկրներն էլ քիչ-քիչ հրաժարվան կամ հրաժարվում են սրանցից, ու էդ երկրները կամաց-կամաց դառնում են մի կենտրոնից ղեկավարվող տնտեսության կողմնակից, այսինքն՝ սոցիալիզմի մի որեվէ տեսակի կողմնակից:

Էսօրվա Եվրոպան (Անգլիան էլ հետը), ոնց որ ասվեց, ըստ էության, սոցիալիստական ա, իսկ ԱՄՆ-ը բռնել ա սոցիալիզմի ճամփեն (երեվի Ֆրանկլին Ռուզվելտի թեթեվ ձեռքով, այսինքն՝ 1936-ից):

3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Նախ տեսնենք, թե ի՞նչ ա անհատական կամ մասնավոր սեփականությունը, որովհետեվ մարդիկ սա շատ անգամ սխալ են հասկանում: (Նկարագրությունս երկար ա, ինչի համար ներողություն եմ խնդրում, բայց ավելի կարճը չկարեցա անեմ):

Անհատական (several, private, մասնավոր) ունեցվածք (սեփականություն) ասելով՝ պիտի հասկանանք ոչ թե մենակ նյութական արժեքները, այսինքն՝ մարդու հնարած է՛ն բաները, որ շոշափելի են, նյութական են, ու կարան փողով ծախվեն կամ փոխանակվեն, նվիրվեն, կտակվեն, այլեվ համ էլ է՛ն բաները, որոնց կարան վնաս տան, որոնց սահմանները կարան խախտեն, որոնցից անհատը կարա հրաժարվի, որոնք անհատը կարա կամավոր հանձնի ուրիշներին (ձրի կամ աշխատավարձի դիմաց), որոնք անհատը կարա կամավոր ոչնչացնի, որոնք կարան անհատից զոռով խլեն կամ անհատին զոռով զրկեն դրանցից:

Օրինակ, ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԸ, ԺԱՄԱՆԱԿԸ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՎՈՐԵԼՈՒ ՈՒ ՍՈՎՈՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՄ ԲՈՒԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԽԻՂՃԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ, ԿԱՐԾԻՔՆԵՐՆ ՈՒ ՍՐԱՆՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԵՆՑԱՂՆ ՈՒ ՍԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ, ՈՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ՝ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՉՎԱԾՆԵՐԸ:

ԷՍ ՎԵՐՁԻՆՆԵՐԸ ԼՐԻՎ ԷԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔ ԵՆ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՍՐԱՆՔ ԷԼ ԿԱՐԱՆ ԾԱԽՎԵՆ, ՀԱՆՁՆՎԵՆ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ, ԽԼԵՆ ՄԱՐԴՈՒՑ ևն, ևն:

Անհատական սեփականության վերի սահմանումից բխում ա, որ **ցանկացած «կյանքային» վեճը** (այսինքն՝ ոչ բնագիտական, ոչ մաթեմատիկական, ոչ տրամաբանական-փիլիսոփայական, ոչ լեզվաբանական ու էս կարգի ուրիշ ցանկացած վեճը), ու **համ էլ՝ դատարանով լուծվող ցանկացած վեճը, անպայման վերաբերում ա անհատական-մասնավոր սեփականությանը**:

(**Օրինակ՝ մարդու արժանապատվությունն էլ ա անհատական ունեցվածք, ու երբ մեկին անհարկի անպատվում կամ զրպարտում են, ուրեմն վնասում են էդ մարդու արժանապատվություն-սեփականությունը**):

Անհատական ունեցվածք ա համ էլ մարդու սեփական կենցաղը, ընտանեկան կյանքը, սեքսուալ կյանքը, ու երբ մեկը «վնասում» ա սրանք, ուրեմն՝ խախտում ա էդ մարդու անհատական գործունեության կամ անհատական ազատության տիրույթի (դոմենի) սահմանները:

Առհասարակ, ԷՆ ԱՄԵՆ ԻՆՉԸ (ԿԱՄ ԱՄԵՆ ԻՆՉԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ), որ անհատը կարա տնօրինի իրա սեփական հայեցողությունով, ԿԱՐԱ ԾԱԽԻ ԿԱՄ ՆՎԻՐԻ ԿԱՄ ՀԱՆՁՆԻ ՈՒՐԻՇԻՆ, ՈՒՆԵՑՎԱԾՔ Ա, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ա:

Օրինակ՝ երբ մեկն աչք ա քցում ուրիշի կնգան, կամ էլ՝ ստիպում ա, որ ուրիշներն ապրեն ու վարվեն իրա ուզածի պես, բոլորս էլ մտածում ենք, որ էդ տիրույթի տերը նեղանալու կամ վիրավորվելու իրավունքն ունի՛, ուրեմն, համ էլ բողոքելու կամ վնասը հատուցելու պահանջի՛ իրավունքն ունի:

Մի ուրիշ օրինակ: **Երբ մեկը աշխատանքի ա ընդունվում, ինքն իրա ազատության ու էլի լիքը սենց բաների ահագին մասը կամավոր հանձնում ա գործատուին, ու ինչքան երկրում գործազրկությունը շատ ա, էնքան ավելի շատ ա հանձնում իրա ազատություններն ու իրավունքները, ու էնքան ավելի շատ ա ճորտանում:** Էս մարդը, ճիշտը որ ասենք, իրա ազատություններն ու իրավունքները ծախում ա գործատուին:

Մի օրինակ էլ բերեմ, որ ես եմ հորինե, այսինքն՝ հնարովի ա:

Պատկերացնենք, որ մեկը գնացել ա դատավորի մոտ ու բողոքում ա, թե էսինչն իրան վնասել ա: Ենթադրենք համ էլ, որ հենց նոր ասածս իմաստով անհատական սեփականություն չկա, կամ մենակ հանրային սեփականություն (համարյա, ոնց որ Սովետի օրերին, կամ էսօր-

վա Հյուսիսային Կորեայում): Էդ ժամանակը դատավորն էդ մարդուն ասելու ա.

– Դու ախմախ բաներ ես ասում: Ի՞նչ վնա՛ս, ի՞նչ բա՞ն: Դու չե՞ս հասկանում, որ դու ոչ մի անհատական սեփականություն էլ չունես: Թե որ ասածդ բաները քո՛ւնը ըլնեին, բողոքելու իրավունք կունենայի՛ր, բայց հմի բողոքելու իրավունք չունես, որովհետև դու անհատական ոչ մի նենց բան չունես, որ մենակ քունը ըլնի: Գնա՛, ամեն ինչ կարգին ա, ամեն ինչ արդար ա, ու ամեն ինչն էլ բարոյական ա:

ՈՒՐԵՄՆ (ի՛մ կարծիքով, հետեվելով Հյումի նորմերին), ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՉՎԱԾՆԵՐԸ, ԼՐԻՎ ՈՒ ԱՌԱՆՑ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՆ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱ՛ԾՔ ԵՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈ՛ՒՆ ԵՆ:

Սրանց ես մեկ-մեկ ասում եմ «անտեսանելի» կամ «անշոշափելի» կամ «աննյութ ունեցվածք», որ տարբերեմ նյութական ունեցվածքից:

(Էս չորս տերմինը՝ **անհատականն ու մասնավորը**, **ունեցվածքն ու սեփականությունը**, ամեն տեղ նույն իմաստով եմ գործածում):

4. ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

բ) Երկրորդ նորմը նշանակում ա, որ **հանրության բոլոր անդամներն էլ պիտի պարտադիր ենթարկվեն իրավակարգին: Սա նշանակում ա, որ օրինակ՝ ինքնադատաստանը կամ վրիժառությունն արգելված ա. որ անհատների վեճերն իրանց անհատական սեփականության (ունեցվածքի) վերաբերյալ՝ հարթվում են մենակ ու մենակ օրենքով, ու ոչ թե բռնի ուժով**:

Ընդ որում, ոնց որ ասվել ա, ենթադրվում ա, որ ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋ ԲՈԼՈ՛ՐՆ ԵՆ ՀԱՎԱՍԱՐ, թե՛ բոմժը, թե՛ երկրի պրեզիդենտն ու նախարարները, ու որ ՕՐԵՆՔԸ ՊԱՐՏԱԴԻՐ Ա ԳՈՐԾՈՒՄ ՈՒ ՀԱՄԱՐՅԱ ԱՆՓՈՓՈԽ Ա: Ու իհարկե, որ միշտ կա անխափան գործող անմեղության վարկածն ու դատարանում պաշտպանվելու իրավունքը ևն:

Այսինքն՝ **հռոմեական իրավունքի հիմնական, անկյունաքարային դրույթներն ա՛նպայման են անփոփոխ**, **որ անհատը հնար ունենա իրա գործունեությունը պլանավորելու, ու որ անհատը կամ անհատների խումբն օրենքի անխափան գործունեության վրա ոչ մի ազդեցություն չունենա** ևն:

Ուրեմն, **օրենքի առաջ բոլոր էլ պիտի հավասար ըլնեն, ու պիտի հավասար խստությամբ ու հավասար չափով էլ պատժվեն ՆՈՒՅՆ**

հանցանքի համար, անկախ իրանց դիրքից ու պաշտոնից: Այսինքն՝ օրենքը «կույր ա», վերացական ա, ու բոլո՛ր են հավասար էս վերացական օրենքի առաջը, երբ ու որտեղ էլ էս օրենքի կարիքն ու պահանջն առաջանա:

Ես, հենց է՛ս տեսակ հասարակարգին եմ ասում՝ **ԲԱՐՈՅԱԿԱՐԳ**, որովհետեվ նախ Հյումի նորմերը բարոյական հիմնական նորմերն են (ոնց որ մի քիչ հետո կտենանք) ու հենց սրանցից են բխում մնացած բոլո՛ր-բոլո՛ր նորմերը, երկրորդն էլ՝ սրանց վրա հիմնված հասարակարգը, իրոք որ, ԱՄԵՆԱԲԱՐՈՅԱԿԱՆՆ Ա, **ԱՄԵՆ** տեսակետից):

ՄԱՍՆ 3-ՐԴ

ԲԱՐՈՅԱԿԱՐԳԻ ԻՄԱՑԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
1. ԱՊԱԳԱՅԻ ԱՆՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակության ու, առահասարակ, կյանքի ապագայի գիտական գուշակությունը, այսինքն՝ մանրամասն ու Է՛ն տեսակ գուշակությունը, ինչը, օրինակ, ֆիզիկոսներն են անում (երբ գուշակում են Արեվի ու Լուսնի խավարմունքները ևն), ԱՆՀՆԱՐ Ա:

Անհնար ա՝ հենց սկզբունքով, ու ոչ միայն մարդկային գիտելիքների թերության կամ պակասի պատճառով: ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱ Է՛Լ ԹԵՐԻ Ա ՈՒ ՍԽԱԼԱԿԱՆ, ՈՒ ՍԵՆՑ Է՛Լ ԿՄՆԱ, որովհետեվ մարդու արած եզրակացությունները հա էլ մասնավորն ընդհանրացնելով ու սրանք ընդհանուրի վրա տարածելով են (ինդուկցիայով են): Էս անհնարինության պատճառն Է՛ն հանգամանքն ա, որ ՄԱՍԻ ՎԱՐՔԻՑ ԱՐԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԲՈՂՋԻ ՎՐԱ ՏԱՐԱԾԵԼԸ ՀԱ Է՛Լ ԿԱՍԿԱԾԵԼԻ Ա:

Երբ ֆիզիկոսն ուզում ա իրա հետազոտելիք մարմնի կամ մարմինների համախմբի ապագան գուշակի, պիտի նախ մի ընդհանուր օրենք ունենա, ինչը մոդելավորված ըլնի մի կամ մի քանի դիֆերենցիալ հավասարումով (օրինակ՝ Նյուտոնի օրենքների կամ Շրեդինգերի հավասարման պես): Բայց մենակ սրանք հերիք չեն: Սրանց հետ ֆիզիկոսը պիտի ունենա համ էլ էդ համախմբի սկզբնական վիճակը, սկզբնական վիճակի տվյալները, օրինակ՝ մարմինների սկզբնական դիրքերն ու սկզբնական արագությունները:

«Կյանքի խնդիրները» լուծելուց հասարակագետը սրանց պես հավասարում չունի ա՛ռհասարակ: Բայց թե որ ունենար էլ, մեկ ա, չէր ունենա իրա հետազոտելիք համակարգի սկզբնական վիճակի տվյալ-

ները, այսինքն՝ չէր ունենա Ֆրիդրիխ Ավգուստ Հայեկի ասած ՏԵՂԻ ՈՒ ՊԱՀԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ:

Նույնիսկ բիզնեսմենը, բացի առողջ բանականությունով (ֆահմով, քցել-բռնելով) արած տնտեսական մոտավոր «հաշվարկը», պիտի լիքը ուրիշ բան հաշվի առնի: Պիտի իմանա է՛ն երկրի է՛ն մասի (կամ թաղի, կամ փողոցի) մարդկանց պահանջներն ու բնավորությունը, որտեղ որ ի՛նքն ա աշխատում, պիտի իմանա էդ երկրի գրած ու չգրած օրենքները, պիտի իմանա տեղի չինովնիկներին ու կապ ունենա սրանց հետ, պիտի իմանա սրանց տրվող կաշառքի չափերն ու ձեվերը, պիտի «մարկետինգ անի» ևն, ևն, ևն:

Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկը հենց սրա՛նց պես բաներին ա ասում ՏԵՂԻ ՈՒ ՊԱՀԻ ՏՎՅԱԼՆԵՐ: Ու **հենց տեղի ու պահի տվյալներն են տվյալ անհատին առավելություն տալի իրա մրցակիցների համեմատ**:

ԷՍ ՏՎԱԼՆԵՐՆ ՈՒ ՍՐԱՆՑ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵԶԱԿԻ ԵՆ, ԹԱՔՈՒՆ ԵՆ ՈՒ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԵՆ, ու հենց սրա՛նք պիտի ըլնեին ապագան մաթեմատիկայի դիֆերենցիալ հավասարումներով որոշելու «Կոշու խնդրի» սկզբնական պայմանները: Ակնհայտ չի՞, որ սրանք **մի՛շտ են** եզակի, **մի՛շտ են** թաքուն ու **մի՛շտ են** փոփոխական, ուրեմն, համ էլ **մի՛շտ են** (գոնե իրանց մի մասով) անհայտ: Սրա համար էլ ԱՊԱԳԱՅԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀՆԱՐ Ա:

Մեկ-մեկ էլ ասում են, թե մաթեմատիկական մեթոդներով հնարավոր ա ապագայի ստատիստիկ (վիճակագրական, հավանական) նկարագրությունը: Բայց ախր խոշոր բիզնեսն ու մի երկրի տնտեսությունը ստոխաստիկ համակարգ են (այսինքն՝ այլանդակ բարդ են ու մարդկային իմացությունից վեր են, համ էլ հենց սրանց ապագան չիմանալու իմաստով), իսկ սրանց ապագայի իմացությունը սկզբունքո՛վ ա անհնար: Համ էլ, էդ ո՞վ ասեց, որ ֆիզիկայում հաջող գործող ստատիստիկայի օրենքներն ու բաշխումները հասարակության մեջ էլ են գործում:

Մեր ունեցած օրենքները, ամենաշատը, հասարակության բարոյական ու իրավական նորմերն են, բայց հասարակության անդամների համակեցության բոլոր նորմերն էլ՝ պայմանական են (conventional են), ու շատ ու շատ ավելի բարդ ու փոփոխական են: Մինչեվ հիմա հլը ոչ մեկը չի կարացե էս նորմերը մոդելավորի մաթեմատիկական դիֆերենցիալ հավասարումներով, ու էն բաները, ինչը որ անում են «ֆինանսական կամ ակտուարական մաթեմատիկայի մեթոդներով, ուղղակի անընդունելի են բնագիտության հիմնական սկզբունքների տեսանկյունից:

Էս իմաստով, «մակրոէկոնոմիկա» կոչվածի մաթեմատիկական բոլո՛ր մեթոդներն էլ անընդունելի են, ու վերջին հարյուրամյակի փորձն էլ ցույց ա տալի, որ սրանց ոչ մի գուշակությունն էլ չի իրականանում: Կոպիտ ասած՝ մաթեմատիկական մակրոէկոնոմիկայի գուշակություններն ու ապագայի տնտեսական ծրագրերը պսեվդոգիտական շառլատանություն են, չնայած ընդունված են ու մոդա են ողջ աշխարհում, հակառակ տնտեսագետների ավստրիական դպրոցի բոլոր առարկություններին ու զգուշացումներին:

Ու մենք նույնիսկ չգիդենք էլ, թե հասարակության ընթացքը կառավարող («օբյեկտիվ») օրենքներ (օրինակ՝ ասածս ֆիզիկայի օրենքների պես օրենքներ) կա՞ն, թե՞ չէ:

Հետո, ֆիզիկայի օրենքները ստուգելի են, ստուգելի են փորձո՛վ, բայց, օրինակ, Հայաստանի վրա հո փորձ չե՞ս դնի, որ իմանաս, թե էդ փորձի հետեվանքով Հայաստանը կծաղկի՞, թե՞ կկործանվի: Բա որ կործանվե՞ց:

Այ, հենց էս պատճառներով էլ **ապագայի մանրամասն ու գիտական գուշակությունն անհնար ա, ոնց որ կյանքի՛ գուշակությունն ա անհնար**: Նույնիսկ մի անհատը չի կարա հենց իրա՛ հաջորդ՝ ընդամենը մի օրվա ապագան մանրամասն գուշակի:

Էլի շեշտեմ, որ, խիստ զարմանալի ա ու ողբերգական, որ մակրոէկոնոմիկան (էսօրվա աշխարհում) իբր հենց սենց գուշակություն ա անում, ու համոզել ա բոլորին, կամ համարյա բոլորին, ու նույնիսկ խոշոր անհատ բիզնեսմեններին, թե իբր ինքը կարում ա ապագան մաթեմատիկայով գուշակի: Քաղգործիչներին ու պետերի խմբին էս մակրոէկոնոմիկական շառլատանությունը շա՛տ ա ձեռ տալի:

2. ՕՐԵՆՔԻ ԱՂԲՅՈՒՐԸ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առհասարակ, ԹԵ ՈՐ ՉԸԼՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՉԻ ԸԼՆԻ ՀԱՄ ԷԼ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԱՌՆԱ ԳԱԶԱՆՆԵՐԻ ՈՒՄԱԿ:

Անգլիացի նշանավոր մտածող Ջոն Լոկը, Հյումից էլ առաջ, ասել ա. **«Չկա անհատական ունեցվածք, չկա, ուրեմն, արդարություն»**, ու սա իհարկե ճիշտ ա:

Ուրեմն.

ԵԹԵ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ՉԸԼՆԻ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՎԵՐԱԾՎԻ ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ, ավելի ճիշտ՝ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԿՎԵՐԱՆԱ, ՈՒ ԱՄԵՆ ԻՆՉ ԿՈՐՈՇՎԻ ՄԵՆԱԿ ՈՒԺՈՎ:

«Արդար ու ճիշտ կըլնի» մենակ ուժեղը, իսկ թույլը հա էլ անարդար ու սխալ կըլնի: Այսինքն՝ թե որ մասնավոր սեփականությունը չըլնի, «ՕՐԵՆՔԻ» ԱՂԲՅՈՒՐԸ ԿԸԼՆԻ ՄԵՆԱԿ ՈՒԺԸ, ու հասարակությունը կդառնա ոհմակ, ու էդ «օրենքն» էլ կըլնի ջունգլու օրենքից ավելի վատը:

Խի՞: Որովհետեվ **արդարության մասին վեճերն էլ են վերաբերում անհատական սեփականությանը, իսկ թե որ էս վերջինը չէղավ, էլ ինչի՞ց վիճեն**:

ԵԹԵ ՉԿԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔ, ՉԿԱ ՀԱՄ ԷԼ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Խի՞: **Որովհետեվ բարոյականության մասին վեճերն էլ են վերաբերում անհատական սեփականությանը, իսկ թե որ էս վերջինը չէղավ, էլ ինչի՞ց վիճեն**:

Բայց.

ԵԹԵ ՉԿԱ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՒՐԵՄՆ ՉԻ ԼԻՆԻ ՀԱՄ ԷԼ ՕՐԵՆՔԻ ԿԱՐԻՔԸ, ՈՒ ԱՄԵՆ ԻՆՉ ՈՒԺՆ Ա ՈՐՈՇԵԼՈՒ:

(Պետությունների մակարդակով էս «ուժի իրավունքն» էսօր փաստ ա, որովհետեվ «միջազգային իրավունք» կոչվածը շատ ա հեռու հռոմեական իրավունքից, ու հեռու ա հենց Էն պատճառով, որ էս «միջազգային իրավունք» ասվածը ոչ մի անգամ հստակ չի սահմանում, թե ի՞նչ բան ա պետության Էն «մասնավոր» սեփականությունը, ինչի նկատմամբ ուրիշ պետությունները չպիտի ոտնձգության իրավունքն ունենան):

Կնշանակի.

ԲԱՐՈՅԱԿԱՐԳԻ ՕՐԵՆՔԻ ԱՂԲՅՈՒՐԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔՆ Ա, ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

(Այնինչ մեր սահմանադրության մեջը գրած ա, որ պետությունը (այսինքն՝ պետերի խումբը) «պետական գերակա շահերի համար՝ ուզածդ մարդու անհատական սեփականությունը խլելու» իրավունքն ունի՞:

(**Թե որ սա՛ չի թալանչի ավազակի հավատամքը, Էն ավազակի, ով ուրիշներին թալանում ա իրա «գերակա շահերի համար», բա ի՞նչն ա**: Հենց էս թալանչիական օրենքով էլ մեր պետական խոշոր պաշտոնյաները Երեվանի կենտրոնում խեղճուկրակ մարդկանցից խլին էդ մարդկանց տներն ու ծախին ու փողն էլ դրին իրանց ջեբերը):

Լավ կըլնի, որ արդարություն հաստատող օրենքն ըլնի Էն բարոյական օրենքը, ինչի միակ ու մշտական նպատակը Հյումի ասած բարոյական նորմերը հաստատելն ա, այսինքն՝ ԲԱՐՈՅԱԿԱՐԳ հաստա-

տելն ա: Էլի եմ ասում, սա էղել ա ու սա էսօր էլ ա մարդկության մեծագույն մասի էրազանքը:

ԵԹԵ ՀԱՆԿԱՐԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ԼՐԻՎ ՎԵՐԱՑՆԵՆՔ, ԼՐԻՎ ԿՎԵՐԱՑՆԵՆՔ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԵՂԱՎ, ՉԻ ԸԼՆԻ Ո՛Չ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ՈՉ Է՛Լ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: ԻՆՉՔԱՆ ՔՉԱՆՈՒՄ Ա ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԷՆՔԱՆ ԷԼ ՔՉԱՆՈՒՄ ԵՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Հենց սրա՛ համար ա, որ Հյումի նշած երեք նորմն էլ համարվում ա **բարոյական նորմ**:

Ուրեմն, Հյումի նորմերն ինչքան ավելի քիչ իրագործվեն, այսինքն՝ մարդու անհատական սեփականության իրավունքն ինչքան քչացնեն, էնքան էլ հասարակարգը կդառնա անբարո:

Հիշենք, որ **մարդու պատիվը, ազատ խոսքի իրավունքն ու մարդու մյուս (օրենքը չխախտող) ազատությունները, սեփական կենցաղը վարելու ձեվը, խիղճը, կրոնական համոզմունքներն ու աթեիզմի կամ թեիզմի իրավունքն ու լիքը ուրիշ բան էլ սրանց հետը՝ անհատական սեփականություն են**:

Այնինչ.

Սոցիալիստական պետություններում «արդարությունը» որոշում ա կոմկուսի վերնախավը:

Նացիստական պետություններում «արդարությունը» որոշում ա նորից կուսակցությունը (նացիոնալ-սոցիալիստականը (sic!), մուսավաթականը, դաշնակցականը, երիտթուրքերի իթթիհատականը ևն):

Կրոնական պետություններում «արդարություն» հաստատողը տիրող կրոնն ա՝ իրա վերնախավի հոգեվորականներով:

Ու անհատների վեճերն ու կոնֆլիկտներն էս պետություններում մեծ մասամբ որոշվում են ոչ թե պարտադիր գործող ու անփոփոխ օրենքով, այլ ազդեցիկ չինովնիկների հենց էս «զակոն-պանյատյաներով», կապրիզներով, ու շատ անգամ՝ սրանց հեռախոսային զանգերով:

Էս ձեվով՝ **արդարություն հաստատող ընդհանուր ու դիկտատոր օրենքը մասնատվում, բաժանվում ա հազարավոր մասնակի ու իրարից բավական տարբեր օրենքի, որովհետև էս անգամ՝ քանի հատ չինովնիկ եղավ՝ էնքան հատ էլ օրենք կըլնի, ու օրենքն էլ արդեն վերացական ու «կույր» չի ըլնի**:

Այնինչ, արդարություն հաստատող օրենքը պիտի հեչ մի գրամ էլ կախված չըլնի անհատի կամ անհատների խմբի կամքից կամ որեվէ խավի ցանկություններից ու շահերից, **չպիտի, օրինակ, ադամանդագործին, օլիգարխին ու դեպուտատին ավելի շատ իրավունք տա,**

իսկ ատամնաբույժին կամ տաքսիստին՝ շատ ավելի քիչ:

Արդարություն հաստատող օրենքը պիտի բոլորի համար նույնն ըլնի, ու պիտի պարտադիր գործող ու անփոփոխ ըլնի, այսինքն՝ պիտի «կույր ըլնի», **պիտի վերացական ըլնի ու արտահայտի բոլորի՛ (կամ գոնե ու առնվազն՝ «մեծամասնության») շահերը**:

Երբ Հյումի նորմերը ոչ լրիվ են գործում, էդ ժամանակ փոխվում են՝ լավ ու վատի, արդար ու անարդարի, ճիշտ ու սխալի, ազնիվ ու անազնվի հասկացությունները, ու շատ անգամ սրանք լրիվ են իրենց տեղերը փոխում: Վատը համարվում ա լավ, անարդարը՝ արդար, սխալը՝ ճիշտ, չարը՝ բարի, անազնիվը՝ ազնիվ, կաշառքը՝ վաստակ (ոնց որ էսօր Հայաստանում են ասում, այսինքն՝ ասում են, թե «դատավորը փող ա աշխատում», փոխանակ ասեն, որ «փող ա շորթում») ևն:

ՄԵՐ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵՐԱԾ ԱՄԵՆԱՄԵԾ ՎՆԱՍԸ ՀԵՆՑ ԷՆ ԲԱՆՆ Ա, ՈՐ ՍՐԱՆՔ ՍՊԱՆԻՆ ԷՆ ՀԱՎԱՏԸ, ԹԵ ԲԱՐՈՅԱԿԱՐԳԸ ՀՆԱՐԱՎՈ՛Ր Ա: **Էս իշխանությունները համ էլ անվանարկին, վարկաբեկին էս կարգը՝ հայտարարելով, թե իբր էսօրվա կարգը կապիտալիստական կամ դեմոկրատական ա**:

3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔՆ ՈՒ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

ԵՐԲ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՉԿԱ, ՉԿԱ ՀԱՄ ԷԼ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒՐԵՄՆ, ՉԿԱՆ ՀԱՄ ԷԼ ՆՈՐ ԲԱՆ, ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒ ԿԱՐԻՔՆ ՈՒ ՊԱՀԱՆՋԸ, ՈՒՐԵՄՆ, ՉԿԱՆ ՀԱՄ ԷԼ ԱՌԱՋԸՆԹԱՑՆ ՈՒ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՃԸ:

Ասածս բացատրելու համար մի օրինակ բերեմ:

Բնագիտական էվոլյուցիայի տեսության հիմնադիր Չարլզ Դարվինը 1831 թվին իրա տեսությունն ստեղծելուց առաջ «**Բիգլ»** նավով գնացել էր շուրջերկրյա ճամփորդության: Ճամփորդությունը տեվեց երեք տարի, ու Դարվինն էդ ճամփորդության ընթացքում ուսումնասիրեց իրա տեսած երկրների բնությունը, ու մեկ-մեկ էլ՝ մարդկանց, ինչի հիման վրա հետո գրեց իրա «**Տեսակների ծագումը»** հռչակավոր գիրքը:

Ամերիկյան մայրցամաքի հարավում՝ Հրո Երկրում, Դարվինը տեսավ մոտ 150 հոգանոց մի ցեղ: Էս ցեղի անդամները համարյա լրիվ էին վայրենի ու շատ թշվառ էին. համարյա միշտ սոված էին, լրիվ տկլոր էին՝ ամառ թե ձմեռ, ձյուն, արեվ, թե անձրեվ, ու զբաղվում էին մեծ մասամբ հավաքչությամբ ու ձկնորսությամբ:

Մեր էս խոսակցության համար կարեվորն Է՛ն հանգամանքն ա, որ **էս ցեղի մարդիկ չէին հայտնագործե անհատական անձեռնմխելի ունեցվածքի նորմը**: Սրանց համարյա ամեն ինչը ՀԱՆՐԱՅԻՆ ԷՐ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԷՐ: Դարվինն ասում ա, թե երբ իրենք սրանց մի բան էին նվիրում, օրինակ՝ մի կտոր կարմիր շոր, սրանք էտ շորը պատառոտում մաս-մաս էին անում ու բաժանում իրար, որ ամեն մեկին էլ մի բան հասնի:

Էս ցեղի վիճակն էնքան թշվառ էր, որ դաժան ձմեռներին սրանք մորթում ու խորովում ուտում էին իրանց ցեղի պառավ կանանց, որ սովից չմեռնեն: (Պեղումներով իմացել են, որ մի 10000 ու ավել տարվա մարդկային հանրություններն ունեցել են ինֆանտիցիդի ինստիտուտը, այսինքն՝ ձմեռը սովից չմեռնելու համար մորթել ու կերել են իրենց ցեղի մանուկներին, սկզբում աղջիկներին, հետո նոր՝ տղաներին, որովհետև տղան ավելի «թանկ» էր, որսորդ կդառնար):

Դարվինն համ էլ ասում ա, որ էս համայնական «կոմունիզմը», այսինքն՝ նյութական բարիքներից օգտվելու էս հավասարությունը (երբ համարյա ամեն մի ունեցվածքն էլ ընդհանուր ա), չի թողնում, որ էս ցեղը նոր տեխնոլոգիա հայտնագործի, զարգանա ու դառնա քաղաքակիրթ: Ու «**մինչեվ էս ցեղի մեջ չհայտնվի մի հեղինակավոր առաջնորդ,- ասում ա Դարվինը,- ու չհայտնագործի ու սաղին չպարտադրի անհատական անձեռնմխելի ունեցվածքի նորմը, էս ցեղն առաջ չի էթա ու կմնա վայրենական վիճակում»**:

Դարվինի ասած հրոերկրացիներից մեկը, մի ջահել տղա, պատմում ա, թե դաժան ձմեռներին իրանց ցեղի պառավ կանանց ոնց էին մորթում ու խորովում ու ուտում:

(Իմիջիայլոց, էս ցեղի «հայրերի էս ավանդույթը» էս ջահելի համար Է՛լ, էդ ցեղի բոլոր անդամների համար Է՛լ, ԼՐԻՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ մի նորմ էր):

Հիմի ենթադրենք, թե էս ցեղում հայտնվում ա մի հանճարեղ անհատ, ով հայտնագործում ա, օրինակ, հացահատիկ ցանելու ու մշակելու տեխնոլոգիան՝ հասկանալով, որ սրանով կազատվի ձմեռվա սովի մշտական վտանգից ու վաղաժամ սովամահության ահ ու սարսափից: (Օրինակը ռեալիստական չի, բայց էս տեսակ մի հայտնագործություն արվե՛լ ա Հին Աշխարհում):

Շարունակենք մեր ենթադրական օրինակը: Հիմա էս մարդը կչարչարվի՞ մի ամբողջ սեզոն, կցանի՞ ու կմշակի՞ էդ հացահատիկը, թե որ նախօրոք գիտի, որ երբ բերքը հավաքեց, ցեղի մնացած անդամներն դա կխլեն իրանից, կբաժանեն իրար ու մի օրում կուտեն կպրծըցնեն իրա կես տարվա չարչարանքի պտուղները: Իհարկե, չի չարչարվի ու ոչ մի բան էլ չի անի:

Բայց թե որ էս մարդն իմանա, որ իրա հավաքած բերքն իրանից չեն խլի, որովհետև դա իրա անձեռնմխելի սեփականությունն ա, ու էդ բերքով ինքը ձմեռը կփրկվի սովից, կչարչարվի: Ուրիշներն էլ աչք կածեն սրան ու իրանք էլ կսովորեն էս նոր տեխնոլոգիան: Ու իրար հետ կմրցեն, որ ավելի շատ հացահատիկ արտադրեն, մանավանդ եթե հայտնագործվել ա համ էլ առեվտրի ինստիտուտը, ու հացահատիկը դառել ա համ էլ առեվտրի առարկա:

(Իմիջիայլոց, էս օրինակը ցույց ա տալի, որ պրիմիտիվ հասարակության անդամը երբեք էլ ազատ չի էղե. էդ ենթադրական մարդը ցորեն աճեցնելու ազատությունը չուներ):

Մի 10.000 տարվա առաջվա մարդկային «հասարակություններից» ամեն մեկը ամենաշատը մի 50 որսորդ ունենար, թե չէ, ու էդ «հասարակությունների» մեջը չկար մի ոլորտ, ուր անհատն անկախություն կամ ազատություն ունենար: **Էդ պրիմիտիվ հասարակության անդամը, անպայման ու պարտադիր, ենթարվում էր ցեղային սովորություններին ու էդ ցեղի բազում թաբուին**: Անհատն ազատ չէր:

Անհատի ազատությունը կա մենակ քաղաքակիրթ (ԲԱՐՈՅԱԿԱՐԳՈՎ) հասարակության մեջ:

Ուրեմն, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ Ա, ԻՍԿ ԲԱՐՈՅԱԿԱՐԳԻ ՄԵՋԸ ԱՆՀԱՏԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՆ Ա:

Կնշանակի՝ երբ քիչ թե շատ կա՛ն անհատական ունեցվածքի նորմն ու Հյումի՝ սա լրացնող մյուս էրկու նորմը, հերիք ա, որ էս ցորեն ցանելու պես մի սկիզբ դրվի, ու սրան կհետեվեն նոր տեխնոլոգիաների ուրիշ հայտնագործություններ, օրինակ՝ կուլտուրական ուրիշ բույսերի մշակությունը, անասնապահությունը, անիվի ու բրուտագործության տեխնոլոգիաները, ձուկը կամ միսը ապխտելը կամ ղավուրմա դնել պահելը, թոնրի կամ փռի հայտնագործությունը ևն, ևն, ևն:

4. ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԽՈՇՈՐ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Անհատական սեփականության հայտնագործությունը ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ Ա:

Կարծում եմ, որ մարդկանց թվի էս հարատեվ ու անսահմանափակ աճն սկսվել ա հենց անհատական սեփականության հայտնագործությունից հետո: Երբ հլը անհատական ունեցվածքը չկար, բնության ռեսուրսների սահմանափակությունը չէր թողնում, որ մարդ տեսակը (homo sapiens sapiens-ը) շատ աճեր:

ՈՒ ԵՐԲ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՐ՝ ՉԿԱՐ ՀԱՄ ԷԼ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ:

ԱԶԱՏ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՃԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆ Ա, ու պարտադիր չի, որ նոր հայտնագործությունն էնքան դարակազմիկ լինի, ինչքան հողագործության, անասնապահության, անիվի, նետ ու աղեղի պես կարեվորագույն տեխնոլոգիաների հայտնագործությունը:

Մեկը գուցե «հայտնագործի», օրինակ, որ այ, էս մի փողոցի այ, էս մի անկյունում մի խանութ դնելու կարիք կա ու էդ խանութը դնելով՝ ծառայի էդ փողոցի բնակիչներին, ու հեշտացնի դրանց գործը, դրանց կյանքը: Մյուսը կարող ա ավելի որակով ու ավելի էժան կոշիկ կարելու տեխնոլոգիա հայտնագործի ու նորից օգուտ տա բոլորին, ՆՈՒՅՆԻՍԿ ԻՐԱՆ ԱՆԾԱՆՈԹՆԵՐԻՆ, էլ չասած որ սրանք նոր աշխատատեղեր էլ կստեղծեն:

Ու թե որ մրցությունն ԱԶԱՏ ՈՒ ՕՐԵՆՔՈՎ ԷԼ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԸԼՆԻ, մրցողների թիվը կտրուկ կշատանա, ապրանքների գինը կդառնա նվազագույնը, իսկ որակը՝ առավելագույնը:

Ու **գործազրկությունը վռազ կդառնա նվազագույնը (գործազրկությունը երբեք չի վերանա, ու պետք էլ չի, որ վերանա, թե չէ՝ մրցություն չի ըլնի), ու վիթխարի էլ մրցություն կսկսվի**:

Պանդուխտներն ու տարագիրներն էլ, տեսնելով, որ Հայաստանի վիճակը լավ ա, քիչ-քիչ հետ կգան, ու շուկան կմեծանա: Շուկան որ մեծացավ, գործերն ավելի կլավանան ևն: Ու սրանից կշահեն ոչ թե մենակ աղքատները, այլեվ բոլոր հարուստ գործարարները, որովհետեվ կավելանա սպառողների թիվը, ու գնողությունը կաճի, ապրանքն էլ կէժանանա:

5. ԷՐԿՈՒ ՏԵՍԱԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱ

Պետություն բառը նշանակում ա ամեն տեսակ էն ***պետերի խումբը***, ովքեր ապրում ու աշխատում են հարկատուների, այսինքն՝ ժողովրդի հաշվին ու իբր ժողովրդին ծառայելու համար:

Ուրեմն, **պետություն** ասելով էլ պիտի հասկանանք՝ **պետերի խումբը,** ու պետությունը չպիտի խառնենք **ողջ երկրին կամ էլ ժողովրդին**, որովհետեվ էս բաները խառնելուց՝ սխալ բաներ են բխում:

Առհասարակ՝ կա մենակ էրկու հնարավորություն:

ԿԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ Ա ԱԶԱՏ ԸԼՆՈՒՄ, ԱՅՍԻՆՔՆ՝ ԱԶԱՏ ԵՆ ԸԼՆՈՒՄ ՊԵՏԵՐԻ ԽՈՒՄԲՆ ՈՒ ՍՐԱՆՑ ՄԵՐՁԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԸՆԿԵՐ ՕԼԻԳԱՐԽՆԵՐԸ, ԿԱՄ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ:

ԵՐՐՈՐԴ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՉԿԱ:

Ճիրբ ու ոնց ա պետությունն ազատ ըլնում, իսկ ժողովուդը՝ ճորտ ու ստրուկ:

Պետությունն ազատ ա ըլնում, իսկ ժողովուդը՝ ճորտ ու ստրուկ, երբ պետերի խումբը անհսկելի ա ու անպատիժ, այսինքն՝ անհսկելի ու անպատիժ են մեծ ու փոքր բոլոր չինովնիկները՝ ծերից ծեր:

Սա էլ էն ժամանակ ա ըլնում, երբ ժողովրդի մեծ մասը իրա լիազորությունները, այսինքն՝ իրա անհատական անտեսանելի իրավունքների հիմնական մասն անհատույց հանձնում ա պետերի խմբին **ու թույլ ա տալի, որ պետերի խումբը կազմակերպվի ընդդեմ ժողովրդի մեծամասնությանն ու իրա ձեռը պահի բանակն ու ուժային բոլոր կառույցները**:

Պետությունը ազատ ա ըլնում մանավանդ Էն ժամանակ, երբ պետերի խմբին թույլ ա տրվում, որ սա բիզնեսով զբաղվի ու շահած եկամուտը ծախսի հենց պետերի խմբի կարիքների համար:

Պետությունն ազատ ա ըլնում մանավանդ Էն ժամանակ, երբ պետերի խմբին թույլ ա տրվում, որ սա միջամտի անհատի տնտեսական գործերին ու իբր ղեկավարի փողն ու գներն ու երկրի տնտեսության ընթացքը, ինչն անհնար ա, որովհետև ղեկավարելու համար պիտի ապագան իմանաս, որ ապագայի համար ծրագիր կազմես, այնինչ ապագայի իմացությունն անհնար ա:

Պետությունն ազատ ա ըլնում մանավանդ Էն ժամանակ, երբ պետերի խմբին թույլ ա տրվում, որ սա պետերի ընտրությունն անի մենակ գերագույն պետին հավատարիմ ըլնելու սկզբունքով, մանավանդ երբ պետ նշանակողներն էլ հենց գերագույն պետն ու սրա ենթականերն են ըլնում:

ԷՍ ՏԵՍԱԿ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ՄԵՋ Է՛Ն «ԵՆԹԱՊԵՏԸ», ՈՎ ԱՆՇՊՏՈՒՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ Ա ԻՐԱ ՊԵՏԻՆ, ԱՆՊԱՅՄԱՆ ՁՈՒՐԿ Ա ՈՐԵՎԷ ՍԿՉԲՈՒՆՔԻՑ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ:

ՈՒՐԵՄՆ, ՍԵՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՈ՛Ր ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐՆ ԸՆՏՐՎՈՒՄ ԵՆ ԱՆԲԱՐՈՅՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՆՍԿՉԲՈՒՆՔԱՅՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ՝ ԾԵՐԻՑ ԾԵ՛Ր:

Ու սենց պետություններն անընդհատ միջամտում են թե՛ անհատի տնտեսության, թե՛ խղճի գործերին, թե՛ իրավունքներին ու ազատություններին: Էս միջամտությունն էլ խիստ կրճատում ա արտադրությունն ու ճորտացնում ու թշվառացնում ա ժողովրդի մեծ մասին:

Էս կարգի պետություններին ասում են **ավտորիտար** (սրանց թունդ տեսակներին էլ՝**տոտալիտար)** պետություն ու, ոնց որ ասվեց, սրանց

պետերի խումբը կազմված ա ընկնում ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՈՒՐԿ ՈՒ ՄԵԾ ՄԱՍԱՄԲ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԻՑ ԱՆՏԵՂՅԱԿ ՈՒ ՏԳԵՏ ՉԻՆՈՎՆԻԿՆԵՐԻՑ:

Նորից ասեմ, որ բարոյական սկզբունքներից զուրկ ընկնելը սենց երկրի չինովնիկի համար ՊԱՐՏԱԴԻՐ Ա, որովհետև մենակ անբարո չինովնիկն ա, որ կույր-կույր լսում ու հնազանդվում ա իրա գերադաս պետերին: Բարոյական ու գիտուն մարդը սենց պետության պետերի շարքը մտնելու ոչ մի շանս չի ունենում: Երբեք:

6. ԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՉԻՆՈՎՆԻԿՆԵՐԻ ՏՈՏԱԼԻՏԱՐ ԽՈՒՄԲՆ ԱՆՊԱՅՄԱՆ Ա ԱՊԱԿԱՆ: ԱՊԱԿԱՆՎԱԾ ՉԻՆՈՎՆԻԿԻՆ ՉԵՍ ՀԱՂԹԻ:

Լորդ Աքտոնը, ով անհատի ազատության պաշտպանությանը նվիրված ամենալավագույն գործերից մեկի հեղինակն ա (***Essays on Liberty***-ի), ասում ա. «**Իշխանությունն ապականում ա, իսկ բացարձակ իշխանությունը բացարձակ ա ապականում**»:

Ցավոք՝ սա, համարյա միշտ, ճիշտ ա, թե որ հասարակարգը բարոյակարգ չի: Ու ոնց որ Պոպերն ա ասում.

«Իշխողների մակարդակը հազվադեպ ա միջինից բարձր էղե, թե՛ բարոյական, թե՛ մտավոր առումով, ու շատ անգամ էլ՝ միջինից ցածր ա էղե... ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ Ա, երբ մեր քաղաքական բոլոր ջանքերը հիմնում ենք Է՛ն խարխուլ հույսի վրա, թե իբր մեզ կհաջողվի, որ գտնենք գերազանց կամ գոնե ունակ իշխողներ... [Ուրեմն] «Ո՞Վ ԻՇԽԻ, ՈՐ ԼԱՎ ԸԼՆԻ» հարցը պիտի փոխարինենք նոր հարցով՝ «ԿԱ՞Մ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ՆԵ՛ՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԿԱՐԵՆԱՆՔ ՎԱՏ ԿԱՄ ԱՆՃԱՐԱԿ ԻՇԽՈՂՆԵՐԻՆ ԹՈՒՅԼ ՉՏԱՆՔ, ՈՐ ԴՐԱՆՔ ՉԱՓԱԶԱՆՑ ՇԱՏ ՎՆԱՍ ՏԱՆ ՄԵԶ...»:

7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՔԻԱԹԸ

Տոտալիտար պետությունը հա Է՛լ միջամտում ա անհատների ամեն մի գործունեությանը (թե՛ տնտեսական, թե՛ հոգեվոր), ու էս միջամտությունն արվում ա (մեծ մասով) էրկու պատրվակով՝ **մեկը իբր երկրի պաշտպանության ու մեկ էլ իբր թույլերին օգնելու նպատակով (այսինքն՝ հանուն «սոցիալական արդարության»):**

Էս միջամտությունն իրականացվում ա հարկերը, մաքսերն ու զանազան տարիֆները (էներգիայի, ջրի, գազի հեռախոսի, աղբահանութ-

յան ևն) անընդհատ մեծացնելով, որ իբր պետության բյուջեն շատանա, որ իբր երկրի պաշտպանության ու թույլերին օգնելու կարիքները բավարարեն: Առաջինին հաճախ ասում են «բանակի կարիքներ», երկրորդին՝ «սոցիալական արդարության հաստատելու կարիքներ»:

Թույլերի կարիքներ ասելով՝ հասկանում են նախ՝ տարեցների թոշակները, հետո՝ կարիքավորների ձրի բուժվելու ու կրթվելու խնդիրները: Ժողովրդի մեծ մասն էլ միամիտ-միամիտ կուլ ա տալիս էս երկու խայծն էլ, որովհետև կարիքավորներին օգնելն ու թշնամիներից պաշտպանվելը խիստ մարդկային ա ու հասկանալի:

Ու ժողովրդին էլ դուր ա գալի, որ պետությունը, այսինքն՝ պետերի խումբը, իբր «մտածում ա իրա մասին» ու քիչ՝ թե շատ, հոգում ա իրա կարիքները:

Բայց ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱ ԷԼ ՉԻ՛ ՀԱՍԿԱՆՈՒՄ ՈՒ ՉԻ՛ ՆԿԱՏՈՒՄ, ՈՐ ՊԵՏԵՐԻ ՏՈՏԱԼԻՏԱՐ ԽՈՒՄԲԸ ՈՉ ՄԻ ԱՆԳԱՄ ԷԼ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ՉԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ, չնայած ժողովուրդը շատ անգամ լավ էլ տեսնում ա, որ պետերի խումբը հա էլ թալանում ա բյուջեի մեծ մասը, ուրեմն՝ ողջ ժողովրդին:

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ՄԱՍԸ ՈՉ ՄԻ ԱՆԳԱՄ ԷԼ ՉԻ ԳԻՏԱԿՑՈՒՄ, ՈՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ԿՈՉՎԱԾՆ ՈՒՂՂԱԿԻ ԱՆՀՆԱՐ Ա, ՈՒՐԵՄՆ, ՀԱՄ ԷԼ ԱՆԻՄԱՍՏ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ Ա:

Իրոք, «սոցիալական արդարություն» հաստատելու համար հա էլ պետերի մի առանձին խումբ ա պետք ընում, օրինակ՝ սոցապ (սոցիալական ապահովության) նախարարություն: **Բայց ինչ երաշխիք կա, որ սոցապի չինովնիկները արդար կըլնեն: Ո՛չ մի: Ու թե որ սրանք նույնիսկ արդար էլ ըլնեն (ինչը տոտալիտար կամ ավտորիտար պետության մեջ անհնար ա), սրանք ո՞նց են որոշելու, թե ո՛ւմ ինչքան հասնի, ո՛ւմ ինչքան տան, որ արդար ըլնի, ու կոնֆլիկտներ չըլնեն:**

Ժողովուրդը մի ուրիշ բան էլ չի հասկանում: Չի հասկանում, որ էն փողը, ինչը պետությունը ծախսում ա իբր թույլերին օգնելու, կրթության, առողջապահության ու մունիցիպալ կարիքները հոգալու պատրվակով, ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՂԸ ՉԻ՛: ԷՍ ՓՈՂԸ ՀԱՐԿԱՏՈՒԻ՛ ՓՈՂՆ Ա:

Ու ժողովուրդը չի հասկանում, որ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՇԽԱՏԱԾ ՄԱՐԴՈՒՆ ԵՐԲԵՔ ԹՈՇԱԿ ՉԻ ՏԱԼԻ, ԲՈՄԺԻՆ ՄԻ ԳՐՈՇ ԱՆԳԱՄ ՉԻ ՏԱԼԻ, ԻՍԿ ՁՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՒԺՈՒՄՆ ԷԼ ՀԱՄԱՐՅԱ ԶՐՈ ԵՆ:

Ուրեմն, ավելի լավ չէր ընի՞, որ էս ամեն ինչը կազմակերպեին ու անեին մասնավոր մարդիկ ու մասնավոր հիմնարկները ու ոչ թե պե-

տությունը, ՈՐ ԻՐԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ ԻՄԱՆԱՅԻՆՔ, ԹԵ Ո՛ՒՄ ՊԻՏԻ ԴԱՏԻ ՏԱՆՔ ՈՒ ՊԱՏԻԺ ՊԱՀԱՆՋԵՆՔ, ՈՒ ՀԱՄ ԷԼ ՈՐ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ ԸԼՆԻ ՈՒ ՍՐԱՆՑԻՑ ԻՐԱՆՑ ԼԱՎՆ ՈՒ ՎԱՏԸ ՁՈԿՎԻ:

8. ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՈՐՄԵՐՆ ԵՆ ՄԵԶ ԸՆՏՐԵ, ՈՉ ԹԵ ՀԱԿԱՌԱԿԸ

Թե որ պետության էս արդարություն հաստատող խումբը («թույլերի կարիքները բավարարող» սոցապ նախարարությունը) կազմված ըլնի աշխարհի նույնիսկ բոլոր նոբելիստներից ու դոկտոր-պրոֆեսորներից, ոչ մի անգամ էլ էնքան հանճարեղ չի ըլնի, որ **ՄԵՆԱԿ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ** որոշի, թե ի՞նչն ա արդար ու ի՞նչն ա անարդար, ի՞նչն ա բարի ու ի՞նչն ա չար, ի՞նչն ա լավ ու ի՞նչն ա վատ, ինչն ա գեղեցիկ ու ինչն ա տգեղ կամ այլանդակ ևն:

Սենց բաները մենք որոշում ենք մենակ ու մենակ **բարոյահիրավական կանոններով**, է՛ն կանոններով, որոնց մեծ մասը հաստատվել ա վերջին մի երեք-չորս հազար տարվա ավանդույթով, տրադիցիայով, իսկ մի քանիսն էլ՝ երեվի ԷՍ ՎԵՐՋԻՆ 10.000 ՏԱՐՈՒՄ:

ԲԱՐՈՅԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐՆ ՍՏԵՂԾՎԵԼ ԵՆ ԻՆՔՆԻՆ, ԱՎԱՆԴՈՒԹՈՎ, ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԳՈՅՈՒԹՅԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԵԽԱՆԻԶՄՈՎ: ՈՒ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ ՑՈՒՅՑ Ա ՏՎԵ, ՈՐ ԱՆՀԱՆԱՐ Ա, ՈՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԻՑ ԾՐԱԳՐՈՎ ԲԱՐՈՅԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՆԵ՞ՆՑ ՆՈՐՄԵՐ ՍՏԵՂԾՎԵՆ, ՈՐ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ՉԸԼՆԵՆ ԿԱՄ ԱՆՍՊԱՍԵԼԻ ՈՒ ԽԻՍՏ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ՉՈՒՆԵՆԱՆ:

(Ուրեմն, հենց սրա՛ համար ա, որ լիբերթարները, ի տարբերություն էսօրվա Եվրոպայի, ԱՄՆ-ի ու ուրիշ զարգացած երկրների ծպտված սոցիալիստների ու զանազան գույն ու երանգի ավտորիտարիստների ու տոտալիտարիստների, դեմ են օրինակ, հոմոսեքսուալիզմն ու սրա տարատեսակներն ու առհասարակ՝ մարդկային ծրագրով հորինած բարոյական նորմերը ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ օրինականացնելուն):

ԼԻԲԵՐԹԱՐՆԵՐՆ ԱՍՈՒՄ ԵՆ, ԹԵ ՀԵՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՈՐՄԵ՛ՐՆ ԵՆ ՄԵԶ ԸՆՏՐԵ, ՈՒ ՈՉ ԹԵ ՄԵ՞ՆՔ ԵՆՔ ԳԻՏԱԿՑԵԼ ԴՐԱՆՑ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵ՞ՆՔ ԵՆՔ ԸՆՏՐԵ ԴՐԱՆՔ:

Այսինքն, ասում են լիբերթարիստները, է՛ն ժողովուրդները, որոնք չեն հետեվե ինքնին (սպոնտան) առաջացած (այսինքն՝ իրանց կամ կողքի ժողովուրդների պատահական հայտնագործած) բարոյական հիմնական նորմերին, կորել-գնացել են էս աշխարհից

(Դարվինի նկարագրած Հրո Երկրի էն ցեղի պես): Մնացել են մենակ էն մարդկային հանրությունները, որոնք քիչ թե շատ հետեվել են սպոնտան առաջացած կարեվոր նորմերին:

Ա՛Յ, ՀԵՆՑ ԷՍ ԻՄԱՍՏՈՎ ԵՆ ՆՈՐՄԵՐԸ ՄԵՋ ԸՆՏՐԵ, ՈՒ ՈՉ ԹԵ ՄԵՆՔ ԵՆՔ ԳԻՏԱԿՑԵԼՈՎ ԸՆՏՐԵ ԿԱՄ ՍՏԵՂԾԵ ԷԴ ՆՈՐՄԵՐԸ:

Սոցիալիստները (համ էլ՝ նացիոնալ-սոցիալիստները) ու զանազան գույն ու երանգի ավտորիտարիստներն ու տոտալիտարիստներն ոչ միայն չեն հավատում սրան, այլեվ հենց իրա՞նք են իրանց ծրագրերով նորմեր հիմնում, որ նոր տիպի (օրինակ՝ սովետական կամ գերմանական) մարդ ու նոր տիպի հասարակություն ստեղծեն (ոնց որ ուզում էին անեին, օրինակ, ռուս բոլշեվիկներն ու գերմանական նացիստները): Բայց, ոնց որ ասվեց, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ (ՈՉ «ԲՆԱԿԱՆ») ՆՈՐՄԵՐԸ ՀԱ Է՛Լ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ԵՆ, ՈՆՑ ՈՐ 20-րդ ԴԱՐԻ ՓՈՐՁԸ ՑՈՒՅՑ ՏՎԵՑ, ՈՒ ՀՄԻ ԷԼ Ա ՑՈՒՅՑ ՏԱԼԻ:

ԷԼԻ՛ ԱՍԵՄ, ՈՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆ ՈՒ ՀԻՄՔՆ Ա:

Էլի՛ ասեմ, որ հենց մասնավոր սեփականությունը չէղավ, բարոյականություն էլ չի ըլնի, բարոյական նորմ էլ չի ըլնի, ու մարդկային տվյալ հանրությունը չի դիմանա մյուս հանրությունների գոյության խմբային պայքարին, ու կվերանա-կգնա:

Մասնավոր սեփականությունը մասամբ կամ լրիվ բացառող նորմերը, այսինքն՝ ՀՈՐԻՆՈՎԻ նորմերը, հա է՛լ կործանարար են էղե, ոնց որ կործանարար էղան հրոերկրացիների, սպարտացիների, կոմունիստների ու նացիստների հորինած նորմերը:

Հրո Երկրի ու Ավստրալիայի բնիկների օրինակները ցույց են տալի, որ էս ՄԵՋ ՍՏԵՂԾՈՂ նորմերը կարային չհայտնագործվեին:

ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐՆ ԱՌԱՋԱՑԵԼ ԵՆ ԱՌԱՆՑ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԻՑ ԾՐԱԳՐԻ, ԻՆՔՆԻՆ, ՍՊՈՆՏԱՆ ՈՒ (ԱՆԿԱՍԿԱԾ) ՀԱՄ ԷԼ ՊԱՏԱՀԱԿԱՆ:

Ոնց որ ասվեց, էս նորմերից հիմնականները **բարոյականության** Հյումի նորմերն են, մնացածներն էլ առաջացել են, որ էս նորմերը հաջող գործեն (սրանցից մի քանիսն արդեն հիշատակել եմ՝ **ազնվություն, փոխանակություն ու առեվտուր, վստահություն, հանդուրժողություն, պայման-խոստում** ևն):

Բայց **բարոյաիրավական կանոնները որակական են, ու սրանք ոչ մի անգամ չեն կարա էնքան քանակական ըլնեն, որ սրանցով էղած հանրային բարիքն արդար բաշխես**: Իսկ թե.

ՈՒ՞Մ ԻՆՉՔԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԻՔ ՀԱՍՆԻ, ՈՐ ԱՐԴԱՐ ԸԼՆԻ ԿԱՄ ԱՐԴԱՐ ՀԱՄԱՐՎԻ, ԿԱՐԱ ՈՐՈՇԻ ՄԵՆԱԿ ՈՒ ՄԵՆԱԿ

ԲԱՐՈՅԱԿԱՐԳՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱԶԱՏ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱԶԱՏ ՇՈՒԿԱՆ:

Բերածս օրինակները ցույց են տալի, որ նորմերը կարա՛ն փոխվեն, ու անճանաչելի՛ փոխվեն: Երբ մարդ ծանոթանում ա, օրինակ, հին հայերի սրբազան պոռնկության ամուսնական նորմի հետ, ուղղակի ապշում ա, ու հետո էլ էնքան ա զզվում էդ նորմից, որ չի է՛լ ուզում հավատա, որ իրա նախնիներն էս տեսակ այլանդակ, էս տեսակ գարշելի (էսօրվա տեսանկյունից) նորմ են ունեցե:

9. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՑԱՐՁԱԿ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԷՂԵ, ՉԿԱ ՈՒ ՉԻ ԸԼՆԻ ՈՉ ՄԻ ՏԵՂ, ՈՉ ՄԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ՈՒ ԼԻԲԵՐԱԼԻԶՄ-ԼԻԲԵՐԹԱՐԻԶՄԻ ՈՒԶԱԾԸ ԵՐԲԵՔ ԷԼ ԲԱՑԱՐՁԱԿ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ:

Մարդկության փորձի տրամաբանական վերլուծությունը ցույց ա տվե, որ մենակ ու մենակ Դեյվիդ Հյումի նորմերի վրա հիմնված բարոյակարգն ա («դեմոկրատական», իսկական կապիտալիստական, ընդլայն կարգը, ցրիվ կարգն ա), որ կարա ամեն մի անհատին տա գործունեության ամենաշատ անհատական ազատությունը: Ընդ որում, ԲԱՐՈՅԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՔԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ Ա, ԱՐԴԱՐ Ա ԲԱՇԽՎՈՒՄ:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ասելով՝ տնտեսագետները հասկանում են ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՆՀԱՏԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԷՆ ԷԼ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԾՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ: Էս տեսակ ազատությունը, մեծ մասով, անհատից խլում ա պետությունը, ու մեկ էլ՝ բարոյակարգը խախտող անհատները, թալանչի «օլիգարխները» (ավելի ճիշտ, լուտոկրատները):

Ուրեմն, **հասարակության մեջ անհատի ազատության գաղափարը «ստատիստիկակա՛ն» հասկացություն ա:** Թե որ էս աշխարհը մի անմարդաբնակ կղզի ըլներ ու էդ կղզու վրա էլ հրաշքով մի անմահ Ռոբինզոն ապրեր, էդ Ռոբինզոնի ազատության կամ անազատության հարցն անիմաստ կըլներ, որովհետև էդ կղզու վրա հասարակությունը չէր ըլնի: Ուրեմն, ուրիշ անհատի կամ անհատների խմբի հարկադրանքի հնարավորությունն էդ Ռոբինզոնի նկատմամբ չէր ըլնի:

Տնտեսագետի տեսանկյունից անհատի ազատությունն էնքա՞ն ա շատ, ինչքան քիչ ա ուրիշ անհատի կամ պետության (պետերի խմբի) հարկադրանքը: Էս իմաստով, այսինքն՝ տնտեսագետի՛ իմաստով, շատ խորը փոսը պատահական ընկած մարդը լրի՛վ ա ազատ, ուղղակի՝ իրա բախտը չի բերե:

Առհասարակ, **նույնիսկ բարոյակարգի մեջ, հարուստների ազատության չափն ավելի շատ ա, քան՝ աղքատներինը**: Բայց սա ԱՐԴԱՐ Ա, որովհետև ՄԵՆԱԿ ԲԱՐՈՅԱԿԱՐԳԻ ԱԶԱՏ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆ Ա ՈՐՈՇՈՒՄ, ԹԵ ՈՎ ՈՒ ԻՆՉՔԱՆ ՀԱՐՈՒՍՏ ԸԼՆԻ, ՈՒՐԵՄՆ, ՀԱՄ ԷԼ ԻՆՉՔԱՆ ՇԱՏ ՈՒՆԵՆԱ Է՛Ն ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ, ԻՆՉԻ ՀՆԱՐԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔՆ Ա ՏԱԼԻ:

Այսինքն՝ **հարուստ կամ աղքատ ըլնելը (բարոյական հասարակարգի մեջ) ի վերջո, կախված ա ամեն մի առանձին անհատի անձնական շնորհքից ու տաղանդից, սրա աշխատասիրությունից, համառությունից ու նպատակասլացությունից: Ու էս հասարակարգի ամեն մի անհատն էլ իրական հնարավորություն ունի իրա ազատության չափը մեծացնելու: Ձանասեր էղար, շնորհք ու տաղանդ ունեցար՝ կհարստանաս: Հարստացար՝ ազատությանդ չափը կշատանա**:

Հետաքրքիր ա, որ **ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ՇԱՏ ԱՆԳԱՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ Ա ՏԱԼԻ ՈՉ ԹԵ ՄԵՆԱԿ ԷԴ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՏԻՐՈՋԸ, ԱՅԼԵՎ Է՛Ն ՄԱՐԴԿԱՆՑ, ՈՎՔԵՐ ՁՈՒՐԿ ԵՆ ՈՒՆԵՑՎԱԾՔԻՑ**: Օրինակ՝ անհատական (ու իրոք ԱԶԱՏ) թերթ, ռադիոալիք կամ հեռուստաալիք ունեցողներին ձեռնտու ա, որ իրանց թերթով կամ ալիքով հանդես գան համ էլ ուրիշները, համ էլ է՛Ն մարդիկ, ովքեր աղքատ են, բայց ինչ-որ ձեվով հայտնի ու հեղինակավոր են: Ուրեմն՝ էս ունեցվածքից զուրկ մարդիկ է՛լ են ունենում կարծիք հայտնելու ազատությունը:

Էս բաները ճիշտ են, եթե անհատական ունեցվածքը ՊԱՐՏԱԴԻՐ Ա ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՈՒ ՀԱՄ ԷԼ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ Ա, ՈՒ ՈՉ ՄԵԿԸ ՍԱ ԽԼԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ:

Այսինքն՝ սրանք ճիշտ են, երբ հանրության անդամների հարաբերությունները (համաձայն Հյումի երկրորդ ու երրորդ նորմերի) կարգավորվում են մենակ պարտադիր գործող անփոփոխ օրենքներով (համաձայն Հյումի երկրորդ ու երրորդ նորմերի), ու բոլորն էլ օրենքի առաջ հավասար են, ու, համ էլ, կա օրենքով պաշտպանված ազատ մրցություն (համաձայն Հյումի երրորդ նորմի):

10. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԱՐԽԻԱՆ

Ձանազան գույնի սոցիալիստները շատ անգամ զրպարտում են լիբերալիզմ-լիբերթարիզմը, թե իբր լիբերալիզմ-լիբերթարիզմն ասում ա, որ պետության բոլոր անդամները պիտի բացարձակ ազատ ըլնեն, իսկ սա նշանակում ա՝ անարխիա, ամենաթողություն, ու իբր սա կհասցնի բացարձակ քաոսի կամ գազանային ջունգլու:

Լիբերալիզմ-լիբերթարիզմը երբեք սենց «ազատություն» չի պահանջում, ու հա է՛լ դեմ ա սենց «ազատությանը»:

Եթե կա մարդկանց որեվէ հանրություն, էդ հանրության անդամները պիտի անպայման հաշվի առնեն ուրիշների գոյությունը, ցանկություններն ու կարիքները, **թե չէ՝ էդ հանրության անդամների համակեցությունն անհնար կլինի**: Էս միտքը շատ լավ ա բացատրում հետեվյալ ամերիկական անեկդոտը:

ԱՄՆ-ի դատարաններից մեկը դատում ա մի մարդու, ով ծեծել ա մի ուրիշին: Երբ դատավորը հարցնում ա դատվողին, թե էսի խի՞ ա բռունցքով խփե տուժողին, դատվողն ասում ա.

– Ես ազատ երկրում եմ ապրում, ու բռունցքներս սաղ ուղղություններով էլ ազատ շարժելու իրավունքն ունեմ, ու օգտվել եմ իմ էս ազատությունից: Տուժողի քիթն էլ, պատահաբար բռունցքիս ճամփի վրա ա էղե:

Դատավորը, ով հիանալի գիտեր Հյումի նշած նորմերն ու սրանց նշանակությունը, ասում ա մեղադրյալին.

– Բռունցքներդ շարժելու քու ազատությունը սահմանափակ ա հարեվանիդ քթի դիրքով ու հեռավորությամբ:

Մարդկանց էրազը հա է՛լ էղել ա նե՛նց մի հասարակարգը, ուր անհատի ազատությունը նախ՝ ամենաշատն ա, ու երկրորդը՝ նե՛նց հասարակարգը, ուր անհատների ազատությունը հնարավորին չափ արդար ա բաշխված: Իսկ տենց հասարակարգը մենակ բարոյակարգն ա, ինչը հիմնված ա Հյումի նորմերի վրա:

Ու թե որ հասարակության կարգը բարոյակարգ ա, էդ հասարակագի անհատներից ոչ մեկի ազատությունը բացարձակ չի, ու ոչ մեկի համար անարխիան կամ ամենաթողությունը թույլատրված չի, թե որ համ էլ խոսքի ու ինֆորմացիա ստանալու գործող ու պաշտպանված ազատություն կա (էլի օրենքի սահմաններում):

Սրա այլընտրանքը ճորտությունն ա:

ԵԹԵ ՉԿԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔ, ՉԿԱ ՀԱՄ ԷԼ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: ՏԵՆՑ հասարակարգում երբեք հնարավոր չի ըլնի ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՐԾՈՂ ԱՐԴԱՐ ՈՒ ԱՆՓՈՓՈԽ ՕՐԵՆՔԸ ՈՒ ՉԻ ԸԼՆԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԱԶԱՏ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ: ՈՒՐԵՄՆ, ԵԹԵ ՀՅՈՒՄԻ ԱՍԱԾ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՐԵՔ ՆՈՐՄԸ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ, ԱՅՍԻՆՔՆ՝ ԼԻԲԵՐԹԱՐ ԾՐԱԳԻՐԸ ՉԻ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ՈՒ ԵՐԿՐՈՒՄ ԲԱՐՈՅԱԿԱՐԳ ՉԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ, ԷԴ ԵՐԿՐԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ՄԱՍԸ ՃՈՐՏ Ա ՈՒ ՍՏՐՈՒԿ, ԻՍԿ ՁՈՌԲԱՆԵՐԻՆ ԷԼ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Ա ՀԱՄԱՐՅԱ ԱՄԵՆ ԻՆՉ:

Իսկ էսօր նույնիսկ հարուստը ոչ մի երաշխիք չունի, որ էս տեսակ անբարո երկրում մի օր իրենից չեն խլի իրա ո՛ղջ ունեցվածքը, ուրեմն համ էլ իրա անհատական ազատությունը:

11. ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԿԱՐԱ ԴԱՌՆԱ ԳԱՐՇԵԼԻ

Դեմոկրատիան («մեծամասնության իշխանությունը») անփոխարինելի ու անգնահատելի ա, երբ պետք ա, որ ժողովուրդն ազատվի անցանկալի կառավարությունից: Բայց **երբ դեմոկրատիա ասելով՝ հասկանում են ժողովրդի ընտրած գործադիր ու օրենսդիր մարմինների անսահմանափակ իշխանությունը**, չարաչար սխալվում են, որովհետև ՍԵՆՑ «ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ» ԱՐԴԵՆ ԳԱՐՇԵԼԻ Ա:

Սենց դեմոկրատիան արդեն մտածում ա մենակ պետությա՛ն մասին, այսինքն՝ մենակ պետերի՛ խմբի մասին, ու ոչ թե ժողովրդի մեծ մասի: Սենց դեմոկրատիան արդեն կարա խախտի դարերով հաստատված ամենակարեվոր բարոյահիրավական նորմերն ու օրենքները:

Սենց դեմոկրատիան կարա, օրինակ, մի գարշելի «օրենք» հանի, թե «պետական գերակա շահերի համար՝ ուզածդ մարդու անհատական սեփականությունը խլելու» իրավունքն ունի՛:

Սենց դեմոկրատիան կարա, օրինակ, «օրենք» հանի, թե թույլատրելի ա համասեռականների ամուսնությունը, ու որ համասեռական «ընտանիքներն» իրավունք ունեն էրեխա որդեգրեն ու դաստիրակեն, ԻՆՉԸ ԿԱՐՈՂ Ա ԳԱՐՇԵԼԻ ԸԼՆԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ, ԱՅՍԻՆՔՆ՝ ԺՈՂՈՐԴԻ ՄԵԾ ՄԱՍԻ ՏԵՍԱԿԵՏԻՑ:

Կամ էլ էրեխեքի իրավունքները իբր պաշպանող նե՞նց օրենքներ հանի, որ էրեխուն ծնողներից խլեն, տանեն մանկատուն կամ տան ուրիշին՝ էրեխու տուտուզին մի հատ դաստիրակչական հարվածի համար, ինչը նորից այլանդակություն ա (ժողովրդի նորմերի տեսակետից) ու ԸՆՏԱՆԻՔԻ ՈԼՈՐՏԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՊԻՏ ԽԱԽՏՈՒՄ Ա:

Սա արդեն դեմոկրատիա չի, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՍԱՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԿԱՄՔԸ ՓԱԹԱԹՈՒՄ Ա ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՎԶԻՆ:

Սա արդեն դեմոկրատիա չի, **որովհետև սենց օրենքները ընդունվում են ընտրողների մի խմբի (օրինակ՝ համասեռականների) ձեները կորցնելու վախից**:

Ուրեմն, գերագույն իշխանությունները հսկելու ՕՐԵՆՔՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ մեխանիզմներ են պետք: Իսկ **թե պիտի մեծամասնությունը նե՛նց «իշխի», որ իշխանական մարմիններն ամեն ինչը որոշեն իրանց ուզած ձեվով, սա արդեն իշխանության ու համ**

էլ «դեմոկրատիայի» ամենագարշելի ձեվն ա, որովհետև սա էլ **իշխանակա՛ն անարխիան ա, այսինքն՝ պետության (պետերի խմբի) անարխիա՛ն ու ամենաթողությունն ու անպատժելությունն ա**:

Ու չի կարելի, որ էդ իշխանավորների մտքին էկած ամեն բանին ասեն օրենք, մանավանդ չի կարելի, որ չինովնիկների խմբի հրամաններն ու հրահանգները ու «պետական առաջնահերթ ծրագրերը» համարվեն օրենք: Սրանք արդեն ոչ թե օրենք են, այլ օրենքի ծաղր ու համարյա միշտ են գարշելի:

ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՈՉ ՄԻ ԲԱՆՈՎ ԼԱՎԸ ՉԻ ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԲՌՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ:

Ու **մենակ սահմանադրությո՛ւնը պիտի սահմանի, թե ինչը (կամ էլ՝ նորմերին նման որ մի բանը) կարա համարվի օրենք, ինչը՝ չէ**: Ու հենց սահմանադրական դատարա՛նն ա, ինչը պիտի զբաղվի սենց նորմերն ընտրելով ու սրանք նե՛նց մշակելով, նե՛նց ընդհանրացնելով, որ թե՛ իշխանական օրգանների, թե՛ առանձին խմբերի, թե՛ անհատների հնարավոր կոնֆլիկտները քչանան, դառնան նվազագույնը:

Օրենքները պիտի ԲՈԼՈՐ մարդկանց համար հաստատվեն, ոչ թե պետերի խմբի (պետության):

Ու ԹԵ՛ ՕՐԵՆՍԴԻՐ, ԹԵ՛ ԳՈՐԾԱԴԻՐ ՕՐԳԱՆՆԵՐԸ ՉՊԻՏԻ ԿԱՁՄՎԵՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՈՎ, ԷՆ ԷԼ՝ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՎ ԸՆՏՐԵԼՈՎ, ՍԱ ԱՄԵՆԱԱՅԼԱՆԴԱԿ ՍԿՁԲՈՒՆՔՆ Ա:

Ուրեմն, դեմոկրատիան կարա՛ շեղվի իրա իսկական ճամփից ու կարա՛ դառնա գարշելի բռնակալություն: Բայց իրա իսկական ճամփուց դեմոկրատիայի շեղվելը պատճառ չի, որ դադարենք սրա հնարավորությանը հավատալուց, որովհետև ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԿԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻՑ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԲԱՆ ՀԼԸ ՈՐ ՉԻ ՀՆԱՐԵ:

Ուրեմն, սխալ ա, երբ մտածում են, թե «մեծամասնությունը իմաստուն ա կամ ճիշտ ա»:

Մեծամասնությունը անհատ չի, որ մտածի ու կարենա խելոք կամ իմաստուն ըլնի:

ԿՈՊԻՏ ՍԽԱԼ Ա, ԵՐԲ ԱՆՀԱՏ ՄԱՐԴՈՒ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԳՐՈՒՄ ԵՆՔ ՄԱՐԴԿԱՆՑ ԽՄԲԵՐԻՆ ՈՒ ՆՈՒՅՆԻՍԿ ՈՂՋ ԺՈՂՈՎՐԴԻՆ:

Ժողովուրդը չի՛ մտածում, չի՛ կարա մտածի, որովհետև երբ էլ որ ժողովուրդը «մի մարդու պես մի կարծիք ա հայտնում», հա է՛լ կրկնում ա մեն-մի խելոքի ասածները, մի Սոլոնի, մի Սոկրատեսի, մի Պերիկլեսի, Կոպեռնիկոսի, մի Գալիլեյի ևն, բացի է՛ն անգամը, երբ տեսնում ու ասում ա, որ իրա պետերի խումբը (պետությունը) դառել ա բռնա-

կալ: Էստեղ ժողովուրդն արդեն ճիշտ ա, որովհետև ժողովուրդը սա մենակ է՛ն ժամանակն ա ասում, երբ էլ արդեն ապրելու հնար չի ունենում:

ԵԹԵ ՊԵՏԵՐԻ ԽՈՒՄԲՆ ԱՆՁՈՒՍՊ Ա, ԷԼ ԱՐԴԵՆ ԱՆՀՆԱՐ Ա, ՈՐ ՀԵՏԵՎԻ ՈՒՐԻՇՆԵՐԻ, ՈՒՐԵՄՆ, ՀԱՄ ԷԼ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԻՆ ՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՆԸ, ու էս ժամանակը դեմոկրատիան դառնում ա գարշելի բռնակալություն:

12. ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒ ԱՆԲԱՐՈ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Տեսնենք, թե Հայեկն ու Միզեսն ինչ են ասում պետական իշխանությունների շինարարության մասին:

Իրավունքը է՛ն կանոնն ա, ինչը հստակեցնում ա է՛ն սահմանը, ինչը սահմանափակում ա ամեն մի անհատի կյանքի ու գործերի է՛ն ոլորտը (տիրույթը, դոմենը), ինչի ներսը էդ կյանքն ու գործերը ազատ են որեվէ ոտնձգությունից (Savigny F. C.): Սենց կանոններին ասում են՝ **օրենք կամ իրավական նորմ**:

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱ Է՛Լ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ Ա:

(Չմոռանանք, որ ոչ «նյութական» կամ «անշոշափելի» սեփականություն է՛լ կա, օրինակ, խոսքի ազատությունը, արժանապատվությունը ևն):

Իրավունքի հենց էս տեսակ հասկացությունն ա, որ հանրության մեջն ապրող անհատի հարաբերական ազատությունը դարձնում ա հնարավոր: **Իրավագիտությունը հանրության մեջն ապրող անհատի մասնավոր սեփականություն (անհատական ունեցվածք) տնօրինելու հարաբերական ազատության գիտությունն ա:**

Վերը ես ունեցվածքը սահմանել եմ որպես մի նյութական կամ հոգեվոր բան, մի բարիք, ինչը կարա ծախվի, նվիրվի կամ ուրիշին փոխանցվի ևն, բայց հլը տեսնենք, թե իրավագետնե՛րն ինչ են ասում սրա մասին (ինչը երեվի (կամ համարյա) չի հակասում ի՛մ սահմանածին): Ուրեմն, ի՞նչ ա իրավագետների ասած ունեցվածքը:

ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ՄԻ ԻՆՉ-ՈՐ ԲԱՐԻՔԸ (ՀԱՄ ԷԼ՝ «ԱՆՏԵՍԱՆԵԼԻ, ԱՆՇՈՇԱՓԵԼԻ» ԲԱՐԻՔԸ, ՕՐԻՆԱԿ՝ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ) ԱՆՀԱՏԻ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՄԲ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆ Ա:

ՍԱ՛ Ա ՀՌՈՄԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ:

Ուրեմն, **ունեցվածքի ազատ տնօրինությունը ԻՐԱՎՈՒՆՔ Ա: Չկա ունեցվածք, չկա իրավունք: Ուրեմն, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ**

ԱՂԲՅՈՒՐԸ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔՆ Ա: ԱՆԲԱՐՈ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆ ԷԼ ԲԻՐՏ ՈՒԺՆ Ա, մահակը, թուրը, թնդանոթը, տանկը:

(Միջազգային իրավունք կոչվածը, ոնց որ արդեն ասվել ա, հենց էս վերջին տեսակից ա, հենց ուժի՛ իրավունք ա):

Թե որ իրավունքի հասկացությունը մարդկանցից մենակ մեկնումեկը (կամ մարդկանց մի խումբը) ստեղծած ըլներ, պիտի սա համարեինք մարդկության ամենահանճարեղ երկրորդ հայտնագործությունը, մասնավոր սեփականության հայտնագործությունից հետո (ճիշտն ասած՝ սրանք մերված-ձուլված են իրար):

Բայց իրավական (այսինքն՝ համ էլ բարոյաէթիկական) հիմնական ու կարեվորագույն նորմերը, լեզուն ու փողը, որ մարդկային համակեցության հիմնական սկզբունքներն են, **ստեղծվել են ինքնին, սպոնտան ու առանց մարդկային որեվէ գիտակից ծրագրի**:

Հենց սրա համար էլ ԱՆՀՆԱՐ Ա, ՈՐ ՍՐԱՆՔ ՎԵՐԱՑՆԵՍ, ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՆԱ: Ու հենց որ սրանք սահմանափակում ես, հանրության ընթացքը խաթարվում ա, ու ինչքան շատ ես սահմանափակում, էնքան շատ ես էդ ընթացքը խաթարում:

(Լենինը 1917 թվին փողը (հետն էլ՝ լիքը ուրիշ բան) դեկրետով վերացրեց, ու վռազ ընենց մի շփոթ առաջացավ, որ վռազ էլ, մի ուրիշ դեկրետով, որ դրանց մի մասը նորից գործի դրեց: Սենց օրինակ էսօր շա՛տ կա):

ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔԸ ԷՍ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ Ա՝ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ, ԹԵ՛ ՍՐԱՆՑ ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՂՆԵՐԻ, ԹԵ՛ ՄՆԱՑԱԾՆԵՐԻ: Այսինքն.

ԻՍԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԸ, ԻՍԿԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ, ՊԻՏԻ ԼՐԻՎ ՎԵՐԱՑԱԿԱՆ, ՊԻՏԻ ԼՐԻՎ ԿՈՒՅՐ ԸԼՆԻ, ՈՒ ԿԱԽՎԱԾ ՉԸԼՆԻ ՏԵՂԻ ՈՒ ՊԱՀԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻՑ, ՈՒ ՊԻՏԻ ԱՆԽԱՓԱՆ ԳՈՐԾԻ:

(Ես սա անընդհատ կրկնում եմ, ու կարող ա մեկը հարցնի, թե ո՞նց պիտի արվի, որ օրենքն անխափան ու պարտադիր աշխատի: Նախ ասեմ, որ իմ էս շարադրանքը կցկտուր ա, ու լիբերթար կարգի մանրամասները գրված են էս հոդվածի վերջը դրած գրքերի մեջը: Էնտեղ ամե՛ն ինչը կա:

(Բայց սա, ոնց որ Հայեկն ա ասում, **ավելի շուտ հասարակության անդամների մեծագույն մասի կրթական-հոգեբանական խնդիրն ա: Հասարակության էդ մեծագույն մասից համարյա ամեն մեկը պիտի հոգով, սրտով ուզենա, որ օրենքը գործի ու էդ ամեն մեկը պիտի ինքը օրենքը չխախտի, որ էս ամենը գործի**:

(Հմի, գիտեմ, կասեն, որ Հայաստանում սա հնարավոր չի ևն: Ճապոնացիներն է՛լ էին մի 100 տարի առաջ ասում, թե էս կարգը Ճապոնիայում չի գործի, որովհետեվ իբր «ճապոնացիք հատուկ ազգ են, ու իրանց ազգային առանձնահատկությունները խիստ տարբեր են եվրոպականներից»: Բայց վերջն իրանք լսին իրանց խելոքներին, ու էս կարգը վեկալան, ու հմի էնտեղ ահագին (ոչ լրիվ) բարոյակարգ ա, ու երկիրն էլ ծաղկում ա:

(Շատ լավ օրինակ ա Կորեան, ինչի Հյուսիսը սոցալիստական անբարո կարգով ա ապրում, Հարավը՝ քիչ թե շատ, բարոյակարգով: Հարավը ծաղկում ա, իսկ Հյուսիսը թաղված ա թշվառության ու անբարոյության մեջը):

Ու պիտի հիշենք, որ.

ՈՉ ԹԵ ՕՐԵՆՔԻ ԽՍՏՈՒԹՅՈՒՆՆ Ա ԿԱՐԵՎՈՐ, ԱՅԼ ՕՐԵՆՔԻ ԱՆԽԱՓԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ:

Ո՞ր մի քաղգործիչը, օրինակ, կխախտի նույնիսկ վեցը ամսով բանտարկելու օրենքը, թե որ իմանա, որ խայտառակ ըլնելու հետը համ էլ հաստա՛տ բանտ ա նստելու, ու իրա կարյերան անվերադարձ կործանվելու ա: Համարյա ոչ մեկը:

Ու հենց որ պետական կարգով ստիպում են, որ էս լրիվ վերացական օրենքն անխափան գործի, սա գործում ու դառնում ա միակ «բռնակալը» թե՛ պրեզիդենտների ու վարչապետների ու մինիստրների համար, թե՛ շարքային մարդու ու նույնիսկ հլը չբռնված գող ու ավազակի համար, ու հասարակական կարգը դառնում ա բարոյակարգ:

Ու էս անգամը, թե որ օրենքը քեզ նեղություն ա տալի, ոչ մեկից չես նեղանում, որովհետեվ ումից նեղանաս, օրենքի կանոնից, ինչը շատ ա նման բնական օրենքների կանոններին: Բա, օրինակ, քամուց կամ կայծակից նեղանում են:

Բայց երբ էս տեսակ օրենքը չի էդ բռնակալը, էդ ժամանակը (ոնց որ ասել եմ) քանի՛ հատ չինովնիկ կա քեզնից վերեվը, էնքան է՛լ բռնակալ ես ունենում: Ու էդ ժամանակը նեղանում ես **ամե՛ն** քայլափոխին, որ մի չինովնիկին էլ դեմ ես առնում՝ նեղանում ես:

ՄԱՍՆ 4-ՐԴ

ԲԱՐՈՅԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՄ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՔ ՄԱՍԻ ԲԱԺԱՆԵԼԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ-1. Բարոյակարգի պառլամենտը

Արդեն մի քանի դար ա, ինչ զարգացած երկրների օրենքները (երեվի բացի ԱՄՆ-ից) կազմում ու ընդունում են էդ երկրների **պառլամենտ** կամ **օրենսդիր ժողով** (ՕԺ) (կամ **խորհրդարան**, կամ **ազգային ժողով** ևն) կոչված ընտրովի օրգանները:

Սրանց մասին բերում եմ մի քանի բան, որ սովորել եմ Հայեկից ու մի քիչ էլ՝ Միզեսից:

Էսօրվա ՕԺ-ները, էս ողջ աշխարհում, երբեք էլ չեն կարա կարգին հսկեն ներկայացուցչական (այսինքն՝ ընտրովի) գործադիր մարմինների (ԳՄ-ի) վճիռները, թե որ սրանք նույնիսկ «ամենաարդար» ձեվով ընտրված ըլնեն, որովհետեվ էսօր թե՛ ՕԺ-ները, թե՛ ԳՄ-ները ընտրվում են նույն ձեվով, ու համարյա իրար հետ, ու նույն ժամկետով: Էս ձեվը պիտի փոխվի, որովհետեվ ընտրություններին մարդիկ պատրաստվում ու մասնակցում են ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ:

(**Կուսակցությունները մենակ ու մենակ մի նպատակ են ունեցել, ու հա է՛լ մենակ է՛դ նպատակը կունենան: Էդ նպատակը իշխանությունը ցանկացած միջոցով գրավելն ա)**:

Խի՞: Որովհետև իրականում իշխանության էրկու՝ գործադիր ու օրենսդիր թեվերը, որ տարբեր ֆունկցիաներ ունեն, ընտրվում են ներկայացուցիչների ու կուսակցականների ՆՈՒՅՆ ԽՄԲԵՐԻՑ: **Սրա համար էլ օրենսդիրը կազմում ու ընդունում ա մենակ Է՛ն օրենքները, որոնք որ ձեռ են տալի մենակ ու մենակ գործադրին**, ու ոչ թե ողջ ժողովրդին ու երկրին:

ԷՍ ԷՂԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՈՒ ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԳԱՆ ԵՆ, ՈՒՄ ՇԱՀԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՆ, ՈՒ ՍՐԱՆՔ ԵՐԲԵՔ ԷԼ ԱՆԿԱԽ ՉԵՆ, ՈՒ ԵՐԲԵՔ ԷԼ ՉԵՆ ԿԱՐԱ ԻՐԱՐ ՀՍԿԵՆ:

Ավելի սխալ ու այլանդակ բան, քան թե էս ձեվով ու մանավանդ կուսակցական ցուցակներով ներկայացուցիչ ընտրելն ա, չկա:

Պետերի խմբի (պետության) պես՝ կուսակցության առաջնորդներն էլ են իրանց կուսակիցներին ընտրում **մենակ իրանց հավատարիմ կամ սրանց «հարկավորության ու ազդեցիկության» սկզբունքով, ու համարյա երբեք չեն առաջնորդվում կուսակցի բարոյական ու**

գիտունության հատկանիշներով, կամ բարի ու ազնիվ համբավով, կամ էլ մասնագիտական ունակություններով, մանավանդ եթե սենց կուսակից ճարելը հեշտ չի:

Կառավարության համար կարեվորը պիտի ընեն քաղաքացիների մեծ մասի տվյալ ընթացքի կոնկրետ ցանկությունները, ու կառավարությունը պիտի իրականացնի քաղաքացիների մեծ մասի տվյալ ընթացքի մասնավոր շահերը: Այնինչ օրենսդիրը պիտի ղեկավարվի ոչ թե էս տվյալ պահի մասնավոր շահերով, ԱՅԼ ԱՐԴԵՆ ԸՆԴՀԱՆՐԱՑԱԾ ԿԱՐԾԻՔՆԵՐՈՎ, Է՛Ն իմաստով, որ պիտի հենվի է՛Ն գաղափարի վրա, թե գործողությունների ո՛ր ընդհանուր ՏԻՊԸ պիտի համարվի ճիշտ ու «օրենքային» ու օրինական, որը՝ չէ:

Այսինքն՝ օրենսդրի ելակետը պիտի ընի ոչ թե նպատակներին հասնելու միջոցներն ու գործիքները, այլ է՛Ն նորմերը, որ պիտի ընդհանուր ընեն բոլոր անհատների ու սրանց խմբերի համար: **Գործադիր ու օրենսդիր իշխանությունների համար ժողովրդի ընտրելիք ներկայացուցիչների որակներն ու հատկանիշները պիտի լրիվ տարբեր ընեն, որ ամեն մի անհատի մասնավոր շահերը պաշտպանվեն:**

Պարզ չի՞, որ ՕՐԵՆՍԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ ԸՆԻ ԿՅԱՆՔԻ ՓՈՐՁՆ ՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԻՄԱՍՏՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

ՕՐԵՆՍԴՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉՊԻՏԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԸՆԵՆ, ՈՒ ՕՐԵՆՍԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՉՊԻՏԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԸՆԻ, ոչ մի անգամ, **որովհետև երբ սրանք կուսակցական են, ու ընտրություններն էլ պարբերական են, ներկայացուցիչներն անպայման պաշտպանելու են իրանց կուսակցությունների տվյալ պահին ու որոշակի խմբին հարմարած ծրագրերը:**

Այնինչ, ոնց որ ասվեց, օրենսդրի գործը ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԻՊԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԵՆՔԱՅԻՆԸ ֆիքսելն ա (ամրագրելն ա), ինչը պիտի համարյա «ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ» օրենք դառնա:

Բա պարզ չի, որ հասարակության մեծ մասի համար վնասակար բան են անում, երբ առանձին խմբերի (կուսակցությունների, թայֆաների, բանդաների) մասնավոր շահերի պաշտպանության համար ընտրված ներկայացուցիչներից (այսինքն՝ կուսակցականներից) նե՛նց որակ ու հատկանիշ են պահանջում, ինչը պետք ա ողջ ժողովրդի կամ ժողովրդի մեծամասնության շահերի ներկայացուցչին:

Օրենսդրական ստեղծագործության համար հարկավոր են կյանքի բավական փորձով հասուն տղամարդիկ ու կանայք, ՕՐԻՆԱԿ՝ 40 կամ 45 ՏԱՐԵԿԱՆԻՑ ՈՉ ՓՈՔՐ: **Սրանց պիտի ընտրեն բավա-**

կան երկար ժամկետով, ՕՐԻՆԱԿ՝ 15-20 ՏԱՐՈՎ, **որ կուսակցական կարգապահության, վերընտրվելու, շուկայական կոնյունկտուրայի ու սրա պես ուրիշ հարցերը չազդեն սրանց աշխատանքի վրա**:

Ճիշտ նենց, ոնց որ երկար ժամկետով (համարյա՝ ցմահ) ընտրված ԱՄՆ-ի համարյա լրիվ անկախ ու ապահովված ու պաշտպանված դատավորը, ով դարդ չի անում ո՛չ կուսակցության պաշտպանության, ո՛չ կենցաղային հոգսերի, ո՛չ ապագայի ու ո՛չ էլ սրանց պես ուրիշ խնդիրների համար:

Ներկայացուցչին պիտի ընտրեն ՈՉ ԹԵ ՄԻԱՅՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ, այլեվ հին հույների սկզբունքներով: Հին հույները համոզված էին, որ **ներկայացուցչին ամենալավը ճանանչում են իրան իմացող իրա տարեկիցները:**

Օրինակ՝ 40-45 տարեկան մի դեպուտատին կարան ընտրեն Պետհամալսարանի (մեկին էլ՝ Պոլիտեխնիկի) մոտ 40-45 տարեկանները՝ հենց իրանց աշխատողներից, որ տարիներով գիտեն իրան (ու ոչ թե եսիմ որտեղից բերած անծանոթին, ով ընտրվելու խաթեր ի՞նչ ասես, որ չի խոստանա):

Գյուղերում էլ կարան մի (կամ մի քանի) գյուղով ու էլի նույն սկզբունքով ընտրեն գյուղացիներից (նույնիսկ արդեն էնտեղ չապրող) ներկայացուցիչ:

Այսինքն՝ պարտադիր չի, որ ներկայացուցիչն ընտրվի մենակ տարածքային սկզբունքներով:

ՕԺ-ը պիտի կազմված ըլնի, օրինակ, 40-60 (կամ մինչեվ 65) տարեկան տղամարդկանցից ու կանանցից:

ՕԺ-ի անդամների տարիքները, ուրեմն, տարբեր կըլնեն, ու առաջին անգամը կազմելուց մի քանի տարի հետո սրանց մեջն արդեն տարիքը լրացածներ կըլնեն: Հետո արդեն, երբ էս պրոցեսը հաստատված կայունացած ըլնի, սրանցից ամենաշատը մոտ ամեն 15-երորդը պիտի ամեն տարի փոխվի:

(Մի մոռացեք, որ ասածներս կցկտուր են, ու որ պիտի Հայեկի ***Law, Legislation and Liberty***-ն ու մյուս գործերն ուսումնասիրվեն ու յուրացվեն, որ էս մեխանիզմը լրիվ պարզ ըլնի):

Սրանք բոլոր է՛լ պիտի անբիծ համբավ ունենան, ու աշխատունակ ու ուժերի ծաղկման շրջանում ըլնեն: ԷՆ ՄԱՐԴԻԿ, ՈՎՔԵՐ ԱՐԴԵՆ ԱՇԽԱՏԵԼ ԵՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՕԺ-ՈՒՄ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՉՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ, որ իրանց վրա ոչ մի ազդեցության հնարավորություն չըլնի, որովհետեվ մարդը մնում ա մարդ ևն:

ՕԺ-ի անդամներին կարան գործից ազատեն իրանց գործին չհամապատասխանելու նույն սկզբունքներով, ինչով որ արեվմտյան դատավորներին են գործից ազատում, կամ էլ արդեն ասված տարիքային ցենզի 15-20-ամյա ժամկետն անցնելուց հետո:

Տարիքային ցենզով գործից ազատվածներին պիտի ապահովեն՝ միչեվ 65-75 տարեկանը սրանց աշխատանքի նշանակելով (նորից ընտրելու մեխանիզմով) դատական կոլեգիաներում, որ էնտեղ էլ անկախ ու արդար ըլնեն:

Սրանց աշխատավարձը պիտի որոշվի սահմանադրությամբ, որոշակի բարձր տոկոսով, օրինակ՝ երկրի բյուջետային հիմնարկների 20 ամենաբարձր աշխատավարձի հաշվով: Սա կարելի ա, որ համարվի էս առավել արժանավոր քաղաքացիների պարգեվը:

Քանի որ ՕԺ-ն բազմաթիվ չի (Հայաստանի համար մի 130-140 հոգին լրիվ հերիք ա, ու հլը շատ ա), ամեն տարի քիչ մարդ ա ընդունվելու ՕԺ կամ ազատվելու ՕԺ-ից (տարեկան՝ ամենաշատը մի 18 հոգի), ընենց որ 18 հոգուն բարձր աշխատավարձ տալը դժվար չի ըլնելու:

Կոլեգիալ դատարանների ընտրությունը (ավելի լավ ա), որ անուղղակի ըլնի, այսինքն՝ դատավորին ընտրեն ժողովրդի ընտրած տարածքային դելեգատները: Էս ձեվով, բարի համբավով մարդիկ ավելի շատ շանս կունենան երկրորդ անգամ ընտրվելու:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ-2. Բարոյակարգի կառավարությունը (ՀԱՄ ԷԼ՝ **չորրորդ իշխանությունը**)

Չնայած Օրենսդիր ժողովը չպիտի կազմվի կուսակցական համամասնության սկզբունքով, որ սրա ընդունած «օրենքները» էս կամ էն կուսակցության շահերը չպաշտպանեն, բայց երեվի լավ կըլնի, որ **Խորհրդարանական կառավարական ժողովը կամ Գործադիր կառավարական ժողովը** (ԳԺ-ը, կամ վարչապետն ու իրա կառավարությունը) մասնակի կազմվի հենց էս սկզբունքով, օրինակ՝ էրկու կուսակցությունից, որ սրանք իրար հսկեն, ու կառավարության մեջ հա էլ օպոզիցիա ըլնի:

Բայց **պարտադիր չի, որ էստեղ կուսակցական համամասնություն ըլնի (Hermens F. A. – Democracy Or Anarchy, Notre Dame, Ind. 1941): Հեչ էլ պարտադիր չի, որ կառավարական կաբինետը (վարչություններն ու նախարարությունները) կազմվի մեծամասնական կուսակցությունից**:

Թե որ, օրինակ, կառավարությունը կազմվի հենց փոքրամասնական կուսակցությունից, **մեծամասնական կուսակցական անդամ-**

ներն անընդհատ ու զգոն հետեվելու են էդ կառավարական կոմիտեների աշխատանքին:

Բայց **ԳԺ-ի ու սրա կոմիտեների անդամները պիտի հսկելի ըլնեն, ու սրա համար էլ պիտի հաշվետու ըլնեն:**

ՀԻՆ ԱԹԵՆԱՑԻՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ՕՐԻՆԱԿ, ՏԱՐԵԿԱՆ ՄԻ ԱՆԳԱՄ ՀԱՇԻՎ ԷԻՆ ՏԱԼԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՋ: Սենց պաշտոնյան ինչքան ավելի մեծ գումարի հետ գործ ունենար, էնքան ավելի բազմակազմ դատարանի առաջ էր հաշվետու: Թե որ պաշտոնյան ինչ-որ ձեվով փողերը մսխում էր, ա՛նպայման դատում էին:

(Հին Աթենքի ցեղային դատարանն ուներ 41 դատավոր, ավելի մեծը՝201 դատավոր, մեծը՝ 501 դատավոր, իսկ ամենամեծը՝ եռակազմը, 1501 դատավոր, չհաշված, որ ամիսը մի անգամ էլ ռեֆերենդում էին անում, բոլոր քաղաքացիների մասնակցության իրավունքով, ինչը դատական իրավունքներ ուներ):

Բացի սրանից, Հին Աթենքի ՑԱՆԿԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻ իրավունք ուներ ՑԱՆԿԱՑԱԾ ՈՒՐԻՇ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ, ՆՈՒՅՆԻՍԿ ԱՐՔՈՆՏԻՆ (ՊՐԵԶԻԴԵՆՏԻՆ) կանչելու դատարան ու նույնիսկ ռեֆերենդում: Դատարանը պիտի ԱՆՊԱՅՄԱՆ լսեր էդ գործը: Բայց **թե որ պարզվում էր, որ կանչողը (հայցվորը) չի ապացուցում իրա մեղադրանքը, տեղնուտեղը հենց հայցվորին էին դատում**: Արժի, որ սենց օրենքների պես օրենքներ հմի է՛լ ըլնեն:

ՄԱՄՈՒԼԻ, ՀԵՌԱՑՈՒՅՑԻ ՈՒ ԽՈՍՔԻ ՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՄԱՍՏ ՉՈՒՆԻ, ԹԵ ՈՐ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՉԻ: Սրա համար էլ մամուլի ու հեռացույցի որեվէ միջոց ունենալու իրավունքը պիտի նույնքան հեշտ ըլնի, ինչքան որեվէ մասնավոր ձեռնարկությունը փողով առնելը: **Սրանց ներկայացուցիչն իրավունք պիտի ունենա նախորդ կետի՝ Հին Աթենքի քաղաքացու պես մեղադրելու ամեն մեկին, ըլնի սա անհատ պաշտոնյա, թե մինիստրություն, թե ուրիշ մի իրավաբանական անձ, ու նույնիսկ ՊՐԵԶԻԴԵՆՏ ևն**:

Թե որ մամուլի ու հեռացույցի մեղադրանքը չհաստատվեց, մեղադրանքի հեղինակը պիտի դատվի: ՍՐԱ ՀԱՄԱՐ ԷԼ ՊԻՏԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԱՄՈՒԼԻ ՈՒ ՀԵՌԱՑՈՒՅՑԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔՆ ԱՎՏՈՄԱՏ ՄՏՆԻ ՏՎՅԱԼ ԾՐՁԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԸ, ՈՒ ԱՎՏՈՄԱՏ ԷԼ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑՎԻ: Դատարանով պիտի պատժվի (թե որ մեղավոր ա) մենակ մամուլով կամ հեռացույցով հրապարակված մեղադրանքի հեղինակը, ու **պետական ոչ մի օրգան ՉՊԻՏԻ մամուլի կամ հեռացույցի տվյալ միջոցը փակելու իրավունքն ունենա:**

ՑԱՆԿԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻ ՊԻՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆԱ ԱՍՎԱԾ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՈՒ ՑԱՆԿԱՑԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՇՏՈՆՅԱՅԻՆ ՎԵՐԱԳՐԵԼՈՒ, նորից վերն ասածս պայմաններով:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ-3. Դատական իշխանությունը

Իշխանության երրորդ թեվը դատական իշխանությունն ա, այսինքն՝ բոլոր դատարաններն ու Սահմանադրական դատարանը: Մեր դատարանները, հենց սահմանադրությունով, ենթակա են Հայաստանի պրեզիդենտին, որովհետեվ de facto մենակ պրեզիդենտն ա բոլոր դատավորներին նշանակում գործի, ու գործից ազատում: Սա փաստ ա, ինչ էլ որ գրած ըլնի մեր Սահմանադրության մեջ:

Հենց սրա համար էլ մեր դատական իշխանությունը հեչ անկախ չի, ուրեմն չի կարա հսկի ո՛չ հզոր օլիգարխներին, ո՛չ կառավարական պաշտոնյաներին, ո՛չ օրենսդիր ժողովի անդամներին, ո՛չ էլ սրանց հովանավորյալներից մեկնումեկին: Ու հենց սա ա պատճառը, որ **մեր դատական սիստեմն էլ ա ծերից ծեր ապական**: Թե որ էսօր Հայաստանում ասես, որ կա գոնե մի դատավոր, ով կաշառակեր ու անսկզբունքային չի, ոչ մի հասուն մարդ սրան չի հավատա:

Ճիշտ կըլներ, որ մեր դատավորներն էլ լրիվ անկախ ըլնեին (բայց պաշտպանվա՛ծ անկախ) ու մեր դատարանները կազմվեին համարյա նույն սկզբունքներով, ինչ սկզբունքներ որ առաջարկվեցին ՕԺ-ն կազմելու համար:

Էդ ժամանակը արժեր, որ դատավորներին տրվեր նույնիսկ էսօրվա աշխատավարձի հնգապատիկը: Այնինչ էսօրվա դատավորների աշխատավարձը դրանց վերցրած կաշառքի ու կողմնակի ուրիշ եկամուտների երեվի հազարերորդն էլ չի, ու հեչ արդարացի չի:

Ինչ վերաբերում ա զինվորական դատարաններին, սրանք չպիտի տարբերվեն քաղաքացիական դատարաններից (կամ ուղղակի ՉՊԻՏԻ ԸԼՆԵՆ), բացի էն դեպքերը, երբ պետական գաղտնիքի հարց կա:

Բայց պետական գաղտնիքի ստատուսը, ամեն անգամ, պիտի որոշի Սահմանադրական դատարանը, թե չէ, պետական գաղտնիքի պատրվակով պետական ապականված պաշտոնյաները մենակ իրանց հանցագործություններն են գաղտնի պահում:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՊԻՏԻ ՆՈՒՅՆ ՁԵՎՈՎ ԴԱՏԵԼԻ ԸԼՆԵՆ, ՈՆՑ ՈՐ ԹԵ՛ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ԹԵ՛ ՕՐԵՆՍԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՑԱՆԿԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻ ՊԻՏԻ

ՑԱՆԿԱՑԱԾ ԴԱՏԱՎՈՐԻ ԴԱՏԱՐԱՆ ԿԱՆՉԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒՆԵՆԱ: ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ՉԱՊԱՑՈՒՑԵՑ՝ ԷԴ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՊԻՏԻ ԴԱՏՎԻ:

Դատելի պիտի ըլնի համ էլ ցանկացած իրավաբանական անձ, սրանց հետ էլ, ինչ-որ ձեվով, բոլոր նախարարությունները, վարչություններն ու պետական հիմնարկներն ու կառավարությունն էլ հետը:

(Գիդեմ, որ շատ մարդ կասի, որ սենց դատը արդար չի ըլնի, որ մի դատավորը մյուսին «կպահի» ևն: Բայց մի՛ մոռացեք, որ թե էս բոլոր կարգը գործի դրվի, ու մամուլն էլ օրենքով պաշտպանված ու ազատ ըլնի, **մարդկանց մեծ մասն էլ հասկանա, որ պիտի արդարությանը պաշտպան կանգնի, ու որ դա հենց իրա՛ օգուտն ա, էս կարգը կաշխատի՛, հաստա՛տ կաշխատի**: ԹԵ ՈՐ ՉԱՇԽԱՏԵՑ, ՈՒՐԵՄՆ, ԱՐԺԱՆ ԵՆՔ, ՈՐ ԿՈՐԵՆՔ-ԳՆԱՆՔ ԷՍ ԱՇԽԱՐՀԻՑ: Չպիտի՛ մոռանանք, որ էսօրվա անարդար կարգի համար ՄԵԶՆԻՑ ԱՄԵՆ ՄԵԿՆ ԷԼ **պատասխանատվության իրա բաժինն ունի**):

Երրորդ իշխանությունը դատականն ա՝ դատարանները (համ էլ՝ սահմանադրականը ու դատախազությունները):

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՏԻ ԸԼՆԻ ԱՆԿԱԽ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ՝ ԲՈԼՈՐ ՉԻՆՈՎՆԻԿՆԵՐԻՑ ՈՒ ԱՆՀԱՏՆԵՐԻՑ: ԴԱՏԱՎՈՐԸ ՊԻՏԻ ԸԼՆԻ ՀԱՄԱՐՅԱ ՑՄԱՀ, ՈՒ ՊԻՏԻ ԸԼՆԻ ԳԵՐԱԿԱ՝ ՆՈՒՅՆԻՍԿ ՀԵՆՑ ԻՆՔՆ ԻՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ, Է՛Ն ԻՄԱՍՏՈՎ, ՈՐ ԴԱՏԵԼՈՒ ՈՒ ՊԱՏԺԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱ ԲՈԼՈ՛Ր ՕՐԻՆԱԽԱԽՏՆԵՐԻՆ, ՆՈՒՅՆԻՍԿ ԹԵ ՈՐ ՕՐԻՆԱԽԱԽՏԸ ՆԱԽԱՐԱՐ Ա ԿԱՄ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՊՐԵԶԻԴԵՆՏ Ա ԿԱՄ ՎԱՐՉԱՊԵՏ, ԿԱՄ ԷԼ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ՆԱԽԱԳԱՀ, ԴԵՊՈՒՏԱՏ Ա ԿԱՄ ԷԼ՝ ԴԱՏԱՎՈՐ ՈՒ ԴԱՏԱԽԱԶ, ԿԱՄ ԷԼ ՆՈՒՅՆԻՍԿ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՈՒ ՆԱԽԱԳԱՀ:

ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԵՐԻ ՄԵՋ ՊԻՏԻ ԸՆԴԳՐԿՎԵՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԻԺՆԵՐ (Սահմանադրության մանավանդ է՛ն օրենքները խախտելու համար, որոնք ապահովում են բարոյակարգը, այսինքն՝ ապահովում են Հյումի ասած բարոյական նորմերի գործունեությունը):

Այսինքն՝ **պիտի ամենայն խստությամբ դատվեն ու պատժվեն՝ անհատական է՛ն տեսակ ունեցվածքի անձեռնմխելիությունը խախտողները, ինչին ասում ենք՝ օրենքի առաջ բոլորի հավասարություն, մարդու իրավունքներ, խոսքի, կարծիքի, հավատի ու ինֆորմացիա ստանալու իրավունք, ու անպայման՝ ընտրակարգի օրենքները խախտողները ևն:**

Սրա համար էլ.

ՊԵՏՔ Ա, ՈՐ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆԱՆ՝ ԴԱՏԵԼՈՒ ՈՒ ՊԱՏԺԵԼՈՒ ՈՒՂՂԱԿԻ ՀԵՆՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՎ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԷԼ ՊԻՏԻ ՀԱՄԱՐՎԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ:

Սահմանադրական դատարանը պիտի զբաղվի մենակ Սահմանադրության խրթին ու բազմիմաստ օրենքներով, սրանց վերլուծությամբ ու մշակումով ու սահմանադրական դատավեճերով ու մեկ էլ սրանց պես մի քանի ուրիշ բանով:

Ու, իհարկե, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ ԵՐԿՐԻ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ, ոչ թե էսօրվա պես, երբ Սահմանադրական դատարանին դիմելու իրավունք ունի մենակ երկրի պրեզիդենտը, ու (ինչքան գիտեմ) դեպուտատների մեկ երրորդն ու մեկ էլ առանձին դեպուտատներ, բայց մենակ ընտրական վեճերի համար:

Թե չէ՝ Սահմանադրություն ունենք, այսինքն՝ ունենք երկրի հիմնական օրենքների ժողովածու, ընդ որում, ԳԵՐԱԳՈՒՅՆ օրենքների հավաքածու, ու դատարան էլ ունենք, բայց դատավորն էս գերագույն օրենքները խախտելու համար ոչ մեկին պատժելու հնարավորություն չունի:

Էլ **ու՞մ ա պետք սրա պես Սահմանադրությունը կամ գերագույն օրենքը: Բա ԳԵՐԱԳՈՒՅՆ օրենքը սե՞նց ա ըլնում: Սրա ըլնել-չըլնելը մի հաշիվ չի՞:** (Երեվի չէ, որովհետեվ շատ անգամ սրանով մենակ արդարացնում են իշխանավորների հանցագործությունները):

<u>ՄԱՍՆ 5-ՐԴ</u>

ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԱՐ ՎԱՐՔԸ (= Ոսկե կանոնը)

Հյումի ԵՐԵՔ ՍԿԶԲՈՒՆՔԸ, ճիշտն ասած, ՄԵՐՎԱԾ, ՁՈՒԼՎԱԾ ԵՆ ԻՐԱՐ ՀԵՏ, ՈՒ ԵՐԲ ՍՐԱՆՑԻՑ ՄԵԿԸ ԽԱԽՏՎՈՒՄ Ա, ՄՅՈՒՍՆԵՐՆ ԷԼ ԵՆ ԽԱԽՏՎՈՒՄ: **Ուրեմն մենակ հարմարության համար են էս նորմերն իրարից առանձին նշում**:

Հյումի նշած բարոյական էս նորմերը, ըստ էության, անհատի վարքի վերացական ու ամենաընդհանուր կանոններն են: **Էս կանոնները վերացական են Է՛ն իմաստով, որ սրանք կախված չեն տեղի ու պահի հանգամանքներից, ու պարտադիր են ամե՛ն մարդու համար**:

Ու թե որ որեվէ անհատ չենթարկվեց սրանց, ուրեմն էդ անհատն ըմբոստանում ա հասարակության դեմ, ու էս անհատն անընդհատ

վեճ ու կռվի մեջ կլինի ծանոթ-անծանոթի հետ: Որովհետև ԷՍ ԵՐԵՔ ՆՈՐՄԻՑ ԵՆ ԲԽՈՒՄ ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ԷՆ ԲՈԼՈ՛Ր ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆՔ ԱՄԵՆ ՔԱՅԼԱՓՈԽԻՆ, ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԱՐՅԱ ԲՆԱԶԴՈՎ:

Օրինակ՝ երրորդ նորմը (երկրորդի հետ), կոպիտ ասած, նշանակում ա, որ **ոչ մի առանձնաշնորհ կամ մենաշնորհ (մոնոպոլիա) չպիտի ըլնի, որ օրինակ՝ պատգամավորներն ու պետական պաշտոնյաները ոչ մի երկարատեվ իմունիտետ կամ արտոնություն չպետք ա ունենան**:

Նորից նշենք էս կանոններից մի քանիսը. **ազնվությունը, անհատական սեփականություն-ունեցվածքն ու սրա անձեռնմխելիությունը, պայման-խոստումը, փոխանակությունը, առեվտուրը, մրցությունը, ազնիվ վաստակն ու ուրիշ սրանց պես բաներն ապահովող կանոնները**:

Հյումի նորմերը, ըստ էության, ասում են նույն բանը, ինչ ասում ա Ոսկե կանոնը:

Ես Ոսկե կանոնը կձեվակերպեի ոչ թե սրա տարածված կործանարար **մաքսիմում** պահանջով, այսինքն՝ «**ուրիշների հանդեպ արա Է՛ն բանը, ինչը որ կուզեիր, որ ուրիշներն անեն քո՛ հանդեպ**», այլ **նվազագույն** պահանջով.

«ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՄԻ՛ ԱՐԱ ԷՆ ԲԱՆԸ, ԻՆՉԸ ՈՐ ՉԷԻՐ ՈՒԶԵՆԱ, ՈՐ ՈՒՐԻՇՆԵՐՆ ԱՆԵՆ ՔՈ՛ ՀԱՆԴԵՊ»:

Կամ ավելի կարճ.

«ՈՒՐԻՇԻՆ ԱՆՏԵՂԻ ՎՆԱՍ ՄԻ՛ ՏՈՒ»:

Հենց սա՛ ա լիբերալիզմ-լիբերթարիզմի էությունը:

Ու թե կուզեք, **Ոսկե կանոնը հենց բարոյական կամ արդար վարքով մարդու սահմանումն ա:**

Ուրեմն, թե որ մեկն ուրիշներին չի անում էն բանը, ինչը որ չի ուզում, որ ուրիշները իրե՛ն անեն, արդեն լրիվ արդար մարդ ա, ու իրա վարքը լրիվ արդար ա, ու ինքն էլ լրիվ բարոյական քաղաքացի յա:

Ուրեմն, **թե որ մարդը հետամուտ ա մենակ ու մենակ իրա սեփական շահերին ու սրա հետն էլ ուրիշներին ոչ մի վնաս չի տալի ու ոչ մի օրենք ու նորմ չի խախտում, էդ մարդը լրիվ նորմալ մարդ ա ու ոչ մի պարսավանքի արժան չի:** Իհարկե, լիբերթարիզմը չի արգելում կամ դատապարտում, որ որեվէ մեկը ալտրուիստ ըլնի, այսինքն՝ անշահախնդիր օգնի ուրիշներին:

Սենց ալտրուիստներ միշտ ըլնում են ամեն տեղ էլ, իսկ երբ հասարակարգը բարոյակարգ ա, էդ կարգի մեջ լիքն ալտրուիստ ա ըլնում, ու էդ հասարակարգում լավ ա ապրում նույնիսկ բոմժն ու բացարձակ անբանն ու անպիտանը:

ՄԱՍՆ 6-ՐԴ

ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ԴՐՈՒՅԹ
1. ԲԱՐՈՅԱԿԱՐԳԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ասածներիս մի մասը նորից շեշտելով՝ մի քանի բան էլ ավելացնեմ:

Պետերի տոտալիտար խումբը, **բանակի ու թույլերի կարիքների մահանայով**, ժողովրդին ԽԱԲՈՒՄ Ա ՈՒ ԽԼՈՒՄ սրա անհատական ունեցվածքի մի զգալի մասը՝ համ էլ ու առաջին հերթին ՀԱՐԿԵՐԸ, ՄԱՔՍԵՐՆ ՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱԽՍԵՐԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՎ, ԱՅՍԻՆՔՆ՝ «ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ԹԱԼԱՆԵԼՈՎ» ԺՈՂՈՎՐԴԻՆ: Պետությունը հարկերի ու կոմունալ ծախսերի ավելացումն էլ արդարացնում ա էն պատրվակով, թե սրանցով պիտի թույլերին օգնի, պիտի թույլերին թոշակ ու նպաստ տա:

Թոշակը երեվի լավ բան ա (ինքս թոշակառու եմ, ու իմ նույնիսկ էս չնչին թոշակն իմ համար չափազանց էական ա), բայց թոշակի հետեվն ընկնելը վնասակար ա: Էս վնասն էն հանգամանքն ա, որ **մարդկանց մեծ մասը հույսը դնում ա պետության օգնության վրա ու ընկնում ա թոշակի ու զանազան նպաստների ու արտոնությունների հետեվից, փոխանակ թեվերը քշտի ու իր գլխի ճարը ի՛նքը տեսնի, ու իր համար ապահով ծերություն ստեղծի**:

Բացի էս մեծ հարկերը, ավազակային մաքսն ու խոշոր տարիֆներն ու պետերի ծայրաստիճան բյուրոկրատական ու լկտիացած խումբը չի թողնում, որ անհատ ձեռներեցները բիզնես դնեն ու նյութական ու հոգեվոր բարիքների արտադրությունը շատացնեն, լավացնեն ու էժանացնեն ու նոր աշխատատեղեր ստեղծեն: Ու տուժում են բոլո՛ր:

Բա ի՞նչ անենք: Թույլերին չօգնե՞նք ու բանակը չուժեղացնե՞նք:

Թույլերին օգնելու ու բանակը հզորացնելու ու առհասարակ՝ կարգին երկիր (բարոյակարգ) ունենալու համար, արդեն ասածս բաներից բացի, ՊԵՏՔ Ա ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ (ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ) ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՊԵՏԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԹՎՈՎ ԽՈՒՄԲ:

Ընդ որում, **էս ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՏԻ ՁԲԱՂՎԻ ՄԵՆԱԿ ՈՒ ՄԵՆԱԿ ԷՆ ԲԱՆՈՎ, ՈՐ ՀՅՈՒՄԻ ԱՍԱԾ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՐԵՔ ՆՈՐՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒ ԱՆԽԱՓԱՆ ԱՇԽԱՏԻ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՀՍԿԻ, ՈՐ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՉԽԱԽՏՎԵՆ ՈՒ ՉԱՓԱԶԱՆՑ ԱՐԱԳ ՈՒ ԿՏՐՈՒԿ ՉՓՈԽՎԵՆ, ԱՎԵԼԻ ՃԻՇՏ, ՀԱՄԱՐՅԱ ՉՓՈԽՎԵՆ, ՈՒ ՀԵՏԵՎԻ, ՈՐ ԱԶԱՏ ՄՐՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԽԱՓԱՆ ԳՈՐԾԻ**:

Էլի՛ ասեմ, որ էս նվազագույն պետությունը պիտի ըլնի ներկայացուցչական, այսինքն՝ պիտի կազմված լինի ժողովրդի վե-

րից վար ընտրովի ներկայացուցիչներից: Էս ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՏԻ ԲԱԺԱՆՎԱԾ ԼԻՆԻ ԵՐԵՔ ԱՆԿԱԽ ՄԱՍԻ:

Նորից կրկնեմ, որ սրանցից համ էլ առաջինը՝ **գործադիր իշխանությունը կամ կառավարությունը պիտի** ըլնի **խորհրդարանական-ներկայացուցչական** (այսինքն՝ **լրիվ ընտրովի ըլնի**): Սա պիտի զբաղվի բանակի (արտաքին թշնամիներից պաշպանվելու ու արտաքին քաղաքականության հարցերով) ու ոստիկանության աշխատանքները կազմակերպելով ու իրագործելով:

Բայց **սա ոչ մի անգամ չպիտի խախտի օրենքներն ու օրենսդիր իշխանության հաստատած միջազգային պայմանագրերը:** Համ էլ, իհարկե, ուրիշ պետությունների հետ պիտի վերաբերվի, ինչքան հնարավոր ա, ըստ Հյումի նորմերի:

Ու ամենակարեվորը. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (ԱՅՍԻՆՔՆ՝ ՊԵՏԵՐԻ ԽՈՒՄԲԸ) ՉՊԻՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆԱ ԻՐԱ ԵՐԿՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԻՐԱ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ԿԱՄ ՍՐԱՆՑ ՈՐԵՎԷ ՄԻ ՄԱՍԸ ՀԱՆՁՆԻ ՈՐԵՎԷ ՈՒՐԻՇ ԵՐԿՐԻ:

Իշխանության երկրորդ թեվն **օրենսդիր իշխանությունը կամ պառլամենտն** ա, ինչը պիտի զբաղվի մենակ **նէնց նոր օրենքներ մշակելով ու ընդունելով, որոնք նախ պարտադիր ու ընդհանուր են բոլորի համար, այսինքն՝ վերացական են, «կույր են»**: (Իզուր չի, որ հին հույները արդարադատության աստվածուհուն՝ Ֆեմիդային կույր էին քանդակում):

Օրենքները ոչ թե հասարակության առանձին անհատների կամ առանձին խմբերի շահերը պիտի պաշտպանեն, այլ՝ **ԱՄԷ՛Ն ՄԻ** ԽՄԲԻՆՆ ՈՒ **ԱՄԷ՛Ն ՄԻ** ԱՆՀԱՏԻՆԸ: Պառլամենտը պիտի նէնց օրենքներ մշակի, որոնք ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՄԵԾԱՑՆՈՒՄ, ՇԱՏԱՑՆՈՒՄ ԵՆ ԱՆՀԱՏՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ (ու ոչ թե նեղացնում, քչացնում են էդ ազատությունը):

Ու, իհարկե, օրենսդիր իշխանությունը պիտի մշակի ՕՐԵՆՔՈՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԱԶԱՏ մրցությունն ապահովող օրենքները, ու էն օրենքները, որ ապահովում են մամուլի **ազատ գործունեությունը**, մանավանդ՝ ՀԵՌԱՑՈՒՅՑԻ ՈՒ ՌԱԴԻՈՅԻ ազատ գործունեությունը:

Պետությունը, այսինքն՝ պետերի խմբի առանձին անդամները չպիտի բիզնեսով զբաղվելու իրավունքն ունենան, որ իրանց անհատական բիզնեսային շահերը պաշտպանելու խաթեր չխախտեն երկրի բարոյակարգը:

Մենակ ու մենակ օրենսդիր պառլամենտը պիտի սահմանի հարկերի ու մաքսերի չափերը՝ հոգալով, որ սրանք խիստ թեթեվ ըլնեն, իսկ միջին ու մանավանդ փոքր բիզնեսներին գոնե մի 5 տարի չպիտի հարկի (կամ միջինին պիտի շատ քիչ հարկի), մինչեվ սրանք ոտի կանգնեն:

ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉՊԻՏԻ ԽԱՌՆՎԻ ՈՉ ԳՈՐԾԱԴԻՐ ՈՒ ՈՉ ԷԼ ԵՐՐՈՐԴ՝ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԱՄՈՒԼԻ ԳՈՐԾԵՐԻՆ, ՈՉ ԷԼ ԳՈՐԾԱԴԻՐ ԿԱՄ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՏԻ ԽԱՌՆՎԻ ՄՅՈՒՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻՆ:

2. ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԵՐԻ ԹԻՎԸ

Նվազագույն պետության պետերի թիվն էլ պիտի նվազագույնը լինի ու ավելը պետք էլ չի, թե որ էս պետերը ոչ թե «կառավարում են», այլ մենակ ՀՍԿՈՒՄ ՈՒ ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ, ՕՐԵՆՔ ԵՆ ՄՇԱԿՈՒՄ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄ, ՈՒ ՕՐԻՆԱԽԱԽՏՆԵՐԻՆ ԵՆ ՊԱՏԺՈՒՄ:

ՄԻԱԿ ԵԼՔԸ՝ ՉԻՆՈՎՆԻԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԽԻՍՏ ԿՐՃԱՏԵԼՆ Ա ՈՒ ՀԱՄ ԷԼ ՉԻՆՈՎՆԻԿՆԵՐԻ ԹԻՎԸ ԽԻՍՏ ԿՐՃԱՏԵԼՆ Ա (ՄՈՏ 20-30 ԱՆԳԱՄ):

ՈՒ, ԻՀԱՐԿԵ, ՊԻՏԻ ՉԻՆՈՎՆԻԿԻՆ ՀՍԿԵԼՈՒ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵԼՈՒ ՈՒ ԳՈՐԾԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՈՒ ՀԱՄ ԷԼ ՊԱՏԺԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՒՆԵՆԱՍ: ԷՍ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԻՏԻ ԱՆՊԱՅՄԱՆ ՈՒՆԵՆԱՍ, ԹԵ ՉԷ՝ ԿԴԱՌՆԱՍ ՉԻՆՈՎՆԻԿԻ ՃՈՐՏԸ:

Երկրի պրեզիդենտն ու վարչապետն ու նախարարներն էլ են չինովնիկ, որովհետեվ սրանք չինովնիկների գլխավորներն են:

3. ԱԶԱՏ ՇՈՒԿԱՆ
(Սոցիալիստի ու լիբերթարի մտածողության հիմնական տարբերությունը)

Ձանազան գույն ու երանգի սոցիալիստների (ուրեմն, համ էլ՝ կոմունիստների) հիմնական սխալն էն ա, որ սրանք գիդեն, թե անհատական սեփականությունն ա մարդկանց հասարակական բոլոր չարիքների պատճառը: Սրա համար էլ սոցիալիստները, քիչ թե շատ, դեմ են անհատական սեփականությանը ու ԱՏՈՒՄ ՈՒ ԱՀԱՎՈՐ ՆԱԽԱՆՁՈՒՄ ԵՆ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՆ:

ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ ՈՒՁՈՒՄ ԵՆ ՈՂՋ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԼԱՆՈՎ ՂԵԿԱՎԱՐԵՆ, ԻՍԿ ՍԱ ԱՆՀՆԱՐ Ա, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՎԻԹԽԱՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱԳԱՆ (ՏՈ, ՆՈՒՅՆԻՍԿ ՓՈՔՐԵՐԻՆՆ ԷԼ) ԳՈՒՇԱԿԵԼԻ ՉԻ:

Իսկ թե որ մի բանի ապագան գուշակելի չի, դրա ապագան պլանավորելը լրիվ ա անհնար: Անհնար ա հենց սկզբունքով, ու ոչ թե Էն պատճառով, որ մարդկային գիտելիքներն են թերի կամ անկատար: Այսինքն՝ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ՏՆՏՀԱՇՎԱՐԿՆ ԱՆՀԱՆԱՐ Ա: Ուրեմն, ոնց որ Հայեկն ա ասում, **սոցիալիստներն ուղղակի գոռոզամիտ են, իսկ սենց մի գոռոզամտությունը կործանարար ա ողջ մարդկության համար**:

Կենտրոնական պլանն անհնար ա հենց էն բանի համար, որ արդեն ասված տեղի ու պահի պայմանները, հենց սկզբունքով, դիֆուզ ցրված են միլիոնների մեջ, ու երբեք էլ լրիվ հայտնի չեն ու չեն էլ կարա հայտնի ընեն էդ կենտրոնին:

ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋ ԱՄԵՆ ՄԻ ՄԱՐԴՈՒ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ ԲՈԼՈՐԻՆ ՀԱՎԱՍԱՐ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ, որովհետև մտածում են, թե տնտեսությունը մի կենտրոնից ղեկավարելը հնարավոր ա, ու բացի սա, հնարավոր ա, որ որոշվի, թե ում ինչքան հասնի, որ արդար ընի (ասվել ա, որ սրան ասում են՝ «սոցիալական արդարություն»):

Լիբերթարներն ասում են, թե տնտեսությունը մի կենտրոնից ղեկավարելն անհնար ա, ու որ տնտեսության ղեկավարությունը մի կենտրոնից կրճատում ա արտադրությունն ու վերջը կործանում ա էդ տնտեսությունը:

ԼԻԲԵՐԹԱՐՆԵՐՆ ԱՍՈՒՄ ԵՆ, ԹԵ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՊԱՏՐԱՆՔ Ա, ՈՒ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ ԱՐԴԱՐ ԲԱՇԽՈՂ ՄԻԱԿ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԱԶԱՏ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆ Ա: Փորձը ցույց տվեց, որ լիբերթարիստները ճիշտ են:

Լիբերթարիստներն ասում են, որ երբ հոգեվոր ու նյութական բարիք արտադրելու ամեն մի պրոցեսը ազատ ա (դեմոկրատական օրենքների շրջանակներում), էդ ժամանակը էդ պրոցեսների ողջ ընդհանրությունը կազմում ա «ԱԶԱՏ ՇՈՒԿԱ, ԱԶԱՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»-Ի ՄԻ ԳԵՐԲԱՐԴ ԿՈՄՊԼԵՔՍ:

ԱԶԱՏ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՍՈՒՄ Ա Ֆ. Ա. ՀԱՅԵԿԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ Ա, ՈՒ ՍԱ ԱՎԵԼԻ ՊԱՐԶ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԻ ՏՐՈՀՎՈՒՄ:

Սա համեմատում եմ դասական **էլեկտրադինամիկայի դաշտի** հասկացության հետ, ինչը դասական տեսության շրջանակներում ավելի պարզ հասկացությունների չի տրոհվում: Շատ-շատ, սրա հատկություններն իմանաս, բայց անիմաստ հարց տված կըլնես, թե որ հարցնես՝ ինչ ա սա:

Մի բանը հաստատ ա, **ԱԶԱՏ ՇՈՒԿԱՆ ՎԻԹԽԱՐԻ ՉԱՓՈՎ ԱՎԵԼԻ՛ ՈՒՆԱԿ, ԱՎԵԼԻ՛ «ՀԱՆՃԱՐԵՂ» Ա, ՔԱՆ ՀԶՈՐԱԳՈՒՅՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԱՑԱԾ ԽՈՒՄԲԸ**:

Մարդկության գերխնդիրը, թե որ համաշխարհային հնարավոր աղետների հարցերից չխոսանք, էս ահավոր տեմպով անընդհատ աճող բնակչությանը կերակրելն ու սրա ահավոր աճող պահանջմունքները բավարարելն ա: ՍԱ ԿԱՐԱ ԱՆԻ ՄԵՆԱԿ ՈՒ ՄԵՆԱԿ ԱԶԱՏ ՇՈՒԿԱՆ: **Ո՞նց կանի, կամ կանի՞, հայտնի չի, բայց ուրիշ անող չի ըլնի: Թե արեց, ազատ շուկան կանի:**

Ազատ շուկայական հարաբերություններով երկրներին ասում են՝ **կապիտալիստական** կամ **դեմոկրատական**, կամ **քաղաքացիական** կամ **բաց հասարակություն**: Տեսանք, թե էս տերմիններն ինչքան են վարկաբեկված: Սրա պատճառն էն ա, որ **իսկական ազատ շուկա ոչ մի երկրում չի էղե ու չկա**, իսկ էղածների շուկայական հարաբերությունների ազատությունն էլ քաղգործիչներն ու բարոյակարգի զանազան թշնամիներն անընդհատ սահմանափակում ու սրանց անունը վարկաբեկում են:

Մարդը հա էլ հետեվում ա շուկայում ինքն իրան ձեվավորվող մրցության կարգին, իսկ էս կարգն էնքա՜ն շատ ա քմահաճ, որ **մի կենտրոնից սրա տնտեսվարկն անհնար ա**:

ԱՆՀՆԱՐ Ա, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՄԻ ԿԵՆՏՐՈՆԻՑ ԷՍ ԿԱՐԳԻՆ ՄԻՋԱՄՏԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Ա ՎԵՐԱՑՆԵՍ ԷՂԱԾ ԲՈԼՈՐ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՄԵՆԱՅՆ ՄԱՐԴԿԱՅԻՆԸ:

Լիբերթարներն ասում են, **շուկան ազա՛տ թող** (ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ), **ու կենտրոնական պլանի տեղը թո ամեն մեկն իրա մեծ կամ փոքր բիզնեսը պլանավորի, ոնց կարում ա**: ԷՍ ԴԵՊՔՈՒՄ ԹԵ ԷԴ ՄԱՐԴԸ ՔԱՇՎԱՎ՝ ՄԵՆԱԿ ԻՆՔԸ ԿՏՈՒԺԻ:

Այնինչ.

ԹԵ ՈՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՔԱՇՎԵՑ, ԷԴ ԺԱՄԱՆԱԿԸ ՏՈՒԺՈՒՄ Ա ՈՂՋ ԵՐԿԻՐԸ: ՈՒ ԷՍ ԱՆԳԱՄ ԷԴ ԵՐԿԻՐԸ ԿԱՐՈՂ Ա ՆԵ՛ՆՑ ՔԱՇՎԻ, ՈՐ ԱՇԽԱՐՀԻ ԷՐԵՍԻՑ ՎԵՐԱՆԱ, ԳՆԱ:

Ու **քանի որ ազատ շուկայում նույն գործը հա էլ մեկից ավել լիքը մարդ ա ձեռնարկում, դրանց մեջը հաջողակներն էլ կըլնեն: Իսկ որ էդ հաջողակների գործն առաջ գնաց, համ իրա՛նք կհարստանան, համ է՛լ հասարակության մնացած անդամներին օգուտ կըլնի, նույնիսկ իրանց անծանոթ մարդկանց օգուտ կըլնի**, ասում են լիբերթարները:

4. ԳՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ

(Ինֆորմացիան տարածելու ամենաարագ միջոցը)

Երբ հրաժարվում են կենտրոնական պլան ու ղեկավարությունից, այսինքն՝ մի կենտրոնից վճիռ անելուց, ԷԴ ՎՃԻՌՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԱՆՀԱՏՆԵՐՆ ԵՆ ԱՆՈՒՄ, ԻՆՉԸ ԹԵ՛ ՏԵՂԻ ՈՒ ՊԱՀԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆ Ա ԴԱՐՁՆՈՒՄ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ, ԹԵ՛ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՁԵՎՈՎ Ա ԳՈՐԾԱԾՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՄԵՋԸ ՑՐՎԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՆ ՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Բայց անհատը ո՞նց ա իմանում, թե ե՛րբ ու ի՞նչ անի: Անհատը, ո՞նց ա իմանում, թե երկրի շուկայի ու բոլոր երկրի վիճակը ո՞նց ա:

Անհատին էս բաները հուշում են ԳՆԵՐԸ (մանավանդ՝ ԱԶԱՏ ՇՈՒԿԱՅԻ ԳՆԵՐԸ), ու անհատ ձեռներեցը հետեվում ա գներին, ու իրան էլ ուրիշ ոչ մի «գիտական» ինֆորմացիա պետք չի, բացի տեղի ու պահի տվյալներից, որոնք գիտական չեն:

(Մեր երկրի պես երկրում անհատը պիտի իմանա համ էլ կաշառքի ու «կռիշների» գները, որովհետեվ սրանք է՛լ գին ունեն):

ԳՆԵՐԸ, ՄԱՆԱՎԱՆԴ, ԱԶԱՏ ՇՈՒԿԱՅԻ ԳՆԵՐԸ, ԱՄԵ՞Ն ԻՆՉՆ ԵՆ ԱՍՈՒՄ:

Փողի ու գների սիստեմի հայտնագործությունը, անհատական ունեցվածքի ու իրավունքի հայտնագործությունից հետո, մեր քաղաքակրթության ամենակարեվոր հայտնագործություններից մեկն ա, ու սա էնքան էլ վաղուց չի էղե: Փողը հայտնագործել են երեվի մի 28 դար առաջ:

ԳՆԵՐԻՍԻՍՏԵՄԸՑԱՆԿԱՑԱԾԻՆՖՈՐՄԱՑԻԱՆԱՄԵՆԱՍՐԸՆԹԱՑ ՈՒ ԱՄԵՆԱՕՊԻՏԻՄԱԼ ՁԵՎՈՎ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՍԻՍՏԵՄՆ Ա: ԳՆԵ՛Ր ԵՆ ՀՈՒՇՈՒՄ, ԹԵ ԱՆՀԱՏՆ Ի՞ՆՉ ՈՒ Ե՛ՐԲ ԿԱՐԱ ԱՆԻ, ԲԱՅՑ ԳՆԵՐԸ ՉԵՆ ԱՍՈՒՄ, ԹԵ ԷԴ ԱՐՎԵԼԻՔԸ Ո՞ՆՑ ՊԻՏԻ ԱՐՎԻ:

Շուկան գների սիստեմով հուշում ա, թե ո՛ր պահանջմունքներն են, որ բավարարված չեն (կամ լավ չեն բավարարված), ո՛ր ապրանքն ա քիչ, ու ինչքա՞ն ա էս կամ էն ապրանքի կամ հումքի գինը: (Ապրանք ասելով՝ պիտի հասկանանք համ էլ աշխատուժն ու հոգեվոր «ապրանքները»):

ՈՒ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ Ա ՄԵՆԱԿ Է՞Ն ԲԱՆԻ ՀԱՄԱՐ, ՈՐ ԳՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ ԿԱ:

Չնայած գների մասին ահագին բան ա հայտնի (օրինակ՝ **մարջինալ օգտակարության սկզբունքը**), բայց մեկ ա, գների ձեվավորվելու մանրամասն մեխանիզմն անհայտ ա, ու սրա համար էլ գների համապարփակ ղեկավարությունն անհնար ա, անհնար ա ՀԵՆՑ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ:

ԱԶԱՏ ՇՈՒԿԱՅԻ ՈՒ ԳՆԵՐԻ ՍԻՍՏԵՄՆ Է՛Լ ՊԻՏԻ ԼՐԻՎ ԱԶԱՏ ԸԼՆԻ, ԹԵ ՉԷ՝ ՇՈՒԿԱՆ ԱԶԱՏ ՉԻ ԸԼՆԻ:

Թե որ գների սիստեմն ազատ չէղավ, դա արդեն երկրի տնտեսության վիճակը ճիշտ ցույց չի տա, ու անհատն էլ արդեն չի կարա իմանա, թե ի՛նչ ու ե՛րբ անի: Երբ երկրի չինովնիկներն ու օլիգարխները խառնվում են գների ձեվավորվելու պրոցեսին, ստեղծում են «գնային աղմուկ», ու էս աղմուկը աղավաղում ա երկրի տնտեսության պատկերը ու չի թողնում, որ էս տնտեսության վիճակը ճիշտ էրեվա:

Երբ գները անընդհատ ու շատ արագ են փոխվում, անհատն էլ արդեն չի իմանում ի՛նչ ու ո՛նց անի, որովհետեվ էլ արդեն չի կարում իրա անհատական տնտեսական հաշվարկն անի, ու չի կարում իրա բիզնեսի պլանը ճիշտ կազմի:

Սոցիալիզմի ժամանակ, օրինակ, կառավարությունը չի իմանում, թե տնտհաշվարկը ոնց անի, ու իրա բոլոր պլաններն էլ ոչ մի անգամ չեն իրականանում, որովհետեվ սոցիալիստական պետության բոլոր գներն էլ կառավարությունն ա հաստատում (տես՝ [**Mises L**., ***Human Actio***n-ի սոցիալիստական հասարակարգում տնտհաշվարկի անհնարինության գլուխը]):

Գները կառավարելու ցանկացած փորձ կրճատում ա արտադրությունը: Երբ գների սիստեմն ազատ չի, անհատին հասնող ինֆորմացիան շուկայի մասին աղավաղ ա, ու շուկան ու մրցությունն էլ ազատ չեն:

Երբ սենց վիճակը երկար ա տեվում, առաջընթացը դանդաղում կամ դադարում ա, ու վերջն էլ՝ տնտեսությունը փլվում ա, ու երկիրն էլ կործանվում ա:

Սա նշանակում ա, որ ԳՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՎ՝ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼԸ ԿԱՄ ԼԱՎԱՑՆԵԼՆ ԱՆՀՆԱՐ Ա:

Թե որ Հայաստանում կառավարությունը հանկարծ գները չզսպի, միանգամից կէրեվա, որ Հայաստանը կործանվում ա, ու համ էլ կէրեվա, որ Հայաստանին շատ չի մնացե:

Երբ գներն սենց դանդաղ ու «աննկատելի» են թանգանում, ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵՆԱԿ ՄԻ ՄԱՍՆ Ա ԻՄԱՆՈՒՄ, ՈՐ ԵՐԿԻՐԸ ԿՈՐԾԱՆՎՈՒՄ Ա: Ու, ոնց որ արդեն ասի, «սրատես» մասը հրաժարվում ա իրա հայրենիքից, ու թողնում, գնում ա, որ նոր հայրենիք ճարի:

Թե որ հանկարծ գները լրիվ ազատ թողնեն, մի քանի շաբաթ հետո վռազ կէրեվա, որ երկիրն անդունդն ա գլորվում, ու ժողովուրդն էլ դժվար թե համբերի էս կառավարությանը: Կապստամբի, համարյա հաստատ, որովհետեվ հո բոլորն իրանց երկրից գնալու հնարավորությունը կամ ցանկությունը չունեն:

Ուրեմն, **գները զսպելով, կառավարությունը, ըստ էության, «մուղամով» ժողովրդին ա զսպում, ինչքան հնարավոր ա՝ երկար ժամանակով**:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՏԵՂԸ

Էս հարցերի մասին շատ-շատ բան կա ասելու, բայց ավելի լավ ա, մյուս էջին բերեմ Միզեսի ու Հայեկի կարեվոր գրքերի ցուցակը: Ով ուզում ա, թո դրանք ճարի ու կարդա (կարծում եմ, սրանք բոլոր էլ ռուսերենով էլ կան), ու թո ինքն իրա սեփական խելքով համոզվի, թե իմ քննարկած հարցերի ճիշտն ու սխալն ի՞նչն ա:

ՄԱՍՆ 7-ՐԴ

Ֆ. Ա. ՀԱՅԵԿԻ ՈՒ Լ. Հ. Է. ՄԻԶԵՍԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ
HAYEK. F. A. (FRIEDRIECH AUGUST VON HAYEK)
(ԷՆ ԵՐԵՔ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԳԻՐՔԸ, ՈՐ ԲԱՐՈՅԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵՆ)

1. ***Law, Legislation and Liberty: a New Statement of the Liberal Principles of Justice and Political Economy***, London, Routledge And Chicago, Chicago University Press.

(i) Vol. I, ***Rules and Order***, 1973; (ii) Vol. II, ***The Mirage of Social Justice***, 1976; (iii) Vol. III, ***The Political Order of a Free People***, 1978.

ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

2. ***The Road to Serfdom***, London, Routledge, 1944 And Chicago, Chicago University Press, 1944.
3. ***The Constitution of Liberty***, London, Routledge, 1960 And Chicago, Chicago University Press, 1960
4. ***Denationalization of Money***, London: Institute of Economic Affairs.
5. ***The Fatal Conceit: The Errors of Socialism***, London, Routledge, 1988 And Chicago, Chicago University Press, 1989.

ФРИДРИХ АВГУСТ ФОН ХАЙЕК

(ԷՆ ԵՐԵՔ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԳԻՐՔԸ, ՈՐ ԲԱՐՈՅԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵՆ)

Право, законодательство и свобода
(1) Правила и порядок;
(2) Мираж социальной справедливости;
(3) Общество свободных (Политический порядок свободного народа)

ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Дорога к рабству
Пагубная самонадеянность
Конституция свободы
Частные деньги

* * *

MISES L. (LUDWIG HEINRICH EDLER VON MISES)

1. ***Socialism: An Economic and Sociological Analysis*** (1922, 1932, 1951)
2. ***Liberalismus*** (1927, 1962 – translated into English, with the new title The Free and Prosperous Commonwealth)
3. ***Bureaucracy*** (1944, 1962)
4. ***Human Action: A Treatise on Economics*** (1949, 1963, 1966, 1996)
5. ***The Anti-Capitalistic Mentality*** (1956)

ЛЮДВИГ ФОН МИЗЕС

1. **Социализм**
2. **Либерализм**
3. **Бюрократия как запланированный хаос**
4. **Человеческая деятельность**
5. **Свобода и собственность**

МЕРУЖАН АРУТЮНЯН

Что нужно сделать, чтобы Армения не погибла

Настоящая статья состоит из семи частей. **В первой,** предварительной части, изложены следующие вопросы: «Армения погибает; Родина это в первую очередь моральный общественный порядок, установленный в данной стране; Справедливые выборы не спасут страну, если в стране нет морального порядка». **Вторая часть** посвящена основополагающим принципам свободного правового общества и излагает следующие вопросы: «Что такое конституция?; Нормы морали Дейвида Юма – неприкосновенная частная собственность; Моральный закон; Равенство всех перед законом (свободная конкуренция, защищенная законом)». **Третья часть** вкратце обсуждает следующие вопросы: «Непредсказуемость будущего делает невозможным центральную планировку любого рода; Истоки права, справедливости и морали это неприкосновенная частная собственность. Нет частной собственности, нет прогресса. Частная собственность – величайшее изобретение человечества. Есть два рода государств – государство свободных чиновников-государей и государство свободных граждан. Понятие социальной справедливости это утопия, истинную справедливость устанавливает только свободный рынок. Основополагающие морально-правовые нормы не созданы человеческой программой, а наоборот, эти нормы возникли спонтанно и именно они создали человеческие общества. Что такое свобода в обществе? Свобода и анархия. Ничем неограниченная демократия может стать отвратительной тиранией». **Четвертая центральная часть** посвящена троечастному делению власти правового государства и излагает следующие вопросы: «Структура и способы выбора парламента морального порядка; Структура и способы выбора Исполнительной власти морального порядка; Структура и способы выбора судебной власти морального порядка». **Пятая часть** вкратце обсуждает вопрос монополий. **Шестая часть** касается вопросов минимального государства с минимальным числом чиновников, обсуждает вопрос свободного рынка, системы цен и вопроса принципиальной неуправляемости цен. **В седьмой части** предлагаются несколько монографий великих мыслителей Фридриха Августа фон Хайека и Людвига фон Мизеса, на идеях которых построено настоящее изложение.

MERUZHAN HARUTYUNYAN

What is Needed to Save Armenia from Ruin?

The **first section** of this paper presents the following problems: “Armenia has been dying. The homeland isn’t just a place to live in, but it is the very moral and social order established in the country. The so called ‘just elections’ won’t save the country if there isn’t moral order in it.” The **second section** is devoted to the fundamental principles of open society and discusses the following problems: “What is a constitution? The moral rules of David Hume – inviolable private property; moral law; equality of all before the law (free competition protected by law).” The **third section** briefly tells about the following: “Unpredictability of the future makes impossible any central planning. The origin of law, justice and morals is private property.” The **fourth section** is devoted to the three-part division of the state power of an open society and concerns the following: “The structure and election of the legislative power of a moral order. The structure and election of the executive power of a moral order. The structure and election of the judicial power of a moral order.” The **fifth section** very briefly tells about monopolies. The **sixth section** touches the problems of the minimum state with the minimum number of authorities, and then it discusses some basic problems of a free market, the system of prices and their fundamental ungovernability. In the **seventh section** a few monographs (upon which the present narration is based) by Friedriech August von Hayek and his teacher Ludwig von Mises are offered to the reader.



ՀԱՅԱՍՏԱՆ-2016.
ՓԱՍՏԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ-2016. ՓԱՍՏԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11 հունվարի

Հայաստանում ՌԴ ռազմահենակետի սպառազինման նպատակով բերվեցին ռուսական արտադրության անօդաչու թռչող սարքերի «Տախիոն» համալիրներ: Ամսվա ընթացքում փորձառու մասնագետներն անձնակազմին կսովորեցնեն աշխատել այդ նոր սարքերով, որոնք կարող են կիրառվել ցերեկը եւ գիշերը՝ մինչեւ 40 կմ հեռավորության վրա, եւ նույնիսկ անբարենպաստ եղանակային պայմաններում հետախուզություն իրականացնելու համար:

12 հունվարի

ՀՀ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գործադիր մարմնի նախագահ նշանակվելու կապակցությամբ ազատվեց ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից:

18 հունվարի

Բրյուսելում մեկնարկել է ԵՄ-Հայաստան համագործակցության խորհրդի 16-րդ նիստը, որին մասնակցում է ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդանը: Նիստի օրակարգում են՝ Արեւելյան գործընկերության եւ եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակում Հայաստան-Եվրամիություն հարաբերությունները, ԵՄ-Հայաստան ապագա հարաբերությունների իրավական նոր հիմունքները, մուտքի արտոնագրի պարզեցման, տնտեսական ու առեւտրային համագործակցությունը, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը, տարածաշրջանային խնդիրներին, մամուլի ազատությանը, մարդու իրավունքներին, օրենքի գերակայությանը, ժողովրդավարությանը, քաղաքական երկխոսությանն ու բարեփոխումներին առնչվող հարցեր:

26 հունվարի

ԵԽԽՎ-ում կայացավ բոսնիացի պատգամավոր Միլիցա Մարկովիչի «Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակիչները միտումնավոր զրկված են ջրից» թեմայով հակահայկական զեկույցի քվեարկությունը: Ձայների 98 կողմ, 71 դեմ եւ 40 ձեռնպահ արդյունքով բանաձեւի նախագիծն ընդունվեց: Ավելի վաղ ԵԽԽՎ-ն քվեարկությամբ մերժել

էր մյուս հակահայկական նախաձեռնության՝ բրիտանացի պատգամավոր Ռոբերտ Ուոլթերի հեղինակած «Բռնության աճը Լեռնային Ղարաբաղում եւ Ադրբեջանի այլ գրավյալ տարածքներում» թեմայով բանաձեւի նախագիծը:

28 հունվարի

«Ժառանգություն» կուսակցության նախագահ Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանը ելույթ ունեցավ Եվրոպական ժողովրդական կուսակցության քաղաքական համաժողովում՝ անդրադառնալով Հայաստանի կեղծված հանրաքվեին, քաղաքական բանտարկյալների խնդրին ու երկրի հակաժողովրդավարական իրադրությանը, ԼՂՀ օրինական ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը եւ մի շարք այլ օրախնդիր թեմաների:

1 փետրվարի

ՀՀ գլխավոր դատախազության շենքի առջեւ հավաքված՝ «Նոր Հայաստան»-ի մի խումբ երիտասարդներ պահանջում էին ազատ արձակել «Հիմնադիր խորհրդարանի» կալանավորված անդամ Գեւորգ Սաֆարյանին:

11 փետրվարի

ԱՄՆ-ն ակնկալում է, որ Հայաստանի ղեկավարությունը կգործի իր հրապարակային հայտարարություններին համապատասխան՝ կատարելով ազատ եւ արդար ընտրությունների անցկացման իր պարտավորությունները: Այս մասին Facebook-ում առցանց ճեպազրույցի ժամանակ հույս հայտնեց Հայաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը: «ԱՄՆ դեսպանատունը խորապես մտահոգված է ընտրակեղծիքների մասին արժանահավատ պնդումների կապակցությամբ: Մենք Հայաստանի ղեկավարությանը կոչ ենք արել դատական կարգով ամբողջովին ուսումնասիրել հանցագործությունների մասին համոզիչ ապացույցները»,- ասել է դեսպանը:

12 փետրվարի

Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով 34-ամյա Գեորգի Կուտոյանը նշանակվեց Ազգային անվտանգության ծառայության տնօրեն՝ ազատվելով գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնից: ԱԱԾ արդեն նախկին տնօրեն Գորիկ Հակոբյանը ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվեց Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդական:

18 փետրվարի

Հայաստանի նոր հարկային օրենսգիրքը պետք է սահմանափակի ստվերային տնտեսության հնարավորությունները: Այս մասին հայտարարեց Հայաստանում Արժույթի միջազգային հիմնադրամի մշտական ներկայացուցիչ Թերեզա Դաբան-Սանչեսը «Բարենպաստ մթնոլորտ Հայաստանում՝ կայուն ձեռնարկատիրության համար» թեմայով քննարկման ժամանակ: Ըստ նրա՝ ստվերային տնտեսության բաժինը Հայաստանում, տարբեր հաշվարկներով, կազմում է 30-50 տոկոս:

24 փետրվարի

Նախագահի նստավայրում Հայաստանի Հանրապետական կուսակցության եւ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության միջեւ կնքվեց Քաղաքական համագործակցության համաձայնագիր: Հուշագրի ստորագրմանը ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը, ՀՅԴ խմբակցության ղեկավար Արմեն Ռուստամյանը: Համաձայնագրի շրջանակներում Դաշնակցությունը ստացավ նախարարական 3 եւ մարզպետական 2 պորտֆել:

1 մարտի

Երեւանում մեկնարկեց ընդդիմադիր 6 ուժերի համատեղ հավաքերթը՝ ի հիշատակ 2008-ի մարտի 1-ի անմեղ զոհերի: 8 տարի առաջ իշխանության կողմից խաղաղ ցուցարարների գնդակոծումը, որին զոհ գնաց առնվազն 10 անձ, աննախադեպ էր հայ ժողովրդի պատմության մեջ: Չնայած Հայաստանի հասարակության եւ միջազգային կազմակերպությունների հետեւողական պահանջներին, մինչեւ հիմա որեւէ մեկը չի կրել պատասխանատվություն եւ չի պատժվել ոճրագործության համար: Այդ մասին էր ասվում ՀԱԿ-ի, «Նոր Հայաստանի» եւ մի շարք այլ ուժերի համատեղ հայտարարության մեջ:

9 մարտի

Յոթամյա դադարից հետո Լեռնային Ղարաբաղը նորից ներկայացավ միջազգային հանրությանը՝ մարտի 9-13-ը Բեռլինում կայանալիք «ITB Berlin 2016» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին ներկայացնելով իր զբոսաշրջային ներուժը:

10 մարտի

Նախագահ Սերժ Սարգսյանը Ռուսաստանի Դաշնություն կատարած պաշտոնական այցի շրջանակներում Մոսկվայում հանդիպեց

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին մի շարք ոլորտներում՝ առեւտրատնտեսական, ներդրումային, էներգետիկայի, հումանիտար եւ այլն, երկկողմ փոխգործակցությանը, ինչպեսեւ եվրասիական տարածքում ինտեգրացիոն գործընթացների զարգացման հեռանկարին վերաբերող հարցեր: Սարգսյանը եւ Պուտինը մտքեր փոխանակեցին նաեւ ԼՂ հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացի ներկա փուլի, առկա խնդիրների եւ այդ գործընթացն առաջ մղելու հնարավորությունների շուրջ:

11 մարտի

«ՀԱՊԿ ուժերը մշտապես պատրաստ են դիմակայելու ահաբեկչական սպառնալիքներին»: Այս մասին այսօր Երեւանում ՀԱՊԿ ԽՎ արտագնա նիստի ժամանակ ասաց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Սերգեյ Նարիշկինը: Նա բարձր գնահատեց Կազմակերպության մասնակից երկրներում արտագնա նիստերի պրակտիկան՝ հավելելով, որ դրանք թույլ են տալիս խորհրդարանականներին ավելի լավ ծանոթանալ դաշնակից պետությունների ռազմական ենթակառուցվածքին:

23 մարտի

«Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատը հրապարակեց Հայաստանում ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու իր ճանապարհային քարտեզը: Նրանում երեք կետ է ներառված՝ վարչախմբի հեռացում, անցումային կառավարության ձեւավորում եւ ազատ, արդար արտահերթ ընտրությունների անցկացում: Ակնկալվում է քաղաքական-հասարակական ուժերի եւ ժողովրդական լայն զանգվածների համախմբում:

1 ապրիլի

ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հրավերով Սերժ Սարգսյանը մասնակցեց Վաշինգտոնում մեկնարկած Միջուկային անվտանգության գագաթաժողովին: Ավելի քան հինգ տասնյակ պետությունների եւ կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ անցկացվող այդ հավաքում քննարկվեցին միջազգային անվտանգության համար մեծ վտանգ ներկայացնող միջուկային ահաբեկչության դեմ պայքարի միջոցները:

2 ապրիլի

Ղարաբաղի եւ Ադրբեջանի հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով շարունակվեցին ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը սահմանի հարավային, հարավարեւելյան եւ հյուսիսարեւելյան ուղղություններով հակառակորդի ձեռնարկած հարձակողական գործողությունները՝ հրետանու, զրահատեխնիկայի ու օդուժի օգտագործմամբ: «Բացի առաջնագծում ընթացող մարտերից, հակառակորդը հրետանային հարվածներ է հասցրել խաղաղ բնակավայրերին եւ մի շարք զորամասերի մշտական տեղակայման վայրերին»,- նշված է ՊՆ տարածած հայտարարությունում: Պաշտպանական բանակի առաջապահ ստորաբաժանումները՝ ընդունելով հակառակորդի մարտահրավերը, վարում են հուսալի պաշտպանական մարտեր:

3 ապրիլի

Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտու շփման գծում հրադադարի լայնածավալ խախտումների առնչությամբ իր խոր մտահոգությունները հայտնեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը: Շփման գծի երկայնքով ծավալված մարտական գործողությունների վերսկսումը, ինչի հետեւանքով մեծ թվով մարդիկ զոհվեցին, այդ թվում՝ քաղաքացիական անձինք, խստագույնս դատապարտեցին եւ կրակը դադարեցնելու հորդորով Ադրբեջանին ու Հայաստանին դիմեցին ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, Իրանի ԱԳՆ մամլո խոսնակ Հոսեյն Անսարին եւ մի շարք այլ երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ: Նույն օրը հաղորդագրություն տարածվեց, որ ադրբեջանական կողմը Լեռնային Ղարաբաղի հարավային հատվածում կիրառել է «Սմերչ» տեսակի հրթիռային համակարգ:

5 ապրիլի

Ժամը 12:00-ի դրությամբ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում կրակը դադարեցված է «երկկողմանի պայմանավորվածությամբ»: Նույն օրը տեղի ունեցան ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հեռախոսազրույցները Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Մտահոգություն հայտնելով լայնածավալ ռազմական բախումների կապակցությամբ, որոնք երկուստեք հանգեցրել են բազմաթիվ մարդկային զոհերի, Պուտինը կողմերին կոչ է արել անհապաղ ձեռնամուխ լինել զինադադարի ռեժիմի պահպանմանը:

6 ապրիլի

Քառօրյա մարտական գործողությունների ընթացքում հակառակորդն աչքի ընկավ աննախադեպ բարբարոսական գործողություններով ոչ միայն Պաշտպանության բանակի զինծառայողների, այլեւ խաղաղ բնակչության հանդեպ: Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության համաձայն՝ Ադրբեջանական բանակի զինծառայողների հանցագործությունների փաստի առթիվ համապատասխան ռազմահրավապահ մարմինների կողմից հարուցվել է քրեական գործ: ԼՂ ռազմական գերատեսչությունն իր կայքէջում հրապարակել է լուսանկարներ, որոնցում պատկերված են հանցագործություններ կատարած մարդասպանների միայն մի մասի դիակները, որ հայ զինվորների կողմից ոչնչացվել են փախուստի պահին:

9 ապրիլի

Նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին (Ռուսաստան), Ջեյմս Ուորլիքին (ԱՄՆ), Պիեռ Անդրիոյին (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպշիկին: Զրուցակիցները քննարկեցին Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան շփման գծում ստեղծված իրավիճակը: Նույն օրը Սերժ Սարգսյանը հանդիպեց ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ վերջինիս նախաձեռնությամբ: Ծուրջ մեկ ժամ տեւած զրույցը բացառապես վերաբերել է ղարաբաղա-ադրբեջանական սահմանագծում տեղի ունեցած իրադարձություններին, ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացում սպասվող առաջիկա զարգացումներին եւ այդ մարտահրավերների հանդեպ ներազգային համախմբման անհրաժեշտությանը:

11 ապրիլի

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Առաջինը երեկոյան ժամանեց Երեւան: Կաթողիկոսության մամուլի դիվանի փոխանցմամբ՝ Վեհափառ հայրապետը եւ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսը առաջիկա օրերին հանդիպումներ են ունենալու Հայաստանի ու Արցախի նախագահների հետ եւ իրենց զորակցությունն են հայտնելու հայոց բանակին՝ ի խնդիր Ղարաբաղի պաշտպանության:

Ապրիլյան բախումների ընթացքում հայկական կողմից զոհվել է 92 մարդ:

13 ապրիլի

Մի խումբ քաղաքացիներ բողոքի երթ եւ ակցիա անցկացրին ընդդեմ Ադրբեջանին ռուսական զենքի վաճառքի: Ցուցարարները երթով անցան Կառավարության եւ Արտգործնախարարության շենքերի մոտով՝ հնչեցնելով «ամոթ» վանկարկումներն ու արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին մեղադրելով անգործության մեջ: Այնուհետեւ՝ հավաքվելով ՀՀ-ում Ռուսաստանի դեսպանատան առջեւ, նրանք ձվեր նետեցին դեսպանատան ուղղությամբ:

18 ապրիլի

Նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով մեկնեց Լեռնային Ղարաբաղ: Ստեփանակերտի օդանավակայանում նրան դիմավորեցին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, հայկական երկու հանրապետությունների պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները, պաշտոնատար այլ անձինք: Երեկոյան ԼՂՀ ՊԲ բարձրագույն սպայական կազմի հետ անցկացված խորհրդակցության ընթացքում քննարկվեց բանակաշինությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

22 ապրիլի

«Ավրորա» մրցանակաբաշխությանը մասնակցելու նպատակով Հայաստան ժամանեց հոլիվուդյան հանրահայտ դերասան Ջորջ Քլունին: Նույն առիթով երեկ երեկոյան արդեն Երեւանում էր ֆրանսահայ լեգենդար շանսոնյե Շառլ Ազնավուրը:

«Ավրորա» մրցանակաբաշխությունը տեղի կունենա ապրիլի 24-ին, Երեւանում:

24 ապրիլի

Օսմանյան Թուրքիայում հայերի դեմ իրականացված եղեռնագործության 101-րդ տարելիցի կապակցությամբ բազմահազար մարդիկ՝ այդ թվում սփյուռքահայեր, օտարերկրյա հյուրեր, այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության ավելի քան մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակին: Աշխարհի 24 երկրներ՝ այդ թվում Ուրուգվայը, Ֆրանսիան, Ռուսաստանը, Շվեյցարիան, Կանադան, Արգենտինան, ինչպես նաեւ Եվրոպական խորհրդարանը, ամերիկյան 50 նահանգներից 44-ը, միջազգային հեղինակավոր կազմակերպություններ ու կառույցներ պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

26 ապրիլի

Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանն ընդունեց «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանին: ԼՂՀ նախագահի պաշտոնական կայքէջի փոխանցմամբ՝ հանդիպմանը քննարկվել են ապրիլի 2-5-ը Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմական գործողություններին առնչվող մի շարք հարցեր:

28 ապրիլի

ՀՀ Ազգային ժողովը ձայների 98 կողմ, 9 դեմ եւ 5 ձեռնպահ հարաբերակցությամբ, առաջին ընթերցմամբ, ընդունեց նոր ԸՕ-ի նախագիծը: Քվեարկությունն անցավ թեժ մթնոլորտում: ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը մինչ քվեարկությունն այդպես էլ վարման կարգով որեւէ պատգամավորի ձայն չտվեց, ինչը, ըստ ընդդիմադիր պատգամավորների, ԱԺ կանոնակարգ-օրենքի կոպիտ խախտում է:

29 ապրիլի

Իսպանիայի Կարկախենտ, Ալակուաս եւ Էլդան քաղաքները պաշտոնապես ճանաչեցին ու դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը: Հայաստանի ԱԳ նախարարության փոխանցմամբ, Կարկախենտի քաղաքային խորհրդում ներկայացված բոլոր հինգ քաղաքական ուժերը միաձայն կողմ են քվեարկել համապատասխան ինստիտուցիոնալ հայտարարության ընդունմանը:

5 մայիսի

Կառավարությունը այսօրվա նիստում հավանություն տվեց Ազգային ժողովի պատգամավորներ Զարուհի Փոստանջյանի եւ Հրանտ Բագրատյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին» օրինագծի վերաբերյալ եզրակացության նախագծին: Կառավարության եզրակացությունը ստանալուց հետո նախագիծը սահմանված կարգով ներկայացվելու է խորհրդարանի քննարկմանը: «Եթե Ադրբեջանը ծավալի նոր ռազմական ագրեսիա, Լեռնային Ղարաբաղի ճանաչման հարցը կմտնի օրակարգ»,- հայտարարել է Հայաստանի ԱԳ նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը:

9 մայիսի

Հայաստանը նշեց Հաղթանակի եւ խաղաղության տոնը, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ մայիսյան Եռատոնը: Այդ կապակցությամբ շնոր-

հավորական ուղերձներ են հղել Հայաստանի եւ Արցախի նախագահները, Ամենայն Հայոց կաթողիկոսը, Հայաստանի Ազգային ժողովի նախագահը, վարչապետը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, քաղաքական ու հասարակական գործիչներ:

16 մայիսի

Վիեննայում մեկնարկեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը՝ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահ երկրների արտգործնախարարների մասնակցությամբ: Ավելի ուշ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման խնդիրը քննարկելու համար Սարգսյանի ու Ալիեւի հետ հանդիպում ունեցան ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին, ԵՄ արտաքին հարաբերությունների գծով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին, Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը, Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետքարտուղար Արլեմ Դեզիրը, ինչպեսեւ ԵԱՀԿ ՄԽ համանախագահները: Երկու նախագահների միջեւ համաձայնություն ձեռք բերվեց պահպանել հրադադարի այն պայմանակարգը, որը հաստատվել էր 1994-1995 թվականների համաձայնագրերով: Նախագահները վերահաստատեցին հրադադարի պահպանման եւ խնդրի խաղաղ կարգավորման իրենց հանձնառությունը: Հետագա բռնությունների վտանգը նվազեցնելու համար նրանք համաձայնել են հնարավորինս սեղմ ժամկետում վերջնականացնել ԵԱՀԿ-ի հետաքննական մեխանիզմը, շարունակել Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի հովանու ներքո անհետ կորած անձանց մասին տվյալների փոխանակումը:

20 մայիսի

Սերժ Սարգսյանն ընդունեց Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներին եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵԱՏՀ) կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանին, ովքեր Հայաստան էին ժամանել Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստին մասնակցելու նպատակով:

ԵԱՏՄ-ի անդամ երկրների տնտեսությունների հետագա բնականոն զարգացման առումով Հայաստանի նախագահը կարեւորեց անվտանգության բաղադրիչը եւ այդ տեսանկյունից ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ վերջին զարգացումները:

24 մայիսի

Հայաստանում մեկնարկեց «Կոբալտ-2016» մարտավարական-մասնագիտական զորավարժությունը՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ-պետություններ-ի օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի կազմում ներգրավված հատուկ նշանակության ուժերի կազմավորումների, ներքին գործերի եւ ոստիկանության ստորաբաժանումների մասնակցությամբ: Հանդիսությանը, որը կտեւի մինչեւ մայիսի 26-ը, մասնակցեցին Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, ՀԱՊԿ-ի, Հայաստանի ոստիկանության եւ Ոստիկանության զորքերի ներկայացուցիչները:

25 մայիսի

Ազգային ժողովը 102 կողմ, 17 դեմ, 3 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ այսօր երրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց Ընտրական օրենսգրքի նախագիծը:

26 մայիսի

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունեց ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին: ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչը Հայաստանի արտգործնախարարին ներկայացրեց Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ շփման գծում անցկացված մշտադիտարկման մանրամասները: Զրուցակիցները քննարկեցին Վիեննայում մայիսի 16-ի գագաթաժողովում ձեռք բերված պայմանավորվածությունների, մասնավորապես՝ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի եւ նրա թիմի կարողությունների ավելացման վերաբերյալ համաձայնության իրականացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

27 մայիսի

Ինչպես ցույց տվեց մայիսի 25-ի քվեարկությունը, իշխանությունները՝ չնայած ապրիլյան պատերազմական գործողությունների սաստկացմանը, չեն փոխել կեղծիքների միջոցով իրենց իշխանությունը պահելու մտադրությունը: Այդ մասին ասված է չորեքշաբթի օրը Ազգային ժողովի կողմից ընդունված Ընտրական օրենսգրքի վերաբերյալ «Ժառանգություն» կուսակցության հայտարարությունում: Նրանում ընդգծված է՝ Օրենսգիրքը, որն ընդունվել է առանց ընդդիմության եւ հասարակական դաշտի հետ համախոհության, «մեծ տեղ է թողնում ընտրակեղծարարության եւ ընտրական գործընթացի մանիպուլյացիաների համար»:

29 մայիսի

Հայաստանի ֆուտբոլի հավաքականն իր պատմության մեջ ամենախոշոր հաշվով հաղթանակը գրանցեց՝ 7:1 հաշվով առավելության հասնելով Գվատեմալայի ընտրանու նկատմամբ: Հանդիպումը կայացավ Լոս Անջելեսում, որտեղ Հայաստանի հավաքականը ուսումնամարզական հավաք էր անցկացնում: Հակառակորդի դարպասը երեք գնդակ ուղարկեց մեր թիմի առաջատար Հենրիխ Մխիթարյանը:

31 մայիսի

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) որոշմամբ մինչեւ 10 հազար խորանարդ մետր գազ ծախսող սպառողների համար մեկ խմ գազի սակագինը հուլիսի 1-ից իջեցվեց 9.3 դրամով: Փոփոխությունը կապված է Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ձեռք բերված պայմանավորվածությամբ, ըստ որի՝ ապրիլի 1-ից Հայաստան առաքվող գազի գինը սահմանին նվազել է 15 դոլարով:

5 հունիսի

Պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Չինաստանի ժողովրդական հանրապետության Պետական խորհրդի առաջին փոխվարչապետ, Չինաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի քաղբյուրոյի մշտական հանձնաժողովի անդամ Ճան Գաոլիի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում նախատեսվում են ՉԺՀ պետական խորհրդի առաջին փոխվարչապետի հանդիպումները ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի հետ: Կստորագրվեն մի շարք ոլորտներում երկկողմ համագործակցության վերաբերյալ փաստաթղթեր:

13 հունիսի

91 տարեկանում կյանքից հեռացավ անվանի երգչուհի, Հայաստանի ժողովրդական արտիստուհի Օֆելյա Համբարձումյանը: Ծնվել է 1925 թվականի հունվարի 9-ին Երեւանում, սովորել եւ ավարտել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանն ու հրավիրվել ռադիոյի ժողովրդական նվագարանների համույթ, որին գրեթե մի ամբողջ կյանք է նվիրել: Երգացանկն ընդգրկում է հիմնականում հայ ժողովրդական, գուսանական եւ աշուղական, ինչպես նաեւ կոմպոզիտորական երգեր:

16 հունիսի

Ընտրական օրենսգրքի վերաբերյալ իշխանության, ընդդիմության եւ քաղհասարակության միջեւ 4+4+4 ձեւաչափով ընթացող բանակցությունների արդյունքում հունիսի 16-ին ստորագրվեց նոր Ընտրական օրենսգրքում ընտրական գործընթացի օրինականության վերահսկման կազմակերպման տեխնիկական մեխանիզմների սահմանման շուրջ փոխհամաձայնության մասին հայտարարությունը: Այն ստորագրեցին ԱԺ ընդդիմադիր Հայ ազգային կոնգրես, «Բարգավաճ Հայաստան» եւ «Օրինաց երկիր», ինչպես նաեւ իշխանական Հանրապետական եւ Դաշնակցություն խմբակցությունները:

20 հունիսի

Սանկտ Պետերբուրգում Սարգսյան-Պուտին-Ալիեւ եռակողմ հանդիպումից առաջ կայացած՝ Պուտին-Սարգսյան զրույցի ընթացքում ՀՀ նախագահը հայտարարեց, որ հրադադարի ռեժիմի խախտումների հետաքննության մեխանիզմի ստեղծումը լավ հիմք կդնի Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման շուրջ բանակցություններ վարելու համար: Երկու երկրների նախագահները քննարկեցին երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցային գործընթացին վերաբերող հարցեր՝ այդ համատեքստում անդրադառնալով տարածաշրջանի զարգացումներին ու անվտանգությանը սպառնացող մարտահրավերներին: Պուտինը եւ Սարգսյանը մտքեր փոխանակեցին Վիեննայում ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների արտաքին գործերի նախարարների նախաձեռնությամբ կայացած հանդիպման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքի շուրջ:

20 հունիսի

Մի խումբ անձանց կողմից ապօրինի կերպով զենք եւ ռազմամթերք ձեռք բերելու, փոխադրելու եւ պահելու կասկածանքով ձերբակալվեց «Նոր Հայաստան» ընդիմադիր շարժման առաջնորդ, ազատամարտիկ Ժիրայր Սեֆիլյանը: «Առաջադրված մեղադրանքները հիմնավորվել են ինչպես գործով ձեռք բերված բազմաթիվ ապացույցներով, այնպես էլ՝ խմբի անդամների խոստովանական ցուցմունքներով»,- մասնավորապես նշված է Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության մեջ:

23 հունիսի

Bleacher Report մարզական կայքի հղմամբ՝«Մանչեսթր Յունայթեդ» անգլիական ակումբը Դորթմունդի «Բորուսիա»-ի հետ համաձայնեց-

րեց Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի ավագ Հենրիխ Մխիթարյանի տրանսֆերի՝ 40 միլիոն եվրոյի (28 միլիոն բրիտանական ֆունտ) գործարքը: Մխիթարյանը վերջերս մի քանի առիթներով նկատել է տվել, որ կցանկանար խաղալ Անգլիայի Պրեմիեր լիգայում: Հայազգի աստղին ձեռք բերելու ցանկություն էին հայտնել նաեւ անգլիական «Արսենալ»-ը, «Չելսի»-ն եւ իտալական «Յուվենտուս»-ը:

24 հունիսի

Հռոմի Ֆրանցիսկոս Պապը ժամանեց Երեւան: «Զվարթնոց» օդանավակայանում Կաթոլիկ եկեղեցու քահանայապետի դիմավորման արարողությանը մասնակցեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը, բարձրաստիճան պաշտոնյաներ ու հոգեւորականներ: Նախագահի նստավայրում Պապի ընդունելության ընթացքում նախատեսված էր հանդիպում Հայաստանի իշխանությունների, հասարակայնության եւ Երեւանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների հետ:

25 հունիսի

Վաղ առավոտյան Ֆրանցիսկոս Պապն այցելեց Ծիծեռնակաբերդ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր: Նրան ուղեկցում էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ու Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը: Հռոմի Պապը ծաղկեպսակ դրեց Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում, ծաղիկներ խոնարհեց անմար կրակի մոտ եւ Գարեգին երկրորդի հետ միասին բարեխոսական աղոթք հնչեցրեց: Այնուհետեւ Պապը շրջեց հուշահամալիրով, ջրեց իր անունից տնկված ծառը, ապա գրառում կատարեց պատվավոր հյուրերի հուշամատյանում:

26 հունիսի

Երեկոյան Խոր Վիրապ կատարած այցով ավարտվեց Հռոմի Ֆրանցիսկոս Պապի հայաստանյան եռօրյա այցը: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն եւ Հռոմի Ֆրանցիսկոս Պապը կանթեղներ վառեցին վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցում՝ Գրիգոր Լուսավորչի վիհից հանված լույսով, Արարատի ուղղությամբ խաղաղություն խորհրդանշող աղավնիներ բաց թողեցին: Խոր Վիրապից Հռոմի Ֆրանցիսկոս Պապն ուղեւորվեց դեպի օդանավակայան: Այստեղից նրան ճանապարհեցին նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաներ ու հոգեւորականներ:

30 հունիսի

Ազգային ժողովը 102 կողմ, 8 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ վավերացրեց Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միավորված համակարգ ձեւավորելու մասին համաձայնագիրը: Այն ստորագրել էին Հայաստանի ու Ռուսաստանի պաշտպանության նախարարներ Սերգեյ Շոյգուն եւ Սեյրան Օհանյանը 2015 թվականի դեկտեմբերի 23-ին Մոսկվայում: Փաստաթղթի վավերացման հարցը բուռն բանավեճեր էր հարուցել Հայաստանում: Որոշ վերլուծաբանների եւ ընդդիմադիրների պնդմամբ՝ միասնական ՀՕՊ համակարգը ենթադրում է իշխանության որոշակի զիջում, Հայաստանի սուվերեն իրավունքի փոխանցում Ռուսաստանին:

2 հուլիսի

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը ողջունեց Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից ցեղասպանության ժխտումը քրեականացնող նոր օրինագծի ընդունումը: «Միանգամայն ողջունելի է Ֆրանսիայի կառավարության նախաձեռնած օրինագիծը, որի համաձայն՝ քրեականացվում է ցեղասպանությունների եւ, համապատասխանաբար, Հայոց ցեղասպանության ժխտումը»,- հայտարարել է Հայաստանի արտգործնախարարը:

4 հուլիսի

ՀԱՊԿ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարները Երեւանում հանդես եկան ղարաբաղյան հակամարտությանը վերաբերող համատեղ հայտարարությամբ, որում մասնավորապես նշված է. «Հաստատելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, աջակցություն ենք հայտնում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ ուղղված հակամարտության կարգավորմանը՝ միջազգային իրավունքի նորմերի, ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի դրույթների, մասնավորաբար ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, պետությունների տարածքային ամբողջականության, իրավահավասարության եւ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հիման վրա»: Հայտարարությունը ստորագրել են Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի եւ Տաջիկստանի արտաքին գործերի նախարարները:

11 հուլիսի

Իրանի նախարարների կաբինետը որոշում ընդունեց «Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ մուտքի արտոնագրային ռեժիմի վերացման վերաբերյալ»: Հայաստանի եւ Իրանի քաղաքացիները, ովքեր ունեն սովորական կամ դիվանագիտական անձնագրեր, կարող են մյուս երկրում մնալ առավելագույնը 90 օր:

17 հուլիսի

Ազգային անվտանգության ծառայությունը հաղորդագրություն տարածեց, որում, մասնավորապես, ասվում է. «Այսօր առավոտյան մի խումբ զինված անձինք մուտք են գործել ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածք եւ բռնության սպառնալիքով պահում են այնտեղ գտնվող անձանց»: Հաղորդագրության համաձայն՝ զինված խմբի հետ վարվում են բանակցություններ՝ իշխանություններին նրանց խաղաղ հանձվելը կազմակերպելու համար:

«Հիմնադիր խորհրդարանի» անդամ Վարուժան Ավետիսյանը ֆեյսբուքյան իր էջում հայտարարեց, որ իրենք ապստամբություն են սկսել եւ ոստիկանական շենք գրավել: Ավետիսյանի խոսքով՝ ոստիկանությունը դիպակահարներ է տեղակայել հարակից շենքերի տանիքներին՝ փորձելով գրոհել իրենց դիրքերը, ինչի հետեւանքով կան վիրավորներ: Ապստամբները ոստիկանության սահմանափակ թվով ծառայողների ազատման դիմաց պահանջում են ազատ արձակել մոտ մեկ ամիս առաջ մի խումբ անձանց կողմից ապօրինի կերպով զենք-ռազմամթերք ձեռք բերելը, փոխադրելը եւ պահելը կազմակերպելու մեղադրանքով կալանավորված Ժիրայր Սեֆիլյանին:

21 հուլիսի

Մոսկվան դատապարտեց Երեւանում ոստիկանության շենքի գրավումը եւ իր աջակցությունը հայտնեց Հայաստանի իշխանությունների կատարած քայլերին:

«Մենք անընդունելի ենք համարում նման քրեական դրսեւորումները, որոնք անմիջական սպառնալիք են հանրապետության քաղաքացիների կյանքին ու անվտանգությանը»,- հայտարարեց ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը՝ հույս հայտնելով, որ Հայաստանի իշխանությունների ձեռնարկած քայլերը թույլ կտան ամենակարճ ժամանակում կարգավորել իրավիճակը եւ պատժել մեղավորներին:

22 հուլիսի

Հայաստանի նախագահն անցկացրեց խորհրդակցություն՝ ԱԱԾ-ի, Ոստիկանության, Դատախազության եւ քննչական մարմինների ղեկավարների մասնակցությամբ: Երկրի ղեկավարին ներկայացվեցին հուլիսի 17-ին Հայաստանի ոստիկանության ՊՊԾ գնդի տարածքում տեղի ունեցած զինված հարձակման եւ դրան հաջորդած իրադարձությունների մանրամասները, ինչպես նաեւ իրականացվող միջոցների արդյունքները: Սերժ Սարգսյանն ընդգծեց, որ ստեղծված իրավիճակին խաղաղ հանգուցալուծում տալու համար պետք է ձեռնարկվեն հնարավոր բոլոր միջոցները, կարեւորեց ենթադրյալ բոլոր իրավախախտումների համակողմանի եւ անաչառ քննությունը, ինչպես նաեւ մեղավորների համար պատժի անխուսափելիության ապահովումը: «Հայաստանում բռնի ուժով, հարձակումով եւ պատանդ վերցնելով հարցեր չեն լուծվելու»,- հայտատարեց Սարգսյանը՝ ՊՊԾ գնդի տարածքը գրաված զինյալներին կոչ անելով պատանդներին ազատ արձակել եւ վայր դնել զենքը:

29 հուլիսի

Ոստիկաններն անակնկալ կերպով հատուկ միջոցներ գործադրեցին Սարի թաղում հավաքված ցուցարարների դեմ, որոնք այստեղ էին եկել Ազատության հրապարակում ավելի վաղ կայացած հանրահավաքից հետո: Մինչ այդ՝ ՊՊԾ գնդի տարածքում պայթյուններ էին տեղի ունենում, եւ ցուցարարները հավաքվել են իրենց աջակցությունը հայտնելու հուլիսի 17-ից ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածքը գրաված «Սասնա ծռեր» զինված խմբի անդամներին:

Ուշ երեկոյան Քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում հարուցվեց քրեական գործ՝ Սարի թաղում տեղի ունեցած անկարգությունների դեպքերի առթիվ: «Զանգվածային անկարգություններ կազմակերպելու ու դրանց մասնակցելու կասկածանքով ձերբակալվել է 23 անձ, որոնց թվում՝ Արմեն Մարտիրոսյանը եւ Անդրիաս Ղուկասյանը»,- մասնավորապես նշված է Քննչական կոմիտեի դեպարտամենտի տարածած հաղորդագրությունում:

31 հուլիսի

Ըստ Ազգային անվտանգության ծառայության հաղորդագրության՝ հուլիսի 17-ից ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածքը գրաված «Սասնա ծռեր» զինված խմբավորման

անդամները վայր են դրել զենքը եւ հանձնվել իշխանություններին: «Տարածքի ազատագրմանն ուղղված հակաահաբեկչական օպերացիան ավարտվել է. ՀՀ իրավասու իրավապահ մարմինների հատուկ նշանակության ստորաբաժանումներն իրենց հետեւողական ու համաձայնեցված գործողություններով ստիպել են զինված խմբի անդամներին վայր դնել զենքը եւ հանձնվել իշխանություններին: Ձերբակալվել է 20 ահաբեկիչ: ՊՊԾ գնդի տարածքն ամբողջությամբ ազատագրված է»,- տեղեկացնում է ԱԱԾ-ն՝ հերթական անգամ օգտագործելով «ահաբեկիչ» ձեւակերպումը, որից բանակցությունների ընթացքում զերծ էր մնում:

1 օգոստոսի

Երեւանի Խորենացու փողոցում եւ Սարի թաղում հուլիսի 29-30-ին տեղի ունեցած խաղաղ հավաքների ընթացքում քաղաքացիների նկատմամբ ոստիկանության ծառայողների գործադրած բռնության, նրանց կողմից հատուկ միջոցների կիրառման, դրանց հետեւանքով հավաքների մասնակիցներին, ինչպես նաեւ Սարի թաղի բնակիչներին պատճառված վնասների վերաբերյալ հաղորդումներն ու նյութերը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանն ուղարկեց Հայաստանի գլխավոր դատախազություն՝ քրեական հետապնդման հարուցման հարցը լուծելու նպատակով: Նույն օրը Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատարանի որոշմամբ՝ «Ժառանգություն» կուսակցության անդամներ Արմեն Մարտիրոսյանի, Հովսեփ Խուրշուդյանի, Դավիթ Սանասարյանի, «Նոր Հայաստան»-ից Անդրիաս Ղուկասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվեց կալանավորումը՝ երկու ամիս ժամանակով:

4 օգոստոսի

Առողջական խնդիրների պատճառով հրաժարական տվեց եւ պաշտոնական լիազորությունները վայր դրեց Հայաստանի գլխավոր դատախազ Գեւորգ Կոստանյանը:

10 օգոստոսի

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հրավերով Սերժ Սարգսյանը մեկնեց Մոսկվա: Ըստ «Նովոստի» լրատվական գործակալության, Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահները քննարկել են ղարաբաղյան խնդիրը, ինչպես նաեւ երկու պետությունների միջեւ մի շարք ոլորտներում երկկողմ փոխգործակցության օրակարգի առանցքային հարցեր: Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահնե-

րի մամլո ծառայությունները նույն հաղորդագրությունն են տարածել, որում, սակայն, չի հիշատակվում ղարաբաղյան հիմնախնդիրը:

16 օգոստոսի

Երեւանում անցակացվող ՀԱՊԿ անդամ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի նիստի շրջանակում տեղի ունեցավ Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի եւ Ռուսաստանի պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի երկկողմ հանդիպումը:

17 օգոստոսի

Վերաքննիչ դատարանի որոշմամբ՝ կալանավայրից ազատ արձակվեց «Ժառանգության» փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանը: Հետագա մեկ շաբաթվա ընթացքում գրավի դիմաց ազատ արձակվեցին «Ժառանգության» եւս երկու ներկայացուցիչներ՝ Դավիթ Սանասարյանը եւ Հովսեփ Խուրշուդյանը:

23 օգոստոսի

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը ռուսական 102-րդ ռազմահենակետի զինծառայող Վալերի Պերմյակովին դատապարտեց ցմահ ազատազրկման՝ նրան մեղավոր ճանաչելով գյումրեցի Ավետիսյանների յոթ հոգանոց ընտանիքի սպանության, ավազակային հարձակման եւ հայ-թուրքական սահմանը հատելու փորձի մեջ: Հրապարակված վճռում, սակայն, նշված չէ, թե որտեղ է պատիժը կրելու Պերմյակովը:

28 օգոստոսի

Պրահայում անցկացված շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունում իրենց տարիքային խմբերում հաղթողների դափնիների արժանացան հայաստանցի երկու շախմատիստներ: Մինչեւ 12 տարեկանների շրջանում Եվրոպայի չեմպիոն հռչակվեց Մամիկոն Ղարիբյանը՝ 9 հնարավորից վաստակելով 8 միավոր, իսկ մինչեւ 18 տարեկան պատանիների շրջանում՝ Մանուէլ Պետրոսյանը՝ նույնքան հնարավորից ապահովելով 7,5 միավոր:

2 սեպտեմբերի

Լեռնային Ղարաբաղը նշեց անկախության հռչակման 25-ամյակը:

Ստեփանակերտում տոնական միջոցառումներին մասնակցելու համար երեկ Ղարաբաղ էր մեկնել նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Տոնի կապակցությամբ շնորհավորական ուղերձներով հանդես եկան Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի նախագահները:

3 սեպտեմբերի

Երեւանի «Արմենիա» Հանրապետական բժշկական կենտրոնում 26-ամյա Մարիամ Թունյանը բնական ճանապարհով լույս աշխարհ բերեց քառյակ: Երեխաներից երկուսը տղա են, երկուսը՝ աղջիկ:

8 սեպտեմբերի

ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը Կառավարության նիստի ժամանակ հայտարարեց իր հրաժարականի մասին: «Մենք դեռեւս անցումային խնդիրներ ունեցող երկիր ենք, որտեղ առկա տնտեսական եւ սոցիալական իրավիճակի բարելավման համար մեզ անհրաժեշտ են հասարակության եւ կառավարության միասնական ջանքեր: Իսկ դրա համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ, նոր սկիզբ: Այդ պատճառով որոշել եմ հրաժարական տալ եւ նոր կառավարություն ձեւավորելու հնարավորություն ընձեռել Նախագահին»,- իր խոսքում, մասնավորապես, նշեց Աբրահամյանը:

Նույն օրը տեղի ունեցած ՀՀԿ խորհրդի նիստում հավանություն տրվեց վարչապետի պաշտոնում Երեւանի նախկին քաղաքապետ, «Հայռուսգազարդի» նախկին ղեկավար Կարեն Կարապետյանի թեկնածության առաջադրմանը, որը նախագահի հրամանագրով հաստատվեց սեպտեմբերի 13-ին:

16 սեպտեմբերի

Ռաֆֆի Հովհաննիսյանը նամակ հղեց Եվրոպայի ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) նախագահ Ժոզեֆ Դոլին՝ հայցելով նրա «միջնորդությունը, հորդորը եւ համապատասխան գործողությունները» «Ժառանգության» ներկայացուցիչներ Ա.Մարտիրոսյանի, Դ.Սանասարյանի, Հ.Խուրշուդյանի, քաղաքացիական ակտիվիստներ Ա.Ղուկասյանի եւ Կ.Եղնուկյանի հարցով: «Մեր երեք ավագ անդամներին ներկայացված շինծու մեղադրանքները դեռեւս չեն հանվել. նրանք տակավին ենթարկվում են քրեական հետապնդման: Քաղաքացիական ակտիվիստներ Ա.Ղուկասյանը եւ Կ.Եղնուկյանը շարունակում են ազատազրկված մնալ: Խղճի բազմաթիվ այլ բանտարկյալներ ու խաղաղ ցուցարարներ մինչ օրս տառապում են»,- մասնավորապես ասված է Հովհաննիսյանի նամակում:

18 սեպտեմբերի

Նախագահ Սերժ Սարգսյանը պարգեւատրեց Ռիոյի օլիմպիական խաղերում ոսկե եւ արծաթե մեդալներ նվաճած հայ մարզիկներին: Հունահռոմեական ոճի ըմբիշներ Արթուր Ալեքսանյանը, Միհրան Հարությունյանը, ծանրորդներ Սիմոն Մարտիրոսյանը եւ Գոռ Մինասյանը պարգեւատրվեցին «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար առաջին աստիճանի մեդալով: Սարգսյանը պարգեւատրեց նաեւ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանին՝ Պատվո շքանշանով, ինչպեսեւ ոլորտի մի շարք այլ ներկայացուցիչների:

19 սեպտեմբերի

Միացյալ Նահանգների պետքարտուղար Ջոն Քերրին շնորհավորական ուղերձ է հղել Հայաստանի անկախության 25-ամյակի կապակցությամբ: Նրանում մասնավորապես ասվում է. «Նախագահ Օբամայի ու Միացյալ Նահանգների ժողովրդի անունից շնորհավորանքներս եմ հղում հայ ժողովրդին անկախության 25-ամյակի առթիվ, որը կնշվի սեպտեմբերի 21-ին: Միացյալ Նահանգները խորապես արժեւորում է Հայաստանի եւ Ձեր բոլորի հետ իր ջերմ բարեկամությունը: Այս գեղեցիկ տոնի առթիվ լավագույն մաղթանքներս եմ հղում հայ ժողովրդին, ցանկանում խաղաղություն ու բարօրություն առաջիկա տարում»:

20 սեպտեմբերի

Սերժ Սարգսյանը հրամանագրեր ստորագրեց փոխվարչապետ, նախարարներ, նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:

Վաչե Գաբրիելյանը վերանշանակվեց Հայաստանի փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարար, Դավիթ Հարությունյանը՝ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար: Նախագահի այլ հրամանագրերով՝ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար նշանակվեց Աշոտ Մանուկյանը, գյուղատնտեսության նախարար՝ Իգնատի Առաքելյանը, տրանսպորտի եւ կապի նախարար՝ Վահան Մարտիրոսյանը, ֆինանսների նախարար՝ Վարդան Արամյանը: Սերժ Սարգսյանի հրամանագրերով՝ Վարդան Արամյանն ազատվել է Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնից, որում նշանակվել է Արգենտինայում, Ուրուգվայում, Պերուում ու Չիլիում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից ազատված Ալեքսան Հարությունյանը:

21 սեպտեմբերի

Հայաստանը տոնեց անկախության հռչակման 25-ամյակը: Երեւանում անցկացվեցին զորահանդես, բազմաթիվ այլ միջոցառումներ՝ Հայաստանի մայրաքաղաքում ու մյուս բնակավայրերում: Տոնի առթիվ նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձներ ստացավ օտարերկրյա պետությունների ղեկավարներից, միջազգային կազմակերպությունների, պետական եւ հասարակական հատվածի, հոգեւոր դասի ներկայացուցիչներից, անհատներից:

23 սեպտեմբերի

Ռաֆֆի Հովհաննիսյանը հայտարարություն տարածեց, որ ինքը եւ իր գլխավորած «Ժառանգություն» կուսակցությունը միանում են «Արդարություն Հայաստանում» արշավին, որի մեկնարկը տվեցին Սերժ Թանգյանը, Վահե Բերբերյանը, Ատոմ Էգոյանը եւ այլ մտավորականներ համայն աշխարհից. «Սա մեր սեփական ազգային ստուգատեսն է, որը պետք է անցնենք արժանապատվությամբ ու առաքինությամբ՝ եւ՛ նրանց անունից, ովքեր կռվեցին ու ընկան, եւ՛ հանուն նրանց, ովքեր ապրելու ու առաջնորդելու են վաղը,- ասված է հայտարարությունում»:

24 սեպտեմբերի

Դատարանը բավարարեց իրավապահների միջնորդությունը եւ եւս երկու ամսով երկարաձգեց «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի անդամ Անդրիաս Ղուկասյանի կալանքը: Ղուկասյանը կալանավորվել է հուլիսի 29-ի գիշերը Սարի թաղում տեղի ունեցած իրադարձություններից հետո՝ մեղադրվելով զանգվածային անկարգություններ կազմակերպելու մեջ: Փաստաբան Կարեն Մեժլումյանը «ապօրինի» որակեց դատարանի որոշումը՝ նշելով, որ Անդրիաս Ղուկասյանն իրականում որպես քաղբանտարկյալ է պահվում:

26 սեպտեմբերի

Կառավարության նախաձեռնությամբ գումարված՝ ԱԺ արտահերթ նիստում քննարկվեց «Կառավարության կառուցվածքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու նախագիծը: Վարչապետ Կարեն Կարապետյանն առաջարկել էր վերացնել քաղաքաշինության նախարարությունը՝ այն դարձնելով Ճարտարապետության եւ մշակութային արժեքների պահպանման կոմիտե, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը փոխանցել տրանսպորտի եւ կապի նախարարությանը, որպես առանձին կոմիտե առանձնացնել տուրիզմի ոլորտը, էկոնոմի-

կայի նախարարությունը վերանվանել ներդրումների եւ ձեռնարկատիրության աջակցության նախարարություն:

2 հոկտեմբերի

Այսօր ՏԻՄ ընտրություններ են նշանակված Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի թվով 373 համայնքներում, որոնցից 36-ում տեղի են ունենալու միայն համայնքի ղեկավարի ընտրություններ, 82-ում՝ միայն ավագանու անդամի, իսկ 255-ում միաժամանակ անցկացվելու են համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի ընտրություններ: Ընտրություններն անցկացնելու համար ձեւավորվել է 835 տեղամասային ընտրական հանձնաժողով: Ընտրությունները դիտարկելու հայտ է ներկայացրել 20 դիտորդական կազմակերպություն՝ ընդհանուր առմամբ 1.588 դիտորդներով:

6 հոկտեմբերի

Կառավարությունը որոշում ընդունեց Սուրիկ Խաչատրյանին իր դիմումի համաձայն Սյունիքի մարզպետի պաշտոնից ազատելու մասին եւ այն ուղարկեց Հայաստանի նախագահի հաստատմանը: Նույն օրը Սերժ Սարգսյանը հաստատեց Սյունիքի մարզպետի պաշտոնից Խաչատրյանին ազատելու մասին կառավարության ընդունած որոշումը: Գործադիրի մեկ այլ որոշմամբ՝ Սյունիքի մարզպետ նշանակվեց Վահե Հակոբյանը:

8 հոկտեմբերի

«Էրեբունի-Երեւան-2798» տոնակատարության հիմնական միջոցառումները մեկնարկեցին վաղ առավոտից՝ ջրցան մեքենաների շքերթով: Երեւանի օրվա առթիվ քաղաքապետ Տարոն Մարգարյանի շնորհավորական ուղերձում մասնավորապես ասված է.«Այսօր մենք հպարտությամբ ենք փաստում, որ հազարամյակների պատմություն ունեցող մեր «Արեւի քաղաքն» աշխարհին ներկայանում է որպես մշտապես երիտասարդ, գործուն, զարգացող, ժամանակին համահունչ ու ներկայանալի: Եվ դա շնորհիվ մեր համաքաղաքացիների, այն մարդկանց, ովքեր ապրում ու արարում են մայրաքաղաքի հանդեպ սիրո եւ պարտքի գիտակցումով»:

9 հոկտեմբերի

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ամփոփեց Գյումրիում հոկտեմբերի 2-ին անցկացված ՏԻՄ ընտրություն-

ների արդյունքները: Ըստ այդմ՝ Գյումրիի 33 անդամներից կազմված ավագանու խորհրդի մանդատները բաշխվեցին հետեւյալ կերպ. իշխանական «Բալասանյան դաշինքը» ստացավ 17 մանդատ, ԲՀԿ-ն՝ 8 մանդատ, ՀՎԿ-ն եւ ԳԱԼԱ կուսակցությունը՝ 4-ական մանդատ: Սակայն ընդդիմադիր 3 ուժերը պնդում են, որ ստացած քվեներով իրենց 18 մանդատ է հասնում, իսկ իշխանական «Բալասանյան դաշինք»-ին՝ 15, ուստի բոյկոտելու են ավագանու բոլոր նիստերը՝ մինչև դատական վերջին ատյանի հնարավորությունների սպառումը:

10 հոկտեմբերի

Աշխատանքային այցով Միացյալ Նահանգներում գտնվող նախագահ Սերժ Սարգսյանը երեկ Նյու Յորքում մասնակցել է «Հայաստան. ներդրումային համաժողով 2016»-ին: Նախագահը համաժողովի առաջին՝ լիագումար նիստում, որն անցկացվել է «Հայաստանը՝ որպես դարպաս դեպի մեծ շուկաներ» խորագրի ներքո, հանդես է եկել ելույթով՝ անդրադառնալով Հայաստանի ներկա տնտեսական եւ քաղաքական առաջնահերթություններին, Հայաստանի ձեռքբերումներին, երկրի մրցակցային առավելություններին ու ներդրումային հնարավորություններին:

14 հոկտեմբերի

Երեւանում կայացավ ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանը, որը վարում էր խորհրդում 2015-2016թթ. նստաշրջանների միջեւ ընկած ժամանակահատվածում նախագահությունը ստանձնած Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Նիստի օրակարգում ընդգրկված երկու տասնյակ հարցերի շրջանակում քննարկվեցին միջազգային իրավիճակը եւ հավաքական անվտանգության ապահովման արդիական հարցեր, դիտարկվեցին մինչեւ 2025թ. ժամանակահատվածի համար ՀԱՊԿ հավաքական անվտանգության ռազմավարության եւ ՀԱՊԿ ճգնաժամային արձագանքման կենտրոնի ստեղծման վերաբերյալ որոշումների նախագծերը, ՀԱՊԿ գործունեության կատարելագործման, ինչպես նաեւ միջազգային ահաբեկչությանը հակազդեցության վերաբերյալ որոշումների իրականացումը: ՀԱՊԿ գագաթաժողովին մասնակցելու համար նույն օրը Երեւան էր ժամանել ՌԴ նախագահ Վ.Պուտինը:

21 հոկտեմբերի

Ազգային ժողովն արտահերթ նիստում 85 կողմ, 7 դեմ եւ 6 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ ընդունեց Կառավարության

ներկայացրած ծրագիրը: ԲՀԿ-ն չմասնակցեց քվեարկությանը, ՀԱԿ խմբակցությունը քվեարկեց դեմ, ՕԵԿ-ը՝ ձեռնպահ: Կառավարության ծրագրին կողմ քվեարկեցին Հանրապետական կուսակցությունը եւ ՀՅԴ-ն:

24 հոկտեմբերի

Պետական այցով Հայաստանի Հանրապետություն ժամանեց Մալթայի ինքնիշխան մարտական ուխտի արքայազն եւ մեծ վարպետ Ֆրա Մեթյու Ֆեսթինգը: Նախագահի նստավայրում տեղի ունեցավ Ֆրա Մեթյու Ֆեսթինգի եւ նրա գլխավորած պատվիրակության դիմավորման պաշտոնական արարողությունը, որին հաջորդեց Հայաստանի նախագահի Մեծ վարպետի հանդիպումը ընդլայնված կազմով՝ երկու երկրների պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ: Նույն օրը առավոտյան Ֆրա Մեթյու Ֆեսթինգը Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի ուղեկցությամբ այցելել էր Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղկեպսակ դրել Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանին եւ ծաղիկներ խոնարհել Ցեղասպանության Սուրբ նահատակների հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ:

25 հոկտեմբերի

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր հանդիպում ունեցավ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի (Ռուսաստան), Ջեյմս Ուորլիքի (ԱՄՆ), Պիեռ Անդրիոյի (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ: Զրուցակիցները քննարկել են ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացին եւ առկա խնդիրներին վերաբերող հարցեր: «Կարեւորվել է բանակցային գործընթացում հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված հանձնառություններին կողմերի հավատարմությունը, Վիեննայում եւ Սանկտ-Պետերբուրգում բարձր մակարդակով ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը»,- ասված է ՀՀ նախագահի մամուլի ծառայության այսօր տարածած հողորդագրության մեջ: Նույն օրը տեղի ունեցան համանախագահների հանդիպումները Պնախարար Վիգեն Սարգսյանի եւ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

1 նոյեմբերի

Նախագահ Սերժ Սարգսյանը ստորագրել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք»-ը, ինչպես նաեւ մի շարք օրենք-

ներ: Հարկային նոր օրենսգիրքն Ազգային ժողովը երրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունել էր հոկտեմբերի 4-ին: Վիճահարույց փաստաթղթին կողմ էին քվեարկել Հայաստանի Հանրապետական կուսակցությունն ու ՀՅ Դաշնակցությունը: Ընդդիմադիր պատգամավորների համոզմամբ՝ նոր օրենսգիրքը «կործանարար է լինելու բիզնեսի համար, ավելացնելու է հարկատուների բեռը»: Ավելի վաղ նախագիծը քննադատել են նաեւ փոքր եւ միջին ձեռնարկատերերը: Հարկային նոր օրենսգիրքը ուժի մեջ կմտնի 2018 թվականի հունվարի 1-ից:

6 նոյեմբերի

«Ժառանգություն» կուսակցության նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանը Ստամբուլում հանդես եկավ Ասիական քաղաքական կուսակցությունների միջազգային համաժողովի (ԱՔԿՄՀ) կազմակերպած՝ Միգրացիայի եւ փախստականների թեմայով հատուկ խորհրդաժողովում, որին մասնակցում էին ավելի քան 25 երկրներից ժամանած 40 կուսակցությունների առաջնորդներ: Ի հեճուկս ադրբեջանցի եւ թուրք պատվիրակների զայրագին առարկությունների, Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ խոսք խնդրելով, ներկայացրեց տարածաշրջանի պատմական ու ընթացիկ զարգացումների շուրջ հայկական տեսակետը, քննադատեց Թուրքիայում մարդու իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, ինչպես նաեւ անդրադարձավ Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած ձախողված պատերազմին ու 500 հազար այն հայերի խնդրին, որոնք տեղահանվել էին Ադրբեջանից, Նախիջևանից եւ մյուս գրավյալ հայկական տարածքներից, արծարծեց բռնագաղթի հետ կապված մի շարք այլ հարցեր:

8 նոյեմբերի

Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը նախագահին ներկայացրեց զոհված եւ հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին աջակցության նոր ծրագիրը, համաձայն որի՝ 2017 թվականի հունվարի 28-ից Հայկական բանակի 25-րդ տարեդարձի օրվանից ծագող դեպքերի համար կնախատեսվեն նոր, զգալիորեն ավելացված վճարներ: Զոհված եւ առաջին կարգի հաշմանդամություն ստացած զինծառայողի ընտանիքները կստանան միանվագ 10 միլիոն, իսկ 2-րդ կարգի հաշմանդամություն ստացած զինծառայողինը՝ միանվագ 5 միլիոն դրամ ապահովագրական վճար: Զոհվելու կամ առաջին կարգի հաշմանդամություն ստանալու դեպքում ամսական ապահովագրական վճարները կկազմեն. 300 հազար դրամ՝ սպայական անձնակազմի,

250 հազար դրամ՝ ենթասպաների եւ 200 հազար դրամ շարքայիններ-ի դեպքում: Ծրագրով, որը ֆինանսավորվելու է հատուկ հիմնադրամի միջոցով, նախատեսվում են նաեւ ապահովագրական այլ վճարներ ու արտոնություններ: Հիմնադրամի միջոցները կգոյանան աշխատող յուրաքանչյուր անձի ամսական հազար դրամ փոխանցվելիք գումարներից, ինչպես նաեւ կամավոր նվիրաբերություններից:

11 նոյեմբերի

Ֆուտբոլի աշխարհի 2018 թվականի առաջնության ընտրական մրցաշարի 4-րդ տուրում Հայաստանի հավաքականը սեփական դաշտում 3:2 հաշվով անդրանիկ հաղթանակը տարավ E խմբի առաջատար Չեռնոգորիայի նկատմամբ: Առաջին խաղակեսում հյուրերը երկու անգամ գրավեցին Հայաստանի հավաքականի դարպասը, սակայն երկրորդ խաղակեսում Հայաստանի հավաքականը տպավորիչ վերադարձ արձանագրեց. 50-րդ րոպեին Ա.Գրիգորյանի գոլով մեր հավաքականը կրճատեց հաշվի տարբերությունը, Վ.Հարոյանը 74-րդ րոպեին հավասարեցրեց այն, իսկ արդեն ավելացված ժամանակում, խաղի ավարտից վայրկյաններ առաջ, Գ.Ղազարյանը մոտ 25 մետր հեռավորությունից խփեց հաղթական գնդակը:

17 նոյեմբերի

Ձայների 102 կողմ, 3 դեմ հարաբերակցությամբ ԱԺ-ն առաջին ընթերցմամբ ընդունեց կառավարության կողմից ներկայացված՝ ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին օրենքի նախագիծը, ըստ որի՝ յուրաքանչյուր աշխատող քաղաքացի, վճարվող հարկերից զատ, այսուհետեւ պետք է նաեւ իր աշխատավարձից պարտադիր 1000 դրամ հատկացնի հատուկ ստեղծված հիմնադրամին: Նախօրեին ընդդիմադիր պատգամավորները «ցինիզմ» եւ «մուրացկանություն» էին որակել այդ ձեռնարկը: ԱԺ-ի դիմաց հավաքված՝ «1000 ամոթ» նախաձեռնության անդամներն էլ իշխանություններից պահանջում էին չեղարկել կառավարության նախագիծը եւ փոխարենը ուժեղացնել հակակոռուպցիոն գործունեությունն ու ստվերից դուրս բերած միջոցների հաշվին իրականացնել անհրաժեշտ միջոցառումները:

21 նոյեմբերի

Մալթայի մայրաքաղաք Վալետտայում կիրակի երեկոյան անցկացված «Մանկական Եվրատեսիլ-2016» երգի միջազգային մրցույթում

Հայաստանը 232 միավորով զբաղեցրեց երկրորդ հորիզոնականը: Առաջին տեղը եւ հաղթանակի դափնիները բաժին հասան հարեւան Վրաստանին:

25 նոյեմբերի

Վարչապետ Կարեն Կարապետյանն, ինչպես նաեւ չորս նախարարներ դարձան Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) անդամներ: Իշխող քաղաքական ուժին անդամագրվեցին տնտեսական զարգացման ու ներդրումների նախարար Սուրեն Կարայանը, առողջապահության նախարար Լեւոն Ալթունյանը, տրանսպորտի, կապի ու տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը եւ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը: Այս մասին «Ազատության» հետ զրույցում տեղեկացրեց ՀՀԿ գործադիր մարմնի անդամ, կազմակերպչական վարչության նախագահ Ռուբեն Թադեւոսյանը:

1 դեկտեմբերի

«Լուսավոր Հայաստան», «Հանրապետություն» եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների ներկայացուցիչների հանդիպման ընթացքում ձեռք բերվեցին համագործակցության վերաբերյալ հստակ պայմանավորվածություններ: Երեք կուսակցություններն առաջիկայում հանդես կգան համատեղ հայտարարությամբ:

3 դեկտեմբերի

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության քաղաքական խորհրդի ընդլայնված նիստը քննարկեց ԲՀԿ հիմնադիր նախագահ Գագիկ Ծառուկյանի՝ ակտիվ քաղաքականություն վերադառնալու հարցը: «Կուսակցության քաղաքական խորհուրդը մեր տասնյակ հազարավոր քաղաքացիների անունից դիմում է ԲՀԿ Գագիկ Ծառուկյանին՝ քննարկելու ակտիվ քաղաքականություն վերադառնալու եւ մեծ համախմբմամբ, միասնական ջանքով ու ժողովրդի աջակցությամբ մեր երկրի առջեւ ծառացած խնդիրները լուծելու հարցը»,- նշված է ԲՀԿ հայտարարության մեջ:

8 դեկտեմբերի

Նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով ժամանեց Լեռնային Ղարաբաղ: Այցի առաջին օրը հայկական երկու հանրապետությունների ղեկավարները ԼՂ Կենտրոնական շրջանում տեղակայված զորամասերից մեկում ներկա են գտնվել նոր զորանոցի բացման արարողությանը: Այնուհետեւ ՀՀ-ի եւ ԼՂ-ի միջեւ ռազմա-

կան համագործակցության շրջանակում ՊԲ շտաբում անցկացվել է խորհրդակցություն՝ բարձրաստիճան զինվորականների մասնակցությամբ: Քննարկվել են բանակը սպառազինությամբ եւ նոր տեխնոլոգիաներով համալրմանն առնչվող հարցեր: Այցի երկրորդ օրը ՀՀ նախագահը, հայկական երկու հանրապետությունների զինված ուժերի փոխգործակցության շրջանակում, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի, Հայաստանի եւ Արցախի պաշտպանության նախարարների ու բարձրաստիճան հրամկազմի ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելել է ԼՂ հարավային եւ հարավարեւելյան մի շարք զորամասեր:

<u>11 դեկտեմբերի</u>

Հենրիխ Մխիթարյանի գոլի շնորհիվ ֆուտբոլի Անգլիայի առաջնության 15-րդ տուրում «Մանչեսթր Յունայթեդ»-ը սեփական հարկի տակ 1:0 հաշվով հաղթանակ տոնեց «Տոտենհեմ»-ի դեմ խաղում: Սա Մխիթարյանի երկրորդ գոլն էր «Մանչեսթր Յունայթեդ»-ի կազմում եւ առաջինը՝ Պրեմիեր լիգայում: Խաղավարտին Մխիթարյանը վնասվածք ստացավ եւ նրան պատգարակով դուրս բերեցին խաղադաշտից: Այդուհանդերձ՝ Հայաստանի հավաքականի ավագը ճանաչվեց հանդիպման լավագույն խաղացող:

<u>15 դեկտեմբերի</u>

Խորհրդարանը երրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «հազար դրամների» օրինագիծը, որով նախատեսվում է աշխատող քաղաքացիներից պարտադիր կարգով ամեն ամիս հազարական դրամ գանձել՝ վիրավոր զինծառայողներին եւ զոհված զինծառայողների ընտանիքներին դրամական աջակցություն տրամադրելու նպատակով: Օրենքն ուժի մեջ է մտելու 2017թ. հունվարի 1-ից: Նախագծին դեմ էին «Ժառանգությունից» Զարուհի Փոստանջյանը, ՀԱԿ-ից՝ Գագիկ Ձհանգիրյանը, Լեւոն Զուրաբյանն ու Արամ Մանուկյանը: Ձեռնպահ քվեարկեց Էդմոն Մարուքյանը:

<u>16 դեկտեմբերի</u>

Ազգային ժողովն այսօր միաձայն երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց ապօրինի հարստացումը քրեականացնող օրենքը: 2017 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտնող այս օրենքը 3-6 տարի ազատազրկում եւ գույքի բռնագանձում է նախատեսում այն բարձրաստիճան պաշտոնյաների համար, որոնց հայտարարագրած գույքը տարվա ընթացքում կավելանա ու էականորեն (5 միլիոն դրամ եւ ավելի չափով) կգերազանցի օրինական եկամուտները:

17 դեկտեմբերի

Հայ ազգային կոնգրեսի համագումարում կուսակցության նախագահի վերընտրվեց Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Կոնգրեսը նախագահ եւ վարչության անդամներ ընտրեց գաղտնի քվեարկությամբ: Կուսակցության վարչության անդամ է ընտրվել նաեւ հետախուզման մեջ գտնվող՝ ներքին գործերի նախկին նախարար Վանո Սիրադեղյանը:

21 դեկտեմբերի

Նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Իրանի նախագահ Հասան Ռոհանին: Ըստ Հայաստանի նախագահի պաշտոնական կայքէջի, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում բարձրաստիճան հյուրին դիմավորել է հանրապետության նախագահը: Նախագահի նստավայրում ԻԻՀ նախագահն առանձնազրույց է ունեցել Հայաստանի նախագահի հետ, որից հետո տեղի է ունեցել Սերժ Սարգսյանի եւ Հասան Ռոհանիի հանդիպումը ընդլայնված կազմով՝ երկու երկրների պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ:

OUR STRATEGIC PARTNERS 2016

The Armenian Center for National and International Studies extends its deep appreciation to its old and new supporters around the world. Please join (or rejoin) the institutions and individuals who have contributed to the Center's activities in 2016.

ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ 2016

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը խորին շնորհակալություն է հայտնում իր հին ու նոր աջակիցներին: Միացեք (կամ կրկին արձագանքեք) 2016 թվականին Կենտրոնի աշխատանքներին աջակցություն ցուցաբերած հաստատություններին եւ անհատներին:

www.acnis.am

VISIT OUR WEBSITE

- About Us
- Full Activity
- Calendar
- Articles
- Publications

- Մեր մասին
- Գործունեություն
- Օրացույց
- Հոդվածներ
- Հրատարակություններ

JOIN THE CENTER'S STRATEGIC PARTNERS

2016

Zaven and Sonia Akian	Los Angeles, CA
Hilda Anan and Maor Peled	Studio City, CA
Mouchegh and Grace Andonian	Millbrae, CA
Kevork and Houry Aposhian	La Crescenta, CA
Vasken and Margaret Artinian	Los Angeles, CA
Aris and Karin Artunians	Glendale, CA
Garbis and Markirid Atmaca	Los Angeles, CA
Haig Bagerdjian	Los Angeles, CA
Arsene and Hasmig Baran	Granada Hills, CA
Harry and Alvard Barseghian	Los Angeles, CA
George and Gail Bedrosian	Fresno, CA
Vahan and Nora Bezdikian	Glendale, CA
Khajag and Lisa Boyadjian	Glendale, CA
Armen and Maro Chalian	Whittier, CA
Nazareth and Alice Chakrian	Los Angeles, CA
Varoujan and Maria Charkhedian	Granada Hills, CA
Raffi and Nora Demirjian	Encino, CA
Raffi and Ani Dermenjian	Malibu, CA
Vahe and Hasmik Dombalagian	Glenview, IL
Robert and Lillian Festekjian	Porter Ranch, CA
Hovsep and Hilda Fidanian	Glendale, CA
Garo and Talin Ghazarian	Glendale, CA
Shavarsh Hazarabedian	Moraga, CA
John and Tanya Hovanesian	Laguna Beach, CA
Armen and Elizabeth Hovannisian	Sherman Oaks, CA
David and Linda Hovannisian	Fresno, CA
Garo and Arsineh Hovannisian	Los Angeles, CA
Kasper and Siroon Hovannisian Family Foundation	Fresno, CA
Richard and Vartiter Hovannisian	Los Angeles, CA
Edward Kashian	Fresno, CA
Armen and Armine Kassabian	Burbank, CA
Missak and Karolin Kechichian	Burbank, CA
Nazareth Kevonian	Glendale, CA
Armenio and Ani Kevorkian	Sherman Oaks, CA
Takouhi Khatchikian	Los Angeles, CA
Gregor and Nadine Koobatian	Madison, CT

L.A. United Investment Co.	Los Angeles, CA
Liz General Partnership	Los Angeles, CA
Tom and Carol Ann Malkasian	La Habra, CA
Haig and Hilda Manjikian	Pasadena, CA
Garo Mardirossian	Los Angeles, CA
Jesse and Silvia Matossian	Woodland Hills, CA
Ared and Karin Menzilcian	Studio City, CA
Apik and Rima Minassian	Encino, CA
Armen and Sarin Minassian	Encino, CA
Michel and Aliza Minassian	Encino, CA
Knar Mouhibian	Los Angeles, CA
Network for Good/ACE Charitable Fdn.	Washington, D.C.
Shahe and Elena Orphali	Glendale, CA
Bedros and Anna Oruncakciel	Tarzana, CA
Mardiros and Aleen Oruncakciel	Tarzana, CA
Sayat and Hermine Oruncakciel	Encino, CA
Philip and Florence Parnagian	Fresno, CA
Peklar and Victoria Pilavjian	Encino, CA
SAMCO, LLC	Los Angeles, CA
Arpiar and Tamar Sarkissian	Encino, CA
Raffi Sarrafian	Chicago, IL
Ararat and Jennifer Sezgin	Tarzana, CA
Hagop and Kinar Sezgin	Tarzana, CA
Zaven and Armenia Sinanian	Glendale, CA
Andy and Hayde Torosyan	La Crescenta, CA
Ara and Shoghig Tramblian	Annandale, VA
Sarkis and Ani Vakian	Tarzana, CA
Gaidzag and Dzovig Zetlian	Sun Valley, CA
John and Karen Hovannisian	Visalia, CA
Ralph and Janet Hovannisian	Fresno, CA

The **Armenian Center for National and International Studies (ACNIS)** is a leading independent strategic research center located in Yerevan, Armenia. Founded in 1994, ACNIS is the institutional initiative of Raffi K. Hovannisian, Armenia's first Minister of Foreign Affairs. Over the past eighteen years, ACNIS has acquired a prominent reputation as a primary source of professional independent research and analysis covering a wide range of national and international policy issues.

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) առաջատար անկախ ռազմավարական հետազոտությունների հաստատություն է, որը գտնվում է Երեւանում՝ Հայաստան: 1994 թվականին հիմնադրված ՌԱՀՀԿ-ն Հայաստանի արտաքին գործերի առաջին նախարար Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի հանրակարգային նախաձեռնությունն է: Որպես ազգային ու միջազգային բազմաթիվ հարցեր արծարծող հետազոտությունների եւ վերլուծությունների հիմնաղբյուր՝ ՌԱՀՀԿ-ը նախորդ 18 տարիների ընթացքում մեծ համբավ է ձեռք բերել:

MISSION STATEMENT

The **Armenian Center for National and International Studies (ACNIS)** is an independent, objective institution committed to conducting professional policy research and analysis. The Center strives to raise the level of public debate and seeks to broaden public engagement in the public policy process, as well as fostering greater knowledge.

As a leading research institute or "think tank" in Armenia, the Center conducts a wide range of strategic research and analysis of significant public policy issues of specific relevance to Armenia. ACNIS strategic research and analysis covers five main program areas: public policy, economics, international & regional studies, national security studies, and global & regional trends.

Reflecting its unique position as a leading research institution in Armenia, the Center actively contributes toward the strengthening of the Armenian nation and its institutions and offers balanced policy recommendations to all segments of Armenian society and the Armenian diaspora.

One of the core longer-term goals of the Center centers on its role as a catalyst for creative, strategic and innovative analysis, based on strict standards of intellectual integrity and professional objectivity. In addition, ACNIS also produces a number of publications and reports and regularly holds conferences, seminars and roundtable meetings aimed at raising public awareness of pressing policy issues.

ՌԱՀՀԿ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) անկախ եւ անկողմնակալ կառույց է, որի նպատակն է՝ իրականացնել արհեստավարժ հետազոտություն եւ վերլուծություն: Կենտրոնն իր առջեւ խնդիր է դրել հասարակությանը հուզող հարցերի վերհանման գործընթացում բարձրացնել հանրային քննարկումների մակարդակը եւ մեծացնել մասնակցային շեմը, ինչպես նաեւ աջակցել առավել լայն ու համապարփակ հանրային գիտակցությանը: Որպես Հայաստանում առաջատար հետազոտական հաստատություն՝ Կենտրոնը կատարում է երկրի համար կենսահույզ նշանակության հանրային օրակարգի բազմատեսակ ռազմավարական հետազոտություններ եւ վերլուծություններ: Դրանք ներառում են մասնավորապես ծրագրային հետեւյալ 5 ոլորտները՝ հասարակությանը հուզող հարցեր, տնտեսություն, միջազգային եւ տարածաշրջանային հետազոտություններ, ազգային անվտանգությանն առնչվող խնդիրների ուսումնասիրություն եւ համաշխարհային ու տարածաշրջանային միտումներ:

Պահպանելով Հայաստանում առաջնակարգ հետազոտությունների հաստատության իր եզակի դիրքը, Կենտրոնը փութաջանորեն արժանի լումա է ներդնում Հայոց պետականության ու նրա պետական մարմինների ուժեղացման գործում եւ հայ հանրույթին ու Սփյուռքի բոլոր հատվածներին առաջարկում է գործունեության հավասարակշռված ծրագրեր:

Կենտրոնի մշտական ու հիմնական նպատակներից մեկը նրա՝ ստեղծարար ռազմավարական եւ նորարար քննախուզության ներազդիչ դերն է, ինչի ընթացքում վերլուծությունը խարսխվում է մտավոր ազնվության եւ արհեստավարժ անաչառության սկզբունքների վրա: Ավելին՝ ՌԱՀՀԿ-ի կողմից թողարկվող մի շարք հրատարակությունների ու զեկույցների, պարբերաբար անցկացվող սեմինարների, խորհրդաժողովների ու »կլոր սեղանների« նպատակն է՝ ըստամենայնի բարձրացնել հանրային գիտակցությունը կարեւորագույն խնդիրների շուրջ:

THE ARMENIAN CENTER FOR NATIONAL AND INTERNATIONAL STUDIES
75 Yerznkian Street
Yerevan 0033, Armenia
Telephone (37410) 52.87.80 / 27.48.18
Telefax (37410) 52.48.46
Email: root@acnis.am

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
75 Երզնկեան փողոց
Երեւան 0033, Հայաստան
Հեռախօս (37410) 52.87.80 / 27.48.18
Հեռապատճէն (37410) 52.48.46

RENEW TODAY

Dear friends and compatriots, join us in realizing the Center's goals by generously renewing your annual support.

Supporters who contribute $100 or more per year will receive, upon request, all Center publications.

All donations are tax-deductible, and may be sent to the following address:

ԿՈՉ ԱՋԱԿՑՈՂՆԵՐԻՆ

Սիրելի՛ հայրենակիցներ, սատարէք Կենտրոնի ծրագրերին՝ նորոգելով Ձեր աջակցութիւնը, ինչի համար մեր խորին երախտագիտութիւնն ենք յայտնում:

Ովքեր Կենտրոնի գործունէութեանն օժանդակելու նպատակով կը ուիրաբերեն տարեկան 100 ամերիկեան դոլլար եւ աւելի, յայտ ներկայացնելուց յետոյ, անվճար կը ստանան Կենտրոնի հրատարակութիւնները:

Ձեր ուիրատուութիւնները հարկազերծ են եւ կարելի է ուղարկել հետեւեալ հասցէով՝

The Armenian Center for National and International Studies
P.O. Box 57666, Sherman Oaks, California 91413

❑ **YES**
We want to support the **Center's** outreach. Please put us on the mailing list for updates, notices, and special publications.

❑ **ԱՅՈ**
Մենք պատրաստ ենք զօրակցել **Կենտրոնին:** Մեզ տեղեակ պահէք նրա աշխատանքների մասին:

Name/Անուն

Company/Ընկերութիւն

Address/Հասցէ

Telephone/Հեռախօս Telefax/Հեռապատճէն Email-ի հասցէ

Tax-deductible contribution enclosed for:

❑ $100 ❑ $500 ❑ $1000 ❑ $5000 ❑ $10,000

❑ Այլ _____ ❑ Other _____

The Armenian Center for National and International Studies
P.O. Box 57666
Sherman Oaks, California 91413

NON-PROFIT ORG.
U.S. POSTAGE
PAID
VAN NUYS, CA
PERMIT NO. 954

Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն
ՀՀ, Երևան 0033,
Երզնկյան 75
Հեռ.՝ +374 10 528780, 10 274818
Ֆաքս՝ +374 10 524846
Էլ.փոստ՝ root@acnis.am
info@acnis.am
Վեբկայք՝ www.acnis.am

The Armenian Center for National and International Studies
75 Yerznkian Street
Yerevan 0033, Armenia
Tel: +374 10 528780, 10 274818
Fax: +374 10 524846
E-mail: root@acnis.am
info@acnis.am
Website: www.acnis.am